Հ. Խ. ՆԱՋԱՐՅԱՆ

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVI Դ. ՈՒ XVII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Երևան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

9(56)
Ն-17

Հ. Խ. ՆԱՋԱՐՅԱՆ

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVI ԴԱՐՈՒՄ ՈՒ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

53

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1961

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվում մարքս-լենինյան հիմնադիր սկզբունքների լույսի տակ պարզաբանել Թուրքիայի, Իրանի և Հայաստանի պատմության մի շարք հարցեր, որոնք վերաբերում են XVI դարին ու XVII դարի առաջին կեսին, երբ տեղի են ունեցել Անդրկովկասի և, հատկապես, հայ ժողովրդի համար բախտորոշ իրադարձություններ։

Այս առնչությամբ հեղինակը քննության է ենթարկում հիշյալ շրջանի ռուս-թուրքական և ռուս-իրանական հարաբերությունները, որոնք նույնպես զգալի հետաքրքրություն են ներկայացնում։

Գիրքը օգտակար կարող է լինել պատմության ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների և այն մարդկանց համար, որոնք հետաքրքրվում են Հայաստանի, Թուրքիայի և Իրանի անցյալով։

Հրատարակվում է
Երևանի Պետական համալսարանի
խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

Պատ. խմբագիր՝ Տ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

НАДЖАРЯН
Усик Хосрович
ТУРЕЦКО-ИРАНСКИЕ ОТНОШЕНИЯ
В XVI В. И В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ XVII В.
И
АРМЕНИЯ
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1961

ԱՌԱՋԱԲԱՆ

Թուրք-իրանական հարաբերությունների և երկարատև պատերազմների պատմությունը, որն ընդգրկում է ամբողջ XVI դարը և XVII դարի առաջին կեսը, գիտական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Արևելքի պատմության համար, եթե նկատի ունենանք, որ այդ երկու երկրների՝ Թուրքիայի ու Իրանի պատմությունը շարադրված է միջազգային հարաբերությունների ֆոնի վրա և ընդգրկում է այդ երկրների ներքին ու արտաքին կյանքին վերաբերող հիմնական պրոբլեմները և որ առ այսօր հրապարակի վրա դեռևս չկա այդ թեմային նվիրված մի ամբողջական մենագրություն։

Թուրք-իրանական հարաբերությունների և պատերազմների պատմությունը, մյուս կողմից, սերտորեն առնչվում է հայ ժողովրդի բախտի հետ, հետևապես նա մեծ նշանակություն ունի իբրև հայ ժողովրդի պատմության կարևոր էջերից մեկը։ Հայտնի է, որ այդ պատերազմների հետևանքով Հայաստանի երկու մասերում էլ (Արևմտյան և Արևելյան) երկար ժամանակով հաստատվեց օսմանյան և պարսկական տիրապետության դաժան ռեժիմը, որը ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի, հատկապես նրա մի հատվածի՝ Արևմտյան Հայաստանի համար։

Մեր ուսումնասիրության առարկան հանդիսացող այս շրջանը շատ կարևոր և հետաքրքիր, միաժամանակ քիչ ուսումնասիրված մի շրջան է ոչ միայն հայ ժողովրդի պատմության, այլև, հենց այդ առնչությամբ, Թուրքիայի ու Իրանի պատմության համար։

Պետք է նշել նաև, որ ներկա աշխատության մեջ ռուս-

Թուրքական և ռուս-իրանական հարաբերությունների, այլև արևմտաեվրոպական պետությունների հետ Թուրքիայի և Իրանի հարաբերությունների համառոտ տեսությունը տրվում է թուրք-իրանական հարաբերությունների առնչությամբ։ Ուստի միանգամայն հասկանալի է, որ դրանց մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրությունն ու շարադրումը մեր նպատակից դուրս է։

XV դարի վերջին և XVI դարի սկզբին Արևմուտքում և Արևելքում բարձրացել և հզորանում էին երկու խոշոր ասիական ֆեոդալական ագրեսիվ պետություններ՝ Օսմանյան Թուրքիան և Սեֆեյան Իրանը, որոնք սահմանակից էին միմյանց և որոնց բախումը դառնում էր անխուսափելի։ Նրանց զավթողական քաղաքականությունը և պլաններն ուղղված էին գլխավորապես Անդրկովկասի և մանավանդ Հայաստանի դեմ։

Այս երկու պետություններից Օսմանյան կայսրությունն ավելի ագրեսիվ էր և, սկսած XIV դարից, ակտիվ հարձակողական քաղաքականություն էր վարում թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում։ Այդ քաղաքականությունն էլ ավելի ուժեղացավ XVI և XVII դարերում։

Սկսած XVI դարի սկզբից մինչև XVII դարի կեսը, ամբողջ 125 տարի շարունակ, սուլթանական Թուրքիայի և շահական Իրանի միջև տեղի են ունեցել հաճախակի ու երկարատև պատերազմներ, որոնք հիմնականում ընթացել են Անդրկովկասի և հատկապես Հայաստանի ու Միջագետքի տնտեսական ու ստրատեգիական նշանակություն ունեցող տիրապետությունները նվաճելու և մասնավորապես Անդրկովկասի ու Հայաստանի վրայով անցնող առևտրական ճանապարհներին տիրելու նպատակով։ Այդ պատերազմները արտաքուստ ընթացել են շիաների և սիննիների միջև տեղի ունեցող կրոնական պայքարի դրոշի ներքո։

1514 թ. սուլթան Սելիմի և Շահ-Իսմայիլի միջև սկսված պատերազմով բացվեց XVI—XVII դդ. թուրք-իրանական երկարատև պատերազմների շարքը, որը վերջացավ միայն 1639 թ.։

Իրանը և Թուրքիան բաժանող սահմանի ամբողջ երկարությամբ ընթացող պատերազմական գործողությունները

հիշյալ ժամանակամիջոցում գլխավորապես տեղի են ունեցել Հայաստանի տերիտորիայում, որի տնտեսական և քաղաքական նշանակությունը շատ մեծ էր։ Իրագործելով իրենց ռազմատենչ, զավթողական պլանները, թուրքերը ձգտում էին ներթափանցել Անդրկովկասի ամենահեռավոր ու անմատչելի վայրերը։

Անդրկովկասի երկրները և մանավանդ Հայաստանը բազմիցս վեր են ածվել բազմաթիվ պատերազմների արյունալի թատերաբեմի, պատերազմներ, որոնց միջոցով երկու թշնամի պետությունները ջանում էին լուծել Մերձավոր Արևելքում գերիշխելու խնդիրը։ Նշված երկրներից ամենից շատ Հայաստանն է հանդիսացել այդ դարավոր և համառ պատերազմների մշտական կռվախնձորը և, հետևապես, ամենից շատ նա է ոտնատակ եղել ու ենթարկվել աղետների։

Հայտնի է, որ Հայաստանը դարեր շարունակ ենթակա է եղել բազմաթիվ նվաճողների ավերիչ բանակների և վաչկատուն հորդաների ասպատակություններին, կողոպուտին, գերեվարությանը և ջարդերին։ Սակայն ամենասարսափելին թուրք-իրանական երկարատև ու ահեղ պատերազմներն էին, որոնց ընթացքում ամենամռայլ և դժնդակ օրեր ապրեց հայ ժողովուրդը։ Այս պատերազմների ընթացքում Հայաստանի կրած սոսկալի աղետների, նրան հասցրած անսահման վնասների և տեղի ունեցած արհավիրքների հետևանքով էլ ավելի տուժեցին երկրի արտադրողական ուժերը, դանդաղեց ու կասեցվեց կուլտուրայի զարգացումը։ Այս շրջանում հայ ժողովրդի բախտը տնօրինում էին թուրք փաշաները, պարսիկ խաները և այլ ֆեոդալ տիրակալներ։ Այս պայմաններում հայերը հաճախ դիմել են մասսայական կամավոր տարագրության և գաղթել այլ երկրներ։

«Մի նվաճողին փոխարինում էին մյուսները։ ...Հաղիվ էր ժողովուրդը ուշքի գալիս մի ավերիչ փոթորկից, երբ վրա էր հասնում նորը։ Եվ նորից կործանվում էին գյուղերը, քաղաքները, կործանվում էր կուլտուրան, ոչնչանում էին աշխատավոր հայերը»[1],— այսպես է բնութագրել «Պրավդա»-ն հայ ժողովրդի ողբերգական անցյալը[1]։

[1] «Պրավդա», 1935 թ. 28 նոյեմբերի։

Այդ դժնդակ պայմաններում հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, կարողացել է ոչ միայն պահպանել իր ազգային գոյությունը, այլև համառ դիմադրություն ցույց տալ օտարերկրյա տիրակալներին ու ասիմիլյատորներին, պահել իր ազգային լեզուն և կուլտուրան։

Դրա հետ միասին հայ ժողովուրդը չկորցնելով իր հույսը լավ ապագայի նկատմամբ, ազատագրական պայքար էր մղում օտար լծի դեմ, որի մասին նշված է աշխատության համապատասխան գլուխներում։ XIX դարի առաջին կեսի ռուս ականավոր պատմաբան և հայոց պատմությանը լավատեղյակ Սերգեյ Գլինկան այս կապակցությամբ գրում էր. «...կան ժողովուրդներ, որոնք զանազան փոփոխություններից թեկուզ և իրենց հայրենական սահմաններում ենթարկվել են բռնի և օտար իշխանության լծին, բայց և այնպես ամբողջ հարյուրամյակների ընթացքում պահպանել են ոչ միայն իրենց անունը, այլև իրենց բարոյական կեցությունը, իրենց լեզուն ու հավատքը և ցանկություն՝ վերակենդանանալ իրենց նախկին գոյությամբ։ Այս ժողովուրդների շարքում հայերը փառավոր տեղ են գրավում։ Չնայած Ասիայի ամեն տեսակի ալեկոծություններին, որոնք ավելի քան 3 հազար տարի իրենց բուռն մակընթացությամբ ներգործել են Հայաստանի վրա, հայերը, այնուամենայնիվ, մնացել են հայեր»[1]։

Ներկա աշխատությունը, մեր կարծիքով, ունի ակտուալ նշանակություն հատկապես այժմ, երբ բուրժուական և մասնավորապես թուրքական պատմագրության կողմից ֆալսիֆիկացիայի է ենթարկվում Թուրքիայի և Մերձավոր Արևելքի երկրների անցյալի պատմությունը, խեղաթյուրվում կամ սքողվում է նրանց կողմից Հայաստանը զավթելու հանգամանքը։

«Թուրքական պատմության ընկերության» կողմից հրատարակված չորսհատորյա «Թարիխը» («Tarih»), որի համապատասխան հատվածներն օգտագործված են մեր աշխատության մեջ, ակնհայտ կերպով դրսևորում է թուրք պատմաբանների գլխավոր կոնցեպցիան՝ «թուրքիզմը», ըստ որի

[1] „Обозрение истории армянского народа", часть I, СПб. 1852 стр. 2

ջանքեր են թափվում «ապացուցելու» հայերի՝ եկվորներ լինելը, ժխտելու հայերի դերը Մերձավոր Արևելքում և անգամ՝ նրանց սեփական հայրենիք և պետականություն ունենալու փաստը, այն դեպքում, երբ այդ ավերիչ պատերազմներն ու ողբերգական իրադարձությունները տեղի էին ունենում հենց հայերի բնօրրանը հանդիսացող պատմական Հայաստանի հողի վրա։

ԳԼՈՒԽ I

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներկա աշխատության մեջ մենք օգտագործել ենք բազմաթիվ հայկական, ռուսական, թուրքական, արևմտաևրոպական և մասամբ պարսկական ու վրացական աղբյուրներ (մի մասը թարգմանաբար), որոնք վերաբերում են XVI—XVII դարերի թուրք-իրանական հարաբերություններին և Հայաստանի վիճակին։ Դրանց մեծ մասը ժամանակակից հեղինակների գրածներն են՝ առանձին գրքերով կամ տարեգրության և հիշատակագրության ձևով (հատկապես հայկական աղբյուրները), որոնցից շատերը հրատարակված են։ Աղբյուրների մյուս մասը արխիվային նյութեր են՝ հրատարակված կամ ձեռագիր վիճակում։ Այս աղբյուրների հեղինակները՝ պատմիչները, տարեգիրները և այլ գրիչներ, հիմնականում ժամանակակից լինելով նկարագրվող իրադարձություններին, բավականաչափ հարուստ տեղեկություններ են հաղորդում մեր ուսումնասիրությանը ենթակա շրջանի դեպքերի, Հայաստանի ու հայերի վիճակի և Թուրքիայի ու Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրության մասին։ Հայկական աղբյուրների մեծ մասը ձեռագիր վիճակում գտնվում է Հայաստանի Մատենադարանում, որտեղից էլ մենք օգտվել ենք։

Աշխատությունը գրելիս իբրև գլխավոր աղբյուրներ են ծառայել առավելապես հայ պատմիչների ու տարեգիրների աշխատությունները և գրիչների հաղորդումները, իսկ մյուս աղբյուրները գլխավորապես լրացուցիչ և օժանդակ դեր են

խաղացել, մանավանդ Հայաստանի և հայերի հետ կապված հարցերում։

Այնուհետև պետք է նշել, որ Թուրքիայի և Իրանի պատմությանը վերաբերող հայկական աղբյուրները, մանավանդ ձեռագրերը, մինչև այժմ հայ պատմաբանների կողմից շատ քիչ են օգտագործվել՝ հայոց պատմության առնչությամբ։ Մինչդեռ Թուրքիայի և Իրանի պատմության հարցերի մասին հայկական աղբյուրները բավականաչափ տեղեկություններ են տալիս։ Բացի ձեռագրերի՝ հրատարակված ցուցակներից և այլ ժողովածուներում եղած նյութերից, չհրատարակված ձեռագրերը կամ նրանցում եղած հիշատակարանները, որոնք մենք օգտագործել ենք, հետևյալներն են՝ № № 1496, 2035, 1675, 1786, 2672, 2939, 1151, 3425, 519, 7584, 605, 3696, 481, 46, 5959, 1282, 8184, 1497, 1875, 675։ Ռուսական, թուրքական և մյուս օտար աղբյուրների շատ քիչ մասն է օգտագործված թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն պատմական աշխատություններում, հատկապես մեր ուսումնասիրությանը ենթակա ժամանակաշրջանի դեպքերի ու հարցերի վերաբերյալ։

Թեև նշված աղբյուրները, մանավանդ արխիվային նյութերը, մեծ մասամբ ճշմարտացի են և հիմնականում տալիս են դեպքերի օբյեկտիվ ընթացքը և սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրության իրենց լուսաբանությունը, սակայն ունեն նաև որոշ թերություններ՝ կապված այս կամ այն հեղինակի ազգային, դասակարգային և կրոնական պատկանելության կամ պաշտոնի ու դիրքի հետ։ Ընդ որում նրանցից շատերը հաճախ ելնելով իրենց սուբյեկտիվ, երբեմն էլ տենդենցիոզ նկատառումներից, դեպքերը ոչ միշտ են ստույգ նկարագրում, երբեմն էլ աղավաղում են փաստերը։ Այս թերությունը բացատրվում է նաև նրանով, որ մի շարք հեղինակներ ականատես կամ ժամանակակից չլինելով իրենց նկարագրած իրադարձություններին և հենվելով ուրիշների տվյալների վրա, ոչ բոլոր դեպքերում են ճշտորեն հաղորդում իրականությունը, մանավանդ որ նրանցից ոմանք չեն կարողացել ճիշտ պատկերացում ունենալ և կողմնորոշվել շատ դեպքերի ու հարցերի բարդության մեջ։

Անցնելով առանձին կարևոր աղբյուրների վերլուծությանը, ըստ նրանց բնույթի, սկզբից պետք է հայտնենք, որ այստեղ տալու ենք նրանց մասին մի քանի կարևոր տեղեկություններ և զբաղվելու ենք նրանց ընդհանուր բնութագրությամբ ու սոցիալ-դասակարգային գնահատականով միայն, իսկ առանձին կոնկրետ հարցերի վերաբերյալ մեր դիտողությունները, կարծիքը և վերլուծությունը ըստ հնարավորին տալու ենք առանձին գլուխներում, համապատասխան դեպքերի և հարցերի առնչությամբ։

Ամենից առաջ կանգ առնելով հայկական աղբյուրների վրա, պետք է նշենք, որ դրանք ամբողջովին բաղկացած են հայ հեղինակների մենագրություններից կամ այլ բնույթի գործերից և, հետևապես, հայերեն լեզվով արխիվային նյութեր տվյալ շրջանի վերաբերյալ շատ քիչ կան («Դիւան Հայոց պատմութեան» մեջ և «Ջամբռ»-ում), համենայն դեպս մենք այդպիսիք չենք հայտնաբերել։ Այնուհետև, հայկական աղբյուրների մեծագույն մասը էմպիրիկ-նկարագրական բնույթ է կրում և գերազանցապես հաղորդում է տեղի ունեցած իրադարձությունները, իսկ նշված երկրների սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին քիչ է պատմում. համարյա նույնը կարելի է ասել քաղաքական կարգերի վերաբերյալ, թեև դրանց վրա այն մի փոքր ավելի է ուշադրություն դարձնում։

Քանի որ նշված աղբյուրները և գրականությունը բավականին շատ են, ուստի հնարավոր չէ այստեղ զբաղվել մեր ուսումնասիրած բոլոր նյութերով։ Մենք կսահմանափակվենք առավել կարևորություն ունեցող հեղինակների գործերով, դրանք խմբավորելով ըստ իրենց բնույթի։

Նշված շրջանի հայ պատմիչներից ամենաաչքի ընկնողը Առաքել Դավրիժեցին է (1595—1669), որի «Գիրք պատմութեանց»-ը[1] ընդգրկում է XVII դարի առաջին 60 տարվա պատմությունը։ Իր այս աշխատությունը գրելիս պատմիչն օգտագործել է բազմաթիվ նյութեր, որոնք վերաբերում են Հայաստանին, ինչպես նաև հարևան երկրների՝ Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, Իրանի, Իրաքի պատմությանը։

Բացի հայ ժողովրդի պատմությունից և Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններից, Դավրիժեցին բավականին մանրամասն նկարագրում է այդ շրջանում Թուրքիայի և Իրանի միջև տեղի ունեցող պատերազմները և այդ կապակցությամբ հայ ժողովրդի կրած աղետները։ Նա բազմաթիվ փաստեր է նշում Հայաստանում ու Ադրբեջանում թուրքական դաժան տիրապետության վերաբերյալ և միաժամանակ արտահայտում Սեֆեյանների իշխանության հանդեպ ունեցած իր լոյալ վերաբերմունքը, ըստ երևույթին, կամ սուլթանական տիրապետության համեմատությամբ այն համարելով չարիքների փոքրագույնը, կամ արտահայտելով հայ հոգևորականության դրական վերաբերմունքը սեֆեյանների նկատմամբ (թեև անձամբ Շահ-Աբասի հանդեպ նա բացասական է տրամադրված)։

Դավրիժեցու «Պատմությունը», չլինելով դեպքերի սոսկ նկարագրություն և դինաստիական պատմություն, զգալի չափով փաստեր է տալիս սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարցերի վերաբերյալ։

Չնայած որ Դավրիժեցին ժամանակակից չէ իր նկարագրած դեպքերին, որոնք տեղի են ունեցել շուրջ կես դար իրենից առաջ, սակայն նրա հաղորդածը կարելի է համարել հավաստի, քանի որ նա օգտվել է արժանահավատ աղբյուրներից ու ականատեսների պատմածներից՝ նախօրոք ստուգելով դրանց ճշտությունը և հանդես բերելով զգույշ ու քննադատական վերաբերմունք։

Ինչ վերաբերում է Դավրիժեցու աշխատության թերություններին, ապա պետք է նկատել, որ առհասարակ հայկական աղբյուրների վերաբերյալ նշված թերություններն ընդհանուր առմամբ հատուկ են նաև այդ գրքին։

XVII դարի մյուս ականավոր պատմագիրը Գրիգոր Դարանաղցին կամ Կամախեցին է (1576—1643), որը գրել է XVI դարի վերջի և XVII դարի առաջին կեսի պատմությունը,

[1] 1896 թ. հրատարակությունը (Վաղարշապատ) Ղ. Սարկավագի կողմից վերնագրված է «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ», որից էլ մենք օգտվել ենք։

հետևապես, իր նկարագրած դեպքերին ոչ միայն ժամանակակից է, այլև մասամբ ականատես։ Նա գրել է մի շարք հիշատակարաններ և պատմական աշխատություններ, որոնցից ամենաարժեքավորը նրա «Ժամանակագրությունն» է։ Այս աշխատությունը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը. տարեգրություն է և ընդգրկում է 1615-ից 1639 թթ. համառոտ պատմությունը։ Գրքի երկրորդ մասը հիմնականում օրագրություն է, որի մեջ հաղորդվում են նաև ժամանակի իրադարձությունները[1]։

Գ. Դարանաղցին, որպես աշխատավորության ծոցից դուրս եկած հոգևորական, նկարագրում է ժողովրդի թշվառ վիճակը, նրա կենցաղը, տարբեր սոցիալական խավերի ու դասերի դրությունը և հոգևորականության այլասերված բարքերը։ Բացի այդ, նա նկարագրում է նաև քաղաքական անցուդարձը։ Նրա «Ժամանակագրությունը» բավականին վստահելի աղբյուր է թե՛ քաղաքական փաստերի և թե՛ այլ տվյալների տեսակետից։ Այնտեղ հարուստ փաստեր են տրված Հայաստանի, մասամբ և Թուրքիայի տնտեսական կյանքի վերաբերյալ։

Հաջորդ պատմիչը Զաքարիա Սարկավագն է (1627—1700), որը ծագումով նույնպես հասարակ խավերից է։ Նրա աշխատությունը («Պատմագրություն») ընդգրկում է XVII դարի գրեթե ամբողջ շրջանի պատմությունը և գերազանցապես վերաբերում է Երևանի մարզին։ Զաքարիա Սարկավագը ևս իր նկարագրած դեպքերին մեծ մասամբ ժամանակակից, երբեմն էլ ականատես է։ Իր գրվածքով նա լրացնում և որոշ չափով կրկնում է Դավրիժեցուն։ Նրա գրքում, բացի Հայաստանում տեղի ունեցած պատերազմներից ու քաղաքական անցուդարձերից, հարուստ տեղեկություններ կան նաև Արարատյան դաշտի տնտեսական դրության, արտադրողական ուժերի և առևտրական հարաբերությունների մասին։ Զաքարիան իր աշխատության մեջ պարսիկ պաշտոնյաների ու ֆեոդալների

[1] Այս մասը մեր ձեռքի տակ չունենալու պատճառով չենք կարողացել օգտվել նրանից։

կողմից հայ գյուղացիներին կեղեքելու և ճնշելու ցայտուն պատկերներ է տալիս։

Բացի մեթոդոլոգիական կարգի թերություններից, որոնք ընդհանուր են այն ժամանակվա բոլոր պատմիչների աշխատություններին, Զաքարիայի «Պատմագրությանը» հատուկ է ոչ քննադատական վերաբերմունքը շարադրված նյութի նկատմամբ, երբեմն էլ՝ խիստ նաիվ մտածելակերպը։ Նրա ժամանակագրական պատմության մեջ պատմական դեպքերի նկարագրության և այլ հարցերի հետ միասին կան նաև շատ անեկդոտիկ ու ֆանտաստիկ պատմություններ։ Սակայն հենց այդ միամտությունն ու պարզամտությունը որոշ դեպքերում նրա պատմությունը դարձնում են հասարակ ու ճշմարտացի։ Իհարկե, հեղինակի մոտ եկեղեցական-ֆեոդալական տենդենցները նկատվում են, բայց նրա պարզամտության պատճառով այդ տենդենցները հետևողական չեն ու ցայտուն։ Ընդհանուր առմամբ Զաքարիայի «Պատմագրությունը» իր թերություններով հանդերձ, կարելի է համարել վստահելի աղբյուր, թեպետև ինքը Զաքարիան հայտնում է, որ գրել է ըստ լուրերի, զանազան մարդկանց պատմածների և նախորդ պատմագիրների գրածների ու հիշատակարանների և չի երաշխավորում դրանց լիակատար ճշտությունը[1]։

Մյուս աչքի ընկնող հեղինակը Ավգուստինոս Բաջեցին է, որի աշխատությունը կոչվում է «Ճանապարհորդութիւն յԵւրոպայ, գրչագիր ի Փարիզ»։ Բաջեցին հայ կաթոլիկներից է և հետագայում դառնում է եպիսկոպոս։

XVII դարի սկզբին նա Ռուսաստանի վրայով ճանապարհորդություն է կատարում դեպի Եվրոպա և շրջագայում է մի շարք երկրներ։ Հայ պատմիչներից Ավգուստինոսը հանդիսանում է միակ ականատեսը հայերի այն խոշոր գաղթի, որը տեղի ունեցավ Շահ-Աբասի հրամանով։ Նա մանրամասն նկարագրում է այս գաղթը և հատկապես Արաքսն անցնելու սարսափելի տեսարանը, որին ինքը անձամբ մասնակցել է։ Այդ տեսակետից նրա տեղեկությունները բավականին վստահելի և շատ հետաքրքիր աղբյուր են։ Վերոհիշյալ աշխատու-

[1] Տե՛ս Զաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, հ. I, էջ 15։

թյան մեջ Բաղեցին նկարագրում է իր ճանապարհորդությունը և մանավանդ XVII դարի սկզբում Ռուսաստանում տեղի ունեցած դեպքերը։

Խաչատուր Ջուղայեցին XVIII դարի հոգևորական մատենագիրներից է, որի աշխատությունը՝ «Պատմութիւն պարսից», որոշ վերապահությամբ միայն կարելի է աղբյուր համարել, որքանով որ գրվել է այլ աղբյուրների հիման վրա։ Նրա շարադրած պատմությունը սկսվում է IV դարից և հասնում է մինչև 1779 թ.։ Ջուղայեցին իր աշխատության մեջ գլխավորապես շարադրում է Պարսկաստանի պատմությունը, այդ կապակցությամբ բավականաչափ շոշափելով նաև հայ իրականության հետ կապված հարցերն ու դեպքերը։

Նրա աշխատությունը մեթոդոլոգիական տեսակետից հիմնականում նույն թերություններն ունենալով, ինչ որ մյուս պատմիչների աշխատությունները, միաժամանակ Իրանի և Հայաստանի պատմության համար կարևոր աղբյուրներից մեկն է, քանի որ նա հիմնվում է նախորդ աղբյուրների վրա։

Իբրև արժեքավոր աղբյուրներ հատուկ ուշադրության արժանի են նաև այն ժամանակագրությունները կամ տարեգրությունները, որոնք մենք օգտագործել ենք։ Դրանց մեծ մասը հրատարակված է մի շարք ժողովածուներում («Դիւան Հայոց պատմութեան», «Այրարատ», մասամբ «Հայապատում», Փիրղալեմյանի ձեռագիր ժողովածուն, Ք. Պատկանյանի՝ «Նըշխարք մատենագրութեան հայոց», Վ. Հակոբյանի՝ «Մանր ժամանակագրություններ» և այլն)։ Այդ գրվածքների հեղինակները մեծ մասամբ լինելով իրենց նկարագրած դեպքերի ժամանակակից, ընդհանուր առմամբ տալիս են արժանահավատ վկայություններ, որոնք մեծ մասամբ համապատասխանում են իրականությանը։ Սակայն երբեմն թույլ են տրվում և որոշ շեղումներ, իրականության խեղաթյուրումներ, դեպքերի, տարեթվերի և անունների աղավաղումներ և այլն։ Բացի այդ, ի տարբերություն պատմիչների, նրանք գրեթե բոլորն էլ մեծ մասամբ տալիս են իրադարձությունների, զանազան դեպքերի և երևույթների չոր ու ցամաք, սխեմատիկ խրոնիկա, շատ քիչ խոսելով սրանց պատճառների, բնույթի, ինչպես նաև

տվյալ ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին։ Նրանք գրեթե չեն մեկնաբանում տեղի ունեցած դեպքերն ու երևույթները։ Այս հանգամանքները հաշվի առնելով, մենք այս կարգի աղբյուրներին ևս վերաբերվել ենք զգուշությամբ և այդպիսիք օգտագործել ստուգելուց ու ճշտելուց հետո միայն։

XVI—XVII դարերի իրադարձությունների վերաբերյալ բավականին մեծ քանակությամբ ժամանակագրություններ և տարեգրություններ կան Հայաստանի Պետական Մատենադարանի ձեռագրերում, որոնք մեծ մասամբ հաղորդում են այդ շրջանում տեղի ունեցած թուրք-իրանական պատերազմների, Հայաստանի, մասամբ նաև Անդրկովկասի մյուս երկրների դրության, Թուրքիայում և Իրանում կատարված կարևոր դեպքերի և այլնի մասին։ Այս շրջանի ժամանակագրությունները (գլխավորապես մանր տիպի) հավաքված և երկու հատորով հրատարակված են Վ. Հակոբյանի կողմից։ Այդ արժեքավոր աշխատանքը հեղինակի ներածական մեկնաբանություններով ու ծանոթագրություններով շատ շնորհակալ գործ է և զգալի ավանդ է հայ պատմագիտության մեջ։

Մեր ուսումնասիրած շրջանի վերաբերյալ ևս բազմաթիվ հիշատակարաններ կան, որոնք թեև համառոտ, բայց կարևոր տեղեկություններ են հաղորդում մեզ հետաքրքրող դեպքերի մասին։ Բացի հրատարակված բազմաթիվ հիշատակարաններից[1], մենք առաջին անգամ օգտագործել ենք Պետական Մատենադարանի նաև մի շարք ձեռագրեր, որոնք գտնվում են 46, 481, 675, 1282, 1496, 1497, 1675, 2035, 2672, 5959[2] համարների տակ և մինչև այժմ չեն հրատարակված։

Խոսելով թուրքական աղբյուրների մասին, պետք է նշել, որ նրանք իրենց բնույթով ու ձևով հիմնականում նման են հայկական շատ աղբյուրներին, հատկապես պատմիչների աշխատություններին։ Այդ աղբյուրները հիմնակա-

[1] Տե՛ս Հ. Տաշյանի, Բ. Սարգսյանի, Ե. Լալայանի, Հ. Աճառյանի և այլոց «Ցուցակները», Գ. Սրվանձտյանի «Թորոս Աղբարը» և մյուս համապատասխան աշխատությունները։

[2] Սրանց մեջ կան նաև տարեգրություններ։

նում թուրքական ժամանակակից պատմագիրների գրվածքներն են (պատմական երկեր կամ տարեգրություններ)։ Շատ քիչ քանակությամբ կան նաև վավերագրեր (նամակներ, պայմանագրեր և այլն)։

Այնքան էլ շատ չեն մեր ուսումնասիրությանը ենթակա շրջանի վերաբերյալ թուրքական պատմագիրների և այլ հեղինակների աշխատությունները[1], որոնց հայերեն կամ ռուսերեն թարգմանություններից և օգտվել ենք մենք։

Տալով այս աղբյուրների ընդհանուր բնութագրությունը, անհրաժեշտ է ամենից առաջ նշել, որ դրանք հաղորդում են առանձին փաստերն ու դեպքերը հաճախ ազգայնական ոգով։ Սակայն այդ դեպքերը նրանց մոտ քիչ են կապվում Թուրքիայի պատմական զարգացման ընդհանուր ընթացքի հետ։ Այս տիպի գրականության մասին ընդհանրապես պետք է ասել, որ մեթոդոլոգիական և այլ տեսակետից այն տառապում է գրեթե նույն թերություններով, ինչ ասվեց հայկական աղբյուրների մասին։

Թուրքական աշքի ընկնող մի քանի աշխատություններից ամենից առաջ պետք է հիշատակել հետևյալ գործերը. Մուստաֆա Սելյանիկիի «Խրոնիկան»[2] վերաբերում է Թուրքիայի պատմության XVI դարի երկրորդ կեսին։ Իր ձեռքի տակ ունենալով շատ հարուստ նյութեր և փաստաթղթեր, Սելյանիկին արժեքավոր և հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Թուրքիայի տնտեսական դրության և սոցիալական մի քանի հարցերի ու քաղաքական որոշ իրադարձությունների մասին։ Խոսելով Թուրքիայի ներքին կյանքում այն ժամանակ գոյություն ունեցող շարժումների ու խլրտումների պատճառների մասին, Սելյանիկին իր դժգոհությունն է հայտնում կայսրության կառավարման սիստեմի մի շարք կողմերի հանդեպ։

Իբրահիմ Փեչևիի (1574—մոտ 1650) երկու հատորից բաղ-

[1] Այդ աշխատություններից միայն մի քանիսն են գտնվում Սովետական Միության գրադարաններում և գրված են արաբատառ թուրքերենով։

[2] Տե՛ս В. Д. Смирнов, Кучибей Геомурджинский и др. османские писатели о причинах упадка Турции, СПб, 1873, էջ 7։

կացած «Պատմությունը» արդեն իսկական պատմական աշխատություն է (համարյա տարեգրության ձևով)[1], որը առանձին արժեքավոր է նրանով, որ այնտեղ գլխավորապես շարադրված են Թուրքիայի պատմության հետ կապված իրադարձությունները և հատկապես Թուրքիայի մղած պատերազմները, որոնք տեղի են ունեցել 1520—1639 թթ. ժամանակաշրջանում և բավականաչափ կապված են Հայաստանի ու հայերի հետ։ Փեչևին իր «Պատմության» մեջ նկարագրած որոշ դեպքերի ականատեսն ու մասնակիցն էր։ Այդ հանգամանքը զգալիորեն բարձրացնում է նրա աշխատության նշանակությունը, թեև ցայտուն կերպով նկատվում է նրա տենդենցիոզ մոտեցումը և աչառու վերաբերմունքը իր պատմած դեպքերի վերաբերյալ։

Աշքի ընկնող աղբյուր և պատմական կարևոր երկ է «Ֆեզլիկե»-ն, որի հեղինակն է հայտնի թուրք գիտնական, պատմաբան Մուստաֆա Քյաթիբ Չելեբին (1609—1657)[2]։

«Ֆեզլիկե»-ն ընդգրկում է 1592—1654 թթ. ժամանակաշրջանը։ Գրքի այն մասը, որը վերաբերում է հեղինակի ապրած ժամանակաշրջանին, Թուրքիայի պատմության շատ արժեքավոր աղբյուր է, քանի որ այնտեղ հեղինակը աշխատում է ավելի հանգամանորեն և ճշմարտացի շարադրել պետության ներքին դրությունն ու իրադարձությունները։ Իսկ աշխատության առաջին մասը, որը վերաբերում է իրենից առաջ եղած շրջանին, նա մեծ մասամբ գրել է մի շարք թուրքական պատմագիրների նյութերի, ինչպես նաև ականատեսների պատմածների հիման վրա։

Հաջորդ թուրք պատմագիրը Նայիման է (Հալեբլի Մուստաֆա), որը վախճանվել է 1716 թ., ծննդյան թվականը հայտ-

[1] Այս աշխատության, ինչպես նաև Նայիմայի «Պատմության» որոշ մասերը մենք օգտագործել ենք Արամ Սաֆրաստյանի թարգմանությամբ, որը գտնվում է նրա «Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատության մեջ (2 հատ.)։ Հեղինակը իր աշխատությունը մեզ տրամադրեց դեռ չտպագրված վիճակում, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

[2] Սրա մասին տե՛ս I. Hammer, Geschichte des Osmanischen Reiches, Bd. VI, S. 46, В. Д. Смирнов, նշվ. աշխ., էջ 13։

БИБЛИОТЕКА

նի չէ։ Նա եղել է Թուրքիայի պատմության պաշտոնական տարեգիրը, որի շարադրած պատմությունը՝ «Թարիխի Նայիմա»-ն բաղկացած է 6 մեծածավալ հատորից և ընդգրկում է 1591—1659 թվականների միջև ընկած շրջանը, որը զուգադիպում է Օսմանյան պետության հզորության աստիճանական անկմանը և Թուրքիայի մղած գրեթե անընդհատ պատերազմների իրադարձություններին։ Այդ բոլոր դեպքերը Նայիման պատմում է տարեգրության ձևով, հաճախ շատ մանրամասն։ Նա ականատես է եղել վերջին երկու տասնամյակի դեպքերին իբրև պաշտոնական տարեգիր և հավանաբար օգտվել է արքունիքի և այլ փաստաթղթերից։

Նայիման ունի իր տեսակետը պատմության վերաբերյալ։ Նա գտնում է, որ անհրաժեշտ է այլոց հաղորդած տեղեկությունները ըստ արժանվույն ստուգելուց հետո միայն պատմել ու բացատրել։ Իրոք, Նայիման իր պատմության մեջ կարողացել է որոշ չափով խուսափել թուրք պատմագիրներին հատուկ՝ պատմելու, նկարագրելու, հաճախ գովերգելու ձևից և մասամբ տեղ տալ երևույթների պատմական լուսաբանությանը, երբեմն էլ քննադատական մոմենտներին՝ իհարկե այն ժամանակվա պայմաններում եղած հնարավորության չափով։ Իսկ նա ևս զերծ չէ տենդենցիոզ-սուբյեկտիվ վերաբերմունքից՝ իր նկարագրած դեպքերի խնդրում, մանավանդ Թուրքիայի հակառակորդների նկատմամբ։

Թուրքական աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Խոջի-բեկի «Ռիսալե»-ն։ Դա նրա զեկուցագիրն է՝ ներկայացված սուլթան Մուրադ IV-ին և խիստ կարևոր փաստաթուղթ՝ Թուրքիայի պատմության ուսումնասիրման համար։

Խոջի-բեկ Գյումուրջեցին, որն ապրել է XVII դարում, եղել է արքունական պաշտոնյաներից մեկը և ականավոր պատմաբան։ Համմերը նրան անվանում է օսմանական Մոնթեսքյո[1]։ Հիշյալ զեկուցումը, որը գրվել է 1630—1631 թթ., վերնագրված է «Ռիսալե-ի Խոջի-բեկ» («Խոջի-բեկի զեկուցումը»)։ Այս շատ կարևոր և ընդարձակ փաստաթուղթը, որը արժեքավոր տրակտատ է հատկապես XVI դարի վերջի և XVII դարի առաջին

[1] Տե՛ս I. Hammer, Geschichte d. Osm. Reiches, Bd. VII, էջ 291։

ֆեոդ. Թուրքիայի տնտեսական ու սոցիալական դրության վերաբերյալ, հաջող կերպով թարգմանել է «ռուսերենի և մեկնաբանություններով ու ծանոթագրություններով 1873 թ. հրատարակել ռուս ականավոր թուրքոլոգ Վ. Դ. Սմիրնովը[1]։

Իր աշխատության մեջ Վ. Դ. Սմիրնովը լայնորեն ուսումնասիրում և քննության է ենթարկում Խոջի-բեկի հայացքները, բայց միաժամանակ առանց քննադատության ընդունում և երկնում է Թուրքիայի հզորության անկման պատճառների՝ Խոջի-բեկի բացատրությունը։

«Ռիսալե»-ում Խոջի-բեկը ոչ միայն ներկայացնում է Օսմանյան կայսրության ընդհանուր անկման պատկերը XVI դարի վերջերից, այլև ցույց է տալիս այն պատճառները, որոնք, նրա կարծիքով, երկիրը հասցրին անկման։ Միաժամանակ այդ փաստաթղթի հեղինակը առաջարկում է այնպիսի միջոցառումներ, որոնք, ըստ նրա, բավական են Թուրքիայի կորցրած հզորությունը վերականգնելու համար։

Որպես թուրքական ֆեոդալական հասարակության տիպիկ ներկայացուցիչ և քայքայվող մանր ու միջին ֆեոդալների գաղափարախոս, Խոջի-բեկը գտնում է, որ եթե վերականգնվի նախկին լենային սիստեմը, ամեն ինչ ինքն իրեն կհանգի նորմալ վիճակի[2]։ Իբրև աղբյուր «Ռիսալե»-ն շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն այն պատճառով, որ պարունակում է հարուստ ու կարևոր տեղեկություններ, այլև նրա համար, որ նրա հեղինակը ժամանակակից է իր նկարագրած դեպքերին ու սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխություններին։

Մեզ համար առանձնապես արժեքավոր է Թուրքիայի տնտեսական դրության նկարագրությունը և Օսմանյան պետության քայքայման ու անկման հարուստ փաստերի շարադրանքը, որ կատարում է Խոջի-բեկը այդ աշխատությունում։

Ռուսական աղբյուրների մեծ մասը իր բնույթով տարբեր-

[1] Տե՛ս նրա հիշ. աշխ.-ը։

[2] „Рисале", В. Д. Смирнов, նույն տեղը, էջ 149. Խոջի-բեկի տիպալ կոնցեպցիայի քննադատությունը մենք տվել ենք համապատասխան գլխում, Թուրքիայի անկման պատճառները քննելիս։

վում է հիշյալ շատ աղբյուրներից։ Մեր ուսումնասիրության շրջանի՝ թուրք-իրանական, ռուս-թուրքական և ռուս-իրանական հարաբերություններին, մասամբ և Թուրքիայի ու Իրանի ներքին դրությանը վերաբերող աղբյուրները հիմնականում արխիվային փաստաթղթեր են, այսինքն պաշտոնագրեր (амоты), դեսպանների զեկուցագրեր, նակազներ և այլն, որոնք կենտրոնացված են ՍՍՌՄ-ի Հնադարյան ակտերի Պետական կենտրոնական արխիվում (ЦГАДА) և որոնք մեծ մասամբ, մանավանդ ռուս-իրանական հարաբերություններին վերաբերող նյութերը, որպես ժողովածուներ հրատարակված են դեռևս նախառևոլյուցիոն շրջանում. ինչպես, օրինակ՝ Ա. Վեսելովսկու „Памятники дипломатических и торговых отношений московской Руси с Персией", 3 հատորով, Ս. Բելոկուրովի „Сношение России с Кавказом", „Памятники дипломатических сношений России с державами иностранными", „Чтения в императорском обществе истории и древностей российских", մի քանի գրքերով և այլն։ Սրանցից հատկապես կարևոր են Ա. Վեսելովսկու ժողովածուն՝ հրատարակված 1890—1898 թթ., ուր զետեղված են պարսկական գործերը՝ սկսած 1592 թ., պաշտոնագրերը և արակտատները՝ սկսած 1588 թ. և Մոտաեյնի սպիսակները՝ սկսած 1588 թ.։ Մոտավորապես նույնանման տեղ է գրավում նաև Ս. Բելոկուրովի կազմած արխիվային նյութերի ժողովածուն, որի մեջ զետեղված են Արտաքին գործերի մինիստրության Մոսկվայի գլխավոր արխիվի փաստաթղթերը՝ 1578—1615 թթ. շրջանին վերաբերող։ Իսկ „Памятники дипломатических сношений России с державами иностранными" ժողովածուն ավելի բազմազան է և վերաբերում է շատ երկրների, այդ թվում սահմանափակ չափով նաև Թուրքիայի ու Իրանի հետ Ռուսաստանի ունեցած հարաբերություններին։ Այս ժողովածուն իր բնույթով և կառուցվածքով համարյա նման է վերոհիշյալ մյուս ժողովածուներին։ Սրանից մենք համեմատաբար քիչ նյութեր ենք օգտագործել։

Բացի սրանցից, շատ փաստաթղթեր կամ դրանց հատ-

վածներ, որոնք վերաբերում են XVI—XVII դարերի ռուս-թուրքական հարաբերություններին, հրապարակված են պրոֆ. Ն. Ս. Սմիրնովի՝ „Россия и Турция в XVI—XVII вв." մենագրության մեջ։

ЦГАДА-ի հիմնական ֆոնդը կազմում են Պոսոլսկի պրիկազի, արտասահմանյան կոլեգիայի և Արտաքին գործերի մինիստրության նյութերն ու վավերագրերը։ Մեզ հաջողվեց հին ռուսերենով և արագագիր (скоропись) գրված, այդ ֆոնդերի չհրատարակված մասերից օգտագործել միայն մի քանի նյութեր, որոնք արժեքավոր են այս ուսումնասիրության համար։

Հիշյալ արխիվում գտնվող նյութերից շատ արժեքավոր սկզբնաղբյուր են նաև ռուս թագավորների, Թուրքիայի սուլթանների, Իրանի շահերի և այլ բարձրաստիճան անձերի կողմից միմյանց ուղարկած պաշտոնագրերը, որոնք մեծ մասամբ հրատարակված են վերևում նշված ժողովածուներում, մանավանդ ռուս-իրանական հարաբերություններին վերաբերվող նյութերը։ Այս պաշտոնագրերում եղած տեղեկություններն ու հաղորդումները հավաստի աղբյուրներ չեն, քանի որ դրանք հաճախ չեն արտացոլում կառավարությունների իսկական մտադրությունները և քողարկում նրանց իսկական իմաստը։ Նրանցում երբեմն այլևայլ նկատառումներով խեղաթյուրվում են պետության մեջ տեղի ունեցած իրադարձությունների իրական ընթացքն ու պատկերը։

Պետք է նաև նկատել, որ թուրքական ու հատկապես պարսկական պաշտոնագրերի թարգմանությունը հաճախ ճշգրիտ չէ։ Այս պատճառով էլ մենք այդ կարևոր փաստաթղթերից օգտվել ենք բավականին զգուշորեն, այլ աղբյուրների միջոցով ստուգելուց հետո միայն։

Արևմտաևրոպական աղբյուրները իրենց բնույթով հաճախ տարբերվում են նշված մյուս աղբյուրներից։ Դրանք մեծ մասամբ Թուրքիա, Իրան կամ Կովկաս այցելած եվրոպական, այլև ռուս ճանապարհորդների, վաճառականների, դեսպանների ուղեգրություններն են կամ նրանց տեսած ու լսած դեպքերի ու երևույթների նկարագրությունները։ Հով-

հանեցեց Հակոբյանը հրատարակել է այդ ուղեգրությունների մի մասը[1], որից մենք օգտվել ենք։ Բացի դրանից, մենք օգտագործել ենք նաև ռուս հեղինակների հրատարակած՝ ռուս և եվրոպական ճանապարհորդների ուղեգրությունները, ինչպես նաև մի քանի եվրոպական այդպիսի ճանապարհորդների աշխատություններն անմիջաբար։ Այս ճանապարհորդները կամ վաճառականները, որոնցից ոմանք միաժամանակ դեսպաններ են եղել, հիմնականում հետևյալներն են. Ջենկինսոնը, Դ՝ Ալեսանդրին, Ջիովանի Մարիա Անջիոլելլոն, Կատերինո Զենոն, Կոտովը, Տավերնյեն, Ադամ Օլեարին, Շարդենը և այլն։

Եվրոպական ճանապարհորդները արժեքավոր տեղեկություններ են տալիս և բովանդակալի նյութեր են հաղորդում Թուրքիայի, Իրանի, Հայաստանի և մասամբ էլ Անդրկովկասի մյուս երկրների արտաքին և գլխավորապես ներքին դրության վերաբերյալ։ Բացի դրանից, նրանք հաղորդում են նաև Թուրքիայի ու Իրանի արտաքին հարաբերությունների և նրանց մղած պատերազմների մասին։ Սակայն նրանց տված տեղեկությունները մեծ մասամբ կրում են ոչ ամբողջական, ֆրագմենտային բնույթ։

Մենք զգուշությամբ ենք վերաբերվել այս կարգի աղբյուրներին ևս, ստուգել ենք նրանց տված տեղեկությունները, հաշվի առնելով նրանց ֆունկցիոնալ նշանակությունը։

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև 1639 թ. թուրք-իրանական հաշտության պայմանագրի մասին, որի պատճենները պարսկերեն և թուրքերեն լեզուներով ձեռք ենք բերել Մոսկվայի՝ Լենինի անվան գրադարանում։ Այդ պայմանագրի հայերեն թարգմանությունը իբրև հավելված զետեղում ենք ներկա աշխատության վերջում[1]։

Այս պայմանագրի տեքստը, իբրև շատ կարևոր փաստաթուղթ, Հայաստանի, Թուրքիայի և Իրանի պատմության համար խիստ արժեքավոր սկզբնաղբյուր է, որի տվյալները՝ Թուրքիայի և Իրանի սահմանների որոշման, նրանց միջև Հայաստանի վերջնական բաժանման, պատերազմը վերջանալու պահին թուրք-իրանական հարաբերությունների և այլ հարցերի մասին, միանգամայն իրական են։

* * *

Ընդհանրապես պատմագրական բնույթի հարցերի առանձին ուսումնասիրությունների ու պատմական աշխատությունների մասին, որոնցից մենք օգտվել ենք, պետք է ասել հետևյալը։ Մեր ուսումնասիրության առարկան հանդիսացող թեմայի վերաբերյալ հատուկ աշխատություն մինչև այժմ լույս չի տեսել ոչ մի լեզվով։ Մեր օգտագործած մեծ քանակությամբ գրականությունը հայերեն, ռուսերեն, թուրքերեն և գերմաներեն լեզուներով վերաբերում է Թուրքիայի, Իրանի և հայոց պատմությանը կամ դրանց հետ առնչվող զանազան դեպքերին ու հարցերին։ Իսկ մեզ հետաքրքրող հարցերը քիչ են շոշափված կամ գրեթե բոլորովին չեն շոշափված։ Այդ գրականության մեծ մասը պատկանում է բուրժուական պատմաբանների գրչին և տառապում է ոչ միայն մեթոդոլոգիական, այլև զուտ պատմագիտական թերություններով։

Ներկա թեման շարադրելիս մենք լայն չափով օգտվել ենք մարքսիզմ-լենինիզմի կլասիկների մի շարք աշխատություններից, որտեղ զգալի դիտողություններ ու ասույթներ կան Թուրքիայի և Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրության, դասակարգային և ազգային-ազատագրական պայքարի, մասամբ նաև նրանց (հատկապես Թուրքիայի) արտաքին դրության, մղած պատերազմների մասին։ Կ. Մարքսի «Ժամանակագրական քաղվածքներ»-ում[1] բավականաչափ փաստեր են շարադրված Թուրքիայի պատմությունից։ Այդ աշխատությունները օգնել են պարզել շատ կարևոր սկզբունքային հարցեր և վերլուծել իրադարձությունները։

Մեզ մասամբ օգնել են նաև սովետական արևելագետների աշխատությունները, որոնք հիմնականում ճիշտ են

[1] «Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. Ուղեգրություններ», հ. Ա, Երևան, 1932։

[1] Архив Маркса и Энгельса, тт. VI, VII, VIII.

լուսաբանում Թուրքիայի և Իրանի պատմության հետ կապված հարցերը։

Պետք է նշել, որ ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի բուրժուական պատմագրությունը, իրեն հատուկ սահմանափակության պատճառով, ճիշտ չի ըմբռնում և վերլուծում պատմական երևույթներն ընդհանրապես և ներկա նյութի պատմական երևույթները՝ մասնավորապես։ Մի շարք հեղինակներ՝ Համմերը, Ցինկայզենը, Այվազովսկին, Սայքսը, Լավիսսը, Ռամբոն և ուրիշներ կրում են թուրքական կամ իրանական աղբյուրների ազդեցությունը, աղբյուրներ, որոնք մեծ մասամբ արտահայտում են շահական կամ սուլթանական իշխանության պաշտոնական տեսակետը և հաճախ միտումնավոր կերպով խեղաթյուրում փաստերը։

Մասնավորացնելով հարցը ժամանակակից բուրժուական արևելագիտության վերաբերյալ, պետք է նկատենք, որ այն, մասնավորապես բուրժուական թուրքագիտությունը, ճգնաժամ է ապրում։ Բացի բուրժուական պատմագրությանը հատուկ ընդհանուր արատներից, բուրժուական արևելագետները (օրինակ՝ Դավես, Մերրիման, Վիտտեկ և ուրիշներ) Արևելքի երկրների պատմությունը մեծ մասամբ լուսաբանում են պանիսլամիզմի, պանթուրքիզմի, պանիրանիզմի և նման այլ ռեակցիոն գաղափարախոսությունների դիրքերից։

Ժամանակակից ռեակցիոն թուրքական պատմաբանները (Ֆուադ Քյոփրյուլյու, Ուզունչարշըլը և ուրիշներ), կեղծելով պատմական փաստերը, իդեալականացնում են թուրքական ֆեոդալական հարաբերությունները և լռության մատնելով սոցիալական շարժումների իսկական էությունը, խեղաթյուրում են Թուրքիայի պատմության հարցերը։

Մասնավորապես թուրքագիտության ու իրանագիտության զարգացման գործում մեծ աշխատանք են կատարել նախահեղափոխական ռուս պատմաբանները, որոնցից հատկապես աչքի են ընկնում Ս. Գլինկան, Վ. Դ. Սմիրնովը, Ա. Զեմերզինը, Վ. Վ. Բարտոլդը և ուրիշներ։ Սրանք նշանակալից գործ են կատարել Արևելքի երկրների, հատկապես թուրքական ու իրանական աղբյուրների ուսումնասիրման և այդ

երկրների պատմության շատ հարցերի լուսաբանման գործում։

Այստեղ մենք կանգ կառնենք միայն մի շարք աչքի ընկնող հեղինակների հիմնական գործերի վրա, որոնց մեջ քիչ թե շատ արտացոլվել են մեր թեմայի նյութը հանդիսացող հարցերը։

Հայ պատմագրությունը ևս որոշ չափով զբաղվել է XVI—XVII դարերում թուրք-իրանական հարաբերությունների և հատկապես պատերազմների հարցերով՝ կապված Հայաստանի պատմության հետ. այս տեսակետից այն որոշ չափով մեզ օգնել է մի շարք հարցեր պարզելու գործում։

Ժամանակագրական կարգով ամենից առաջ պետք է խոսել XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի հայ խոշոր պատմագիր Միխայել Չամչյանի (1738—1825) «Հայոց պատմության» մասին, թեև մեզ հետաքրքրող դեպքերի և հարցերի վերաբերյալ այնտեղ անհրաժեշտ չափով տեղեկություններ չկան, մանավանդ որ դրանք մեծ մասամբ Ա. Դավրիժեցու և այլ հեղինակների հաղորդածներից քաղված նյութեր են։ Չամչյանի՝ 3 հատորից բաղկացած մեծածավալ աշխատությունից (հրատարակված 1784—1786 թթ.) մենք օգտագործել ենք միայն 3-րդ հատորի 2-րդ գիրքը։ Անշուշտ որպես պատմաբան Չամչյանը մեծ գործ է կատարել հայ պատմագիտության բնագավառում։ Նրա «Հայոց պատմությունը» լինելով բազմակողմանի մի աշխատություն, ընդգրկում է նաև Թուրքիայի ու Իրանի պատմության շատ հարցեր՝ հայոց պատմության կապակցությամբ։ Չամչյանը հիմնականում լինելով կղերա-բուրժուական պատմագրության ներկայացուցիչը (մասամբ էլ մնալով ֆեոդալական-կղերական պատմագրության դիրքերում) իր «Պատմության» մեջ դրսևորում է այդ դասակարգերի պատմագրությանը հատուկ գրեթե բոլոր արատները։ Կղերական մտայնությունը նրա երկերում զգացվում է գրեթե ամենուրեք։ Ելնելով գլխավորապես սուբյեկտիվ-իդեալիստական մեթոդոլոգիայի դիրքերից և անտեսելով սոցիալ-տնտեսական հարաբերությունները պատմության մեջ, Չամչյանը պատմական երևույթների զարգա-

ցումը համարում է առանձին ականավոր մարդկանց գործունեության արդյունք, պատմությունը վեր ածում պետական և այլ գործիչների կենսագրության։ Բացի դրանից, նա հասարակության պատմությունը հանգեցնում է քաղաքական և էրոնական դեպքերի սոսկական շարադրման՝ կտրելով այն սոցիալ-տնտեսական հարաբերություններից։ Էլ չենք խոսում այն մասին, որ եկեղեցու և հոգևորականության պատմությունը դարձել է նրա պատմության առանցքը։

Մերժելով Զամչյանի ռեակցիոն հայացքները, մենք օգտագործել ենք նրա գրքում եղած գլխավորապես փաստական նյութը։

Արևմտաևրոպական պատմագրության մեջ թե՛ ժամանակագրական և թե՛ գիտական նշանակության տեսակետից առաջին տեղը գրավում է ավստրիացի խոշոր արևելագետ Իոսիֆ Համմերը (1774—1856 թթ.), որն ամենից շատ է զբաղվել Թուրքիայի պատմությամբ։ Թուրքիայի ընդհանուր պատմությանը նվիրված նրա 5 հատորանոց կապիտալ աշխատությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1830—1834 թթ. գերմաներեն լեզվով, «Օսմանյան կայսրության պատմությունը» («Geschichte des Osmanischen Reiches») գիրքն է, որը չնայած թերություններին, արժեքավոր գործ է և մինչև հիմա էլ չի կորցրել իր նշանակությունը։

Մարքսը «Турецкий вопрос» հոդվածում գովասանքով է խոսում Համմերի, որպես Թուրքիայի պատմության մասնագետի, մասին[1] և որոշ հարցերում վկայակոչում է նրա աշխատությունը[2]։

Համմերի աշխատության գլխավոր առավելությունը կայանում է նրանում, որ նա սիստեմատիկ շարադրանքի միջոցով կատարել է Թուրքիայի պատմության նյութերի ժամանակագրական միացումը։ Նա լուրջ ուշադրություն է դարձրել արտաքին քաղաքական, ռազմական իրադարձություններին և Թուրքիայի ներքին պատմությանը՝ հատկապես մանրամասն

[1] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, էջ 387։
[2] Տե՛ս նույն տեղը, հ. X, էջ 61։

նկարագրելով ժողովրդական ապստամբություններն ու այլ խռովություններ։ Սակայն Համմերի կոնցեպցիան սուբյեկտիվ-իդեալիստական է, հետևապես արատավոր։ Նրա համար սոցիալ-տնտեսական պայմանները չեն հանդիսանում պատմական պրոցեսի ու դեպքերի պատճառը, և ժողովուրդը չէ պատմության հիմնական շարժիչ ուժը։ Ժողովրդական ապստամբությունների մասին Համմերը այն չափով է խոսում, որ չափով դրանք խանգարում են պետական կարգի զարգացմանը։ Պետությունը նրա համար իբրև ինչ-որ վերդասակարգային ուժ է, ինքնաբավ ու ինքնորոշիչ։ Պետական կարգը պատմության հիմնական գործոնն է։ Պետության գլուխ կանգնած մարդկանց գործունեության մեջ է նա փորձում գտնել Թուրքիայի պատմության իմաստը։

Համմերը իր մոնումենտալ աշխատության մեջ նկարագրած դեպքերի ժամանակագիրն է։ Հիմնականում նա պատմական դեպքերը և այլ երևույթները շարադրում է էմպիրիկ-նկարագրական ձևով։ Այդ երևույթների պատճառական վերլուծությունը գրեթե չի տալիս և գիտական ընդհանրացումներ քիչ է անում։ Իսկ եթե երբեմն էլ նման վերլուծություններ և ընդհանրացումներ է անում, ապա այդպիսիք զուրկ են սոցիալ-դասակարգային պատճառականությունից։

Անհրաժեշտ է նաև նշել, որ Թուրքիայի պետական կարգը, զինվորական կազմակերպությունը և հողատիրության կարգը նկարագրելիս Համմերը շատ դեպքերում բառ առ բառ կրկնում է «Կանուն-նամե»-ի դրույթները։ Մի շարք այլ արևմտաևրոպական բուրժուական պատմաբան-արևելագետների նման նա հաճախ գերի է դառնում մուսուլմանական աղբյուրներին, որոնք պարունակում են իրավաբանական-կրոնական նորմաներ։

Համմերի աշխատությունից հետո Թուրքերի պատմության վերաբերյալ բավականին խոշոր և ուշադրության արժանի աշխատանք է նաև Ցինկայզենի «Geschichte des Osmanischen Reiches in Europa» 7 հատորից բաղկացած մեծածավալ աշխատությունը, որը լույս է տեսել 1840 թ. և նույնպես գրված է բազմաթիվ թուրքական ու այլ աղբյուրների հիման

վրա. մեծ քանակությամբ փաստական նյութ է պարունակում և հետաքրքիր մանրամասնություններ ու վավերագրեր է տալիս Թուրքիայի պատմության վերաբերյալ, մանավանդ նրա միջազգային հարաբերությունների և մղած պատերազմների մասին։ Իհարկե, չնայած սրան, Ցինկայզենի այս աշխատանքը մի շարք կողմերով զիջում է Համմերի նշված աշխատությանը։ Իր մեթոդոլոգիական կողմով Ցինկայզենի ներկա աշխատությունը գրեթե չի տարբերվում Համմերի այդ աշխատությունից։ Ուստի հարկ չենք համարում այդ մասին հատկապես խոսել նրա գրքի կապակցությամբ։

Արևմտաևրոպական աչքի ընկնող այլ պատմաբաններից, որոնց աշխատություններում այս կամ այն չափով արտացոլվել են մեր թեմային վերաբերող հարցերը, կարելի է այստեղ հիշատակել ֆրանսիացի Էռնստ Լավիսսին և Ալֆրեդ Ռամբոյին, Ավգուստ Մյուլլերին և ավելի ուշ շրջանի (XIX դարի վերջի և XX դարի առաջի կեսի) անգլիացի Պ. Սայքսին։

Լավիսսի ու Ռամբոյի ղեկավարությամբ ու մասնակցությամբ 1892—1901 թթ. լույս տեսած «Համընդհանուր պատմություն»-ը (ռուսերեն թարգմանությունը հրատարակվել է 1898—1904 թթ.— «Всеобщая история»-ն) բաղկացած է 12 հատորից, որոնց գլուխների մեծ մասը գրված է նրանց կողմից և բավականին նյութեր է պարունակում մեր ուսումնասիրած շրջանում Թուրքիայի և Իրանի ներքին ու արտաքին պատմության մասին։ Լավիսսն ու Ռամբոն եղել են լիբերալ-բուրժուական պատմաբաններ և փաստական նյութը շարադրել են բուրժուական օբյեկտիվիզմի դիրքերից։

Արևելագիտության ականավոր ներկայացուցիչներից մեկը Արևմտյան Եվրոպայում՝ Ավգուստ Մյուլլերը անցյալ դարի 70-ական թվականներին հանդես եկավ իր մի քանի պատկառելի աշխատություններով՝ մուսուլմանական աշխարհի մի շարք կարևոր պրոբլեմների շուրջը։ Նրա քառահատոր «Իսլամի պատմությունը» և «Մուսուլմանական դինաստիաները» մենագրությունները, որոնց ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել 1895—1897 թթ. («История ислама» և «Мусульманские династии»), գրված են հիմնականում արևելյան

աղբյուրների հիման վրա, բավականին հետաքրքիր են և կարևոր նյութեր են տալիս նաև Թուրքիայի ու Իրանի պատմության մի շարք պրոբլեմների ու իրադարձությունների վերաբերյալ։ Այդ գրքերը, հատկապես «Իսլամի պատմությունը», չնայած իրենց մի շարք թերություններին, որոնք գրեթե ընդհանուր են բուրժուական պատմագրությանը, կարևոր ուսումնասիրություններ են Արևելքի երկրների պատմությամբ զբաղվողների համար։

Պատմաբան Պ. Սայքսի «Իրանի պատմությունը» աշխատությունը բաղկացած է 3 հատորից, որը թարգմանված է ռուսերեն 1930 թ. և գտնվում է մեքենագրված վիճակում։ Իրանի պատմությունը այնտեղ սկսվում է սկզբից և հասնում է մինչև մեր դարի սկզբները։ Գիրքը հարուստ նյութեր է պարունակում Իրանի ներքին և արտաքին պատմության վերաբերյալ, իհարկե, լուսաբանված՝ բուրժուական կոնցեպցիայով։ Բացի դրանից, Սայքսը այստեղ ցայտուն կերպով ցուցաբերում է նաև նացիոնալիստական և գաղութային-իմպերիալիստական գաղափարախոսության տենդենցներ։

Ռուս արևելագետներից Վ. Դ. Սմիրնովի աշխատության մասին արդեն խոսել ենք վերևում՝ կապված աղբյուրների հարցի հետ։ Այստեղ միայն պետք է ավելացնենք, որ նրա գրքի գլխավոր արժեքը կայանում է նրանում, որ այնտեղ տրված է Խոջի-բեկի «Ռիսալե»-ի հաջող թարգմանությունը և փորձ է արված բացատրելու Թուրքիայի հզորության անկման պատճառները։

Սերգեյ Գլինկան արևելագիտության ասպարեզում հայտնի է իր երկու աշխատություններով. „Картина исторической и политическая Порты Оттоманской“ և „Обозрение истории армянского народа“, որոնք լույս են տեսել անցյալ դարի առաջին կեսին և պատմության հարցերը մեկնաբանում են առաջավոր բուրժուական պատմագրության դիրքերից։ Թեև Գլինկան ընդհանուր առմամբ պատմության ընթացքը մեկնաբանում է իդեալիստորեն, սակայն դրա հետ միասին, երբեմն շեղվելով այդ ընդհանուր կոնցեպցիայից, առողջ մոտեցում է ցուցաբերում այս հար-

ցին։ Օրինակ, հետաքրքիր է նրա ըմբռնումը պատմության մեջ ժողովրդի դերի գնահատման խնդրում։ Խոսելով հայ ժողովրդի մասին, նա գտնում է, որ հայոց պատմության մեջ գլխավոր դերը խաղացել են ոչ թե առանձին անհատներ, այլ ողջ ժողովուրդը[1]։

Նախահեղափոխական ռուս արևելագետների մեջ թերևս ամենակարկառուն դեմքերից մեկը Վասիլի Վլադիմիրովիչ Բարտոլդն է (1869—1930 թթ.)։ Արևելքի երկրների և իսլամի պատմության վերաբերյալ իր բազմաթիվ աշխատություններում (մոտ 400) նա լուսաբանել է շատ ու շատ խնդիրներ։ Մենք օգտագործել ենք նրա մի քանի աշխատությունները, որոնք այսպես թե այնպես առնչվում են մեր թեմայի հետ։

Բոլոր նշված հեղինակներին, ընդհանրապես որպես բուրժուական պատմաբանների, այս կամ այն չափով հատուկ է բուրժուական սահմանափակությունը, արտաքուստ թվացող ապաքաղաքական օբյեկտիվիզմը, հարցերի լուսաբանման սխալ կոնցեպցիան և մեծ մասամբ էմպիրիկ-նկարագրական մեթոդը։ Կոնկրետ հարցերի ու դեպքերի, ինչպես և մի շարք փաստական անճշտությունների կապակցությամբ մեր վերաբերմունքն ու դիտողությունները շարադրել ենք ստորև, համապատասխան հարցերի առնչությամբ։

Մոտավորապես այս կարգի աշխատությունների թվին է պատկանում նաև Մխիթարյան միաբանության անդամ Գաբրիել Այվազովսկու «Պատմութիւն Օսմանեան պետութեան»՝ 2 հատորից բաղկացած գիրքը (գրված գրաբար), որը լույս է տեսել 1841 թ.։ Հեղինակը այս աշխատությունը գրել է գլխավորապես թուրքական և մասամբ հայկական աղբյուրների հիման վրա։

Գաբրիել Այվազովսկու ռեակցիոն հայացքները շատերին է հայտնի։ Նրա այս աշխատության մեջ արտահայտված կղերա-բուրժուական կոնցեպցիան ավելի ռեակցիոն է, քան վերևում նշված որոշ բուրժուական հեղինակների կոնցեպցիաները։ Հիմնականում սուբյեկտիվ-իդեալիստական մեթոդոլոգիայով շարադրված նրա աշխատանքը միաժամանակ բազմաթիվ այլ արատներ ունի, որոնցից հատկապես պետք է նշել աղբյուրների անվերապահ օգտագործումը և նրանց տվյալների անքննադատ ընդունումը, որի պատճառով էլ, ըստ երևույթին, հեղինակը կամա թե ակամա փաստորեն դրվատում է թուրքական ֆեոդալական-բռնակալական կարգերը և դրանց կրողներին։ Իսկ Թուրքիայի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին նա ոչ մի խոսք չի ասում։ Այվազովսկու աշխատությունից մենք հիմնականում օգտագործել ենք փաստական նյութը։

Արևելագիտության և մասնավորապես հայագիտության բնագավառում նկատելի ավանդ է մուծել Քերովբե Պատկանյանը, որը անցյալ դարի 70—80-ական թվականներին հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված իր պատմական ու պատմագրական բնույթի ուսումնասիրություններով դրական գործ կատարեց Հայաստանի և Իրանի պատմության մի շարք կարևոր հարցերի լուսաբանման գործում։ Չնայած նրա աշխատությունների որոշ, մեթոդոլոգիական կարգի թերություններին ու սխալներին և մի քանի կոնկրետ խնդիրներին վերաբերող անընդունելի մտքերին, անտարակույս դրանք գրված են հիմնականում առաջադեմ բուրժուական պատմագրության դիրքերից և զգալի արժեք են ներկայացնում հիշյալ երկրների պատմության ուսումնասիրման համար։

Թուրքիայի պատմությանը վերաբերող գրականության մեջ աչքի ընկնող տեղ է գրավում ռուս պատմաբան Ա. Զեմերգինի „Турция, её могущество и распадение“ գիրքը, որի առաջին հատորը լույս է տեսել 1878 թ., իսկ երկրորդը ըստ երևույթին չի գրված։ Այս գիրքն ընդգրկում է Թուրքիայի պատմությունը սկզբից մինչև XVI դարի երկրորդ կեսը և հանդիսանում է ռուսերեն լեզվով Թուրքիայի պատմության համեմատաբար մանրամասն ու սիստեմատիկ շարադրանքը։ Գրքի հեղինակը բավականին հարուստ փաստական նյութ է տալիս Թուրքիայի ներքին ու արտաքին դրության և իրադարձությունների վերաբերյալ։ Այս գիրքը ևս տառապում է բուրժուական պատմագրությանը հատուկ սահմանափակությամբ

[1] Տե՛ս С. Глинка, Обозрение ист. армянского народа, ч. II, էջ 216:

և մեթոդոլոգիական սխալ կոնցեպցիայով։ Սակայն այսուհանդերձ գիրքը ճիշտ է ներկայացնում դեպքերի ընթացքը և ունի ուսանելի որոշ կողմեր։

Հայ պատմագրության մեջ մեր ուսումնասիրությանը ենթակա հարցերի կապակցությամբ կարևոր տեղ է գրավում հայ ականավոր պատմաբան Լեոյի «Հայոց պատմություն» մեծածավալ (3 հատորով) աշխատությունը, որի III հատորում (XVI— XVIII դարեր) հեղինակը Հայաստանի պատմության առնչությամբ բավականին տեղ է հատկացնում նաև Թուրքիայի, Իրանի, մասամբ և Վրաստանի ու Ադրբեջանի պատմության հարցերին ու դեպքերին։

Այստեղ մենք կսահմանափակվենք Լեոյի պատմական հայացքների համառոտ բնութագրությամբ միայն՝ նրա «Հայոց պատմության» III հատորի կապակցությամբ, որը վերաբերում է մեր ուսումնասիրության շրջանին։ Լեոյի ելակետը այս գրքում լիբերալ-բուրժուական պատմահայեցողության իդեալիստական գաղափարախոսությունն է. շատ հարցեր ու դեպքեր նա բացատրում է այդ ոգով, որը համեմատած XIX դարի հայ պատմագրության ֆեոդալական և կրոնա-սխոլաստիկական ռեակցիոն ուղղությունների հետ՝ առաջադիմական է։ Այդ նոր առաջավոր պատմագիտական մեթոդով էլ ղեկավարվելով, նա քննադատական մոտեցում է ցուցաբերում աղբյուրների նկատմամբ և խուսափելով զուտ էմպիրիկ-նկարագրական շարադրանքից կատարում է գիտական ընդհանրացումներ։ Սակայն այս բոլորով հանդերձ, Լեոն գերի մնալով իդեալիստական աշխարհայացքին, հիմնականում այդ ոգով էլ լուսաբանում է պատմական իրադարձությունները և հասարակական կյանքի շատ հարցեր, չնայած որ սոցիալ-տնտեսական երևույթների և մի քանի այլ հարցերում որոշ չափով ցուցաբերում է ոչ հետևողական մատերիալիստական մոտեցում։ Իսկ դասակարգային պայքարը կամ անտեսում է, կամ խեղաթյուրում։

Ինչպես Լեոն, այնպես էլ մի շարք այլ հայ պատմաբաններ (Գ. Էդեվ, Ք. Պատկանով և ուրիշներ) այս կամ այն չափով գտնվելով արևմտաևրոպական ռեակցիոն պատմաբանների և միսիոներների ազդեցության տակ, հաճախ ոչ

ճիշտ են մեկնաբանում աղբյուրները և հակագիտական բացատրություն տալիս այս կամ այն երկրի պատմության շատ պրոբլեմների ու իրադարձությունների մասին։

Որոշ դեպքերում Լեոն նաև տուրք է տալիս սուբյեկտիվ-իդեալիստական կոնցեպցիային, հասարակական կյանքի երևույթները և պետական-քաղաքական կարգերում տեղի ունեցած փոփոխությունները մեկնաբանելով միապետների, հոգևոր պետերի կամ այլ պետական գործիչների գործունեությունը և անձնական հատկությունները նկատի ունենալով։ Նրա կարծիքով՝ անհատները վճռական դեր են խաղում հասարակության պատմության պրոցեսում[1]։

Այս բոլորի հետ միասին Լեոն զգալի չափով արտահայտում է և հայ ազգայնական գաղափարախոսությունը։ Բայց և այնպես Լեոյի «Հայոց պատմությունը», նշված բոլոր թերություններով հանդերձ, արժեքավոր մի գործ է և Հայաստանի ու նրա հարևան երկրների պատմության վերաբերյալ հայերեն լեզվով դեռևս ամենախոշոր աշխատանքն է։

Թուրքական պատմագրության մեջ նորագույն շրջանում աչքի ընկնող տեղ է գրավում ընդհանուր բնույթ կրող այնպիսի մի աշխատություն, ինչպիսին է Թուրքիայի քառահատոր պատմությունը «Թարիխ» («Tarih») խորագրով։ Այս աշխատանքը առաջին անգամ լույս է տեսել 1931 թ., Ստամբուլում և այնուհետև հաճախ վերահրատարակվել է։ Այն սկսվում է հին պատմությունից և հասնում մինչև 1930 թ.։ «Tarih»-ը հանդիսանում է թուրքական ուսումնական հաստատությունների պատմության առարկայի պաշտոնական ձեռնարկը։ XVI—XVII դարերին վերաբերում է III հատորը, որը և մենք օգտագործել ենք (գլխավորապես նրա 1933 թ. հրատարակությունը)։

Իբրև Թուրքիայի պաշտոնական պատմություն և թուրքական տիրող դասակարգի շովինիստական գաղափարախոսության արտահայտություն «Թարիխ»-ը միաժամանակ քարոզում է ռասայական տեսությունը թուրքական ազգի «գերա-

[1] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. III, էջ 197։

զանցության ու բացառիկության» մասին և առաջ քաշում Թուրք ժողովրդի պատմական մեծ միսիայի հարցը։

Աշխատության մեջ որոշակի արտահայտություն են գտել հիմնական տարրերն այն յուրահատուկ տեսության, ըստ որի Թուրքերը դիտվում են իբրև Արևելքի պատմության կարևորագույն գործոն՝ սկսած հնագույն ժամանակներից[1]։

Այդ աշխատությունը էապես տարբերվում է Թուրքիայի պատմության մասին գրված մյուս բոլոր թե՛ Թուրքական և՛ թե՛ եվրոպական շատ պատմաբանների աշխատություններից միայն նրանով, որ նրանում որոշակի փորձեր են արված Թուրքիայի պատմության որոշ հարցեր ու դեպքեր բացատրել՝ տնտեսական խնդիրների հետ կապված։ Ի տարբերություն Թուրքական նախորդ պատմաբանների, «Թարիխ»-ի հեղինակները զբաղվում են ոչ թե սուլթանների պատմությամբ, այլ նաև ուրիշ հարցերով։ Բացի դրանից, այդ աշխատանքում փորձ է արված քննարկելու Թուրքական կայսրության պատմությունը և վեր հանելու այն պատճառները, որոնք նրան անկման հասցրին։ Բայց այդ բոլորն արված են շատ համեստ չափերով, և նրա հեղինակները ավելի շատ նկարագրում են, քան վերլուծում, իսկ Թուրքիայի անկման պատճառները միանգամայն սխալ են բացատրում։

Նրանք ի վիճակի չեն որոշելու իրադարձությունների պատճառականությունը, ընդհանրացնելու փաստերը, անելու համապատասխան հետևություններ և բնութագրելու որոշակի պատմական դարաշրջանը։ Նրանք անտեսելով փաստերը, լռության են մատնում դասակարգային պայքարը, կամ գյուղացիների ապստամբություններն անվանում են ավազակային շարժում։ Նրանք ճգնում են ապացուցել, որ գյուղացիները ֆեոդալական Թուրքիայում ազատ են եղել[2]։ Նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը նրանց մոտ արտացոլված է այսպիսի ընդհանուր դարձվածքով. «Գոյություն չուներ ընդհանուր և հիմնական հոգևոր միություն»։

Այսպիսով, «Թարիխ»-ը աչքի է ընկնում պատմական

[1] Տե՛ս „Tarih", հ. II, 1933, էջ 253։

[2] Տե՛ս նույն տեղը, հ. III, էջ 5։

փաստերի կոպիտ խեղաթյուրմամբ։ Նրա հեղինակները կեղծում են պատմական իրողությունը կամ լռելյայն անցնում են Թուրքիայի կողմից գործադրած ագրեսիայի բազմաթիվ փաստերի կողքով։ Բացի այս բոլորից, աչքի է զարնում առանձին փաստերի խիստ նաիվ, այսպես կոչված, նկարագրական շարադրանքը, որը նույնիսկ չի բարձրանում մինչև բուրժուական պատմագրությունը։

Ահա այս բոլոր արատավոր կողմերը և ակնբախ տենդենցիոզությունը մեծ չափով նսեմացնում են «Թարիխ»-ի՝ որպես պատմական երկի՝ նշանակությունը։

Մեզ մնում է մի քանի խոսքով կանգ առնել սովետական արևելագետների այն աշխատությունների վրա, որոնք այս կամ այն չափով վերաբերում են մեր թեմային և օգտագործված են մեր կողմից։

Ընդհանրապես պետք է նկատել, որ սովետական արևելագիտությունը հատկապես վերջին երկու տասնամյակում զգալի նվաճումներ է ձեռք բերել Արևելքի երկրների, մասնավորապես Թուրքիայի և Իրանի պատմության ուսումնասիրության բնագավառում։

Այդ աշխատությունները, բացի փաստական նյութից, բավականաչափ արժեքավոր դիտողություններ են անում և մեծ մասամբ ճիշտ մեկնաբանում Թուրքիայի ու Իրանի պատմության շատ պրոբլեմներ ու իրադարձություններ։ Նրանցում առաջին անգամ պատմության մեջ իրենց ճիշտ մարքսիստական լուսաբանումն են ստացել ընդհանրապես Արևելքի երկրների և մասնավորապես Թուրքիայի ու Իրանի պատմության այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ տնտեսական զարգացման պրոցեսը, սոցիալական հարաբերություններն ու դասակարգային պայքարի պրոբլեմը, ազգային-ազատագրական շարժումները, այդ երկրների քաղաքական կարգերի և պետական իշխանության, միջազգային հարաբերությունների շատ հարցեր և այլն։

Այս տեսակետից առանձնապես պետք է նշել Ն. Ա. Սմիրնովի „Россия и Турция в XVI—XVII вв.", Ա. Ս. Տվերտինովայի „Восстание Кара Языджи-Дели Хасана в

Турции", Վ. Ա. Գորդլևսկու մի քանի կարևոր և ծավալուն հոդվածները պատմական ժողովածուներում և այլ պարբերական հրատարակություններում՝ Թուրքիայի պատմության և ֆիլոլոգիայի հարցերի վերաբերյալ, Ի. Պ. Պետրուշևսկու „Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—нач. XIX вв." մենագրությունը, նույն հեղինակի մի քանի կարևոր հոդվածները „Сборник статей по истории Азербайджана" ժողովածուի առաջին պրակում և այլն։

Այս արժեքավոր մարքսիստական աշխատությունները զգալի չափով օգնել են մեզ մի շարք հարցերի և իրադարձությունների լուսաբանման գործում։ Հիշյալ ուսումնասիրությունների թվին կարելի է ավելացնել նաև „История Ирана с древнейших времен до XVIII в." գիրքը, որը լույս է տեսել 1958 թ. և անշուշտ նոր, արժեքավոր ներդրում է արևելագիտության բնագավառում[1]։

Սովետական արևելագետների աշխատություններից մի քանիսը, ինչպես, օրինակ՝ Ա. Ֆ. Միլլերի «Краткая история Турции»-ն, Մ. Ս. Իվանովի „Очерк истории Ирана"-ն և Բ. Ն. Զախոդերի „История восточного средневековья»-ն շատ համառոտ, մասամբ էլ սխեմատիկ կերպով են շարադրում Թուրքիայի և Իրանի պատմության միջին դարերի շրջանը կամ սոցիալ-տնտեսական հարաբերությունների հարցերը։ Բացի այդ, Միլլերի և Իվանովի գրքերը ունեն և այլ թերություններ։ Դրանցից առաջինը տառապում է օբյեկտիվիստական բնույթի և ուրիշ աչքի ընկնող սխալներով[2], իսկ Իվանովի գրքի գլխավոր թերությունը, բացի վերևում նշված հարցերի անբավարար լուսաբանումից ու սխեմատիզմից, այն է, որ այնտեղ շարադրված են Իրանի պատմության միայն քաղաքական, մասամբ և սոցիալական հարաբերությունները (համենայն դեպս XVI—XVII դարերի շրջանը), իսկ երկրի էկոնոմիկայի ու տնտեսական հարաբերությունների մասին գրեթե ոչինչ չի ասված։

[1] Այս աշխատությանը մենք ծանոթացանք միայն վերջերս, երբ մեր ներկա աշխատանքը գրեթե ավարտվել էր։ Ուստի հնարավորություն չունեցանք այն ուսումնասիրել ավելի մանրամասն և օգտագործել Իրանի պատմության որոշ հարցերի լուսաբանման գործում։

[2] Տե՛ս „Вопросы истории" ամսագրի 1950 թ. № 2-ում զետեղված գրախոսականը։

ԳԼՈՒԽ II

ԹՈՒՐՔԻԱՆ, ԻՐԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ՇՐՋԱՆՈՒՄ

(Համառոտ ակնարկ)

Թուրքական պետությունը որպես ռազմա-ֆեոդալական կողոպտիչ պետություն կազմավորվել է XIII դարի վերջին և XIV դարի սկզբին, Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան մասում։ Նրա կորիզը հանդիսացել է XIII դարի 20-ական թվականներին Միջին Ասիայից Փոքր Ասիա տեղափոխված Թուրքական մի ցեղ՝ Էրթողրուլի գլխավորությամբ։ Վերջինս Իկոնիայի սելջուկյան սուլթանից հիշյալ վայրում ստանալով մի փոքր տերիտորիա, հաստատվեց այնտեղ իր ցեղով։

Օսմանի ժամանակ, XIII դարի վերջերին Թուրքական այդ ցեղը վերածվեց Իկոնիայի սուլթանությունից վասալական կախման մեջ գտնվող մի փոքրիկ ֆեոդալական իշխանության։ 1299 թ. Օսմանը դարձավ անկախ իշխան։ Օսմանի անունով էլ նրա ցեղի Թուրքերը հետագայում կոչվեցին օսմանցիներ։

Հաջորդ սուլթանների օրոք, XIV դարի ընթացքում օսմանյան Թուրքերը աստիճանաբար նոր տերիտորիաներ զավթեցին սկզբում Փոքր Ասիայում՝ իրենց ենթարկելով տեղի սելջուկյան էմիրություններին, որից հետո Բալկանյան թերակղզում Բյուզանդիայի և մյուս պետությունների հաշվին մեծ չափով ընդարձակեցին իրենց տիրապետությունները։ XIV դարի վերջերից Օսմանյան պետությունը ռազմական հաջողությունների շնորհիվ զավթեց Սերբիան, Բուլղարիան, Վալախիան և այլ երկրներ՝ Բալկանյան թերակղզում։ Նա դար-

ձավ հզոր ու ահեղ մի տերություն։ Այնուհետև, XV դարի առաջին կեսին օսմանցիները դարձյալ նոր տերիտորիաներ նվաճեցին Բյուզանդիայից, իսկ 1453 թ. սուլթան Մուհամեդ II-ը գրավեց նաև Կոստանդնուպոլիսը և այն դարձրեց իր նոր կայսրության մայրաքաղաքը. սրանով վերջ տրվեց Բյուզանդական կայսրության գոյությանը։

Դրանից հետո, XV դարի երկրորդ և XVI դարի առաջին կեսերին այդ պետությունն ավելի արագ թափով, քան մինչ այդ, ընդարձակվեց նոր զավթած երկրների հաշվին, ռազմաքաղաքական վերելք ապրեց և հասավ մեծ հզորության։

Սուլթան Մուհամեդ II-ը XV դարի 50—70-ական թվականներին զավթեց նաև Հունաստանը, բալկանյան մնացած երկրները, Եգեյան ծովի մի շարք կղզիներ, վասալական կախման մեջ գցելով Ղրիմի խանությունը և Մոլդավիան։

XV դ. 60—70-ական թվականներին օսմանցիները դարձյալ նոր տերիտորիաներ նվաճեցին Փոքր Ասիայում և լիովին իրենց ենթարկեցին մնացած սելջուկյան ու թուրքմենական իշխանությունները։ Դրանից առաջ, 1461 թ. սուլթան Մուհամեդին հաջողվեց զավթել Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան մասում, Սև ծովի ափին գտնվող կիսահունական Տրապիզոնի «կայսրությունը»։ Այդ շրջանում թուրքերը գրավեցին նաև Ուզուն-Հասանի՝ Ադ-Կոյունլուի պետության մի մասը, որի թվում նաև՝ Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններ։

Այդ զավթումների հետևանքով Բյուզանդական նախկին կայսրության տերիտորիայում, երկու մայր ցամաքների վրա աճեց ու տարածվեց օսմանյան թուրքերի ռազմա-ֆեոդալական պետությունը։

Թուրքական պետությունը, սկսած այս ժամանակվանից, գրեթե 200 տարվա ընթացքում շարունակում էր վարել զավթողական պատերազմներ։

Թուրքական հրոսակախմբերի ներխուժման սպառնալիքը ռեալ կերպով կախվեց Եվրոպայի նաև մյուս երկրների գլխին։

Համառոտակի քննենք Օսմանյան Թուրքիայի այդ հաջողությունների ներքին ու արտաքին պատճառները։

Ներքին կարգի պատճառները հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ Թուրքիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կարգերի մի քանի կարևոր կողմերի հետ։ Նախապես պետք է նշել, որ թուրքական ռազմական հաջողությունների հիմքերից մեկը եղել է թուրքական զորքի լավ կազմակերպվածությունը, որը հիմնված էր ռազմա-լենային սիստեմի վրա, պետական ապարատի կենտրոնացված կառուցվածքն ու բանակին օժանդակ կոնտինգենտ մատակարարող ազատ գյուղացիության՝ դեռևս նշանակալից քանակության առկայությունը։

Օսմանյան պետության հասարակական կարգը եղել է ռազմա-ֆեոդալական, որն առաջացել է XIII դարի վերջին և XIV դարի սկզբին, զարգացել ու վերջնականապես ձևավորվել է XIV—XV դարերում։ Այդ կարգը հիմնականում պահպանվեց XVI—XVII դարերում։

Մինչև XVI դարը թուրքերն ապրում էին մեծ մասամբ դեռևս պրիմիտիվ, տոհմական կապերով ու նահապետական կենսաձևով։

Նոր կազմավորվող թուրքական այս կիսանահապետական և ռազմա-ֆեոդալական կարգը ռազմական առավելություններ ուներ թուլացած և ներքին հակասություններով համակված բյուզանդական ֆեոդալական կարգի նկատմամբ։ Այս հանգամանքը հենց հանդիսացավ Բյուզանդիայի դեմ օսմանյան թուրքերի տարած հաղթանակի պատճառներից մեկը։ Թուրքական ֆեոդալների հարստացման գլխավոր միջոցը այն ժամանակ նոր նվաճված տերիտորիաների կողոպուտն էր, ռազմական ավարի, ստրուկների և տուրքերի ստացումը։ Ուստի իրենց ամբողջ ուշադրությունը օսմանցիները դարձնում էին ռազմական գործի վրա։

Մարքսը հետևյալ կերպ է բնութագրում թուրքերի քաղաքական կարգը XIV դարում. «Թուրքերի նոր կայսրությունը կազմակերպված էր դեմոկրատական-բռնակալական սկզբունքով։ Պատերազմի դեպքում նրանց մոտ կատարվում էր ժողովրդի ընդհանուր զինում, բոլորի համար պարտադիր զինվորական ծառայություն»[1]։

[1] Архив Маркса и Энгельса, т. VI, стр. 177.

Նույն աշխատության մեջ մի այլ տեղ Մարքսը գրում է, որ «Օսմանցիների պետությունը եղել է միջնադարի միակ իսկական ռազմական տերությունը»[1]:

Տիրելով նվաճած հողերի մեծ մասին և իրենց ձեռքում հսկայական հարստություն կուտակելով, թուրքական սուլթանները ստեղծեցին մեծաքանակ հզոր բանակ և ռազմական բարձր տեխնիկա:

Սուլթանական բանակում վճռական դեր էր խաղում և նրա կորիզն էր հանդիսանում 1360 թ. հիմնադրված ենիչերական կորպուսը (հետևազոր), որը կազմվում էր բացառապես փոքրահասակ քրիստոնյաներից բռնությամբ հավաքագրված և զինվորական դպրոցներում վարժեցված կոնտինգենտից: Այս կանոնավոր զորքի հետ միասին կային նաև այլ զորքեր, որոնք կազմվում էին ֆեոդալական աշխարհազորից (հեծելազոր և հետևազոր), որը քանակով անհամեմատ շատ էր: Զինվորական այս կազմակերպությունը, ինչպես նշվեց, հիմնված էր ռազմա-լենային սիստեմի վրա:

Օսմանյան պետության ամբողջ հողերի գերագույն սեփականատերը ձևականորեն համարվում էր սուլթանը: Ռազմական լեները (թիմար և զիամեթ) գոյանում էին նվաճված հողերից զինվորական ծառայության դիմաց ֆեոդալներին տրվող հատկացումներից: Այս հողակալները պարտավոր էին անձամբ և ըստ իրենց տիրույթի մեծության՝ իրենց հետ բերած զինված հեծյալների ջոկատներով մասնակցել պատերազմին[2]:

Լենային հողաբաժինները տրվում էին ֆեոդալներին նրանց վրա եղած գյուղացիներով հանդերձ, որոնք, այդպիսով, ճորտային կախման մեջ էին ընկնում այդ հողատերերից: Բացի դրանից, ֆեոդալները իրենց մյուս հողերը տալիս էին այս կամ այն թիմարի կամ զիամեթի վրա գրված գյուղացիներին, վարձակալական իրավունքով[3], որի շնորհիվ նրանք

[1] Архив Маркса и Энгельса, т. VI, стр. 189.

[2] Տե՛ս „Tarih", հ. III, Istambul, 1933, էջ 43:

[3] I. Hammer, Des Osmanischen Reichsstaatvirfassung und Staats viervaltung, I Bd., S. 345.

ֆեոդալական կախման մեջ էին ընկնում լենային հողատիրոջից:

Թուրք պատմաբանները ամեն կերպ սքողում են ֆեոդալիզմի դասակարգային էությունը թուրքերի մոտ: Թուրքիայի քաղաքական կարգը նրանք ներկայացնում են իբրև առանձնահատուկ վարչական «ամենաարդարացի» ձև, «զուտ» քաղաքական կազմակերպություն: Գոյություն ունեցող սեփականության և շահագործման կարգը Օսմանյան պետության մեջ նրանք դիտում են որպես մուսուլմանական «իդեալական» իրավունքով ընդմիշտ տրված[1]: Այս կեղծ պնդումի գլխավոր նպատակն է հիմնավորել թուրքական հասարակության մեջ դասակարգային պայքարի բացակայության ռեակցիոն «տեսությունը» և Օսմանյան պետությունը ներկայացնել, իբր թե, որպես հասարակությունից վեր կանգնած, բնակչության սոցիալական և ազգային շահերի «իդեալական ներդաշնակության» կազմակերպիչ: Այս հակագիտական և կեղծ «տեսության» աչքի ընկնող մունետիկը հանդիսանում է ռեակցիոն-նացիոնալիստ պատմաբան Օմեր Լյութֆի Բարկանը, որը նման հարցերին է նվիրել «Ülkü» ամսագրի 1940-ական թվականների մի շարք համարներում զետեղված իր հոդվածաշարքը:

Օսմանյան պետության գլուխ կանգնած էր սուլթանը կամ փադիշահը, որը համարվում էր աշխարհիկ և հոգևոր միապետը: Նա հանդիսանում էր պետության բոլոր հողերի և իր իշխանության սահմաններում ապրող հպատակների միակ տիրակալը, անսահման իշխանություն ունենալով այդ հպատակների կյանքի ու գույքի նկատմամբ: Սակայն ընդհանուր կարգի պայմաններում սուլթանի անունից երկիրը փաստորեն կառավարում էին ֆեոդալական ավագանու ներկայացուցիչները, որոնք սուլթանի հետ միասին արտահայտում էին ֆեոդալական դասակարգի շահերն ընդհանրապես:

Այսպիսով, Օսմանյան պետությունը տիպիկ արևելյան ֆեոդալական բռնակալություն էր՝ սուլթան-փադիշահի գլխավորությամբ:

[1] Տե՛ս „Византийский временник", т. VII, 1953, էջ 24.

Սուլթանների նվաճողական քաղաքականությունը ելնում էր զինվորական ավազանու զավթողական շահերից։

Ռազմա-ֆեոդալական այս կարգը, ինչպես նշվեց, որոշ ժամանակ ռազմական տեսակետից մեծ առավելություն էր տալիս Օսմանյան կայսրությանը մյուս պետությունների համեմատությամբ և հանդիսանում էր նրա ռազմական հաջողությունների պատճառներից մեկը։

Օսմանյան կայսրությունը իրենից ներկայացնում էր տարբեր երկրների, ժողովուրդների և ցեղերի մի կոնգլոմերատ։ Թուրքական սուլթանի և ֆեոդալների տիրապետությունը նվաճված երկրների վրա պահպանվում էր բացառապես ռազմական ուժով։ Տիրողներն այդ երկրներում հաստատել էին բռնակալական իշխանություն՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով հարկերի հավաքումը և «ողջ հասարակական ֆունկցիաները, ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական և դատական» (Մարքս)։ Մյուս կողմից, ինչպես նշում են Մարքսն ու Էնգելսը, այդ կայսրությունը իրենից ներկայացնում էր ամենահետամնաց ռեակցիոն ռազմա-ֆեոդալական ռեժիմներից մեկը՝ հիմնված կողոպուտի, ավազակության և թուրքական լծի տակ ընկած ժողովուրդների անողոք շահագործման ու ստրկացման վրա։ Այդպիսին էր օսմանյան ռազմա-ֆեոդալական կարգը Թուրքիայի պատմության առաջին շրջանում (մինչև XVI դարի կեսերը)։ Սակայն օսմանյան ռազմա-ֆեոդալական հողատիրությունը այդ վիճակում գոյություն ունեցավ ոչ շատ երկար։

Խոսելով օսմանցիների հաջողությունների արտաքին պատճառների մասին, անհրաժեշտ է ամենից առաջ հաշվի առնել գլխավորապես Բյուզանդական կայսրության վիճակը XV դարում։ Այդ ժամանակ Բյուզանդիան ապրում էր անկման շրջան, որն արտահայտվում էր սոցիալ-տնտեսական հակասությունների, դասակարգային սուր պայքարի և ֆեոդալական ներքին ընդհարումների, տնտեսական քայքայման և ռազմա-քաղաքական թուլացման մեջ, որը բարդանում էր կայսրության արտաքին քաղաքական ծանր վիճակով։

Այսպիսով, Բյուզանդիայի պարտության գլխավոր պատճառները գտնվում էին նրա ներքին տնտեսական և սոցիալական հարաբերությունների մեջ, և սխալ է այն բացատրել թուրքերի ռազմական առավելությամբ միայն, ինչպես պնդում են արևմտաևրոպական ու թուրքական շատ պատմաբաններ (Գիբբոն, Լեբո-Պիրս, Շլյումբերժե և ուրիշներ)։ Բուրժուական պատմագրությունն ամբողջովին խեղաթյուրում և կեղծում է թուրքական նվաճումների պատմությունը։ Այդ կեղծումը շատ է տարածված մանավանդ ժամանակակից բուրժուական պատմագրության մեջ (Յորգա, Գրեգուար և ուրիշներ)։ Պանթուրքիստական «գիտնականները» փառաբանում են թուրքական ավազակային նվաճումները, որոնք, իբր թե, նոր դարաշրջան են բացել Եվրոպայի և Ասիայի պատմության մեջ։ Նման հերյուրանքները ոչ մի կապ չունեն պատմական իրականության հետ։

Բալկանյան երկրներում նույնպես այն ժամանակ դրությունը լավ չէր։ Այնտեղ անընդհատ պայքար էր մղվում առանձին պետությունների միջև. ներքին ֆեոդալական ընդհարումներն ու սուր դասակարգային պայքարը առանձին երկրների ներսում թուլացրել էին նրանց դիմադրությունը թուրքական զավթիչներին։ Այս գործում մեծ դեր խաղացին նաև եվրոպական պետությունների միջև եղած հակասությունները։

Այդ բոլորի պատճառով Բյուզանդական կայսրությունը և բալկանյան բազմաթիվ ժողովուրդներ, չնայած իրենց հերոսական դիմադրությանը, նվաճվեցին օսմանյան թուրքերի կողմից, երկար ժամանակով ընկնելով նրանց դաժան տիրապետության տակ, ենթարկվելով ստրկացման և անլուր կեղեքումների։ Թուրքական տիրապետությունը մեծ վնաս հասցրեց նվաճված երկրներին և արգելակեց նրանց տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացումը։

Թուրքիայի ասիական ռազմական ֆեոդալիզմն ընդհանրապես դեմ է եղել ամեն մի առաջադիմության։ Մարքսիզմի կլասիկները իրենց մի շարք աշխատություններում խոսելով թուրքական նվաճումների մասին, նշել են նվաճված ժողո-

վուրդների նկատմամբ թուրքերի կատարած գազանություններն ու անտանելի ճնշումը։

Թուրքական սուլթանները, ֆեոդալներն ու մահմեդական հոգևորականությունը բոլոր միջոցներով աշխատել են ոչնչացնել նվաճված ժողովուրդների լեզուն, կրոնը և ազգային անկախությունը՝ փորձելով մահմեդականացնել նրանց։ Այս նպատակով նրանք խրախուսել են հավատուրացությունը, թրքախոսությունը և խիստ դաժան տանջանքների ու տեռորի ենթարկել նրանց, ովքեր դիմադրել են դրան։

Եթե, այնուամենայնիվ, նվաճված ժողովուրդները մեծ դժվարությամբ և ճնշված պայմաններում շարունակել են պահպանել իրենց կուլտուրան և ազգային գոյությունը, ապա դա պետք է բացատրել գլխավորապես այդ ժողովուրդների հերոսական դիմադրությամբ և այն հանգամանքով, որ թուրքերն ի վիճակի չէին ասիմիլյացիայի ենթարկել իրենցից մեծաքանակ ու ավելի զարգացած հպատակ ժողովուրդներին և վերացնել նրանց կուլտուրան։

* * *

Այն ժամանակ, երբ կազմակերպվում ու հզորանում էր Օսմանյան կայսրությունը, նրա արևելյան հարևան Իրանը դեռևս չէր վերականգնել իր տերիտորիալ և պետական անկախությունը։

Լենկթեմուրի տիրապետությունից հետո, XV դարի սկզբներին Արևմտյան Իրանում, Հայաստանում և Ադրբեջանում հաստատվեց թուրքմենական երկու ցեղերի՝ Կարա-կոյունլու (Սև ոչխարի) և Աղ-կոյունլու (Սպիտակ ոչխարի) ցեղապետերի իշխանությունը։ Սրանք իշխում էին այդ երկրների տարբեր մասերում։

Կարա-կոյունլուի դինաստիան իշխեց 1410 թ. մինչև 1468 թ., իսկ Աղ-կոյունլուինը՝ մինչև XVI դարի սկիզբը։

Իրանի արևելյան մասում իշխում էին թիմուրիդները։ Այս տիրակալները մշտական ընդհարումների մեջ էին գտնվում միմյանց հետ։

XV դարի վերջերին Իրանը տրոհված էր մի շարք ինքնուրույն ֆեոդալական տիրույթների կամ պետությունների և չէր

ներկայացնում միասնական քաղաքական ամբողջություն։ Այս իշխանություններում եղած ներքին պայքարը, ինչպես և թուրքմենական տիրողների հանդեպ Իրանի տեղական բնակչության դժգոհությունը օգտագործեցին սեֆեյանները՝ Արդեբիլի շեյխ-ֆեոդալները, որոնց ազդեցությունն աճել էր Հարավային Ադրբեջանի (Ատրպատականի) հյուսիս-արևելյան մասում, XV դարի սկզբից։

Սեֆեյան շարժումը, որն առաջացել է XV դարի կեսին, Ադրբեջանում, սկզբում ուղղված էր հին ֆեոդալական վերնախավի դիկտատուրայի դեմ։ Իր սկզբնական էտապում այդ շարժումը, ըստ երևույթին, արտահայտում էր միջին ու մանր ֆեոդալների, մասամբ և վաճառականության շահերը, որոնք շահագրգռված էին ներքին պայքարի վերացմամբ և երկրի միավորմամբ։ Սեֆեյանները հավանաբար փորձում էին օգտագործել գյուղացիների ու արհեստավորների պայքարը հին ֆեոդալական վերնախավի դեմ՝ իշխանության հասնելու նպատակով։

Սեֆեյանների անվան ծագումը կապված է նրանց նախահոր՝ շեյխ Սեֆի-եդ-դինի հետ, որը սկսած XIII դարի երկրորդ կեսից՝ Սեֆեյանների ֆեոդալական տան գլխավորն էր։

Սկզբնական շրջանում (մինչև XV դարի կեսերը) Սեֆեյանները դերվիշական միաբանություն էին, այնուհետև մինչև XVI դարի սկիզբը՝ Արդեբիլում դարձան անկախ հոգևոր-ֆեոդալական տիրակալներ։ Իրենց ծագումով նրանք թուրքեր կամ ադրբեջանցիներ էին։ Նրանց գլխավոր հենարանը հանդիսանում էին 7 վաշկատուն ադրբեջանական ցեղեր, որոնք պայքարում էին Արևմտյան Իրանում իշխող Աղ-կոյունլուի թուրքմենական խաների դեմ և կազմում էին Սեֆեյանների ֆեոդալական աշխարհազորի կորիզը։ Այդ ցեղերը, որոնք հետագայում կոչվեցին կզլբաշներ[1], Սեֆեյան շեյխին ճանաչում էին իրենց հոգևոր պետ և հանդիսանում էին նրա վասալները։

Սեֆեյանները հարում էին շիիզմին հետևյալ նկատա-

[1] Կարմիր երիզներով սպիտակ չալմա կրելու պատճառով (կարմրագլուխներ)։

ռումներով. շիա դավանանքը և սրա հետ կապված շարժումը, որը տարածված էր գլխավորապես Իրանում և որին մասնակցում էին մեծ մասամբ ժողովրդական մասսաները, կապված էր՝ սյուննի դավանանքին պատկանող մի շարք նվաճողների ու Իրանում իշխողների դեմ նրանց մղած պայքարի հետ։ Սեֆեյանները շիիզմը դարձրին իրենց գաղափարական զենքը։ Նրանք այդ ժամանակ փաստորեն ստեղծել էին անկախ պետություն և ձգտում էին օգտագործել շիիզմի ժողովրդականությունը իրենց ազդեցությունն ամրապնդելու և ընդարձակ նվաճումներ կատարելու համար։ XV դարի երկրորդ կեսին նրանք արդեն իրենց այնքան ուժեղ էին զգում, որ հենվելով թուրքմենական ավագանուց դժգոհ մանր ու միջին ֆեոդալների և մասամբ վաճառականության վրա, Ադրբեջանում պայքար սկսեցին իշխանության համար թուրքմենական դինաստիաների դեմ, ձգտելով քաղաքականապես միավորել Ադրբեջանը։ Հետագայում նրանց կողմից հիմնված պետությունը հաճախ կոչվում էր «Կզլբաշների» պետություն։

Սեֆեյան շարժումը, ըստ երևույթին, որոշ չափով օգտվում էր ժողովրդական մասսաների աջակցությունից. Սեֆեյաններն աշխատում էին օգտագործել մասսաների դժգոհությունը՝ թուրքմենական տիրողների դեմ մղված պայքարում։

Շեյխ Հայդարը Կարա-կոյունլուների դեմ Ուզուն-Հասանի տարած հաղթանակից հետո վերադարձավ Արդեբիլ և իր անբրոջ (Ուզուն-Հասանի) օգնությամբ հաստատվեց այդտեղ։ Նրա և Աղ-կոյունլուի թուրքմենների միջև հարաբերությունները թշնամական դարձան միայն Ուզուն-Հասանի որդու՝ Յաղուբի օրոք։ Երբ որոշ ժամանակ անց Հայդարը փորձեց իրեն ենթակա ադրբեջանական ցեղերի օգնությամբ, ի հաշիվ Շիրվանշահի, ուժեղացնել իր իշխանությունը Արդեբիլի և սրա շրջակայքի վրա, Յաղուբը, վախենալով նրա ուժեղացումից, միացավ Շիրվանի տիրակալի հետ. երկու կողմերի միջև տեղի ունեցած ճակատամարտում Հայդարը պարտություն կրեց և սպանվեց (1488 թ.)։

Դրանից հետո Արդեբիլը և Սեֆեյանների մյուս տիրույթ-

ները գրավվեցին Յաղուբի զորքերի կողմից, իսկ Հայդարի երեք որդիները տարվեցին Ֆարս և բանտարկվեցին։

Սակայն դրանից հետո էլ Աղ-կոյունլուների կողմից ճնշվող ադրբեջանական ժողովրդական մասսաների դժգոհությունը միաժամանակ ուժեղացնում էր նրանց համակրանքը Հայդարի կրտսեր որդու՝ պատանի Իսմայիլի նկատմամբ, որը ժառանգական իրավունքով ընդունեց սեֆիների շեյխի կոչումը։

Գիլանից վերադառնալով իր նախորդների առաջվա տիրույթները (Արդեբիլ և մյուս վայրերը), Իսմայիլը սկսեց կողմնակիցներ հավաքագրել կզլբաշների ցեղերի շրջանում։ Ադրբեջանից և այլ երկրներից իր դրոշի տակ հավաքելով մոտ 7 հազար կողմնակիցներ, նա ձեռնարկեց վերականգնելու իր հոր իշխանությունը։ 1492 թ. Իսմայիլը հռչակվեց իր հոր՝ Հայդարի փոխարինողը։ Այսպիսով, Սեֆեյանների դրոշի ներքո ծավալվեց մի շարժում, որի նպատակն էր Ադրբեջանի, այնուհետև նաև ողջ Իրանի, քաղաքական միավորումը։ Կզլբաշների այս նոր ելույթը տեղի ունեցավ 1499 թ. և այս անգամ պսակվեց լիակատար հաղթանակով։ Կզլբաշական շարժումը տարածվեց նաև Ադրբեջանի սահմաններից դուրս։ Իսմայիլի հանդես գալը, բացի ադրբեջանական վերոհիշյալ ցեղերից և Սեֆեյանների մյուս կողմնակիցներից, պաշտպանություն գտավ նաև Իրանի մեծ մասում, Իրաքում և հատկապես Փոքր Ասիայի շիաների շրջանում, որոնք զինված կերպով անցան նրա կողմը։

Իսմայիլը Արդեբիլից իր կողմնակիցներով անցնելով արևմուտք, կարճ ժամանակով տեղավորվեց Երզնկայում, որտեղ հավաքելով ու կազմակերպելով ռազմական ուժեր, նախապատրաստվեց հանդես գալ թշնամիների դեմ։

Միայն 1500 թ. աշնանը կզլբաշներն սկսեցին իրենց արշավանքը Շիրվանշահի վրա։ Իսմայիլի և Ֆարրուխ-Եսարի զորքերի միջև տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում Շիրվանշահը սպանվեց, իսկ նրա զորքերը գլխովին ջախջախվեցին։ Դրանից հետո Իսմայիլը գրավեց մի քանի բերդեր,

որոնց թվում խիստ ամրացված քաղաք ու նավահանգիստ Բաքուն։

Շիրվանշահերի պետությունը թեև կրեց շատ ուժեղ հարված, բայց լիովին չկործանվեց և չնվաճվեց։ 1500—1501 թթ. իրադարձություններից հետո նա պահպանվեց դարձյալ 37 տարի (մինչև 1538 թ.), բայց այլևս այն ուժեղ պետությունը չէր, որպիսին էր XV դարում։

Շիրվանշահին հաղթելուց հետո Շահ-Իսմայիլը դեռ պետք է վերացներ մի քանի լուրջ թշնամիների և տիրեր ողջ Իրանին։ Այդ ժամանակ Աղ-կոյունլու իշխաններից Ալվենդը (Ալվանը՝ Յաղուբի որդին), որն իշխում էր Ադրբեջանի մի մասում և Իրանի արևելքում, մեծ բանակով հանդես եկավ Կզըլբաշների դեմ։

1501 թ., երկու հակառակորդների միջև տեղի ունեցած վճռական ճակատամարտում Աղ-կոյունլուի իշխանը լիակատար պարտություն կրեց և փախավ Դիարբեքիր։ Դրանից հետո կզըլբաշները գրավեցին Թավրիզը (Ալվենդի մայրաքաղաքը), որտեղ շատ վայրագություններ կատարեցին։ Իսմայիլը այս հաղթանակի շնորհիվ տիրացավ ողջ Հարավային Ադրբեջանին (Ատրպատական), Նախիջևանի մարզին, Ղարաբաղին և Հայաստանի մեծ մասին։

Իսմայիլը գրավեց նաև իրանական գահը և հռչակվեց Իրանի շահնշահ։ 1501 տարեթիվը սովորաբար ընդունվում է որպես կզըլբաշների պետության հիմնադրման սկիզբը, և Սեֆեյանների տիրապետության հաստատմամբ սկսվում է Իրանի պատմության նոր շրջանը։

Թավրիզը դարձավ Սեֆեյանների նոր պետության մայրաքաղաքը, իսկ շիիզմը՝ նրա պետական կրոնը։ Ընդ որում, ինչպես նշում է պարսիկ պատմագիր Հասան Ռումլուն[1], այս վերջին ձեռնարկումը Շահ-Իսմայիլ I-ի կողմից անցկացվեց մասամբ բռնի ճանապարհով։

Իսմայիլը չբավարարվեց միայն Ադրբեջանին տիրելով. նա ձեռնարկեց տարածելու իր իշխանությունը նաև ողջ Իրանի ու հարևան մի քանի այլ երկրների վրա։ Այս նպատակով

[1] Տե՛ս „Сборник статей по истории Азербайджана", вып. I, էջ 234։

Ալվենդին հաղթելուց հետո 1502 թ. Իսմայիլը ռազմական գործողություններ սկսեց նրա եղբոր՝ Աղ-կոյունլուների մյուս տիրակալ Մուրադ խանի դեմ, որը տիրում էր Իրանի մի մասին և Իրաքին[1]։

1503 թ. հունիսին Համադանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կզըլբաշները հաղթեցին. Մուրադխանի ողջ տիրույթները նույնպես անցան Շահ-Իսմայիլի ձեռքը։ Աղ-կոյունլուների պետությունը, այսպիսով, դադարեց գոյություն ունենալուց։

1508 թ. արդեն ողջ Իրանը (բացի Խորասանից) և Իրաքի մեծ մասը գտնվում էին կզըլբաշների ձեռքում։ Իսմայիլը կարողացավ շիիզմի միջոցով համախմբել բազմաթիվ ցեղերի և ժողովուրդների, իհարկե, զենքի ուժով նրանց նվաճելուց հետո։

Իսմայիլի իշխանությունը բոլոր կողմերից շրջապատված էր սյուննիական պետություններով։

Մուրադին հաղթելուց հետո, 1503 թ., Իսմայիլը մի շարք հաղթական արշավանքների ու պատերազմների հետևանքով (մինչև 1510 թ.) զավթեց արևմտյան մարզերն ու քաղաքները՝ այդ թվում Արաբական Իրաքը, Դիարբեքիրը, Մերդինը, Լուրիստանը, Հայաստանի հարավային մասը և այլն[2]։

Այսպիսով, Շահ-Իսմայիլին հաջողվեց ասպարեզից վերացնել իրանական գահի բոլոր հավակնորդներին։

Այս ընդհարումների ու պատերազմների ընթացքում երկու կողմերն էլ չտեսնված ավերածության էին ենթարկում հիշյալ երկրների քաղաքներն ու գյուղերը, կողոպտում, սպանում և գերության տանում բնակչությանը, որից առանձնապես տուժում էր աշխատավոր ժողովուրդը։

Վերևում նշված հաղթանակներից և նվաճումներից հետո Շահ-Իսմայիլի առջև ծառացավ Իրանի արևելյան հարևանի՝ ուզբեկական խան Շայբանիի հարցը։ Վերջինս 1507—1508 թթ. թիմուրական սուլթանից գրավելով Խորասանը և

[1] Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 1, էջ 326։

[2] Հմմտ. նաև իտալացի ճանապարհորդ Ջիովան Մարիա Անջիոլելլո, Ուղեգրություններ, հ. 1, էջ 281։

բավական ուժեղանալով, լուրջ վտանգ էր սպառնում Սեֆիյանների պետությանը՝ ձգտելով նվաճել Իրանը և Ադրբեջանը։

Բացի Իրանի սահմանների վրա կատարած հաճախակի հարձակումներից, Մուհամեդ Շայբանին միևնույն ժամանակ դեսպաններ էր առաքում սուլթան Բայազիդի մոտ, որի հետ Իսմայիլը սահմանային վեճերի պատճառով համարյա լարված հարաբերության մեջ էր գտնվում։ Այնպես որ երկու հզոր հակառակորդների արանքում Իսմայիլի վիճակը ծանր էր։ Նա ուզբեկների դեմ պատրաստվելով պատերազմի, միաժամանակ դիմում էր դիվանագիտական միջոցառումների՝ նրանց տիրակալին հանգստացնելով իր խաղաղասիրական մտադրության և նրա անվտանգության վերաբերյալ, չնայած որ Շայբանիները չէին ճանաչում Սեֆիյան շահերի իշխանության օրինական լինելը[1]։

Այս երկու տիրակալների միջև 1510 թ. տեղի ունեցած ճակատամարտում Շայբանի խանի զորքը գլխովին ջախջախվեց և ինքը՝ խանն էլ ընկավ մարտի դաշտում։ Տարած հաղթանակի հետևանքով կզլբաշն'ը տիրացան նաև Խորասանի մարզին՝ մինչև Ամու-Դարիա։ Կզլբաշների այս հաղթանակը վճռեց նոր իրանական պետության վերջնական գոյության հարցը։ Սակայն այդ պարտությունից հետո էլ ուզբեկները զենքը վայր չդրեցին և չդադարեցին վտանգ սպառնալ Սեֆիյանների պետությանը։ Նրանց իշխանությունը պահպանվեց Մավերաննահրում (Ամու-Դարիայից այն կողմը) և Խորեզմում, որտեղ պահպանվել էին նրանց գլխավոր ուժերը՝ Շայբանիի որդու և նրա եղբոր որդու գլխավորությամբ։ Կզլբաշները, փորձելով նվաճել նաև Միջին Ասիան, պարտություն կրեցին ուզբեկներից և հրաժարվեցին այդ մտադրությունից։

Ուզբեկների դեմ Իսմայիլը դաշնակցեց նրանց թշնամի Քաբուլի թիմուրական խանի հետ։ Շուտով վերջինս հաղթանակ տարավ ուզբեկների նկատմամբ և նվաճեց նրանց պետությունը, իսկ Իսմայիլը նրանց հետ կնքած հաշտությունը չեղյալ հայտարարեց։ Այսպիսով, Շահ-Իսմայիլը իր թիկունքը

1 Տե՛ս I. Hammer, Geschichte d. Osman. Reiches, B. II, էջ 254։

ապահովեց թշնամական հարվածից, սակայն ուզբեկական վտանգն ընդմիշտ չվերացավ։

Այս բոլոր նվաճումներից հետո Սեֆիյանների, իբրև Իրանի նոր պետության, սահմանները մեծ չափով ընդարձակվեցին, հասնելով արևելքում՝ Ամու-Դարիա գետին ու Աֆղանստանին, հարավում՝ Պարսից ծոցին, արևմուտքում՝ Եփրատ գետին, իսկ հյուսիսում՝ Քուռ գետին ու Դերբենդին, իր կազմում ընդգրկելով Իրանը՝ Խորասանով հանդերձ, Թուրքմենստանի մի մասը, Աֆղանստանը, ողջ Ադրբեջանը, Հայաստանի մեծ մասը (Արևելյան և Հյուսիսային Հայաստանը), Քուրդիստանի արևելյան մասը, արևելյան Վրաստանը, Դաղստանի ծովափնյա շերտը և Հյուսիսային ու Արաբական Իրաքը։

Այժմ Իսմայիլի տիրապետությունները սահմանակից էին Օսմանների պետությանը։ Այդ հաջողությունները ամենից շատ տագնապալի վիճակի մեջ դրեցին թուրքական սուլթան Բայազիդ II-ին, որի հետ Սեֆիյան պետության ունեցած հարաբերությունների մասին կխոսվի ստորև։

XVI դարի առաջին կեսից Սեֆիյան պետությունը դառնում է միջազգային քաղաքականության կարևոր գործոններից մեկը։ Մի շարք եվրոպական պետությունների (Ավստրիա, Իսպանիա, Վենետիկ և այլն) համար այդ պետության հետ ունեցած հարաբերություններում քաղաքական մոմենտը հատկապես կարևոր նշանակություն ուներ։ Եվրոպական մի շարք պետություններ, ինչպես Վենետիկը, Հաբսբուրգների կայսրությունը, Հռոմի պապը, Իսպանիան, Հունգարիան և ուրիշներ, հզորացող Օսմանյան պետության դեմ դաշնակիցներ փնտրելով, աշխատում էին լավ հարաբերություններ հաստատել Սեֆիյանների նոր իրանական պետության հետ, հույս ունենալով նրան իրենց կողմը գրավել Թուրքիայի դեմ մղվող պայքարում։ Իր հերթին Շահ-Իսմայիլը բարյացակամ դիրք էր բռնել՝ վերոհիշյալ պետությունների կողմից Իրանի հետ դաշինք կնքելու վերաբերյալ արվող առաջարկների նկատմամբ՝ նախատեսելով ապագայում անխուսափելի ընդհարումը օսմանցիների հետ։ Ահա այս պատճառով Իսմայիլի օրոք բարեկամական ու որոշ դիվանագիտական հարաբերություններ

հաստատվեցին Իրանի և Եվրոպայի վերոհիշյալ մի շարք պետությունների միջև[1]։

Այժմ մի քանի խոսք Սեֆեյան Իրանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին, նրա պատմության առաջին շրջանում։

Ամենից առաջ պետք է նշել, որ Իրանում այդ ժամանակ արտադրական հարաբերությունները հիմնականում գրեթե նույն էին մնացել XIII—XV դարերի համեմատությամբ։ Այնտեղ դեռևս տիրում էին արևելյան տիպիկ ֆեոդալական կարգեր՝ իրենց մի քանի յուրահատուկ կողմերով։

Նախկին սոցիալ-տնտեսական կարգը, ինչպես նաև կառավարման ինստիտուտներն ու շահագործման ձևերը գրեթե անփոփոխ էին մնացել։

Բացի սրանից, շատ ցեղերի մոտ դեռևս զգալի չափով պահպանվել էին խիստ դանդաղորեն քայքայվող կիսանահապետական հարաբերությունները։ Կզլբաշների վաչկատուն ցեղերին հատուկ էր էքստենսիվ-անասնապահական տնտեսությունը՝ հակառակ Անդրկովկասի երկրների (գլխավորապես Հայաստանի և Վրաստանի) ինտենսիվ տնտեսության, որին մեծ հարված հասցվեց կզլբաշների և սրանցից առաջ եղած վաչկատուն ցեղերի տիրապետությամբ։

Իշխանությունը գրավելուց և նախկին ֆեոդալների մի մասին վերացնելուց հետո Սեֆեյանների դինաստիայի ձեռքն ընկան և պետական ֆոնդի վերածվեցին հսկայական քանակությամբ հողեր, որոնք առաջ պատկանում էին առանձին կառավարող խաներին ու ֆեոդալներին։ Այսպիսով, շահը հանդիսանում էր ամենախոշոր հողատեր-ֆեոդալը, որի տիրույթները ամբողջությամբ վերցրած՝ հավասար էին մի քանի նահանգների։ Այսպիսով, պետության հողերը բաժանված էին երկու մասի՝ շահի սեփական տիրույթների (խաս) և դիվանական հողերի։ Բացի սրանցից, հողային մեծ տարածություններ (թե՛ մշակելի հողեր և թե՛ արոտավայրեր) տնօրինում էին նաև վաչկատուն ցեղերը, որոնք ունեին իրենց կազ-

[1] Տե՛ս „Сборник статей по истории Азербайджана"-ի 1-ին պրակի 238 էջում Ի. Պ. Պետրուշևսկու հոդվածը։

մակերպությունը ցեղապետերի կամ խաների գլխավորությամբ և շահի կառավարության նկատմամբ նշանակալի չափով ինքնուրույն էին։

Ֆեոդալական հողատիրության հիմնական ձևերը սեֆեյան շրջանում հանդիսանում էին զանազան կարգի ֆեոդալների լենային տիրույթները (սոյուրգալ, այնուհետև թիուլ), որոնք շահը սեփական հողերից կամ դիվանի հողերից ժամանակավոր տիրակալության իրավունքով տալիս էր ավագանու զանազան ներկայացուցիչներին, հատկապես իր մերձավորներին, այդ թվում նաև հոգևոր անձերին, արքունիքում, բանակում կամ պետական հիմնարկներում կատարվող ծառայության համար կամ երբեմն էլ ուղղակի ի նշան բարյացակամության։ Լենային հողատերերը պարտավոր էին պետական գանձարանը մուծել գյուղացիներից ստացած ռենտայի մի մասը։ Լենային այս սիստեմը շատ մեծ չափերի հասավ Շահ-Աբասի օրոք։ Զգալի թիվ էին կազմում և վակուֆային (հոգևոր հաստատություններին պատկանող) հողերը։

Գյուղացիության ֆեոդալական շահագործման գլխավոր ձևերն էին ռենտան և բազմատեսակ հարկերը։ Բացի սրանցից, գյուղացիները նաև մի շարք աշխատանքային պարհակներ (բեգյար) էին կատարում թե՛ պետության և թե՛ ֆեոդալների, որոնց թվում և կրոնական հիմնարկների համար։ Ֆեոդալական ռենտան վերցվում էր գլխավորապես բահրայի (բնամթերային և մասամբ դրամական) ու վարձակալական վճարի միջոցով։ Նստակյաց գյուղացիների և քաղաքացիների (ռայաթ՝ ընդհանրապես հարկատու բնակչության) վրա առհասարակ դեռ վաղ ժամանակներից ընկած էին միջին հաշվով 25 տեսակ պարտություններ, հարկեր ու զանազան վճարումներ, որոնք հիմնականում պահպանվել էին նաև Սեֆեյանների տիրապետության շրջանում։

Իրանում ևս պաշտոնապես գյուղացիության ճորտություն գոյություն չի ունեցել, բայց փաստորեն գյուղացիությունը, կապված լինելով հողին, գտնվել է ճորտական վիճակում։ Իրանում գոյություն է ունեցել գյուղացիության մեծագույն մասի ֆեոդալական կախվածությունը և հողին ամրացված լինելը։ Բացի փաստական ճորտությունից, գյուղացի-

ների որոշ խավեր (ռանչպարներ, ֆեոդալների ծառաներ ու անձնական կախման մեջ գտնվող այլ մարդիկ) իսկական ճորտեր էին և անձնապես ենթակա էին խաներին, բեկերին և այլ հողատերերի։

XVI դարում Իրանում դեռ որոշ չափով պահպանվել էին ստրկությունը և ստրկավաճառությունը, գլխավորապես տնային ստրկության ձևով։ Այդ մասին վկայում է անգլիացի ճանապարհորդ և վաճառական Դուքետը[1]։

Վերևում նշված ֆեոդալական հողատիրության պայմաններում, Իրանում Սեֆեյանների տիրապետության ժամանակ ևս գոյություն ուներ ֆեոդալական-քաղաքական տրոհվածություն, թեև ոչ այնպես, ինչպես դրան նախորդող շրջանում։ Ուրեմն, Սեֆեյանների ժամանակ ֆեոդալական քաղաքական մասնատվածությունը լիովին չհաղթահարվեց, և տեղական խաներն ու ցեղապետերը տակավին մեծ իշխանություն ունեին տեղերում։

Սեֆեյանների իրանական բազմաժողովուրդ պետությունը նույնպես, ինչպես այն ժամանակվա Օսմանյան կայսրությունը, կենտրոնացված չէր (թեև Օսմանյան կայսրությունը այս ասպարեզում որոշ առավելություն ուներ իրանական պետության հանդեպ) և նրանում չէր առաջացել առաջատար ժողովուրդ, որն ընդունակ լիներ միավորողի դեր խաղալ պետության մեջ։

Այդ պետությունը բաղկացած էր բազմաթիվ իրանական, թուրքական, ադրբեջանական, արաբական, հայկական և այլ ժողովուրդներով ու ցեղերով բնակեցված մարզերից ու երկրներից, որոնց միջև տնտեսական կապեր գրեթե գոյություն չունեին և որոնք տարբերվում էին մի շարք առանձնահատկություններով։

Պետության առանձին մասերի կամ մարզերի գլուխը կանգնած էին բեյլերբեյները՝ խաները։ Իրականում խաները համարվում էին պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, մարզերի կառավարիչներ, որոնք նշանակվում և ազատվում էին շահի կողմից, բայց շնորհիվ գոյություն ունեցող ֆեոդալական կարգի և պաշտոնների ժառանգականության (թեև ոչ օրինականացված), նրանք երբեմն մի շարք մարզերում կամ խանություններում վեր էին ածվում կիսանկախ իշխանների։

Այս դրությունը երբեմն որոշ չափով փոխվում էր՝ կապված այս կամ այն ուժեղ շահի գործունեության հետ, այն էլ ժամանակավորապես և ոչ բոլոր խաների վերաբերմամբ։

Պետական հսկայական ծախսերի ամբողջ ծանրությունը ընկած էր աշխատավոր բնակչության ուսերին։ Նրանից գանձվում էին բազմատեսակ և հսկայական քանակությամբ հարկեր։ Ժողովուրդն անտանելի չափով կեղեքվում էր տեղական ֆեոդալների և կենտրոնական ու խանական կառավարությունների կողմից։

Կզլբաշների պետության մեջ ևս ֆեոդալական դասակարգի գլխավոր ներկայացուցիչը և նրա շահերի պաշտպան հանդիսացող շահը անսահման իրավունքներ ուներ բոլոր հպատակների կյանքի ու գույքի նկատմամբ և ինքնիշխան կերպով կարող էր տնօրինել երկրի բախտը։

Սակայն շահի այս միահեծան իշխանությունը իրականում կիրառվում էր ֆեոդալական ավագանու ներկայացուցիչների՝ շահի բարձրաստիճան պաշտոնյաների միջոցով, որոնք կազմում էին պետության տիրող և կառավարող խավը։ Շահի իշխանությունն ու քաղաքականությունը ենթարկվում էին ֆեոդալական դասակարգի շահերին։ Ուստի շահերի անսահմանափակ իշխանության հարցը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով։

* * *

Այս ժամանակամիջոցում Հայաստանը շարունակում էր զրկված մնալ իր անկախությունից և գտնվել օտար տիրողների իշխանության տակ։ Դեռ վաղ ժամանակներից թուրքական հրոսակախմբերը, արշավելով արևելքից և կոտորելով, գերեվարելով կամ արտագաղթի մատնելով Հայաստանի բնակչության զգալի մասին, ոչ միայն տիրում էին երկրին, այլև բնակություն էին հաստատում այնտեղ, որի հետևանքով ժամանակի ընթացքում Հայաստանի բնակչության կազմը

[1] Տե՛ս «Ուղեգրություններ», հ. 1, էջ 434—435։

զգալի փոփոխության էր ենթարկվում։ Երկրի արմատական բնակիչների՝ հայերի հետ միասին այնտեղ սկսեցին ապրել նաև թուրքեր, քրդեր, թուրքմեններ և այլ վաչկատուն ու կիսավաչկատուն ցեղեր ու ժողովուրդներ, որոնք անհամեմատ ավելի բարվոք և արտոնյալ պայմաններում էին գտնվում։

Սկսած XV դարի 60-ական թվականների կեսերից՝ Հայաստանի մեծ մասը մտնում էր թուրքմենական Աղ-կոյունլու ցեղային միավորման պետության կազմի մեջ, իսկ որոշ մասերն էլ գտնվում էին այլ տիրողների իշխանության տակ (Կարա-կոյունլուների, քրդական ցեղերի և ուրիշների)։

Նվաճողների երկարատև տիրապետության պայմաններում Հայաստանում ևս մեծ չափով տարածվեցին ֆեոդալական ավելի հետամնաց ձևեր՝ նահապետական-տոհմատիրական կարգերի որոշ մնացորդներով։

Ինչպես մոնղոլական էլղանների, այնպես էլ, մանավանդ, թուրքմենական նվաճողների տիրապետության շրջանը Հայաստանում խիստ ծանր հետևանքներ ունեցավ երկրի համար։ Արտադրողական ուժերը քայքայվեցին, բնակչությունը ենթարկվում էր սիստեմատիկ կողոպուտի ու կոտորածի։ Կուլտուրայի շատ հուշարձաններ ոչնչացվեցին։ Եթե հաշվի առնենք նաև այն, որ այդ ցեղապետերի միջև անվերջ տեղի էին ունենում երկպառակություններ ու կռիվներ, և առհասարակ Հայաստանը այդ ժամանակ պետությունների միջև հաճախ պատերազմների թատերաբեմ էր, ապա պատկերն ավելի պարզ կլինի։ Խաղաղ տարիներին նույնպես դրությունը պակաս ծանր չէր. ինչպես հայ տարեգիրներն են նշում՝ «դառն և նեղ ժամանակներ» էին, քանի որ երկրում տիրում էին սանձարձակ կամայականությունը, կողոպուտը, սոսկալի ճնշումն ու շահագործումը։ Դրությունն ավելի էր ծանրանում նրանով, որ իշխող քոչվորական ավագանին լայնորեն կիրառում էր գերեվաճառությունը, որը հայ ժողովրդի նկատմամբ թերևս ամենասարսափելի և տմարդի վարմունքն էր։

Տիրողները բոլոր միջոցներով աշխատում էին մահմեդականացնել հայերին։ Բացի հալածանքներից և բռնի հավատուրացության միջոցառումներից, նրանք գործադրում էին նաև օրենսդրական կարգի միջոցառումներ։

Մոնղոլական և թուրքմենական տիրապետության ընթացքում տեղական հայկական ֆեոդալական պետական կազմավորումները ոչնչացվեցին, հայ ֆեոդալական ավագանու մի մասը գաղթեց այլ երկրներ, մի մասը ոչնչացվեց ֆիզիկապես կամ տնտեսապես, իսկ ոմանք էլ մահմեդականություն ընդունելով՝ ձուլվեցին նվաճողների հետ։ Նրանց տեղը գրավեցին նվաճողները՝ այսինքն զինվորական-վաչկատուն ավագանին։ Այս ջարդից խուսափեց միայն հայ եկեղեցական-վանական ֆեոդալական խավը։

Այսպիսով, հին հայկական ֆեոդալիզմին հատուկ գծերը XV դարում գրեթե անհետացան։ Մասամբ պահպանված հայ ազնվականներն իրենց գոյությունը մի կերպ շարունակում էին՝ հարմարվելով նվաճողների կարգերին ու ստեղծված պայմաններին։ Նրանց մի մասը իր ջոկատներով ծառայության էր մտնում նվաճողների բանակում, իսկ ոմանք էլ տեղական պաշտոններ էին վարում կամ հոգևորականներ էին ձեռնադրվում, որով կարողանում էին պահպանել իրենց արտոնյալ վիճակը։

Այս ցեղերի տիրապետության և նրանց միջև տեղի ունեցող հաճախակի պատերազմների պայմաններում ավերվում էին Հայաստանի քաղաքները, քաղաքային կյանքը կատարյալ անկում էր ապրում։

Այս բոլորով հանդերձ, երկրի տնտեսական ընդհանուր վայրէջքի պայմաններում, այնուամենայնիվ, Հայաստանում, հատկապես հարավային քաղաքներում տնտեսական կյանքը որոշ չափով պահպանվել էր, և նույնիսկ տեղի էր ունենում արհեստների ու առևտրի որոշ աշխուժացում։ Սա բացատրվում է նրանով, որ այդ շրջանում առևտրական ճանապարհները փոխադրվում էին դեպի հարավ։ Հայաստանի հարավային քաղաքները կապվում են Կիլիկիայի՝ նրա միջոցով նաև Իտալիայի հետ, որոնց միջև ստեղծվում են առևտրական սերտ հարաբերություններ[1]։

Հայաստանի այդ շրջանների տնտեսական որոշ աշխու-

[1] Տե՛ս Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, պրակ 4, 1959, էջ 104–105։

ժացման գործում դեր է խաղացել նաև այն, որ այդ շրջանները մեծ մասամբ կապված լինելով արևմտյան երկրների հետ և համարյա մի կողմի վրա ընկած լինելով, արշավանքներից ու պատերազմներից այնքան չէին տուժել։

Ընդհանուր առմամբ XV դարում հայ ժողովրդի տնտեսական դրությունը ծայրաստիճան վատթարանում է։ Այս պայմաններում, տիրողների անմարդկային վերաբերմունքի ու հալածանքների պատճառով, ինչպես նաև պատերազմական վտանգներից դրդված, Հայաստանի բնակչության որոշ զանգվածներ ստիպված թողնում են հայրենիքը, տուն ու տեղը և հեռանում հարևան կամ հեռավոր երկրներ՝ այնտեղ փնտրելով առաջին հերթին ֆիզիկական գոյության ապահովություն և նյութական կյանքի հնարավորություն։

Այդ շրջանի աղբյուրների բազմաթիվ վկայություններից երևում է, որ ինչպես նախորդ դարերում, այնպես էլ XV դարի երկրորդ կեսին Հայաստանից մեծ քանակությամբ բնակչություն է հեռացել և բնակություն հաստատել Փոքր Ասիայում, Կոստանդնուպոլսում, Բալկանյան թերակղզում, Եգիպտոսում, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Ռուսաստանում, Լեհաստանում և այլուր, որտեղ այդ գաղթականներն արդեն սկսում են այդ ժամանակվանից հայկական գաղութներ հիմնել։

Պետք է նշել, որ երկրի այս վիճակից առանձնապես տուժում էր աշխատավոր ժողովուրդը, որն աղքատանում ու քայքայվում էր, իսկ հարուստ առևտրականները, վաշխառուները և որոշ չափով պահպանված հայ ֆեոդալական տարրերը կամ շատ քիչ էին տուժում, կամ գրեթե բոլորովին չէին տուժում։ Դեռ ավելին, հարուստ վաճառականների և վաշխառուների մոտ որոշ չափով նույնիսկ հարստություն էր կուտակվում։

Հայաստանի և հայերի վիճակն ավելի ծանրացավ, երբ սկսվեց կզլբաշների շարժումը և այդ կապակցությամբ հաճախակի ու երկարատև պատերազմներ տեղի ունեցան նաև Հայաստանի տերիտորիայի վրա՝ Սեֆեյանների և Աղ-կոյունլուների տիրակալների միջև, և այնուհետև, որ ավելի սարսափելին էր, պարսկա-օսմանյան երկարատև պատերազմների շրջանը։

ԳԼՈՒԽ III

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Սուլթան Մուհամեդ II-ի մահից (1481 թ.) հետո, ինչպես նաև Բայազիդի թագավորության (1481—1512) վերջին շրջանում գահակալության համար սուլթանական տան անդամների միջև տեղի էին ունենում ներքին երկպառակություն և պայքար։

Գահաժառանգության հողի վրա պայքարը սրվեց Բայազիդի և իր որդիների միջև։ Սկզբում ընդվզեց կրտսեր որդին՝ Սելիմը և հենվելով իրեն պաշտպանող ենիչերիների վրա, միջոցների դիմեց գահին տիրելու համար։ Նա պահանջեց իրեն նշանակել Տրապիզոնի փոխարքա, որտեղ ինքը այդ ժամանակ նահանգապետ էր, մայրաքաղաքին մոտիկ ևրոպական մի քանի մարզերի կուսակալ։ Բայազիդը ստիպված զիջեց։ Այդ ժամանակ գլուխ բարձրացրին նաև մյուս որդիները, և մի քանի տարի շարունակ Բայազիդը հարկադրված էր պայքարելու մերթ այս, մերթ այն որդու դեմ։

Վերջապես, ենիչերիները զենքի դիմեցին հօգուտ Սելիմի և սուլթանին ստիպեցին զիջել գահը նրան։ Շուտով Բայազիդը մեռավ, ամենայն հավանականությամբ զոհ դառնալով իր հարազատ որդու՝ Սելիմի կազմակերպած դավադրությանը։

Այսպիսով, ոչ թե ավագության իրավունքով, այլ բռնությամբ տիրելով գահին, Սելիմը (1512—1520 թթ.) ամենից

առաջ ոչնչացրեց իր եղբայրներին և նրանց արու զավակներին։ Այս գաղանային արարքը ոչ միայն հատուկ էր Սելիմ I-ին, որպես Թուրքիայի ամենաարյունարբու սուլթաններից մեկի (որի համար նա կոչվել է Յավուզ կամ Ահեղ). նման տրադիցիան գալիս էր նրա նախորդներից, որոնք սուլթան դառնալով, սովորաբար անխնա կերպով կոտորում էին սուլթանական տան բոլոր արու անդամներին (բացի իրենց հարազատ որդիներից)՝ գահի հետագա հավանական հավակնորդներին։

Սելիմ I-ի օրոք Օսմանյան պետության ռազմական հզորությունն ավելի բարձրացավ և բանակի թիվն ավելացավ։ Թուրքական բանակն այդ ժամանակ զինված էր նաև հրազենով։ Բացի այդ, Սելիմի օրոք սկիզբ դրվեց նաև Թուրքիայի ռազմանավատորմի ստեղծմանը։ Իսկ հրետանին, որը Թուրքիան վաղուց ուներ, այժմ բավականին ուժեղացել էր։ Պետք է նշել, որ այն ժամանակ, երբ Թուրքիայում ստեղծվում էր կանոնավոր բանակ, արևմտաևրոպական պետություններից ոչ մեկում դեռ այդպիսին չկար։

Օտարերկրյա պետությունների հետ ունեցած հարաբերություններում Սելիմը փոխեց Թուրքիայի արտաքին քաղաքականությունը։ Իր ամենագլխավոր թշնամուն նա համարում էր նոր կազմավորված Սեֆեյան Իրանին, որը սպառնալիք էր Թուրքիայի համար և խիստ անհանգստացնում էր Սելիմ I-ին։ Առհասարակ պետք է նկատել, որ բարձրացող Սեֆեյանների պետության և բավականին ուժեղացած Օսմանյան Թուրքիայի միջև սկզբից գոյություն ուներ մրցակցություն ու թշնամանք՝ Մերձավոր Արևելքում գերիշխանություն ձեռք բերելու, ինչպես նաև Անդրկովկասի (հատկապես Հայաստանի) և Իրաքի հարուստ ու արգավանդ հողերին տիրելու համար։

Այս խնդրում և ընդհանրապես երկու պետությունների թշնամական հարաբերությունների և պատերազմների խնդրում կարևոր նշանակություն ուներ նաև Անդրկովկասի վրայով անցնող եվրոպական-ասիական քարավանային ճանապարհներին տիրելու հանգամանքը։ Բացի դրանից, Անդրկովկասին և Կասպից ծովի ափերին տիրելը Թուրքիայի համար կարևոր էր նաև տեղական հարստություններից՝ Բաքվի նավթից և աղից, Շիրվանի և Գիլանի մետաքսից, բրդից, պղնձից, արծաթից և այլ հարստություններից օգտվելու տեսակետից։ Եվ, վերջապես, օսմանցիների համար խիստ ձեռնտու էր տիրել հարուստ առևտրական կենտրոն հանդիսացող Թավրիզին։ Այդ երկրների նվաճումը նաև հնարավորություն էր տալիս Թուրքական և կղզբաշական ֆեոդալներին գիշատիչ կերպով շահագործելու նրանց ժողովուրդներին։ Հետագայում առաջացած նոր հանգամանքներն ավելի կարևոր են դարձնում այս ճանապարհների և Անդրկովկասի ու մասնավորապես Հայաստանի համար մղվող պայքարը։

Այնուհետև, կարևոր է նշել, որ Անդրկովկասը նաև ստրատեգիական նշանակություն ուներ, քանի որ տիրելով նրան և հատկապես Ադրբեջանին, Թուրքիան հնարավորություն էր ստանում հյուսիսից կղզբաշների տիրապետությունների վրա հարձակվելու։ Բացի այդ, տիրելով Կասպից ծովի ափերին, Թուրքերը կկարողանային հարաբերություններ հաստատել իրենց դաշնակից և Սեֆեյան պետության թշնամի ուզբեկական խաների հետ։ Բացի այս բոլորից, կղզբաշները ամրանալով Քուրդստանում և Հայաստանում, կանխում էին օսմանցիների առաջխաղացումը դեպի արևելք։ Այս պատճառով Սելիմը ձգտում էր լայն նվաճումներ կատարել Ասիայում, որի համար անհրաժեշտ էր ամենից առաջ ջախջախել Իրանին և Եգիպտոսին։

Անշուշտ, երկու պետությունների միջև եղած այս թշնամանքը, բացի նշված տնտեսական ու քաղաքական պատճառներից, ուներ նաև կրոնական պատճառներ։ Ինչպես գիտենք, պարսիկների դավանած շիա և Թուրքերի դավանած սյունի կրոնական ուղղություններ միջև դեռ շատ վաղուց տեղի էր ունենում անհաշտ ու արյունահեղ պայքար։ Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ արևելյան (մուսուլմանական) պետություններում կրոնը բավականին մեծ դեր է խաղացել պետական և քաղաքական կյանքում։ Ահա թե ինչու կրոնական հանգամանքը այս երկու երկրների թշնամական հարաբերությունների և ապա ռազմական ընդհարումների գործում նույնպես զգալի դեր խաղաց։ Սելիմը Իրանի դեմ պատրաստվում էր արշավանքի «ուղղահավատ (սյունի) Ի-

լամի պաշտպանության» լոզունգով՝ ընդդեմ «հերետիկոս-շիաների»։

Սակայն, այնուամենայնիվ, կրոնական մոմենտը այս գործում երկրորդական նշանակություն ուներ, և թուրք-իրանական պայքարն ընթանում էր սոսկ սյուննիների և շիաների կրոնական թշնամանքի շղարշի տակ։ Այս կապակցությամբ պետք է նկատել, որ բուրժուական մի շարք պատմաբաններ (Լեն Պուլ և ուրիշներ) թուրք-իրանական պատերազմների պատճառը համարում են գլխավորապես կրոնական հակամարտ դավանանքների տարբերությունը, որը, իհարկե, զուտ իդեալիստական տեսակետ է[1]։

Ավելորդ չի լինի նշել, որ այստեղ որոշ չափով դեր էին խաղում նաև Սելիմի ռազմատենչ ու ագրեսիվ-զավթողական ձգտումները, որոնք թելադրվում էին տիրող ֆեոդալական դասակարգի շահերով։ Այս մասին «Թարիխ»-ում հետևյալն է ասված. «Սելիմի պլանն էր՝ Սեֆեյանների պետությունը նվաճելուց հետո, գրավել միջերկրածովյան ավազանի երկրները և ընդարձակել իր կայսրությունը։ Նույնիսկ նա մտածում էր նվաճել նաև Հնդկաստանը»[2]։

Սելիմի գլխավոր խնդիրն էր ամենից առաջ ջախջախել Սեֆեյան պետությունը, իր կայսրությանը միացնել Իրանի իշխանության տակ գտնվող և Թուրքիային սահմանակից մի շարք մարզեր կամ երկրներ։ Այս պլանը իրագործելու նպատակով նա ոչ միայն ոչ մի արշավանք չկատարեց Թուրքիային հարևան եվրոպական պետությունների դեմ (և այս դրությունը շարունակվեց մինչև նրա թագավորության վերջը), այլև առերես լավ հարաբերություններ պահպանեց այդ պետությունների հետ, դրանցից մի քանիսի հետ էլ վերանորոգեց հաշտության պայմանագրերը։ Բացի դրանից, նա իր գահակալության հենց սկզբին ընդունեց եվրոպական մի շարք

[1] Տե՛ս Стенли Лен-Пуль, Мусулманские династии, СПб, 1899, էջ 217։ Ի տարբերություն այս տեսակետի, Լեոյի կարծիքով, թուրք-իրանական պատերազմները պայմանավորված էին այդ պետությունների միջինասիական սկզբունքով, որի գլխավոր հատկությունը կովարարությունն էր («Սոցիալական կապիտալ», հ. I, էջ 54)։ Իհարկե, սոցիալ-տնտեսական հիմքից զուրկ, մակերեսային իդեալիստական այս բացատրությունը ոչ մի քննադատության չի դիմանում։

[2] „Tarih", B. III, 1933, Istambul devlet matbaasi, S. 47.

պետությունների՝ Վենետիկի, Հունգարիայի և Ռուսաստանի դեսպաններին և փոխադարձաբար իր դեսպաններն ուղարկեց այդ երկրները։ Նա ցանկանում էր դեպի Ասիա արշավելիս հատկապես ապահով լինել ծովի կողմից։

«Յիշատակք պատմութեան ինքնակալութեան օսմանցւոց» աշխատության անհայտ հեղինակը հաղորդում է, որ Սելիմը գահակալությունից հետո դեսպաններ ուղարկեց Վենետիկ և Հունգարիա՝ հայտնելով իր գահակալության մասին ու նորոգելով նրանց կողմից իր հոր հետ կնքված հաշտությունը[1]։ Բացի դրանից, Սելիմը ամենայն հավանականությամբ գիտեր Եգիպտոս և Հունգարիա ուղարկված իրանական դեսպանների մասին։

* * *

Իրանի ներքին դրությունը թուրք-իրանական պատերազմների նախօրյակին արդեն մեզ ծանոթ է նախորդ գլխից։ Ինչ վերաբերում է Իրանի ռազմական դրությանը՝ նշված շրջանում, ապա Շահ-Իսմայիլի բանակը այդ ժամանակ բավականին պատկառելի ուժ էր ներկայացնում, մանավանդ հեծելազորը։ Բայց, այնուամենայնիվ, այդ բանակն իր սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով զիջում էր այն ժամանակվա թուրքական բանակին։ Այլ կերպ ասած, իրանական բանակում հրաձգենը մեծ չափով պակասում էր, իսկ հրետանի դեռ բոլորովին չկար։

Իրանական բանակում թե՛ քանակով և թե՛ նշանակությամբ գլխավոր տեղը գրավում էր հեծելազորը, որը բաղկացած էր մոտ 50 հազար զինվորից։ Սրա մեծ մասը կազմված էր բացառապես ադրբեջանական ցեղերին պատկանող զինվորական կոնտինգենտից։ Այդ պատճառով էլ զորքի այս տեսակին սովորաբար ամենուրեք կոչում էին կզլբաշ։

Առաջին Սեֆեյանների օրոք կզլբաշները իրանական բանակի ամենաուժեղ և ազդեցիկ զորքն էին՝ թուրքական ենիչերիներին համահավասար։ Սեֆեյանները բնականաբար այս զորքին արտոնյալ վիճակի մեջ էին դրել։ Կզլբաշների զորքը պահպանեց իր ցեղային կազմակերպությունը։

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 58բ։

Առաջին Սեֆեյանների ժամանակ կզլբաշները մեծ ազդեցություն ունեին պետական գործերում և նրանցից էին նշանակվում պետական բարձրագույն պաշտոնյաները թե՛ կենտրոնում և թե՛ տեղերում։

Իրանական զորքի մյուս տեսակը հետևազորն էր, որը կոչվում էր թյուֆանքչի (հրացանավոր) և բաղկացած էր 40—50 հազար զինվորներից։ Այդ զորքը հավաքագրվում էր գյուղական բնակչությունից։ Որպես աշխարհազոր այդ կարգի զինվորները խաղաղ ժամանակներում գտնվում էին իրենց բնակավայրում և զբաղվում էին տնտեսությամբ։

Բանակի այս մասը միանգամայն խախուտ էր և ճակատամարտերում հաճախ փախուստի էր դիմում։ Այդ է պատճառը, որ շահերը նրանց միայն խիստ կարիքի դեպքում էին մարտի մեջ մտցնում։

* *
*

Թուրքիայի և Իրանի հարաբերությունները խիստ սրվեցին, հենց որ Սելիմ I-ը տիրացավ սուլթանական գահին։ Դրանից հետո Իսմայիլի համար պարզ էր, որ շուտով նոր սուլթանի հետ գործն անխուսափելիորեն կհասնի պատերազմի։ Նա ոչ մի բանից չխորշեց, որպեսզի Թուրքիայի դեմ ձեռք բերի հզոր դաշնակիցներ։ Այս նպատակով նա բանակցություններ սկսեց Վենետիկի և Եգիպտոսի հետ, որոնցից առաջինը հենց նոր էր ձեռնտու հաշտություն կնքել Թուրքիայի հետ, իսկ մամլյուկները հավանաբար կզլբաշների հետ կրոնական տարաձայնության պատրվակով չկամեցան, ինչպես հարկն է, հարձակման անցնել օսմանցիների դեմ[1]։ Բացի դրանից, Իսմայիլը այլ փորձեր ևս արեց թե՛ պատերազմից առաջ, թե՛, հավանաբար, պատերազմի ընթացքում դաշինք կնքել եվրոպական ուրիշ պետությունների հետ նույն-

[1] Թեև ՀՍՍՌ. Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրում ասված է, որ Եգիպտոսի սուլթանը օգնություն խոստացավ Իսմայիլին և թընդանոթներ ուղարկեց նրան, բայց սա այլ աղբյուրների կողմից չի հաստատվում և բոլոր հեղինակները միաբերան պնդում են, որ իրանական բանակը այդ պատերազմում թնդանոթներ չուներ, մանավանդ որ նույն ձեռագրի հեղինակը, ինչպես նշել ենք վերևում, դրանից առաջ ասում է, որ պարսիկները հրազեն չունեն (էջ 62բ)։

պես՝ միացյալ ուժերով Թուրքիայի դեմ դուրս գալու համար։ Այս նպատակով նա դեսպաններ ուղարկեց Ավստրիա, Հունգարիա և Հռոմի պապի մոտ։ Լևոն X պապը Լեհաստանի Սիգիզմունդ I թագավորին գրած իր ուղերձում հայտնում է այն մասին, որ ինքը փորձում է Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի և Իրանի մասնակցությամբ Թուրքիայի դեմ համատեղ ելույթի համար ստեղծել կոալիցիա և դրա համար մոմենտը համարում է բարենպաստ։ Բացի դրանից, 1515 թ. Շահ-Իսմայիլը Հոոդոսի ասպետների միաբանության մագիստրոսին առաջարկեց դաշինք կնքել ընդդեմ Թուրքիայի և խնդրեց նրան այդ դաշինքի մեջ ներգրավել այլ քրիստոնյա պետություններ։ Չնայած այն հանգամանքին, որ եվրոպական մի քանի պետություններ, վախենալով Թուրքիայի հզորանալուց, ձգտում էին այն թուլացնելու համար օգտագործել Սեֆեյանների պետությունը, սակայն Իսմայիլի և պապի առաջարկներն ապարդյուն անցան, և այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր չարվեցին՝ գլխավորապես այդ պետությունների անմիաբանության և ներքին հակասությունների պատճառով։ Իսմայիլը չդադարեցրեց հակաթուրքական բլոկ ստեղծելու ուղղությամբ կատարվող իր փորձերը։ Այդ ժամանակվանից Սեֆեյանների և Հաբսբուրգների միջև սկսվում է դիվանագիտական գրագրություն՝ ընդհանուր թշնամու՝ Թուրքիայի դեմ պաշտպանողական և հարձակողական դաշինք կնքելու շուրջը։

Թուրքիայի դեմ Սեֆեյանների և Հաբսբուրգների համատեղ ռազմական գործողությունները կոորդինացնելու այդ փորձերը երկու կողմից էլ չդադարեցին ողջ XVI դարում և XVII դարի առաջին կեսին։

Ընդհանրապես պետք է նկատել, որ նրանց փորձերը միշտ էլ անհաջողությամբ էին վերջանում՝ իրարից շատ հեռու լինելու և համատեղ ռազմական գործողությունները համաձայնեցնելու դժվարության պատճառով։ Ընդ որում Թուրքիան XVI դարում դեռ շատ ուժեղ էր, ուստի Սեֆեյանների հետ նրա դեմ ծրագրվող դաշինքը Հաբսբուրգների համար որոշ նշանակություն կարող էր ունենալ միայն մի շարք եվրոպական տերությունների հակաթուրքական կոալիցիայի

առկայության դեպքում, որի անհաջողության մասին խոսվեց վերևում։

Ինչ վերաբերում է այդ շրջանում Իրանի և Վենետիկի հարաբերություններին, ապա ամենից առաջ պետք է նկատել, որ Սեֆեյանների առաջին դիվանագիտական հարաբերությունները Վենետիկի հետ որոշվում էին, մի կողմից, գլխավորապես թուրքական վտանգով և ապա մյուս կողմից՝ տնտեսական բնույթի նկատառումներով։ XVI դարի առաջին կեսին Վենետիկը ևս հետաքրքրություն էր ցուցաբերում Սեֆեյան պետության նկատմամբ։ Շահ-Իսմայիլը իր հերթին դեռևս 1504—1508 թթ. բազմիցս դիմում էր Վենետիկին, առաջարկելով հակաթուրքական դաշինք կնքել։ Երկու տարի հետո Շահ-Իսմայիլը նույնիսկ պաշտոնական դեսպանություն ուղարկեց Վենետիկ՝ նույն նպատակով։ Բայց վերջինս չկարողացավ ընդունել շահի առաջարկը, այդ ժամանակ իր համար ստեղծված միջազգային աննպաստ հանգամանքների պատճառով։

Պետք է նշել նաև, որ եվրոպական պետություններից մի քանիսը (Վենետիկը, Պորտուգալիան և այլն) այդ ժամանակ տնտեսական կապեր ունեին Իրանի և Անդրկովկասի հետ։ Ցնցված այդ ընթացքում համաշխարհային առևտրական ուղիների փոխվելուն, այնուամենայնիվ, եվրոպացիների համար XVI դարում Իրանի հետ կատարվող առևտուրը դեռևս որոշ նշանակություն ուներ։ Վաճառականները, որոնք նոր առևտրական ճանապարհներ էին որոնում, Իրան էին գնում Ռուսաստանի վրայով։ Վերջապես, ճանապարհորդ-արկածախնդիրները (ավանտյուրիստները) Իրանում ավելի շատ հաջողություն ունեին, քան Թուրքիայում։

Բացի Թուրքիայից, այդ ժամանակ ուզբեկները նույնպես շարունակում էին վտանգ սպառնալ Իրանին։ Իսմայիլը, որը բավականին հոգսեր ուներ Արևմուտքում, առայժմ չէր մտածում զավթումներ կատարել Արևելքում։ Սակայն այդ հակառակորդներին նա սարսափի մեջ պահելու միջոց ուներ։ Դա Քաբուլում նստած թիմուրական Բաբուր II-ն էր, որի հետ Իսմայիլը դաշն կնքեց։

Սուլթան Սելիմը վճռեց պատերազմ սկսել Իրանի դեմ, միայն նախապես ստանալով ուզբեկական Մավերանահրի միապետի՝ Ուբայդուլլահ խանի խոստումը՝ օգնության վերաբերյալ և նախօրոք Փոքր Ասիան մաքրելով շիա-կզլբաշական տարրերից։ Այս օպերացիան պետք է կանխեր կզլբաշների նոր ապստամբությունը Փոքր Ասիայում։

Շահ-Իսմայիլը, թեև սկզբնական շրջանում դեռ չէր ցանկանում պատերազմի մեջ մտնել Օսմանյան պետության հետ, բայց մի կողմից՝ վախենալով սուլթան Սելիմի ռազմատենչ ձգտումներից և միջոցառումներից, մյուս կողմից՝ ինքը ևս ունենալով նվաճողական ձգտումներ և զգալով վտանգավոր հարևանի հետ հաշիվները մաքրելու կարիքը, պատերազմը ի վերջո համարում էր անխուսափելի։ Ուստի նա ևս պատրաստվում էր այս ուղղությամբ։

Երբ Իսմայիլը հրաժարվեց ճանաչել Սելիմին, պատերազմը երկուսի միջև դարձավ անխուսափելի, մանավանդ որ Իսմայիլը սկսեց հալածել Իրանի սյուննիներին։ Այս պայմաններում Սելիմի եղբայր Ահմեդի երեք որդիները Սելիմի ձեռքից փախչելով, սիրալիր ընդունելություն գտան շահի մոտ։ Նույնիսկ երբ սուլթանը արքայազններին վերադարձնելու հանձնարարությամբ, Իրան ուղարկեց իր դեսպանին, վերջինս սպանվեց Իսմայիլի գիտությամբ։

Բացի այս միջոցառումներից, Շահ-Իսմայիլը տակավին Բայազիդի թագավորության շրջանում հաճախ խրախուսում էր Թուրքիայի փոքրասիական հողերում սուլթանների դեմ զենքի դիմող խռովարարներին։ Նա Օսմանյան կայսրության արևելյան գավառներում ամեն կերպ խրախուսում էր շիա-սուֆիզմի ուսմունքը, այդ գործում հասնելով մեծ հաջողությունների։ Շիիզմի լոզունգի տակ Փոքր Ասիայում համախմբվում էին օսմանյան սուլթաններից դժգոհ տարրերը։ Ցնցված թուրքական իշխանությունների կողմից ձեռք առած միջոցառումներին, այնուամենայնիվ, հերետիկոսական ուսմունքները տարածվում և ամրանում էին ողջ երկրում։

Թուրքիայի և Իրանի կրոնական թշնամանքը, այսինքն սյուննիների և շիաների հակամարտությունը, սկսած XVI դարի սկզբից, ավելի սրվեց՝ կապված Իրանում Սեֆեյանների գահակալության, իսկ Թուրքիայում՝ միասնական ուղղափառ

մուսուլմանական աշխարհ ստեղծելու ուղղությամբ Սելիմ I-ի փորձերի հետ։

Շահ-Իսմայիլի՝ արշավանքների և նվաճումների ժամանակ ժողովրդին սոցիալական ճնշումից ազատելու մասին տված խոստումների վերաբերյալ լուրերը թափանցելով Փոքր Ասիա, ազդեցություն էին գործում նաև տեղի բնակչության, մանավանդ շիաների վրա։ Շահ-Իսմայիլի կրոնական պրոպագանդան, որ նա տանում էր Թուրքիայում իր էմիսարների (մեծ մասամբ դերվիշների) միջոցով, Օսմանյան պետությանը հարվածելու մի միջոց էր։ Դեռևս սուլթան Բայազիդի իշխանության վերջում Փոքր Ասիայում շիիզմի լողունգի տակ բռնկվեց քոչվորների ու գյուղացիների ապստամբություն, որին օգնում էր Իսմայիլը։ Ապստամբությունը գլխավորում էր մի կզլբաշ, որը իրեն կոչում էր Շահ-Կուլի (շահի ծառա)։ Օսմանյան կայսրության համար խիստ վտանգավոր այդ ապստամբությունը ճնշելու համար ֆեոդալական մեծ զորք դուրս բերվեց, որը ծանր կորուստների գնով հազիվ կարողացավ ճնշել այն։ Մնացած ապստամբները փախան Իրան։

Այսպիսով, Իրանի շահերը, ներկա դեպքում՝ մասնավորապես Իսմայիլը, բավականին հուսալի հենարան ունեին Փոքր Ասիայում ի դեմս դերվիշների, սեյիդների և կզլբաշների, որոնք գաղտնի քայքայիչ ու լրտեսական աշխատանք էին տանում Օսմանյան պետության դեմ և տեղ-տեղ էլ նույնիսկ ունեին գաղտնի կազմակերպություններ։ Իհարկե, Սելիմը իր հերթին ամեն կերպ հովանավորում և ապաստան էր տալիս իր մոտ փախած՝ Սեֆևյան թագավորական տան առանձին անդամներին և նրանց օգտագործում Շահ-Իսմայիլի դեմ։

Այս միջոցառումներից հետո կզլբաշները ևս մեծ եռանդով սկսեցին պատրաստվել պատերազմի։

Ընդհանրապես անհրաժեշտ է նկատել, որ ոչ միայն Սելիմի և Շահ-Իսմայիլի միջև տեղի ունեցող պատերազմի, այլև առհասարակ թուրք-իրանական պատերազմների նախապատրաստման և անցկացման շրջանում երկու պետություններն էլ իրենց կողմնակիցներ էին հավաքագրում Անդրկովկասի երկրների և այլ վայրերի բարձր խավերի շրջանում։ Ադրբեջանի ֆեոդալական ավագանին և մուսուլմանական

հոգևորականությունը այս տեսակետից բաժանվում էին երկու խմբավորման, որոնցից մեկը (գլխավորապես հարավ-ադրբեջանական և Ղարաբաղի ավագանին) շիիզմին էր հարում և սեֆևյան օրիենտացիա ուներ, իսկ մյուսը (Շիրվանի և Շաքիի ֆեոդալների մի մասը)՝ սյուննիզմին, պատրաստ էր որոշ դեպքերում թուրքերի հետ հանդես գալ միատեղ՝ կզլբաշների դեմ։

Ղարաբաղի և Նախիջևանի հայ ֆեոդալները, ինչպես և հայ հոգևորականության մեծ մասը սեֆևյան օրիենտացիա ունեին։ Նույնպիսի դիրք էր գրավել նաև Ադրբեջանի և հիշված մյուս վայրերի ինչպես ադրբեջանցի, այնպես էլ հայ վաճառականությունը[1]։

Մյուս կողմից՝ քրդական ցեղապետերի (շեյխերի) և բեգերի մեծ մասը կողմնակից էր օսմանցիներին. շատերն էլ պատրաստ էին պատերազմում օգնելու Սելիմին թե՛ կրոնական և թե՛ քաղաքական նկատառումներով։ Սելիմը օգտագործեց Իսմայիլի դեմ եղած քրդերի այս դժգոհությունը և սյուննիզմը։

Շուտով պատերազմը սկսելու համար ստեղծվեցին նաև առիթներ։ Այդ առիթներից մեկը Սելիմի շտեսնված գազանային արարքն էր Թուրքիայի շիաների նկատմամբ։ Սուլթանական կառավարությունը վճռեց ճնշել Սեֆևյանների նոր իշխանությունը և այն ներկայացնող հերետիկոսությունը, նախքան նրանց կհաջողվեր ամրապնդվել։ Բացի դրանից, Սելիմը ըստ երևույթին գիտեր Եգիպտոս և Հունգարիա ուղարկված իրանական դեսպանների մասին։

Այժմ արդեն հարմար առիթ էր ու ժամանակ՝ անակնկալ կերպով իրագործելու շիաների ոչնչացման մտադրությունը։ Սելիմի հրամանով նախօրոք կազմվեցին 7-ից մինչև 70 տարեկան բոլոր շիաների ճշգրիտ ցուցակները (թվով 40 հազար մարդու), որից հետո ձեռնարկվեց սրանց անխնա կոտորածը։ Այդ արյունալի միջոցառման հետևանքով սպանվեցին, մասամբ էլ ցմահ բանտարկվեցին այդ հասակի գրեթե բոլոր

[1] Տե՛ս И. А. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв., Сб. статей по ист. Азербайдж., вып. I, էջ 263։

շիաները։ Այս անագորույն մասսայական բնաջնջումը իր նմանը համարյա չուներ պատմության մեջ, սկսած Լենկթեմուրի ժամանակվանից։

Անշուշտ, Սելիմի այս միջոցառման քաղաքական մոտիվները միանգամայն ակնհայտ են։ Համմերը նշված աշխատության մեջ բերում է սուլթանի արքունական մերձավորներից մեկի ցինիկ արտահայտությունը այդ կոտորածի մասին. «Եթե այդ մահապատիժն ի կատար ածելու համար ուղարկվածներն ազահությունից դրդված (շատ գլուխների համար վարձատրվելու նկատառումով) իրենց լիազորության սահմանն անցնելով սպանել են նաև անմեղներին, ապա դրա համար թող նրանց ների աստված ահեղ դատաստանի օրը»[1]։

Սելիմի այս գազանային վարմունքը կզլբաշների մեջ ամենավայրենի ֆանատիզմն առաջ բերեց օսմանցիների նկատմամբ, մեկընդմիշտ ոչնչացնելով Թուրքիայի և Իրանի միջև խաղաղ հարաբերության որևէ հնարավորություն։

Անմիջական պատերազմական գործողություններին նախորդեցին Սելիմի և Շահ-Իսմայիլի փոխադարձ վիրավորական ու սպառնալից նամակները և այլ վիրավորական միջոցառումներ։ Շահ-Իսմայիլը, իմանալով շիաների այդ կոտորածի մասին, Սելիմին գրավոր կերպով պատերազմ հայտարարեց և իր զորքը շարժեց Թուրքիայի դեմ։ Սելիմը անմիջապես զորքով շարժվեց պարսիկների վրա՝ Կոստանդնուպոլսում պետության կառավարման համար թողնելով իր որդի Սուլեյմանին։ Թուրքական բանակը դուրս եկավ Էդիրնեից (Ադրիանոպոլիս) 1514 թ. մարտին։ Հասնելով Սվազ, Սելիմը բանակի զորատես կատարեց։ Այստեղից Երզնկայի վրայով զորքը շարժվեց առաջ և նույն թվականի օգոստոսին մտավ Հարավային Ադրբեջան (Ատրպատական)։ Այս շարժման ժամանակ նա, ի պատասխան Իսմայիլի նամակի, մի ընդարձակ պատասխան հղեց նրան, որով Իսմայիլին մեղադրելով անառակության, իշխանությունն ապօրինի կերպով զավթելու և Աղ-կոյունլուի նախկին «օրինական փադիշահներին» գահ-

[1] I. Hammer, Geschichte des Osmanischen Reiches, B. II, S. 689.

ընկեց անելու մեջ, հայտարարում էր, որ ուլեմաները նրան ճանաչել են իբրև հերետիկոս, հայրերի հավատքից շեղվող, սրբապիղծ ու մահապատժի ենթակա և որոշել են նրա դեմ սրբազան պատերազմ սկսել։ Սելիմը պահանջում էր Իսմայիլից՝ հրաժարվել մոլորություններից և Օսմանյան պետությանը վերադարձնել առաջներում նրանից խլած հողերը, այլապես սպառնում էր անողոք կերպով վրեժխնդիր լինել, այսինքն, ինչպես գրում էր՝ «պետք է կատարվի ամենաբարձրյալի կամքը»։ Դրանից հետո Սելիմը դարձյալ երեք նամակ ուղարկեց Իսմայիլին, որոնք լիքն էին վիրավորանքներով ու սպառնալիքներով։ Չճանաչելով շահի տիտղոս կրելու Իսմայիլի իրավունքը, Սելիմը նրան անվանում է սոսկ «Իրանի կառավարող», մեծ զորավար», «էմիր», բայց միաժամանակ նաև տվյալ դարաշրջանի «Զոհաք», այսինքն արյունարբու տիրան, նման «Շահնամե»-ի առասպելական Զոհաքին, որը զավթել էր Իրանի թագավորական գահը։

Իր հերթին Շահ-Իսմայիլը, պատասխանելով Սելիմի նամակին, նրան պաշտոնապես չէր ճանաչում իբրև սուլթան և փադիշահ։ Դրա հետ միասին միաժամանակ ավելացնում էր, որ սուլթանի նամակների տոնը, ամենայն հավանականությամբ, արդյունք է աֆիոնի ազդեցության։

2. ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՍԵՖԵՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎ ՆՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Թուրք-իրանական առաջին պատերազմն սկսվեց 1514 թ.։ Թուրքական, ինչպես և իրանական բանակի թվի վերաբերյալ ստույգ տվյալներ չկան։ Մի շարք մուսուլմանական և եվրոպական աղբյուրների տեղեկություններով օսմանյան բանակը հաշվվում էր 200 հազար զինվոր, իսկ իրանականը՝ ընդամենը 30 հազար։

Իհարկե, այս երկու թվերն էլ հազիվ թե ճիշտ լինեն։ Այլ տվյալներից երևում է, որ օսմանցիները 200 հազարից քիչ զորք ունեին, բայց ավելի, քան կզլբաշները։ Մի շարք հեղինակներ (դրանց թվում նաև հայ) հաղորդում են, որ թուրքական բանակը այդ պատերազմում բաղկացած էր 140 հազար զինվորից, մեծաքանակ հրետանիով և 60 հազար բեռ-

նակիր ուղտերով։ Բացի սրանից, 40 հազար մարդուց բաղկացած հետևապահ ջոկատը կանգնած էր Սվազի և Կայսարիի միջև։ Կարելի է ասել, որ դրանք օսմանցիների գրեթե ողջ ռազմական ուժերն էին, որ Սելիմը դուրս էր բերել Իրանի դեմ։

Այդ կարծիքին է նաև Մարքսը, որը իր «Ժամանակագրական քաղվածքներ»-ում նշում է, որ Սելիմ I-ը Շահ-Իսմայիլի դեմ Փոքր Ասիա տարավ օսմանների ողջ զինվորական ուժերը։ Նա միաժամանակ, հիմնվելով գլխավորապես Շլոսսերի տվյալների վրա, գրում է նաև թուրքական բանակի հրետանու և հրազենի մասին[1]։ Չհաշված հրետանին, որը մինչև այդ Արևելքում տակավին չկար, թուրքական բանակը նաև բավականաչափ հրազեն ուներ[2]։ Այդ բանակի երկու երրորդ մասը կազմում էր հեծելազորը։

Իրանական բանակի գլխավոր ուժը և ճնշող մեծամասնությունը կազմում էր հեծելազորը, որը գրեթե հավասար էր թուրքական հեծելազորին, այսինքն մոտ 80 հազար, որից 10 հազարանոց ջոկատը հանդիսանում էր զորքի լավագույն մասը։ Դրանք ասիական կռիվներին արդեն բազմիցս մասնակցած վետերաններն էին։ Բայց Իսմայիլի հետևազորը շատ քիչ էր, այն էլ անկանոն ու ռազմական տեսակետից ոչ պիտանի[3]։ Բացի այդ, նրա բանակի ամենաթույլ կողմն այն էր, որ հրետանի չուներ, իսկ հրազեն՝ շատ քիչ։ Որոշ հեղինակներ գրում են, որ Իսմայիլի բանակում նույնիսկ հրազեն էլ բոլորովին չկար, որը, իհարկե, ճիշտ չէ և հակասում է աղբյուրների մեծ մասի տվյալներին։ Պետական Մատենադարանի № 1496 ձեռագրում ասված է, որ պարսիկները միանգամից կարող էին հանել 100 հազար հեծյալ, որոնցից միայն 60 հազարն էր կանոնավոր զորք, միայն թե հրազեն չունեին։ Նրանց գլխավոր ապավինությունը երկրի ընդարձակությունն էր։ Այս տեղեկությունը ճշգրիտ չի կարելի համարել հենց միայն այն պատճառով, որ նույն հեղինակը մի քանի տող հետո գրում

[1] Տե՛ս Архив Маркса и Энгельса, т. VII, էջ 206։
[2] Տե՛ս А. Мюллер, История Ислама, т. III, I. Hammer, նշված աշխ. № 1496 ձեռագիրը, А. Чемерзин, նշվ. աշխ.։
[3] Лависс и Рамбо, նշվ. աշխ., հ. IV, էջ 653։

է, որ պարսիկները 40 հազարից ավելի չէին, բայց քաջ էին։ Նրանց պակասում էր հետևակն ու հրետանին[1]։

Սկսելով պատերազմը, Սելիմը հավանաբար ենթադրում էր, որ շիաների դեմ սյուննիների մղած այս սրբազան պատերազմում նա կարող է օգնություն ստանալ ուղղափառ Տրանսօկսիանի և Եգիպտոսի կողմից։ Ուստի նա օգնության խնդրանքով դիմեց Սամարղանդի խանին ու Կահիրեի սուլթանին։ Բացի այդ, Սոգմենում գտնված ժամանակ նա ընդունեց վրացական իշխան Ջանիկի դեսպաններին։

Թե ինչ դիրք բռնեցին Տրանսօկսիանի և Եգիպտոսի տիրակալները, արդյոք օգնեցի՞ն Սելիմին, թե՞ ոչ, մեզ հայտնի չէ, որովհետև այդ մասին ոչ մի տեղ ոչինչ չկա ասված։ Իսկ ինչ վերաբերում է Վրաստանին, սա պարենով օգնում էր թուրքական բանակին և սրա արշավանքի ժամանակ ամենածանր պահին Սելիմի զորքը փրկեց սովամահությունից։ Բացի այդ, Սելիմը նաև հույս էր դնում սյուննի դավանանքին պատկանող քրդերի օգնության վրա։

Սելիմի համար գլխավոր դժվարությունը այն էր, որ նա ապարդյուն կերպով աշխատում էր հասնել թշնամուն և բախվել նրա գլխավոր ուժերի հետ։ Իսմայիլը սկզբնական շրջանում խուսափելով թուրքական բանակի հետ բաց դաշտում մարտի բռնվելուց, մերթ կիրառում էր սկյութացիների տակտիկան՝ ամայացնելով երկիրը և հակառակորդին ներգրավելով ավելի հեռուն, որպեսզի երկար երթերի դժվարություններով ու կիսաանապատային տեղանքով թուլացնի նրա զորքը, մերթ՝ պարթևների տակտիկայով՝ փախուստի դիմում և կրկին անակնկալ հարձակվում հակառակորդի վրա։

Թուրքական բանակը շարունակում էր առաջխաղացումը, շարժվելով իրանական բանակի հետքերով։ Այս ընթացքում թուրքական բանակը պարենի և այլ ամեն ինչի խիստ նեղություն էր կրում, իսկ այն վայրերը, որտեղով անցնում էր նա, ինչպես ասացինք, պարսիկների կողմից նախօրոք ամայացված էին։ Այս պայմաններում դժգոհություն առաջացավ թուր-

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 60բ։

բական զինվորների, հատկապես ենիչերիների շրջանում, որոնք տրտնջում էին և պահանջում ետ վերադառնալ. Սելիմը, սակայն, հաշվի չառնելով զորքի տրամադրությունը, վճռականորեն հրամայեց շարունակել առաջխաղացումը։ Այդ վայրերի հայերը թուրքական բանակին պարենով օգնելու փոխարեն գրավում էին նրա գումակները։ Շուտով զորքի մեջ սով ու համաճարակ է սկսվում, որից մեռնում է նրա մեկ երրորդ մասը[1]։

Թուրքական բանակը, շարունակելով արշավանքը, հասավ Դերջան, որտեղ պարեն ստացավ Վրաստանի տիրակալից։ Բայց թշնամին դեռ չէր երևում։ Ենիչերիները կրկին սկսեցին տրտնջալ և նույնիսկ ընդվզեցին՝ պահանջելով ետ վերադառնալ։ Բայց այս անգամ ևս Սելիմը վճռական միջոցներով նրանց ստիպեց հնազանդվել։ «Թող շարքից դուրս գան ծեղնից նրանք,—դիմեց նա խռովարարներին,—ովքեր ցանկանում են վերադառնալ իրենց կանանց և երեխաների մոտ..., թող երկչոտները հրաժեշտ տան նրանց, ովքեր զինվել են սրերով և կապարճներով, ինձ մոտ ծառայության մտնելու համար»[2]։ Դրանից հետո նա անհապաղ առաջ շարժվելու հրաման տվեց և ոչ ոք չհամարձակվեց նրա հրամանին չենթարկվել։

Վերջապես, տեղեկություն ստացվեց Իրանի շահի մերձեցման մասին։ Ըստ երևույթին Իսմայիլը որոշել էր հրաժարվել մինչ այդ գործադրած տակտիկայից և դուրս գալ թշնամուն դեմհանդիման՝ իր մայրաքաղաքը պաշտպանելու համար։

1514 թ. օգոստոսի 21-ին թուրքական բանակը հասնելով Չալդրանի դաշտավայրը, Հարավային Ադրբեջանում (Ուրմիո լճից արևելք), իր առջև հարթավայրում տեսավ կզլբաշների անհամար վրանները։ Սելիմը հրաման տվեց անմիջապես պատրաստվել ճակատամարտի և հետևյալ օրը՝ օգոստոսի 22-ի վաղ առավոտյան անհապաղ անցնել հարձակման։

Թուրքական բանակը դասավորվեց իր սովորական մարտակարգով. աջ թևում կանգնել էին աքինջիների հեծելազորը և ազաբները (անատոլիական և Կարամանիայի անկանոն հետևազորը), ձախում՝ եվրոպական անկանոն հեծելազորը, իսկ սրանց մեջտեղը բռնել էին ենիչերիները, որոնց ծածկում էին սայլերն ու ուղտերը։ Սրանց հետևում գտնվում էր սուլթանը՝ իր աջ կողմում ունենալով սփահիներին, ձախում՝ սիլահդարներին, իսկ սրանց հետևումն էին կանոնավոր հեծելազորը և օտարերկրյա հեծյալները։ Հրետանին բաժանված էր երկու մասի և տեղավորված էր զորքի մարտակարգի աջ ու ձախ ծայրամասերում։ Թնդանոթները, որոնք միմյանց հետ կապված էին շղթաներով, քողարկված էին ազաբների շարքերի ետևում։ Թուրքական բանակի հրամանատարության նպատակն էր՝ իրանական հեծելազորը քաշել հրետանու և հրացանակիրների գնդակոծության տարածության վրա և հանկարծակի ոմբակոծության ենթարկել։

Թուրքերի ձիերը շատ հյուծված էին կերի պակասությունից և հազիվ էին ոտքի վրա կանգնում։ Հետևազորը նույնպես շատ էր հյուծվել քաղցից։ Բայց թուրք զինվորները կրկին ոգեշնչվեցին ու արիացան՝ տեսնելով թշնամու վրանները և զորքի թանկագին համազգեստներն ու շքեղ արդուզարդը, հույս ունենալով ձեռք բերել հարուստ ավար։

Իսմայիլը մտադրվել էր թևանցել թուրքերի երկու թևերը և աջից ու ձախից միաժամանակ հարձակվել ենիչերիների վրա։ Այդ նպատակով նա իր զորքը բաժանել էր երկու մասի, որոնցից մեկի հրամանատարությունը ինքն էր վերցրել, իսկ մյուսինը՝ ուստաջլու ցեղի առաջնորդը։ Սկզբում դա նրան հաջողվեց։ Թուրքական բանակի ձախ կողմում գտնվող ազաբները չդիմացան իրանական հիանալի հեծելազորի գրոհին և ցրվեցին զանազան կողմեր՝ տեղում թողնելով մեծ քանակությամբ դիակներ։ Այսպիսով, Սելիմի զորքի ձախ թևը տրորվեց Իսմայիլի հեծելազորի կողմից և ետ շպրտվեց։ Բայց աջ թևը դիմացավ իրանական հեծելազորի մյուս գրոհին և ետ չնահանջեց, այլ մի կողմի վրա քաշվելով՝ թուրքական հրետանուն հնարավորություն տվեց կրակ բացել։ Իրանական հեծելազորն անակնկալ կերպով հայտնվեց թուրքական թնդանոթների դիմաց, որոնք սաստիկ կրակ տեղացին նրա վրա։

[1] Տե՛ս А. Минот, История турецкая, ч. I, էջ 443։
[2] Левис и Рамбо, նշվ. աշխ., հ. IV, էջ 652։

Միաժամանակ կենտրոնում կանգնած ենիչերիները դուրս գալով պատնեշի ետևից, մուշկետներից ուժեղ կրակ թափեցին իրենց ձախ թևի վրա գրոհող թշնամու ջոկատի վրա։ Ողջ մարտի դաշտը ծածկվեց դիակներով, իսկ Շահ-Իսմայիլը վիրավորվեց, վայր ընկավ ձիուց և հազիվ փրկվեց գերի ընկնելուց։

Ճակատամարտը շատ արյունահեղ էր։ Ճակատամարտի բախտը վճռեց թուրքական հրետանին, որից իրանական զորքը շատ կորուստ կրեց։ Զորքի մյուս մասը, թեև քիչ էր տուժել հրետանուց, իր հրամանատարի սպանվելուց հետո հուսահատվեց։ Իրանցիները մեծ չափով նեղվում էին նաև թնդանոթների և հրացանների ծխից և վատ տեսնելով, սրի էին քաշվում թշնամու կողմից։ Իսկ նրանց ձիերը, այս բոլորին անսովոր, խրտնում էին թնդանոթների ձայնից և դես ու դեն փախչելով, խառնում էին զորքի շարքերը և խուճապ առաջացնում։ Իրանցիների մեջ անկարգություն սկսվեց։ Նրանք իրենց կորցրին և փախուստի դիմեցին[1]։

Այս ճակատամարտում թեև հաղթեցին օսմանցիները, բայց երկու կողմերն էլ մեծ կորուստներ ունեցան։ Ի. Պ. Պետրուշևսկու տվյալներով կզլբաշները կորցրին 2 հազար հոգի, իսկ օսմանցիներն՝ ավելի քան 3 հազար[2]։

Թեև կզլբաշները շարունակում էին դիմադրությունը, բայց մեծ կորուստներ կրելով, շահը ստիպված էր նահանջել այնքան հապճեպորեն, որ նրա ոչ միայն ճամբարը՝ ողջ հարստությամբ, այլև հարեմի մի մասը և շատ գերիներ ընկան օսմանցիների ձեռքը։ Օսմանցիները Սելիմի հրամանով գերիներին կոտորեցին մինչև վերջին մարդը։ Բայց թուրքերն

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 60բ։

[2] Տես Сб. ст. по истории Азербайджана, вып. I, էջ 240։ Թեև այս տվյալները հնարավոր չէ ճշտել, բայց գրականության մեջ եղած ուրիշ տվյալները ևս հազիվ լիովին համապատասխանեն իրականությանը։ Օրինակ՝ Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրում ասված է, որ իրանցիները կորցրին 16 հազար, իսկ օսմանցիները՝ 59 հազար մարդ (էջ 60)։ Իսկ Մարտիրոս քահանայի վկայությամբ՝ երկու կողմից ընկել են 100 հազար մարդ («Այրարատ», էջ 330)։

էլ այնքան էին հոգնել, որ ի վիճակի չէին անմիջապես հետապնդել հակառակորդին։

Սելիմի հրամանով Չալդրանի դաշտավայրում սպանված կզլբաշների գանգերից բուրգ կառուցվեց։

Այս ճակատամարտում կրած պարտությունը Շահ-Իսմայիլի առաջին պարտությունն էր։

Ինչո՞վ բացատրել Չալդրանի ճակատամարտում կզլբաշների բանակի պարտությունը։ Սեֆեյան պատմագիրները այդ պարտությունը բացատրում են Շահ-Իսմայիլի ասպետական վարքագծով։ Ըստ Իսքյանդար Մունշիի հաղորդած տեղեկության, Իսմայիլը, հակառակ իր զորավարների խորհուրդների, չցանկացավ հարձակվել օսմանցիների բանակի վրա, քանի դեռ նրանք երթի մեջ էին և դեռ բանակ չէին խփել, հայտարարելով, որ նա քարավանի, այսինքն երթում գտնվող մարդկանց վրա հարձակվող ավազակ չէ[1]։ Իհարկե, սա սուբյեկտիվ բացատրություն է։ Իսմայիլի պարտությունը հիմնավոր և լրիվ կերպով չի պատճառաբանում նաև XVI դարի իտալական գրող Պաոլո Ջովիոն, որը բարյացակամ վերաբերմունք ուներ կզլբաշների հանդեպ։ Նա կզլբաշների պարտությունը բացատրում էր նրանով, որ Շահ-Իսմայիլը այնքան էր սովորել հաղթել, որ չէր վախենում մարտի մեջ մտնել իրենից շատ ավելի ուժեղ հակառակորդի հետ[2]։ Այդ ճակատամարտում թուրքական բանակի տարած հաղթանակի գլխավոր պատճառը պետք է համարել նրա թվական ճնշող գերազանցությունը, հրազենի գերակշռությունը և հատկապես հրետանու գոյությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ օսմանցիները յուրացրել էին եվրոպական ռազմական տեխնիկան ու ռազմական կազմակերպությունը, մի առավելություն, որը չունեին կզլբաշները։

Մի օր հանգստանալուց հետո Սելիմը Խոյի և Մարանդի վրայով շարժվեց դեպի Թավրիզ, ուր հասավ 13 օրից հետո և 1514 թ. սեպտեմբերի 6-ին գրավեց այդ քաղաքը։ Թուրքերը

[1] Տե՛ս „Тарих и алем арай-и, Аббаси" (Сб. ст. по истории Азербайджана, вып. I, էջ 240).

[2] Տե՛ս А. Е. Крымский, История Туречины, 1923:

Թավրիզում կոտորած սարքեցին, բայց քաղաքը չկործանեցին, իսկ քաղաքում գտնվող թանկագին իրերը, շահի գանձարանը,—որը ըստ իտալացի հեղինակ՝ Վենետիկի դեսպան Կատերինո Զենոյի կազմում էր մոտ 500 ուղտաբեռ,—և զանազան այլ հարստություններ Սելիմը բռնագրավեց և ուղարկեց Կոստանդնուպոլիս։ Բացի դրանից, Սելիմը բռնի կերպով Կոստանդնուպոլիս գաղթեցրեց նաև մի քանի հազար արհեստավորների (մեծ մասամբ հայերի), իրենց ընտանիքներով։

Թավրիզի շիա բնակչությունը թշնամաբար էր տրամադրված թուրք նվաճողների հանդեպ։

Օսմանյան բանակը, սակայն, երկար չմնաց Թավրիզում, ընդամենը մեկ շաբաթ, և Սելիմն էլ ենիչերիների հուզումների պատճառով չկարողացավ լիովին օգտագործել իր հաղթանակը։ 1514 թ. սեպտեմբերի 14-ին նա թողեց Թավրիզը և մեկնեց Փոքր Ասիայի Ամասիա քաղաքը, որտեղ մնաց ձմեռելու։ Այս երթի ընթացքում Սելիմը գրավեց Բայբուրդը, որի բանալիները նա ստացել էր Էրզրումում, և Հայաստանի մի շարք այլ բերդաքաղաքներ։ Սակայն նա պարենային դժվարության պատճառով արձակեց անկանոն հեծելազորը։ Աղբյուրների վկայությամբ՝ հետևյալ տարին՝ 1515 թ. թուրքական բանակը գրավեց Կամախ կամ Դարանաղ բերդաքաղաքը, որն առաջ պատկանում էր թուրքերին, բայց պարսիկների կողմից խլվել էր։ Այստեղ «զբազումս կոտորեաց, ի քրիստոնէից և անհաւատից» (ըստ երևույթին շիաներ), հաղորդում է տարեգիրը[1]։

Սելիմը նվաճեց ոչ թե ամբողջ Հայաստանը, այլ նրա մի քանի վայրեր արևմտյան մասում։ Աբբաս Մինյոտը սա բացատրում է հայերի հակաթուրքական տրամադրության առկայությամբ[2]։ Հայաստանի նշանակալից մասը նա նվաճեց մի փոքր ավելի ուշ։

Ի՞նչու օսմանյան բանակը չխորացավ Իրանի խորքը և ետ գնաց կամ նահանջեց Թավրիզից։ Այս մասին տարբեր

[1] Տե՛ս Ղ. Փիրղալեմյան, Նոտարք. պատմութ. հայոց, էջ 258։ Ալիշան, Այրարատ, էջ 330։

[2] Տե՛ս „История турецкая", ч. I, էջ 450։

հեղինակներ տարբեր կարծիքներ են հայտնում։ Աղբյուրների և պատմաբանների մեծ մասը պնդում է, որ Սելիմը ստիպված եղավ ետ վերադառնալ Թավրիզից, որովհետև օսմանյան ենիչերիները չէին ցանկանում շարունակել արշավանքը և դժգոհություն ու հուզումներ էին բարձրացրել։ Դժգոհության պատճառներից պետք է նշել սովը և այլ դժվարություններ։ Պետական Մատենադարանի № 1496 ձեռագրում ասված է, որ Սելիմի զորքը դժգոհության, սովի և այլ դժվարությունների պատճառով ստիպված եղավ ետ գնալ, ճանապարհին լքելով հիվանդներին, վիրավորներին, նույնիսկ գույքը, և մեծ կորստով անցնել Եփրատը[1]։ Հեղինակներից ոմանք ենթադրում են նաև, որ սուլթանի խորհրդականները, պատերազմը կզբաղների հետ համարելով խիստ վտանգավոր, նրան համոզեցին հրաժարվել արշավանքը շարունակելուց, մանավանդ որ դեռ չէր հաղթվել Օսմանյան տերության մյուս հակառակորդը՝ Սիրիայի և Եգիպտոսի մամլյուկյան սուլթանությունը։ Բացի այդ, մի շարք աղբյուրներ վկայում են, որ Սելիմը նահանջեց՝ նաև Շահ-Իսմայիլի նոր հարձակման երկյուղից դրդված։ Այդ հեղինակները (թե՛ եվրոպական և թե՛ իրանական) օսմանցիների նահանջը համարում են կզբաշների ստրատեգիական հաջողությունը[2]։ Համենայն դեպս, սուլթան Սելիմը և սրա խորհրդականները Չալդրանի ճակատամարտում տարած իրենց հաղթանակին վճռական նշանակություն չէին տալիս և պայքարի հետագա շարունակումից հետո հաջողություններ չէին սպասում։

Այսպիսով, Չալդրանի ճակատամարտը այնպիսի քաղաքական հետևանքներ չունեցավ, ինչպիսին ունեցան Իսմայիլի՝ մինչ այդ Իրանում տարած հաղթանակները։ Թուրքական բանակի հաղթանակի արդյունքները չնչին էին և շատ թանկ նստեցին նրա վրա։

Ըստ որոշ տեղեկությունների, վերադարձի ճանապարհին

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 60բ։ Ա. Մինոտ, Նշվ. աշխ., մ. I, էջ 450։

[2] Տե՛ս Хабиб-ас Сийар, т. III, ч. 4 (Сб. ст. по ист. Азербайджана, էջ 241)։

Սելիմը սպառնալից ռազմական ցույցի միջոցով ստիպեց վրացական իշխան Զանիկին հնազանդություն հայտնել իրեն[1]։

Շահ-Իսմայիլը Չալդրանի ճակատամարտից հետո թողնելով նաև Թավրիզն ու հեռանալով երկրի խորքերը, կրկին եռանդուն կերպով պատրաստվեց Թուրքերի վրա հարձակման անցնելու և Թավրիզն ու իր մյուս տիրույթները ետ վերցնելու համար։

Երկու բանակների միջև ռազմական գործողությունները վերսկսվեցին 1515 թ. գարնանը։ Այդ ժամանակ շահը հարձակման անցավ օսմանցիների դեմ և Թավրիզը գրավելուց հետո ասպատակության ու ավերման ենթարկեց նրանց նվաճած մի շարք շրջաններ, գերեվարելով, կողոպտելով ու սպանելով տասնյակ հազարավոր խաղաղ բնակիչների, այդ թվում նաև մեծ քանակությամբ հայերի։

Իսմայիլի զորքը համարյա մի ամբողջ տարի ապարդյուն կերպով պաշարեց Դիարբեքիրը, որը գրավվել էր քուրդ սյուններիների կողմից։ Քուրդ բեգերի ու շեյխերի մեծ մասը Թուրքերի դաշնակիցն էր և ճանաչում էր Սելիմի իշխանությունը։

Սրանց խնդրանքով սուլթանը օգնություն ուղարկեց պաշարվածներին։ Թուրքական զորքի մոտենալու լուրը ստանալով՝ պարսիկները վերացրին քաղաքի պաշարումը։

Շուտով, 1515 թ. (ամիսը չի հիշատակված) Սելիմի և Իսմայիլի միջև կնքվեց հաշտություն կամ զինադադար, որով Թուրքիային անցան Հայաստանի արևմտյան մասը՝ Էրզրում քաղաքով հանդերձ[2], Իրաքի հյուսիսային մասը՝ ներառյալ Մոսուլ քաղաքը, Ամիդը (Դիարբեքիր)՝ իր նահանգով և Քուրդստանի մի հատվածը։ Հայաստանի մնացած մասը, Ատրպատականը, Արաբական Իրաքը (Միջագետքի միջին մասը)՝ Բաղդադով հանդերձ և Անդրկովկասի մյուս երկրները մնացին Սեֆեյաններին։ 1517 թ. Շահ-Իսմայիլը իրեն ենթարկեց Արևելյան Վրաստանը։ Այսպիսով, Սելիմը ստիպված եղավ

[1] Տե՛ս Лавис и Рамбо, նշվ. աշխ., էջ 653։

[2] Մ. Զամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, էջ 511։

բավարարվել չափավոր նվաճումներով[1]։ Դրա փոխարեն նա ազատվելով կզլբաշների դեմ մղվող պատերազմից, 1515 թ. հնարավորություն ունեցավ նվաճելու Եփրատի վրա գտնվող Թուրքմենական Զուլքադարների դինաստիայի իշխանությունը, որը շատ էր ուժեղացել և Եգիպտոսից վասալական կախման մեջ էր գտնվում։

Դրանից հետո 1515 թ. աշնանը Թուրքիայի և կզլբաշների պետության միջև պատերազմը նորից վերսկսվեց։ Այդ ժամանակ Սելիմը, արձակելով անատոլիական և Կարամանիայի զորքերը, վերադարձել էր Ադրիանոպոլիս, հանձնարարելով իր զորավարներին վարելու Իրանի դեմ մղվող պատերազմը։ Թուրքական նոր բանակին հրաման տրվեց շարժվել դեպի Եփրատ։ Իրանական բանակի հրամանատար Կարա-խանը, հույս դնելով իրանական գերազանց հեծելազորի վրա, որոշեց բաց դաշտում ճակատամարտ տալ Թուրքական բանակին, որը զինված էր ծանր հրետանիով։ Կոշխիսար քաղաքի մոտ (Դիարբեքիրից հարավ) Կարա-խանի բանակը գլխովին ջախջախվեց Իդրիս փաշայի բանակի կողմից և ինքն էլ ընկավ ճակատամարտում։ Նրա զորքը բոլորովին ցրվեց[2]։ Տիգրիսի ափին գտնված շատ քաղաքներ գրավվեցին Թուրքական բանակի կողմից։ Օսմանցիները նվաճեցին Դիարբեքիրի ամբողջ մարզը և մի շարք այլ քաղաքներ ու գավառներ։

Ողջ հարավային Հայաստանը, որտեղ տիրում էին քրդերը, նույնպես միացվեց Օսմանյան կայսրությանը, բայց ոչ իբրև գավառ (պրովինցիա)։ Քրդական շեյխերը պահպանեցին իրենց լեռնային ամրոցները և իշխանությունը։ Սելիմը այստեղ վերականգնեց տեղական քուրդ իշխաններին (բեգերին) կզլբաշ ցեղապետերի (կառավարիչների) փոխարեն։ Օսմանցիները, հանձինս քրդերի, ուժեղ դաշնակիցներ գտան։ Քրդերն օգնում էին նրանց՝ նվաճելու իրանական գավառները։

[1] Ըստ Սայքսի՝ Սելիմի և Իսմայիլի միջև հաշտություն չի կայացել, և երկու երկրների միջև սահմանամերձ հարձակումները շարունակվել են երկար տարիներ. նշվ. աշխ., էջ 226։ Այս տեղեկությունը չի համապատասխանում այլ աղբյուրների տվյալներին։

[2] Տե՛ս Архив Маркса и Энгельса, т. VII, էջ 206։

Այդ կողմից օսմանյան տիրապետությունները տարածվում էին մինչև հյուսիսային Սիրիայի տափաստանները, սպառնում Բաղդադին և շրջապատում Եգիպտոսի տիրապետությունները Սիրիայում։ Այսպիսով, թուրքական բեյլերբեյությունների հիմնումը Մոսուլում, Դիարբեքիրում և Ուրֆայում շփման մեջ դրեց Օսմանյան կայսրությունը եգիպտական սուլթանության հետ։

Սյուննիական սուլթան Սելիմ I-ի և շիական Շահ-Իսմայիլ I-ի ընդհարումը խոր հետքեր թողեց Փոքր Ասիայում։ Թեև շահը պարտություն կրեց ճակատամարտում, բայց ներքուստ ավելի ուժեղ էր։ Փոքր Ասիայում ամենուրեք նա կողմնակիցներ ուներ։ Նրա մահից հետո այնտեղ մարդիկ էին հանդես գալիս, որոնք նրա անունից ողորմություն էին հավաքում։ Վերևում նշված անհաջողություններից և կորուստներից հետո Շահ-Իսմայիլը ամրացրեց իր դիրքերը Անդրկովկասի երկրներում, վերջնականապես 1519 թ. իրեն ենթարկելով նաև Շիրվանը։ Այս պետությունը և վերևում նշված Արևելյան Վրաստանը (Քարթլին և Կախեթիան) վասալական կախման մեջ ընկան կզլբաշների պետությունից։

Շահ-Իսմայիլը մեռավ 1524 թ. մայիսի 23-ին, 37 տարեկան հասակում։ Նա երկար ժամանակ գովերգվել է Իրանի տիրող դասակարգին պատկանող հեղինակների կողմից։

Ենիչերիների հաճախակի հուզումները և կամայական արարքները Սելիմի մեջ միտք հղացրին վերակազմելու նրանց կազմակերպությունը։ Նա փոխեց գոյություն ունեցող սովորույթը և սկսեց ինքը նշանակել ենիչերական ընդհանուր աղային, տալով նրան նաև օգնական կամ ընկեր՝ վերջինիս ենթակա դարձնելով հինգ փաշաների (գեներալների)։ Այսպիսով, սուլթանը, երբ ուզենար, կարող էր փոխել ենիչերիների գլխավոր պետին, փոխարինել նրան այլ պետով և, հետևապես, միշտ իր ձեռքում պահել նրա անզուսպ զորքը։

Վերակառուցելով իր բանակը, Սելիմը վերադարձին նվաճեց նաև Եգիպտոսն ու Սիրիան, դարձնելով դրանք Օսմանյան կայսրության պրովինցիաներ և այդտեղ կուսակալներ նշանակելով իրենց պետությանը դավաճանած մամլյուքյան բեյերին[1]։ Եգիպտոսի նվաճումը խոշոր տնտեսական և ռազմական նշանակություն ունեցավ Թուրքիայի համար և ծանր տպավորություն գործեց Արևմտյան Եվրոպայում։ Այն ապահովեց Սելիմի կողմից նաև Յեմենին տիրելը, որը վասալական կախման մեջ ընկավ առաջինից։

Վալերի Բրյուսովը հայ ժողովրդի պատմությանը նվիրված իր գրքում, խոսելով թուրքերի կատարած այս նվաճումների մասին, հետևյալ եզրակացությունն է անում. «Ողջ Առաջավոր Ասիան թուրքերի ձեռքն ընկավ, և նրա վրա իշավ վայրենության ու տգիտության թանձր խավարը։ Թուրք-օսմանցիներն ավելի քիչ էին հակված դեպի կուլտուրական կյանքը, քան սելջուկներն ու մոնղոլները։ Նրանց կոչումն էր խորտակել ու ոչնչացնել, և այդպիսի ճնշման ծանրությունը վիճակվեց փորձելու նրանց կողմից նվաճված բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին»[2]։

Մյուս կողմից, Եգիպտոսի անցումը Թուրքիային նոր հարված հասցրեց Վենետիկի առևտրին, որի գլխավոր բնագավառը կախման մեջ ընկավ թուրքերի կամայականությունից։

Վերադառնալով մայրաքաղաք, Սելիմը գլխավորապես զբաղված էր ռազմանավատորմիղ ստեղծելով՝ Վենետիկի դեմ պատերազմելու համար։ Նա պատրաստվում էր պատերազմել նաև Հոոդոսի՝ Հովհաննականների միաբանության դեմ, երբ 1520 թ. սեպտեմբերի 22-ին հանկարծամահ եղավ։

Իր կարճատև թագավորության ընթացքում (8 տարի) Սելիմը բավականին հաջողություններ ունեցավ իշխանության ամրապնդման և նվաճումների բնագավառում, բայց գաղանություններով, միջազգային իրավունքի կոպիտ ոտնահարումով և այլ արյունալի արարքներով ամոթալի հիշողություն թողեց պատմության մեջ։ Սելիմին փոխարինեց նրա որդի Սուլեյման I-ը։

---

[1] Եգիպտոսի նվաճման հետ է հետագայում սխալմամբ կապել թուրքական ավանդությունը խալիֆի («ողջ մուսուլմանների» հոգևոր պետի) տիտղոսի և աստիճանի անցումը թուրքական սուլթաններին։

[2] В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, М., 1918, стр. 95.

Այսպիսով, XVI դարի առաջին քառորդում տեղի ունեցած Թուրք-իրանական հարաբերությունները բնորոշ են տեղի ունեցած պատերազմներում Թուրքիայի ձեռք բերած հաղթանակով ու մի շարք տերիտորիալ զավթումներով՝ Հայաստանում և մյուս երկրներում։ Դրա հետևանքով Թուրքիան է՛լ ավելի ուժեղացավ և ընդարձակվեց՝ ավելի վտանգավոր դառնալով Ասիայի ու Եվրոպայի մյուս պետությունների համար։ Ինչպես տեսանք, հիշյալ պատերազմներից դարձյալ ամենից շատ տուժեց հայ ժողովուրդը, որը ենթարկվեց սոսկալի աղետների ու կոտորածների։

3. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Սուլեյման I-ը (1520—1566 թթ.) Օսմանյան պետության ամենանշանավոր սուլթաններից էր, որը իշխելով Թուրքիայի հզորացման ամենաբարձր շրջանում, թե՛ ներքին և թե՛ հատկապես արտաքին զավթողական քաղաքականությամբ իրագործել է թուրքական տիրող դասակարգի ձգտումները։

Թուրքական պատմաբանների համար Սուլեյմանը «Ողջ դարաշրջանի տիրակալն էր» («Թարիխ», III), որի թագավորությունը ամենաերկարատևն էր և ամենից աչքի ընկնողը Օսմանյան պետության մեջ։ Նրա օրոք Օսմանյան կայսրությունը զավթումների հետևանքով հասավ ամենամեծ տերիտորիալ չափերի։ Նա հսկայական տիրապետություններ ձեռք բերեց Ասիայում, Աֆրիկայում ու Եվրոպայում։ Այդ շրջանում Թուրքիայի սահմանները հասնում էին Եվրոպայում՝ մինչև Ավստրիա և Լեհաստան, Ասիայում՝ Տիգրիսի ափերը, Ուրմիո լիճը և Կովկասյան լեռները, իսկ Հյուսիսային Աֆրիկայում՝ գրեթե մինչև Ատլանտյան օվկիանոս[1]։ «Թարիխ»-ի բերած տվյալներով Սուլեյմանի ժամանակ Օսմանյան կայսրության տերիտորիայում ապրում էր մոտ 60 միլիոն բնակչություն, որից 40 միլիոնը մուսուլմաններ (Թուրքեր և այլ ժողովուրդներ) և 20 միլիոն ոչ մուսուլմաններ[1]։ Սուլեյմանը ավելորդ մեծարանքի է արժանացել ոչ միայն Թուրքերի, այլև եվրոպացիների կողմից։

Նրա գահակալությունը տեղի ունեցավ համեմատաբար հանգիստ և նպաստավոր պայմաններում։ Նրա դեմ բարձրացած ընդվզումներից միայն նշելի են Սիրիայի նահանգապետի և Կոստանդնուպոլսի ենիչերիների ապստամբությունները։

Մյուս կողմից, սուլթան Սուլեյմանը, ի տարբերություն շատ այլ սուլթանների, ներքին քաղաքականության բնագավառում ևս զգալի գործ է կատարել, որը դարձյալ թելադրվում էր ֆեոդալների դասակարգին ծառայող թուրքական պետության շահերով։ Թուրքիայի ներքին կյանքում Սուլեյմանի կառավարումը աչքի է ընկնում նաև օրենսդրության մեջ, որն ուղղված էր ֆեոդալական կարգի ամրապնդման նպատակին և ընդլայնում էր աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների արտոնությունները աշխատավորների հանդեպ։ Նա հրատարակեց մի քանի օրենսդրական ակտեր, որոնք որոշ փոփոխություններ և լրացումներ մտցրին հին օրենքների մեջ։ Այս օրենքների միջոցով Օսմանյան կառավարությունը Սուլեյմանի ժամանակ անցկացրեց մի շարք ռեֆորմներ՝ տնտեսական, վարչական և զինվորական բնագավառներում՝ պետական իշխանությունը ամրացնելու համար։ Այդ բոլոր օրենքներն ամփոփված են նրա «Կանուն-նամե»-ի («Օրենսգրքի») մեջ, և ինքը Սուլեյմանը կոչվել է նաև Սուլեյման Կանունի (Օրենսդիր)։

Ռազմական ռեֆորմի հետևանքով Սուլեյմանի թագավորության վերջին տարիներին թուրքական կանոնավոր զորքի թիվը հասավ 48 հազարի (հետևազոր և հեծելազոր)։ Նրա վերջին ռազմական կամպանիայում բանակի թիվը հասավ 250 հազարի՝ 300 թնդանոթով և 200 ռազմանավով։ Ռազմական այս ուժը ապահովում էր թուրքերի հետագա նվաճումները։

Ֆինանսական, գլխավորապես հարկային գործը Սուլեյմանը նույնպես փորձեց կարգավորել։ Սրա հետ միասին նա որոշ չափով խրախուսում էր առևտուրը, արհեստները, գիտությունը և արվեստը, որոնք նրա ժամանակ մասնակի վեր-

[1] Տե՛ս Tarih, III, 1933, էջ 52։

[1] Տե՛ս Tarih, III, 1933, էջ 52։

ելք ապրեցին և մեծ չափով ավելացրին Օսմանյան պետության եկամուտները։

Սակայն պետք է նշել, որ մասնակի ծաղկման այս շրջանում, հատկապես Սուլեյմանի իշխանության վերջին տարիներին, արդեն սկսել էին դրսևորվել սաղմերն այն ներքին հակասությունների, որոնք բխում էին Օսմանյան կայսրության ռազմա-ֆեոդալական կազմակերպությունից և որոնք հետագայում հասցրին Թուրքիայի անկմանը։ Այս մասին խոսք կլինի համապատասխան գլխում։

Այս կապակցությամբ ավելորդ չէր լինի ասել, որ XVI դարում Թուրքիայի ժողովրդական մասսաների, հատկապես գյուղացիության դրությունն է՛լ ավելի վատթարացավ։ Նշված տնտեսական և կուլտուրական մասնակի վերելքը տեղի էր ունենում ի հաշիվ ժողովրդական մասսաների անխնա շահագործման։ Այդ շրջանում Թուրքերի ռազմական հաջողությունները, բացի վերևում նշված պատճառներից, պայմանավորված էին նաև նրանով, որ XVI դարի առաջին կեսին դեռևս նշանակալից չափով պահպանված ազատ գյուղացիությունը զգալի քանակությամբ օժանդակ համալրում էր մատակարարում սուլթանական բանակին։

Սուլեյմանի ժամանակ Օսմանյան պետության արտաքին քաղաքականությունը հիմնականում ոչնչով չփոխվեց։ Նա ավելի եռանդուն կերպով շարունակելով իր նախորդների ագրեսիվ քաղաքականությունը, բազմաթիվ պատերազմներ մղեց շատ երկրների և ժողովուրդների դեմ թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում։ Բայց նրա ագրեսիայի գլխավոր օբյեկտը Եվրոպան էր, որտեղ նա նվաճեց շատ երկրներ ու քաղաքներ։

Եվրոպայում ձեռք բերած մի շարք հաջողություններից հետո (Բելգրադի, Հոռդոսի և Վալախիայի նվաճումը), Սուլեյմանը կարող էր այս անգամ անմիջականորեն զբաղվել Իրանի խնդրով։

Սուլեյմանի կողմից Իրանի գործերով անմիջապես զբաղվելու և նրա դեմ արշավանքի պատրաստվելու առիթ եղավ այն, որ շահ Թահմազը երկար ժամանակ օսմանյան սուլթանին տեղյակ չէր դրձնում իր գահակալության մասին։ Սուլեյմանը սաստիկ զայրանալով «պարսկական հերետիկոսի»

(շահ Թահմազի) այդ վերաբերմունքից, նրան հղեց մի նամակ, որը գրված էր խիստ գոռոզամիտ տոնով և լի էր վիրավորանքներով։

Սուլեյմանի այս նամակին պատասխանելու փոխարեն շահ Թահմազը դեսպաններ ուղարկեց Հունգարիայի թագավոր Լյուդովիկոսի և Գերմանիայի (Ավստրիայի) կայսր Կառլոս V-ի մոտ, որոնց նա նամակներով առաջարկեց ռազմական դաշինք կնքել Թուրքիայի դեմ։ Սակայն այդ նամակները, հավանաբար, նշված միապետներին չհասան մեզ անհայտ պատճառներով։ Միայն հայտնի է, որ 1529 թ., երբ թուրքական զորքերը մոտենում էին Վիեննային, Կառլոսը Սեֆեյանների մոտ ուղարկեց ոմն ազնվական ժան դե-Բալբիին, որի բերած նամակում կայսրը աշխատում էր համոզել շահին՝ օգտագործելու հարմար պահը (այն, որ ինքը և Հունգարիայի թագավորը միջոցներ են ձեռք առել Թուրքիայի նկատմամբ սուլթանին սանձահարելու համար[1]։ Այս դեսպանության նպատակը, ըստ էության, այն էր, որպեսզի շահին համոզի ռազմական գործողություններ սկսելու օսմանցիների դեմ և այդ միջոցով թուրքական ուժերին շեղի կայսրության սահմաններից ու նրա դրությունը թեթևացնի։ Քանի որ Թուրքիայի և Իրանի միջև խաղաղությունը մինչև 1533 թ. ընխանվեց, ուրեմն այդ բանակցությունները կոնկրետ արդյունք չտվեցին։

Սուլեյմանը շուտով սկսեց եռանդուն կերպով պատրաստվել արշավանքի, թաքցնելով նրա նպատակը։

1529 թ. Վիեննայի անհաջող պաշարումից հետո Թուրքիան սկսում է աստիճանաբար փոխել Եվրոպայի վրա իր հարձակման ուղղությունը։ Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ Վիեննան ընդմիշտ մնաց Արևմտյան Եվրոպայի վրա թուրքական առաջխաղացման ամենահեռավոր կետը։ Հետագայում, չհրաժարվելով Վիեննային տիրելու ձգտումներից ու փորձերից, թուրքերը իրենց ռազմական հարվածի հիմնական

---

1 Տե՛ս Э. Шахмалиев, К вопросу дипл. сношений первых Сефевидов с зап. странами („Труды Азербайджанского Гос. ун-та", серия истории, вып. I, էջ 55)։

ուղղությունն աստիճանաբար տեղափոխում են Եվրոպայի արևելքը, դեպի ռուսական պետությունը, Անդրկովկաս և Իրան։ Այդ շրջանում Թուրքական հարձակման կարևոր բազաներ էին հանդիսանում Ազովը և Էրզրումը։ Այդ պատճառով Թուրքիան XVI—XVII դարերում համառ կերպով պահում էր Դոնի գետաբերանը և Ազովը, որոնք նրա համար մի տեսակ գրավական էին՝ կայսրության հնարավոր ընդարձակման համար դեպի Դոն, Վոլգա, Կովկաս և նույնիսկ Իրան։ Այստեղ պետք է ավելացնել, որ Սուլեյմանի և նրա հաջորդների ժամանակ, XVI դարում Անդրկովկասին տիրելու հարցը ավելի սրվեց, որն, ինչպես ասված է, նաև ստրատեգիական նշանակություն ուներ։ Տիրելով Կասպից ծովի ափերին, Թուրքերը կկարողանային մշտական սպառնալիքի տակ պահել և Իրանի հյուսիսային նահանգները։

Բացի դրանից, այստեղ խոշոր դեր էին խաղում նաև տնտեսական նկատառումները։ Անդրկովկասի երկրների վրայով անցնող եվրոպական-ասիական քարավանային ճանապարհի նշանակության մասին արդեն խոսված է։ Ավելի ուշ, XVI դարի 50-ական թվականներին Ռուսական պետության կողմից Աստրին Պովոլժիեի և Աստրախանի նվաճման, ինչպես և անգլիացիների կողմից դեպի Արխանգելսկ հյուսիսային ծովային ճանապարհի հայտնագործման շնորհիվ եվրոպական-ասիական առևտրի նոր ճանապարհ բացվեց, որը Մոսկվայի, Վոլգայի և Կասպից ծովի վրայով տանում էր դեպի Իրան ու Միջին Ասիա։ Թուրքիան պայքարում էր եվրոպացիների և ռուսների փորձերի դեմ՝ այդ ճանապարհով տրանզիտային առևտրական կապեր հաստատելու Արևելքի երկրների հետ, շրջանցելով Թուրքական տիրապետությունները։

Ուստի նա իր առջև խնդիր էր դրել Ադրբեջանը և Կասպից ծովի արևմտյան ափերը գավթելով, կտրել Վոլգա-Կասպիական այդ ճանապարհը։ Եթե այդ փորձերը հաջողվեին, ապա եվրոպական-ասիական առևտրի բոլոր ցամաքային ճանապարհները կանցնեին օսմանյան տիրապետությունների վրայով։

Այս կապակցությամբ Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունների մասին այդ շրջանում համառոտ կերպով

հետևյալը կարելի է ասել։ Սուլեյմանի ժամանակ, 1521 թ.՝ կապված նրա գահակալության և Բելգրադի գրավման հետ, Ռուսական կառավարությունը բարի դրացիական հարաբերությունները շարունակելու համար Կոստանդնուպոլիս գործուղեց իր դեսպանին։ Այս առաքելության հետ առնչություն ուներ նաև Կազանի (որի նկատմամբ, ինչպես հայտնի է, Թուրքիան ակնկալություն ուներ) և Ղրիմի խանի՝ Մոսկվայի պետության նկատմամբ ունեցած թշնամական վարմունքի և հարձակումների հարցը։ Սուլեյմանը խոստացավ խաղաղացնել խանին և միաժամանակ Մոսկվա ուղարկեց իր դեսպանին, որի միջոցով պատասխան-պաշտոնագիր հղեց Վասիլի Իվանովիչին։ Այդ պաշտոնագրում նա հավաստիացնում էր ցարին՝ երկու երկրների միջև բարեկամությունը շարունակելու և առևտուր անելու վերաբերյալ։ Դեսպանի գլխավոր խնդիրը գնումներն էին, և առայժմ քաղաքական հարցեր չէին առաջ քաշվում[1]։ Բայց Թուրքիայի հետ գրավոր պայմանագիր կնքելու և մշտական դեսպաններ փոխանակելու վերաբերյալ ռուսական կառավարության փորձերին հակառակ՝ Թուրքիայի կառավարությունը որոշակի պատասխան չէր տալիս, չցանկանալով իրեն կաշկանդել կոնկրետ պարտավորություններով, որոնք անհամատեղելի էին նրա ագրեսիվ պլանների հետ։ Այդպիսի փորձեր ռուսական արքունիքի կողմից եղան նաև այլ դեսպանների միջոցով։

XVI դարի 20-ական թվականներից մինչև 1569 թ. ռուս-Թուրքական առաջին պատերազմը ռուսական պետության և Թուրքիայի հարաբերություններում որոշ անդորրություն է տիրում։ Սա բացատրվում է նրանով, որ ռուսները հասկացան, որ Թուրքիայի հետ իսկական դաշինք կնքել իրենց չի հաջողվի ոչ միայն այն պատճառով, որ վերջինս խուսափում է դրանից, այլև գլխավորապես այն պատճառով, որ Ռուսաստանը կարողացավ կանխել Թուրքիային՝ ձեռք բերելու Կազանի և Աստրախանի խանությունները։ Դրանով նա ոչ միայն ստրատեգիական և տնտեսական առավելություն ձեռք բերեց,

[1] Տե՛ս И. А. Смирнов, նշվ. աշխ., էջ 84—85։

այլև ձախողեց թուրքական սուլթանների զավթողական պլանները[1]։

Նշված շրջանում Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները տեղի էին ունենում գլխավորապես առևտրական հարցերի շուրջը։ Ռուսական պետությունը Թուրքիայի նկատմամբ վարում էր զգույշ և զուսպ քաղաքականություն։ Միայն մի հանգամանք կոնֆլիկտների աղբյուր դարձավ Ռուսաստանի և Ղրիմի ու Թուրքիայի միջև. դա հետևյալն էր. Ռուսաստանի ուժեղացման և նրա կողմից Աստրախանի գրավման, ինչպես և տնտեսական պատճառներով XVI դարի կեսերին հյուսիսային-կովկասյան ժողովուրդների մի շարք իշխաններ կամավոր կերպով ճանաչելով Մոսկվայի պետության իշխանությունը, ռազմական օգնություն էին խնդրում նրանից՝ ընդդեմ Ղրիմի և Թուրքիայի բռնությունների ու կողոպուտի։ Ցարական կառավարությունը, ընդառաջելով նրանց, այս նոր հողերն էր ուղարկում իր զորքերը և այնտեղ ամրացված կետեր կամ բերդաքաղաքներ էր կառուցում։

Այդ ժամանակ Թուրքիան Ղրիմի, Ազովի և տարկովյան Շամխալների տերիտորիայով ճանապարհ էր բացում դեպի Կասպից ծովը, դեպի Աստրախան և Դերբենդ։ Թուրքիայի գերիշխումը Կասպից ծովի կովկասյան ափերին կխանգարեր Իրանի կողմից Աստրախանի վրայով Մոսկվայի հետ վաղուց կատարվող առևտրին։ Մոսկվայի համար դա նշանակում էր, որ Աստրախանի և Արխանգելսկի վրայով Եվրոպա գնացող իրանական ողջ մետաքսը այժմ կգնար Եվրոպա՝ Փոքր Ասիայի և Զմյուռնիայի վրայով, հետևապես կկազմալուծվեր Իրանի հետ կատարվող ողջ մոսկովյան ապրանքաշրջանառությունը, և կքայքայվեր Արևմտյան Եվրոպայի հետ՝ Սպիտակ ծովի վրայով ունեցած ապրանքաշրջանառությունը։ Ահա թե ինչու Կովկասում գերիշխելու համար Թուրքիայի և Իրանի միջև մղվող պայքարում ռուսական առևտրական կապիտալի շահերը համընկնում էին Իրանի շահերին[2]։

[1] Տե՛ս И. А. Смирнов, նշվ. աշխ., էջ 87։

[2] Տե՛ս А. М. Полиевктов, Экономич. и политич. разведки Моск. гос-ва в Закавказии в XVI-XVII вв., 1932, էջ 7—8։

Ի պատասխան Հյուսիսային Կովկասում ռուսական ազդեցության ամրապնդմանը, Ղրիմի խանը և թուրքական սուլթանը բացահայտ կերպով հանդես են գալիս Հյուսիսային Կովկասը գրավելու հավակնությամբ, ամրացնելով այն զինված ուժով։ Ե. Ս. Զևակինի ասելով՝ Ռուսաստանը և Թուրքիան XVI դարում միմյանց նկատմամբ գտնվում էին զինված չեզոքության վիճակում[1]։

Միաժամանակ պետք է նշել, որ Սուլեյմանը, սկսած XVI դարի 30-ական թվականներից, ուղբեկների հետ դաշինք էր կնքել Իրանի դեմ, որպիսի հանգամանքը թուրք-իրանական պատերազմների ընթացքում որոշ արդյունք տվեց։

* * *

Նախքան պատերազմական գործողությունների նկարագրմանն անցնելը, անհրաժեշտ է թեկուզ համառոտակի ծանոթանալ այդ ժամանակ Իրանում տիրող դրությանը։

Շահ-Իսմայիլին փոխարինեց նրա տասնամյա որդի շահ Թահմազ I-ը (1524—1576 թթ.), որը փաստորեն ենթակա էր կզլբաշական ցեղերի էմիրներին և խաղալիք էր նրանց ձեռքին։ Սրանց միջև պայքար էր տեղի ունենում իշխանություն և ղեկավար պաշտոններ ձեռք բերելու համար։ Սկզբում ուստաջլու և ռումլու ցեղերի առաջնորդները հռչակվեցին պետության վեքիլներ (ռեգենտներ)։

Շահ-Թահմազը, ի տարբերություն հոր, թույլ և պասսիվ բնավորության տեր մարդ էր։ Հակառակ խաչատուր Ջուղայեցու, Ջ. Սարկավագի և իրանական պատմագիր Բուդակ-Ղազվինիի կարծիքների, որոնք անհիմն և տենդենցիոզ կերպով գովում են այս շահին, մի քանի այլ աղբյուրներ հաղորդում են, որ նա ոչ միայն ժողովրդականություն չէր վայելում, այլև շատերը նրան չէին սիրում նրա ագահության, ժլատության և հարկերը ծանրացնելու պատճառով։ Այս մասին վկայում է վենետիկցի ճանապարհորդ և դեսպան Վին-

[1] Տե՛ս „Персидский вопрос в русско-европейских отношениях XVI в.“, Ист. записки АН СССР, № 8, 1940, էջ 131։ Մեր կարծիքով չի կարելի այս դրությունը վերագրել ամբողջ XVI դարին։ Դա ավելի ճիշտ կլիներ միայն այդ դարի առաջին կեսի վերաբերմամբ։

չենցո Դ՝ Ալեսանդրին, որը հաղորդում է նրա նկատմամբ եղած ժողովրդի դժգոհության և երկրում տիրող անարդարությունների, բազմաթիվ մահապատիժների և այլ ապօրինությունների մասին[1]։

Թահմազի և նրա մերձակա հաջորդների կողմից կատարված հարկերի ավելացման մասին վկայում են ժամանակակից պարսիկ պատմագիր Խաքյանդար Մունշին[2] և հայ պատմագիր Առաքել Դավրիժեցին[3]։ Պետք է նկատել, որ հարկային ծանրության աճը, որը բավականին բարձր էր ժողովրդի տնտեսական հնարավորություններից, տնտեսական անկում առաջ բերեց երկրում։ Ծանր հարկերի կապակցությամբ խոսելով ֆինանսական աստիճանավորների մասին, Բուդակ Ղազվինին նրանց համեմատում է օձի հետ, որը թաքնվելով ճեղքի մեջ, պատրաստվում է հարձակվել իր զոհի վրա[4]։

Շուտով վերևում հիշատակված երկու ռեգենտների (ցեղապետերի) միջև պայքարը վերսկսվեց՝ պետության մեջ գերիշխելու համար։ Անդրկովկասում և Գիլանում տեղի ունեցավ ուստաջլու ցեղի խոշոր ապստամբությունը ռումլու ցեղի առաջնորդ Դիվսուլթանի դեմ։

Իշխանությունը որոշ ժամանակ մի քանի ցեղերի առաջնորդների ձեռքից ձեռք էր անցնում։ Այս ընթացքում տեղի ունեցավ թեքելյու ցեղի առաջնորդ Ուլամա-բեգի ապստամբությունը իշխանության գլուխ կանգնածների դեմ։ Ապստամբները գրավեցին և կողոպուտի ենթարկեցին Թավրիզը (1531 թ.)։ Կզլբաշների մնացած բոլոր ցեղերը միավորվեցին թեքելյու ցեղի դեմ։ Ուլաման պարտություն կրելով, իր ցեղի հետ միասին անցավ օսմանյան սուլթանի կողմը և ծառայության մտավ նրա մոտ։

Հովհաննես Արճիշեցու հիշատակարանում նկարագրված են այս պատերազմի (ապստամբության) որոշ մանրամասնությունները և այն, որ սուլթանը Ուլամային 60 հազար զորք է

[1] Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. I, էջ 337—338։
[2] Տե՛ս „Сб. ст. по ист. Азербайджана", նույնը, էջ 220։
[3] Տե՛ս նրա «Պատմութիւն»-ը։
[4] Տե՛ս „Советское востоковедение", 1956, № 1, էջ 118։

տալիս և ուղարկում է Բիթլիսի վրա, որի կառավարիչ Շերեֆ-բեգը դավաճանել էր իրեն։ Ուլաման գալիս և պաշարում է քաղաքը, բայց երբ Իրանի շահի ուղարկած օգնական զորքը ժամանում է Շերեֆ-բեգին օգնելու, փախչում է Դիարբեքիր (1532 թ.)[1]։

Կարևոր է նշել, նաև որ այս պայքարի ու ապստամբությունների ընթացքում տեղական ավագանու կողմում, ընդդեմ կենտրոնական իշխանության, երբեմն հանդես էին գալիս և ժողովրդական մասսաները, որոնց դրությունը այդ ժամանակ կրկին խիստ վատացել էր։ Պարզ է, որ կզլբաշական ցեղերի ապստամբությունները թուլացրին կենտրոնական իշխանությունը և ուժեղացրին ու ամրապնդեցին կզլբաշների ավագանու իշխանությունը տեղերում։

Բացի այս բոլորից, Թահմազի եղբայրները չհնազանդվելով նրան, դավադրություններ էին կազմակերպում և նույնիսկ ապստամբության դիմում նրա դեմ։

Իր թագավորության սկզբում Թահմազը ստիպված եղավ զբաղվել ուզբեկներով և իր հարվածն ուղղեց նրանց դեմ (1527 թ.)։ Տեղի ունեցած ճակատամարտում իրանական բանակը ջարդեց ուզբեկներին և ստիպեց նրանց ետ նահանջել։ Սակայն Բաղդադում ծագած ապստամբությունը ստիպեց շահին այնտեղ մեկնել։

1530 թ. ուզբեկները նորից վերսկսեցին իրենց հարձակումը և ներխուժելով Իրանի սահմանները, պաշարեցին Հերաթը, բայց երբ Թահմազը իր բանակով մոտեցավ քաղաքին, սրանք ետ նահանջեցին Խորասանից։ Սակայն ուզբեկական խաների արշավանքները դեպի Խորասան շարունակվեցին նաև հետևյալ տարիներին՝ 1543, 1549, 1550, 1556, 1560, 1567 թթ. և այլն։

Այնուհետև, 1538—1540 թթ. շահ Թահմազը զբաղվեց Շիրվանի նվաճումով։

1538 թ. շահի զորքերը ներխուժելով Շիրվան, երկար կռիվներից հետո տիրեցին այն։ Գերի հանձնված մոտ 600 էմիրներ և այլ անվանի մարդիկ շահի կողմից սպանվեցին։

[1] Տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք Ժ, էջ 20—21։

Իսկ Շիրվանի շահ Շահրուխը Թավրիզ տարվելով, նույնպես ապանվեց գաղտնի կերպով։ Շիրվանի պետությունը վերացվեց և երկիրը դարձավ խանություն, որտեղ բեյլերբեյ նշանակվեց Էլխաս-միրզան[1]։

Բացի դրանից, շահ Թահմազը 1542 թ. հարձակվեց նաև Վրաստանի վրա, որը նորից գլուխ էր բարձրացրել Իրանի դեմ։ Այս մասին Զաքարիա Սարկավագը իր «Պատմագրության» մեջ հետևյալն է գրում. «Ի ԻԶՂ թուին Վիրք շարացան. և զոր ինչ պարսիկք գնացին ի Տփխիս, նոքա կողոպտէին և բրածեծ առնէին։ Եւ լուեալ Շահն՝ գնաց զօրօք ի վերայ նոցա, և գերեաց զՏփխիս և ամենայն գաւառն, և դարձաւ 'ի տեղի իւր, ի Թաւրեզ»[2]։ Այս հաղորդումը հաստատում է նաև Խաչատուր Ջուղայեցին, ավելացնելով, որ Թահմազը Վրաստանի թագավոր Սիմեոնին ձերբակալելով, տարավ իր հետ և բռնությամբ նրան հավատափոխ արեց։ Հետագայում Թահմազի որդի շահ Իսմայիլ II-ը նրան ազատ արձակեց, որը վերադառնալով հայրենիք, նորից շարունակեց ազատորեն դավանել իր կրոնը[3]։

1547 թ. Շիրվանում ծագեց ապստամբություն, որի գլուխ կանգնած էր շահի եղբայրը՝ մեզ հայտնի Էլխաս-միրզան։ Սա փորձեց օգտագործել Շիրվանի բնակչության անկախության ձգտումը և նրա պայքարը Իրանի շահի տիրապետության դեմ։ Էլխաս-միրզան ռազմական բացահայտ գործողություններ սկսեց Թահմազի դեմ։ Որոշ տեղեկություններով նա իր արշավանքով հասավ նույնիսկ մինչև Սպահան։

Ի վերջո Էլխասը պարտվեց և փախավ՝ սկզբում Ղրիմ, իսկ հետո Կոստանդնուպոլիս՝ սուլթան Սուլեյմանի մոտ, որտեղ ամեն կերպ դրդում էր նրան պատերազմ սկսել Թահմազի դեմ։ Սուլթանը շահավետ համարեց օգնել Էլխասին և պաշտպանել նրա ոտնձգությունը իր եղբոր դեմ։ Ըստ տեղեկությունների՝ Էլխասին հաջողվեց շտապեցնել թուրքերի նոր

[1] Տե՛ս „Сб. ст. по ист. Азербайджана", вып. I, էջ 266—267։
[2] Զ. Սարկավագ, Պատմագրութիւն, հ. I, էջ 10։
[3] Տե՛ս Խ. Ջուղայեցի, Պատմութիւն պարսից, էջ 99։

արշավանքը Իրանի դեմ, որպիսին, ինչպես տեսանք, արդեն նախապատրաստվում էր։

Այդ ժամանակ շահական իշխանությունը ստիպված էր պայքար մղել ներքին ընդվզումների դեմ։ 1549—1554 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում Շիրվանում տեղի ունեցան երեք ապստամբություններ՝ ուղղված շահի տիրապետության դեմ։ Դրանցից 1549 թ. ապստամբությանը մասնակցում էին Շիրվանի առաջվա սփահիները (նոքյարները)։ Ապստամբները թեև հաջողություններ ունեցան և որոշ վայրեր նվաճեցին, բայց ապստամբությունը ճնշվեց։ Մոտավորապես նույնպիսի ընթացք ունեցավ շիրվանցիների նոր ապստամբությունը։ Դրանից հետո շուտով կենդանի մնացած ապստամբները կրկին ընդվզելու փորձ կատարեցին, սակայն՝ անհաջող։

Մոտավորապես այդ նույն ժամանակ Թահմազը կարողացավ կոտրել Շաքիի անկախ պետության համառ դիմադրությունը և, չնայած որ նրան օգնում էր վրացական Կախեթիայի թագավորը, նվաճեց այդ մարզը՝ միացնելով այն Շիրվանի բեյլերբեյությանը։

1536 թ. Կոնստանդնուպոլսում Թուրքիայի և Ֆրանսիայի միջև կնքվեց դաշնագիր, որով Ֆրանցիսկ I-ը և Սուլեյման I-ը հարձակողական ու պաշտպանողական դաշինք էին կնքում գլխավորապես Կարլոս V-ի դեմ, չնայած որ թուրքական սուլթանը քրիստոնյաների ոխերիմ թշնամին էր։ Բացի ռազմական հոդվածներից, դաշնագիրն ուներ նաև տնտեսական հոդվածներ՝ առևտրական հարցերի մասին։

XVI դարի 30—40-ական թվականներին, օսմանցիների և Հաբսբուրգների կայսրության հարաբերությունները առաջվա նման մնում էին թշնամական։ Նրանց միջև գրեթե մշտապես, թեև ոչ խոշոր մասշտաբի, տեղի էին ունենում ռազմական ընդհարումներ։

Ինչ վերաբերում է Թուրքիայի և Վենետիկի հարաբերություններին, ապա նրանց միջև կնքված հաշտությունն արդեն 35 տարի շարունակվում էր, չնայած որ այդ ժամանակաշրջանում

թացքում երկու կողմից էլ լինում էին խախտումներ ու փոխադարձ մեղադրանքներ։

* * *

Ավստրիայի հետ հաշտություն կնքելուց հետո Սուլեյմանը սկսեց պատերազմի պատրաստվել Իրանի դեմ։ Այդ ժամանակ շահ Թահմազը, բացի ներքին միջոցներով Թուրքիայի դեմ պատերազմի պատրաստվելուց, նաև դիմում էր արտաքին միջոցների, այսինքն փորձում էր դաշինք կնքել եվրոպական պետությունների հետ և սրանց դուրս բերել Օսմանյան պետության դեմ։

Այս տեսակետից Սեֆևյան պետությունը կարևոր նշանակություն է ձեռք բերում Թուրքիայի նկատմամբ արևմտաերոպական երկրների վարած քաղաքականության մեջ։ Ուստի երոպական մի շարք պետությունների և Իրանի միջև հաստատված հարաբերությունները ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական բնույթ են ստանում։ Եվրոպական մի քանի պետություններ Իրանի և Անդրկովկասի հետ կապեր էին հաստատել դեռ մինչև աշխարհագրական հայտնագործությունները։ Բայց այդ կապերն ուժեղացան XVI դարից։

Այդ պետությունները հետևում էին Թուրքիայի և Սեֆևյան պետության միջև տեղի ունեցող իրադարձություններին։

Անդրկովկասը և Իրանը արևմտաերոպական պետություններին հետաքրքրում էին նաև արտաքին-քաղաքական խնդիրների տեսակետից։ Տնտեսական-առևտրական շահերը միահյուսվում էին այդ պետությունների արտաքին-քաղաքական խնդիրների հետ։ Այս դրությունը կարելի է ապացուցել ուսումնասիրվող շրջանի ֆրանս-թուրքական և ֆրանս-իրանական հարաբերությունների օրինակով։ Ֆրանսիան պայքարելով Կառլոս V-ի միապետության դեմ և այս առնչությամբ մերձենալով Թուրքիայի հետ, չէր կարող քաղաքական ու տնտեսական կապեր ունենալ Բ. Դռանը թշնամի երկրների, այդ թվում Սեֆևյան պետության հետ[1]։

Ինչպես հայտնի է, թե՛ Շահ-Իսմայիլի, թե՛ հետագայում շահ Թահմազի փորձերը՝ եվրոպական որոշ պետություն-

[1] Տե՛ս «История дипломатии», т. I, էջ 193։

ների և հատկապես Հաբսբուրգների պետության հետ Թուրքիայի դեմ միատեղ գործելու ուղղությամբ, ընդհանուր առմամբ հաջողություն չունեցան և կոնկրետ արդյունքների չհասցրին[1]։ Առհասարակ նրանց միջև ուժեղ կապեր չստեղծվեցին։ Հաբսբուրգների կայսրությունը չէր կարող հույս դնել Սեֆևյան պետության օգնության վրա, որը, նրա կարծիքով, Չալդրանի ճակատամարտից հետո կորցրել էր իր մարտունակությունը։

Ինչ վերաբերում է Սեֆևյան պետության հետ Հաբսբուրգների կայսրության տնտեսական հարաբերություններին, ապա այդպիսիք կամ գրեթե չկային, կամ, համենայն դեպս, էական չափեր չընդունեցին։ Կայսրության արևելյան շրջանները կտրված էին Իրանից, իսկ արևմտյան շրջանները արևելյան ապրանքներով հայթայթվում էին իտալացիների միջոցով։ Նա չէր կարող այդ նպատակով օգտագործել նաև Վոլգա-կասպյան ճանապարհը և այս ուղղությամբ նրա կատարած առանձին փորձերը ձախողվեցին՝ հանդիպելով Մոսկովյան պետության դիմադրությանը։

Եվրոպական բոլոր երկրներից առաջին անգամ իտալացիները կապեր հաստատեցին Արևելքի հետ։ Վենետիկի միջնորդային առևտրի մասին քաջ հայտնի է բոլորին։ Բայց XV դարի երկրորդ կեսից այդ առևտուրը խանգարվեց և խիստ դժվարացավ՝ թուրքերի նվաճումների ու հարձակումների պատճառով։ Վենետիկը դաշնակիցներ չուներ. ստիպված էր զիջումների գնով մինչև 1537 թ. խաղաղ հարաբերություններ պահպանել Բ. Դռան հետ, որպեսզի չկորցներ Արևելքի հետ կատարվող առևտրում ունեցած իր դիրքերը։

Թուրքիայի հետ պատերազմելիս (1537—1540 թթ.) Վենետիկը փորձեց կապվել Իրանի շահի հետ և դրդել հարձակվելու Թուրքիայի վրա, ըստ երևույթին նրան ինչ-որ խոստումներ տալով կամ նյութապես շահագրգռելով[2]։ Բայց ինչպես

[1] Տե՛ս В. В. Бартольд, История изучения Востока в Европе и в России, Л., 1925, էջ 107։

[2] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 133 բ։

երևում է, այդ ժամանակ Իրանը դեռ ի վիճակի չէր և կամ չէր ուզում պատերազմը վերսկսել օսմանցիների դեմ։

Ինչ վերաբերում է XVI դարի առաջին կեսին Իրանի և Ռուսաստանի հարաբերություններին, ապա այդ մասին տեղեկություն գրեթե չկա։ Սա բացատրվում է կամ աղբյուրների բացակայությամբ, կամ նրանով, որ այդ երկրների միջև իրոք կանոնավոր դիվանագիտական հարաբերություններ այդ ժամանակ չեն եղել։ Պետք է նշել, սակայն, որ XV դարի վերջերից, մի կողմից՝ Մոսկվայի պետության և, մյուս կողմից՝ Շիրվանի ու Իրանի միջև տնտեսական-առևտրական կապեր եղել են։ Որոշ տեղեկություններով՝ XV դարի վերջերին ռուսական դեսպան Մարկո Ռոսոն գտնվել է Ուզուն Հասանի մոտ, հավանաբար, պարզելու Թուրք-իրանական հարաբերությունները և Թուրքիայի դեմ դեպի Իրանը իբրև դաշնակից կողմնորոշվելու հնարավորությունը։ 1499 թ. Մոսկվա է ժամանել Շիրվանի դեսպան Շեդեդդինը։ Իվան IV-ի ժամանակվանից, հատկապես XVI դարի երկրորդ կեսից այդ կապերը խորանում են և դեսպանների փոխանակությունը հաճախակի է դառնում։ Սեֆեյան պետության հետ Ռուսաստանի հարաբերության գործում, բացի տնտեսականից, ոչ պակաս դեր է խաղացել նաև քաղաքական գործոնը, այսինքն, Օսմանյան Թուրքիայի հետ երկու պետությունների հակամարտությունն ու թշնամական հարաբերությունը, որը XVI դարի երկրորդ կեսից հասցրեց նրանց մերձեցմանը։ Այս առնչությամբ հետաքրքիր է իմանալ, որ շահ Թահմազը Թուրքական դեսպանների հետ ունեցած իր զրույցներում նրանց առջև լուրջ կերպով դնում էր նաև Մերձավոր Արևելքի՝ այն ժամանակվա միջազգային կյանքի ամենաակտուալ հարցը՝ Կովկասի և Արևելքի քաղաքական ասպարեզում Ռուսաստանի հանդես գալը, որը մեծ անհանգստություն էր առաջացրել Թուրքիայում և Իրանում։ Նա նշում էր նաև Կազանի ու Աստրախանի գրավման փաստը Մոսկվայի պետության կողմից։ Շահը հմտորեն օգտագործում էր այդ դրությունը՝ սուլթանին նախազգուշացնելու և նրա վրա քաղաքական ներգործություն ունենալու համար, քանի որ Թուրքիայի դեմ մղած պայքարում նա կարող էր կապվել Ռուսաստանի հետ, մանավանդ որ, ինչպես գիտենք,

քաղաքական և տնտեսական նկատառումները վաղուց Իրանին մղում էին դեպի նման կապերը։ Հետագայում այս ուղղությամբ կոնկրետ քայլեր են արվում։

4. XVI ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ինչպես արդեն ասվեց, երբ Սուլեյմանը առաջին անգամ մարտակոչ ուղարկեց Թահմազին, սա դիմեց Գերմանիային ու Հունգարիային և նրանց հետ համաձայնության եկավ Թուրքիայի դեմ։ Բայց նրանք ժամանակին ոչ մի օգնություն ցույց չտվեցին Իրանին կամ պատերազմ չսկսեցին սուլթանի դեմ։ Թահմազը Իրանի թշնամիների՝ ներկա դեպքում օսմանցիների և ուզբեկների նկատմամբ երկչոտ ու պաշտպանողական քաղաքականություն էր վարում։ Դրա համար նա հիմք ուներ։ Բանն այն էր, որ Թուրքիան այս անգամ ևս ռազմական առավելություն ուներ Իրանի նկատմամբ։ Նա գտնվում էր ռազմական հզորության զենիթում, իսկ Իրանը, որը ֆեոդալական ներքին պայքարից ուժասպառ էր եղել և ավելի քիչ կենտրոնացված պետություն էր, նշանակալից չափով զիջում էր Օսմանյան պետությանը։

Թուրք-իրանական պատերազմի անմիջական առիթը այս անգամ (1533—1534 թթ.) հանդիսացավ այն, որ մի կողմից՝ Բիթլիսի օսմանյան նահանգապետ քուրդ Շերեֆ-բեկը, ընդվզելով սուլթանի դեմ, անցավ պարսից շահի կողմը և քաղաքը հանձնեց նրան, մյուս կողմից՝ Բաղդադի պարսկական նահանգապետ Սուլֆանյեր խանը, դավաճանելով իր տիրոջը, քաղաքի դարբասների բանալիներն ուղարկեց Թուրքական սուլթանին, բայց նախքան Թուրքերի գալը, խեղդամահ արվեց շահի կողմից ուղարկված մարդկանց ձեռքով։

Սուլեյմանը օգտվեց այս հանգամանքից և մեծ վեզիր Իբրահիմ փաշայի գլխավորությամբ զորք ուղարկեց Իրանի դեմ՝ հանձնարարելով, որ Բիթլիսի վրա ուղարկվի հենց նույն Ալլաման։ Իբրահիմին հաջողվեց տիրել Վանա լճի արևմտյան և հյուսիսային շրջակայքում գտնվող բերդաքաղաքներ Ախլատին, Այջավազին, Արճեշին և Արծկեին՝ մասամբ զենքի ու-

ժով, մասամբ այդ քաղաքների կայազորների պետերի դավաճանության շնորհիվ, որոնց հետ նա բանակցություններ մեջ մտավ, մի շարք խոստումներ տալով նրանց[1]։

Դրանից հետո Իբրահիմը փոխանակ Բաղդադի վրա շարժվելու, արշավեց Թավրիզի վրա։ Թավրիզի ճանապարհին Թուրքական բանակին նույն եղանակով հանձնվեցին նաև խոշոր բերդաքաղաք Վանը և մի շարք այլ քաղաքներ։

Այդ ժամանակ իրանական բանակը դարձյալ հրետանի չուներ, իսկ Թուրքական հրետանին բավական ուժեղ էր։ Մի կողմից՝ այս պատճառով, իսկ մյուս կողմից՝ Չալդրանի մոտ կրած պարտությունից դաս առնելով, իրանական բանակը, խուսափելով Թուրքական զորքի հետ ընդհարվելուց, նահանջեց երկրի խորքերը (Խորասան)՝ ամայացնելով թշնամու արշավանքի ճանապարհին ընկած վայրերը։ Դեռևս Չալդրանի ճակատամարտը ցույց տվեց հրաղեն ունեցող հետևազորի առավելությունը կզրաշական հեծելազորի նկատմամբ և երկար ժամանակ ստիպեց պարսիկներին հրաժարվել այնպիսի ուժեղ հակառակորդին դեմհանդիման կանգնելուց, ինչպիսին Թուրքական բանակն էր։ Ուստի այս անգամ ևս Թուրքերի դեմ մղված պատերազմը պաշտպանողական բնույթ էր կրում։ Արդեն հիշատակված Դ՝ Ալեսանդրին հաղորդում է, որ շահ Թահմազը 6 օրվա ճանապարհի տարածության վրա ավերակ էր դարձրել իր պետության այն շրջանները, որոնք սահմանամերձ էին Թուրքիային[2]։ Ըստ Բուդակ-Ղազվինիի, երբ Սուլեյմանը հարձակվեց Իրանի վրա, Թահմազը 5000 մարդ նույնիսկ չհավաքեց, իսկ եղածներն էլ մեծ մասամբ դավաճաններ էին։ Այսպես, օրինակ՝ Մուհամեդ-սուլթան Զուլքադարը և Հուսեյն սուլթան Թեքելուն փախան սուլթան Սուլեյմանի մոտ և նրան հաղորդեցին իրանական զորքի թվի ու վիճակի մասին[3]։ Այնուհետև, Թահմազը իր զորքը բաժանեց 3—4 մասի, որոնք հերթով պահակային ծառայություն էին կատա-

[1] Տե՛ս «Թարիխի Փեչևի», Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 35—36։

[2] Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. I, էջ 383։

[3] Տե՛ս „Пёрлы известий", „Советское востоковедение", Л., 1956, էջ 116։

բելու։ Պարսիկների նահանջը, ըստ երևույթին, պետք է բացատրել նաև նրանով, որ այդ ժամանակ ուզբեկները ևս հարձակումներ էին կատարում Իրանի հյուսիս-արևելյան սահմանների վրա (հավանաբար՝ Թուրքերի հետ պայմանավորված)։

Թուրք-իրանական այս պատերազմի մասին Հովհաննես Արճիշեցին իր հիշատակարանում գրում է հետևյալը. «Մեր մեղքն յուղարկեց զՈւլամէն, որ էառ զխոնդքարն ի միւս տարին և եբեր ի վերայ շահին բազում հեծելով և անթիւ արապով, թոփով և զարպազանքով. և վաթսուն հազար թուանքչով, զոր մարդ ոչ կարէ պատմել զնորին թագաւորութիւնն, թե որպէ՞ս և կամ զիա՞րդ ոսկին և արծաթ, զոր մխսեին, այնչափ էր. և գնացեալ առին զշահանիստ քաղաքն՝ որ է Թավրէզ. և սփռեալ տարածեաց զզօրսն իւր իր չորս կողմն աւերեցին զբազում քաղաքս աւարաւ և գերութեամբ։ Եւ լուեալ շահ Դահմանն զգալ խոնդքարին, և ելեալ ի Խորասանայ իլզար, և եկեալ ի Դարգազին. և տեսեալ զբազմութիւն հռոմոց հեծելին՝ զարմացաւ և ասաց, թէ զդոցա ոտքն ու գձեռքն կապեն մեք յամիս մի չեմք կարեր ի սուր քաշել. թող թէ կռուով, միայն թե Աստուած բարկանայ և դոցա պատուհաս տայ»[1]։

Այսպիսի նպաստավոր պայմաններում Թուրքական բանակն առաջ շարժվելով, Թավրիզի մոտ կանգ առավ։ Եվ որովհետև Թավրիզն անպատրաստ էր պաշտպանության, Թուրքերն առանց դիմադրության հանդիպելու 1534 թ. հուլիսի 13-ին մտան քաղաք։ Ստեղծված նման պարագաներում առանց կռվի սուլթանին հնազանդություն հայտնեցին և անձնատուր եղան Շիրվանի ու Գիլանի տիրակալները և շահի մի քանի այլ վասալներ։ Այսպիսով, գրեթե ամբողջ Ադրբեջանն անցավ Թուրքերի իշխանության տակ։ Այնտեղ Թուրքական բեյլերբեյ նշանակվեց դավաճան Ուլաման։

Սուլթան Սուլեյմանը Եվրոպայում ավարտելով պատերազմը, իր հրամանատարության տակ եղած բանակով շտապեց օգնության հասնել Իբրահիմին և կանխել հակառակորդին, որն, ըստ տեղեկությունների, պատրաստվում էր հար-

[1] «Դիվան հայոց պատմության», պր. ԺԱ, էջ 23։

ձակվել Թավրիզի վրա։ Մի քանի ամսից հետո նա ժամանեց Թավրիզ և միացավ Իբրահիմի զորքին։

Պետական Մատենադարանի № 1496 ձեռագրի հեղինակը հաղորդում է, որ օսմանցիները Թավրիզի բնակիչներին չվնասեցին և այդ պատճառով էլ նրանց գրավեցին իրենց կողմը[1]։ Իհարկե, հեղինակը չափազանցնում է և դա չի կարելի վերագրել Թավրիզի բոլոր բնակիչներին։

Դրանից հետո Թուրքական բանակի հարձակողական շարժումը կանգ առավ։ Նա երկար չմնաց Թավրիզում, որովհետև, մի կողմից՝ ուժեղ սառնամանիքների, մյուս կողմից՝ այլ դժվարությունների պատճառով սուլթանը հրամայեց բանակը ձմեռելու համար տանել Բաղդադ։

Սուլթան Սուլեյմանը մուտք գործեց խալիֆների այդ հին մայրաքաղաքը 1535 թ. հունվարին և այնտեղ մնաց չորս ամիս, զբաղվելով նոր նվաճած մարզերի և քաղաքների կազմակերպչական գործերով։ Բաղդադի հետ միասին Թուրքիայի տիրապետության տակ ընկավ նաև ողջ Արաբական Իրաքը։

Մատենադարանի նույն ձեռագրում ասված է, որ Սուլեյմանը Բաբելոնը գրավելուց հետո շարունակելով ռազմարշավը, հասավ մինչև Պարսից ծոցը։ Այնուհետև նշվում է, որ 1535 թ. Սիրիայի, Միջագետքի, Ասորեստանի և այլ բազում քաղաքներ իրենց դեսպանների միջոցով հոժարությամբ անցան Սուլեյմանի իշխանության տակ[2]։ Բացի այդ, այս նվաճումների ընթացքում Թուրքերի ձեռքն ընկան նաև շիաների սրբազան քաղաք-սրբավայրեր Նեջեֆն ու Քերբալան։

Թուրքական բանակի՝ Թավրիզից հեռանալուց անմիջապես հետո շահ Թահմազը Խորասանից կրկին իր բանակով արշավեց Թավրիզի վրա՝ նորից նրան տիրելու և Ուլամային պատժելու համար։ Վերջինս վախենալով Թահմազից, առանց դիմադրության փորձ կատարելու, փախավ Վան և ամրացավ նրա բերդում, իսկ Թահմազը հետապնդելով նրան, պաշարեց բերդը։ Պաշարումը բավականին երկար տևեց և սոսկալի ազե-

[1] Տե՛ս հիշ. ձեռագիր, էջ 102բ։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 103ա։

տաբեր եղավ բերդում պատսպարվածների համար։ Ի վերջո, երբ շահ Թահմազը ստիպված էր վերացնել այս պաշարումը և հեռանալ Վանից, երբ օսմանյան բանակը Բաղդադից կրկին արշավեց Թավրիզի վրա, Բաղդադում թողնելով 2000 զինվորից բաղկացած կայազոր[1]։

Այս երթարշավի ժամանակ Սուլեյմանի մոտ եկան Իրանի շահի պատգամախոսը և ֆրանսիական դեսպան Լաֆորին, որոնք առաջարկեցին հաշտություն կնքել շահի հետ. սուլթանը, սակայն, երկուսին էլ մերժեց։ Անհրաժեշտ է նշել, որ Ֆրանսիայի թագավորը այն ժամանակ պայքարելով ավստրիական և իսպանական Հաբսբուրգների (Կառլոս V-ի) դեմ, աշխատում էր հաշտեցնել Իրանը և Թուրքիան, որպեսզի վերջինիս ողջ ուժերը դուրս բերի Հաբսբուրգների դեմ։

Մատենադարանի № 1496 ձեռագրի հեղինակը հաղորդում է, որ երբ Թուրքերը 1535 թ. գարնանը կրկին արշավեցին Թավրիզի վրա, Սուլեյմանը քաղաքը խիստ կողոպուտի ենթարկեց և հսկայական ավար ու գերիներ տարավ իր հետ[2]։

Փեչևին հաղորդում է, որ 1536 թ. Թուրքական բանակը հաղթահարելով վրացիների համառ դիմադրությունը, գրավեց և Թուրքիային ենթարկեց Վրաստանի 3—4 գավառներ, որտեղ սուլթանի կողմից նշանակվեց վալի (կուսակալ)։

Սուլեյմանը այս անգամ ևս երկար չմնաց Թավրիզում։ Շուտով 1536 թ. նա իր բանակով ետ գնաց Կոստանդնուպոլիս։ Օսմանյան բանակի ետ գնալու ժամանակ Թահմազը հետապնդեց նրան, զգալի հարվածներ հասցնելով Թուրքերին։ Թուրքական բանակի այս արշավանքի (կամպանիայի) արդյունքները նշանակալից չեղան, չնայած որ պարսիկները լուրջ վնասներ կրեցին։

Վերևում նկարագրված ռազմական արշավանքներից և պատերազմական գործողություններից ամենից շատ տուժում էր դարձյալ հայ ժողովուրդը. Հայաստանը Թուրք-իրանական նաև այս պատերազմի գլխավոր թատերաբեմն էր։ Հայկական

[1] Պ. Սայքս, նշվ. աշխ., հ. II, էջ 229։
[2] Տե՛ս հիշ. ձեռագիր, էջ 103ա։

շատ գավառներ կամ դիտավորյալ կերպով ամայացնում էր նահանջող պարսկական բանակը, կամ սոսկալի ասպատակության ու կողոպուտի էին ենթարկում թե՛ իրանական և թե՛ մանավանդ թուրքական բանակները։ Բացի այդ, հայկական մի շարք քաղաքներ ու շրջաններ հանդիսանալով ռազմական ընդհարումների վայրը, սարսափելի աղետներ էին կրում։

Չնայած որ սուլթան Սուլեյմանի՝ Թավրիզից Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո մինչև թուրք-իրանական 1548 թ. պատերազմը այդ երկրների միջև տեղի չէին ունենում պատերազմական գործողություններ, և ոչ էլ կնքվեց հաշտություն, բայց Վանը և Վանա լճի շրջակա քաղաքները փաստորեն մնացին Թուրքիային։ Այս կապակցությամբ ավելորդ չէ նշել, որ Լավիսի և Ռամբոյի „Всеобщая история" գրքում[1] ասված է, թե 1535—1548 թթ. ժամանակամիջոցում, թուրքերի նահանջից հետո, Թահմազը կրկին տիրեց Վանա լճի շրջակա գավառներին։ Այս տեղեկությունը չի հաստատվում մեր ձեռքի տակ եղած աղբյուրների և այլ գրականության կողմից։

5. ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ XVI ԴԱՐԻ 40—50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

1548 թ. սուլթանի բանակը նոր արշավանք սկսեց Իրանի դեմ։ Այս արշավանքին մասնակցում էր նաև Էլխաս-միրզան։

Ճանապարհին ասպատակելով, կողոպտելով հայկական բնակավայրերը և սպանելով ու գերեվարելով բնակչությանը[2], բանակը շարժվեց Թավրիզի վրա, որն առանց դիմադրության անձնատուր եղավ 1549 թ.[3], իսկ Թահմազը զորքով ետ քաշվեց՝ պատրաստվելով հակահարձակման։ Այդտեղից թուրքական բանակը գնաց Վանի բերդի վրա և պաշարեց այն, որը մի քանի օրից հետո անձնատուր եղավ։ Դրանից հետո թուրքերը տիրեցին Իրանի քրդական շրջաններին։

[1] Տե՛ս հ. 4, էջ 664։

[2] Տե՛ս Զ. Սարկավագ, Պատմագրություն, հ. 1, էջ 11։

[3] Տե՛ս «Դիվան հայոց պատմության», էջ 71։

Թավրիզում Սուլեյմանը իր բանակով երկար չմնաց։ Նա, Մատենադարանի № 1596 ձեռագրի վկայությամբ, լսելով, որ Թահմազը կազմել է նոր ուժեղ բանակ, որին միացել են միդիացիք (հավանաբար քրդերը) և ուրիշ ցեղեր՝ պատրաստվելով հարձակվելու իր վրա, ինչպես նաև ցրտերը մոտենալու պատճառով, հեռացավ Թավրիզից և գնաց Դիարբեքիր ձմեռելու[1]։

Իսկ Էլխաս-միրզայի միջոցառումները ձախողվեցին։ Քանի որ շահ Թահմազը խուսափեց Սուլեյմանի հետ ճակատամարտի բռնվելուց և իր բանակով հեռացավ Թավրիզից, Էլխասը Սուլեյմանի զայրույթից խույս տալով, փախավ Կորդվաց իշխանի մոտ, որը նրան ձերբակալելով, ուղարկեց շահ Թահմազի մոտ[2]։ Վերջինս Էլխասին մահապատժի ենթարկեց։

Թուրքական բանակի հեռանալուց հետո շահ Թահմազը անցավ հակահարձակման և սկսեց հետապնդել թուրքերին, որոնք ստիպված էին շտապ կերպով հեռանալ։ Հետապնդող պարսիկները բավականին վնաս հասցրին նրանց։

Բայց Թահմազը իր ուժերը հավասար չէր համարում օսմանցիների ուժերին և չէր կարող ճակատ առ ճակատ դեմ դուրս գալ նրանց։ Շատ վայրերից մեծ օգնություն ստանալուց հետո նա ուժեղ հարձակման անցավ օսմանցիների դեմ։ Այն ժամանակ, երբ թուրքական բանակը հանգստանում էր Համիթում և պատրաստվում էր մոտեցող պարսիկների վրա հարձակվելու, վերջիններս խավար գիշերին, սաստիկ անձրևի ժամանակ անակնկալ կերպով հարձակվեցին թուրքերի վրա։ Տեղի ունեցավ սաստիկ ընդհարում և կոտորած։ Այնպես որ թուրքերը ժամանակ չունեին նույնիսկ իրենց ձիերը թամբելու և ոմանք էլ իրենց զենքերն ուղղակի նետում էին ու փախչում։ Թուրքերից կոտորվեցին շատերը, որոնց մի մասն էլ հենց յուրայինների կողմից։ Պարսիկները հսկայական ավար գրավեցին։

[1] Տե՛ս հիշ. ձեռագիր, էջ 103 բ. Նաև «Թարիխ Փեչևի», հ. I, Ա. Սաֆրաստյան, էջ 39—40։

[2] Մ. Չամչյան, Պատմություն հայոց, հ. III, էջ 513։

Դրանից հետո Սուլեյմանը վերադարձավ Կոստանդնուպոլիս։ Նրա կենդանի մնացած զորքի մի մասը սովից մեռավ, իսկ մյուս մասն էլ խեղդվեց գետում[1]։

Պետք է նկատել, որ այլ աղբյուրներում և գրականության մեջ մի փոքր այլ կերպ է ներկայացվում այս դեպքը։ Դրանցից մի քանիսը հաղորդում են, որ Սուլեյմանի հեռանալուց անմիջապես հետո Թահմազը բանակով նետվեց Վանի, Ալջավազի, Ախլաթի և Մուշի շրջակայքը և այնուհետև Թուրքերից պաշտպանեց Ղարսը, որը գտնվում էր պարսկական զորքերի ձեռքում։ Նա Թուրքերից ետ նվաճեց Հայաստանի մի շարք գավառներ ու քաղաքներ։ Այս գործողությունների ընթացքում, ինչպես լինում էր սովորաբար, այդ վայրերը պարսկական զորքերի կողմից մի ամբողջ տարի շարունակ (1550—1551 թթ.) ենթարկվում էին սոսկալի ավերածության ու կողոպուտի։ Ահա թե ինչ է ասում այս մասին Զաքարիա Սարկավագը. «Եւ ապա թագաւորն Թահմազ՝ ելեալ գնաց 'ի վերայ երկրին օսմանցւոց, և աւերեաց զԽնուս, զԲասէն, զԱրզրում, զԴերջան, զԿեղի, զԲաբերդ, զԵրզնկայ, զՍպեր, և այլ բազում տեղիս, և դարձաւ 'ի Թաւրէզ»[2]։

Մոտավորապես նույնն են հաղորդում նաև Սամվել Անեցու պատմության անհայտ շարունակողը[3] և Թադևոս Սեբաստացին, որը ողբագին և հուզիչ խոսքերով է նկարագրում պարսիկների կողմից այդ հարձակումների ժամանակ հայկական գավառներում և քաղաքներում կատարած անգութ արարքները։ Նա գրում է. «'Ի լրանալն ասէ հազարամեան թուականիս մերոյ՝ ազգ մի Ղզըլպաշ ասին շարժեցաւ նման վիշապին ի վերայ աշխարհիս հայոց մանրիլ և մաշիլ զմնացորդս արամեաց։ Աղետք գործոց վնասու սոցա առաւել են քան զԱնկթամուրայն, զորս կարծեմ թե չիք տեսեալ ուրույք ի հողածնացս»[4]։

Թուրք-իրանական այս պատերազմի մասին հետաքրքիր է նաև վրացական «Քարթլիս-Ցխովրեբա»-ի հետևյալ հաղորդումը. «Սրանից հետո խոնթքար Սուլթան Սուլեյմանը դուրս ելավ և (սկսեց) Ղ' աենի ոխը հանել, շինեց Կարսը (Կարի) ու վերադարձավ և եկավ Բասեն (Բասիան)։ Ապա Շահ-Թահմազ— Ղ' աենը բազմաթիվ զորք ժողովեց և եկավ Արտահան (Արտան)։ Ապա Շահ-Թահմազն իր որդի Միրզա-Իսմայիլին (Իսմայիլին) ուղարկեց Կարս (Կարի), և նա նվաճեց Կարսը (Կարի), դրավեց բերդեր ու ամրոցներ, և (բոլոր) նրանց, որոնք խոնթքարի հպատակներն (ճորտերն) էին, հրի ու սրի ենթարկեց և ցիրուցան արավ»[1]։

Ի պատասխան պարսիկների հարձակումների ու ասպատակությունների, սուլթանը նրանց դեմ ուղարկեց զորքեր, որոնք իրենց հերթին, պարսիկների արարքներին որպես փոխհատուցում, սոսկալի ասպատակության ու կոտորածի ենթարկեցին Սեֆեյանների պետությանը պատկանող գավառներն ու քաղաքները (մեծ մասամբ հայկական)։

Դրանից հետո 1549 թ. դեկտեմբերին Սուլեյմանը վերադարձավ Կոստանդնուպոլիս։

* * *

Թուրք-իրանական այս պատերազմից մինչև հետևյալ պատերազմն ընկած ժամանակամիջոցում Սուլեյմանը նորից զբաղվեց եվրոպական գործերով։

Նա հազիվ դադար էր առել հունգարացիների և ավստրիացիների դեմ մղած պատերազմից, երբ կրկին իր զենքը դարձրեց Իրանի կողմը։ Այս անգամ պատերազմի նախաձեռնությունը պատկանում էր շահ Թահմազին, որն օգտվելով այն բանից, որ Թուրքիան զբաղված էր Արևմուտքում մղած պատերազմով, հարձակման անցավ, ջախջախեց թուրքական զորքերին և ետ խլեց Ախլաթը, Ալջավազը և Արճեշը։ Եվ որովհետև պատերազմական գործողությունների թատերաբեմը դարձյալ Հայաստանն էր, ուստի այս անգամ ևս հայկական գավառներն ու քաղաքները իրանական բանակի կող-

[1] Տե՛ս ՀՍՍՌ Գետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 104։

[2] Զաքարիա Սարկավագ, Նշվ. աշխ., էջ 11, տե՛ս նաև «Թարիխի Փեշեի», հ. 1, էջ 273—274։

[3] Տե՛ս Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 176։

[4] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 593—954։

[1] Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. բ, էջ 136։

մից ենթարկվեցին սոսկալի ավերածության, կողոպուտի և կոտորածների։ Սրան ի պատասխան թուրքական զորքերն իրենց հերթին նույնպիսի ավերիչ արշավանքներով էին հատուցում պարսիկներին, իհարկե, դարձյալ Հայաստանի հաշվին։

1554 թ. ապրիլին թուրքական բանակը Սուլեյմանի գլխավորությամբ Կարսի վրայով ներխուժեց Իրանական Հայաստան[1]։ Այստեղից Սուլեյմանը Իրանի դեմ սրբազան պատերազմի պաշտոնական հայտարարություն ուղարկեց շահ Թահմազին։ Թուրքական բանակը այս անգամ հետապնդելով պարսկական զորքերին, գրավեց և սոսկալի ավերածության ենթարկեց Երևանի, Նախիջևանի ու Ղարաբաղի նահանգները, վերցնելով բազմահազար գերիներ[2]։

Այնուհետև օսմանյան բանակը մտավ Երևան և հրկիզման ենթարկեց պալատները, մյուս լավագույն շենքերն ու այգիները։ Նա գրավեց և Սյունիքը, որտեղից անցավ Նախիջևան, ամենուրեք տարածելով ավերածություն և մահ։ Հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերը այնքան էին ամայացել, ավերվել, որ տեսնողներին սարսափ էին պատճառում, գրում է Փեչևին և ապա հայտնում թուրք զինվորների կողմից ձեռք բերված հսկայական հարստությունների և բազմահազար գերիների մասին[3]։

Պարսիկները ևս իրենց հերթին հաճախակի հարձակումներ էին կատարում թուրքական զորքերի վրա և զգալի հարվածներ հասցնելով, մեծ թվով գերիներ տանում։ Թուրքերի կողմից հատկապես սարսափելի ավերման ենթարկվեցին Ղարաբաղը և Նախիջևանի գավառը։ Օսմանցիները հիմնովին կողոպտեցին, քանդեցին և այրեցին այս բնակավայրերը։

[1] Փեչևին հաղորդում է, որ դրանից առաջ շահը պատգամավորություն է ուղարկում սուլթանի մոտ՝ առաջարկելով հաշտություն կնքել, բայց վերջինս մերժում է։ Այս տեղեկությունը չի հաստատվում այլ աղբյուրների կողմից, ուստի տարակուսանք է առաջ բերում (տե՛ս «Թարիխի Փեչևի», հ. 2, էջ 45)։

[2] Տե՛ս Խ. Հ ու ղ ա յ ե ց ի, Նշվ. աշխ., էջ 99։

[3] Տե՛ս «Թարիխի Փեչևի», հ. 2, էջ 46—48։

Այնպես որ «շորս-հինգ օրվա ճանապարհի տարածության վրա բոլոր բնակավայրերը, դաշտերն ու շինությունները այն աստիճան քանդվեցին ու ավերվեցին, որ շինության ու կենդանության հետք անգամ չմնաց»—գրում է նույն հեղինակը[1]։

Այդ առթիվ ժամանակակից գրիչ Սարգիս քահանան 1556 թ. գրում էր. «Գրեցավ սուրբ գիրքս ի դառն և ի չար ժամանակիս. զի յամեն դառնութիւն և վիշտն պատեր է զհայոց տառապեալ ազգս»[2]։

Երկիրն այնքան էր ամայացվել, որ երբ Սուլեյմանը իմացավ որ Թահմազը գալիս է իր վրա, չկարողացավ կանգ առնել ու սպասել թշնամուն և ստիպված էր ետ գնալ, որով պատերազմական գործողությունները փոխադրվեցին Էրզրումի կողմերը։

Ռուսական աղբյուրներից Բելոկուրովի գրքում ասված է, որ թուրք-իրանական պատերազմի ժամանակ (չի նշված որ պատերազմի, թերևս՝ 1554—1555 թթ.) շահ Թահմազի խընդրանքով, վրացական (Կախեթիայի) թագավոր Լևոնը զորքով օգնություն ուղարկեց նրան, Թուրքիայի դեմ։ Այս օգնությունը նպաստեց Թահմազի զորքի կողմից թուրքերին հաղթելու գործին[3]։

Այնուհետև, նույն տեղում նշվում է, որ այդ պատերազմում Թահմազը հաղթեց թուրքերին, մինչդեռ, ինչպես հայտնի է, այդ պատերազմում ոչ ոք չհաղթեց, չնայած որ թուրքերը մի քանի մարզեր գրավեցին Իրանից, իսկ իրանական բանակը ետ նահանջելով, մի քանի անգամ զգալի հարվածներ հասցրեց թուրքական բանակին։

Երևի սա ի նկատի ունի փաստաթղթի հեղինակը։

Երբ թուրքական բանակը ներխուժեց Ադրբեջան (1554 թ.), Շիրվանում կրկին ապստամբություն բարձրացավ շահական իշխանության դեմ՝ Շիրվանշահերի շառավիղներից Քյազիմ-միրզայի գլխավորությամբ, որը առաջ էր քաշվում որպես Շիրվանի գահի հավակնորդ։ Սուլեյմանը օգնեց ապստամբնե-

[1] «Թարիխի Փեչևի», հ. 2, էջ 46—48։

[2] Ղ. Փիրզալեմյան, Նշխարք պատմութեան հայոց (անտիպ), էջ 278։

[3] Տե՛ս „Сношения России с Кавказом", вып. I, էջ 523։

ին թե՛ նյութապես և թե՛ զորքով։ Բայց տեղի ունեցած ճակատամարտում ապստամբները ջախջախվեցին կզլբաշների Աբդուլլահ-խան Ուստաջլուի զորքի կողմից[1]։

Դեռևս Հայաստանում և Ադրբեջանում օսմանցիների գտնված ժամանակ Թուրքական փաշաների և պարսկական զորավարների միջև գրագրություն էր տեղի ունենում հաշտության վերաբերյալ, որը շուտով հասցրեց լուրջ բանակցությունների, որոնք ի վերջո ավարտվեցին 1554 թ. սեպտեմբերին կայացած զինադադարով։ Իսկ 1555 թ. մայիսի 29-ին երկու պետությունների միջև Ամասիայում կնքվեց հաշտություն[2] այնքան ժամանակով, որքան կկամենային պարսիկները և քանի դեռ չէին խախտի այն[3]։

Պետք է նկատել, որ սա առաջին հաշտության պայմանագիրն էր երկու մուսուլմանական պետությունների՝ «ուղղահավատ» Թուրքիայի և «հերետիկոս» Իրանի միջև։ Օրմանյանի «Ազգապատում»-ի մեջ ասված է, որ Թահմազը ստիպված էր շուտով տեղի տալ և պատվավոր հաշտություն խնդրել։ Կնքված զինադադարով և ապա հաշտությամբ (1555 թ.) տևական բարեկամություն հաստատվեց երկու պետությունների միջև, և երկու թագավորները խիստ մտերմական նամակներ փոխանակեցին[4]։

Անգլիացի վաճառական և ճանապարհորդ Ջենկինսոնը Թուրք-իրանական այդ բանակցությունների և հաշտություն կնքելու վերաբերյալ որոշ մանրամասնություններ է պատմում։ Թուրքական դեսպանը, նշում է նա, իր հետ բերել էր ոսկյա թանկագին ընծաներ, գեղեցիկ երիվարներ և այլ նվերներ՝ 40 հազար ոսկու արժողությամբ։ Հաշտության կնքումը ու-

[1] Տե՛ս „Сборник статей по истории Азербайджана", էջ 268։

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] Տե՛ս А. Чемерзин, նշվ. աշխ., էջ 275, «Թարիխի Փեչևի», էջ 47։ Ըստ Փեչևիի շահ Թահմազը հաշտություն է խնդրել սուլթանից (նշվ. աշխ., էջ 47)։ Սա իրականության չի համապատասխանում։

[4] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, պրակ 11, էջ 2245—2246։ Այս տեղեկությունը, բացի վերջին մասից, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը և չի հաստատվում մյուս աղբյուրների կողմից։

ղեկցվեց երկու կողմերի զորավոր երդումներով, ըստ որոնց երկու միապետները պետք է ապրեին իբրև երդվյալ եղբայրներ՝ օգնելով միմյանց՝ ընդդեմ այն բոլորի, ովքեր կպատերազմեին կողմերից մեկն ու մեկի դեմ[1]։

Այս հաշտությամբ երկու երկրների միջև փաստորեն վերականգնվեց ստատուս քվոն։ Թուրքիային մնացին՝ Արևմտյան Հայաստանը (Վասպուրականը, Բայազետը, Ալաշկերտի ու Բասենի հովիտները և այլն), Արևմտյան Վրաստանը (Իմերեթիան, Գուրիան, Աբխազիան և Լազերի հողերը) և Արաբական Իրաքը։ Իրանը իր ձեռքում պահեց Անդրկովկասում զավթած տերիտորիաները, այսինքն՝ Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը (Սամցխեն, Քարթլին ու Կախեթիան) և ողջ Ադրբեջանը։

Հայաստանում Թուրքիայի և Իրանի միջև սահմանն անցնում էր Ախուրյան գետով, Հայկական պարով և Ղոթուր ու Զագրոշ լեռներով։ Այս հաշտության պայմանագրով նաև նախատեսվեց, որպեսզի օսմանցիների և կզլբաշների տիրապետությունների միջև ընկած Կարսի մարզը ճանաչվի իբրև չեզոք տարածություն, անմարդաբնակ դարձվի և ամայացվի։ Երկու կողմերը չպետք է այն բնակեցնեին։

Վրացական «Քարթլիս-Ցխովրեբա»-ն նույնպես հաղորդում է այս հաշտության արդյունքների մասին՝ կապված տերիտորիալ հարցի լուծման հետ։ «Ապա Խոնթքարին բաժին մնաց Իներքն (Իմերիթն), Օդիշը, Գուրիան և Սաաթաբադոն մինչ Քարթլիի սահմանները, մնաց Կարսը (Կարի) մինչ Աշոցքի (Աբոցի) և Երևանի սահմաններն և Հայքը (Սոմխեթը), մինչ այն սահմանը, որին այժմ Թուրքստան են կոչում, մինչ Բաղդադ»։

«Իսկ շահ-Թահմազը նվաճեց Քարթլին, Կախքն (Կախեթը), Երևանը, Քյուրդիստանի (Քյուրթիստանի) հայկույս մասը. և այսուհետև միմյանց (Խոնթքարի և շահի) միջև միություն էր և խաղաղություն»[2]։

[1] Տե՛ս Ջենկինսոնի ուղևորությունը, Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 1, էջ 379—380։

[2] Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 137։

Այսպիսով, ամրապնդվեց Հայաստանի և Վրաստանի բաժանումը Օսմանյան կայսրության և Սեֆեյան պետության միջև, որոնք վաղուց ծվատում էին այդ երկրները։

Խոսելով այս հաշտության մասին, չի կարելի ուշադրություն չդարձնել նաև մի հանգամանքի վրա։ Ըստ որոշ տեղեկությունների, հաշտություն կնքելու պատճառներից մեկն էլ այն էր, որ պատերազմների հետևանքով Անդրկովկասի երկրների, մասնավորապես Հայաստանի բնակչության զգալի մասը ոչնչացել էր կամ գաղթել, իսկ մնացած մասն էլ խիստ քայքայվել էր։ Այդ հարցերը քննության առարկա դարձան երկու կողմերի միջև։

Թուրքական սուլթանները, ի վերջո, ստիպված եղան հրաժարվել Ադրբեջանի, Հայաստանի և Քուրդստանի մի մասի տիրապետությունից, քանի որ շատ դժվար էր այդ լեռնային երկրներին տիրելն ու հնազանդեցնելը։ Ստիպված լինելով քաղաքներն ու ամրոցները հանձնելու տեղական իշխողներին (վասալներին), նրանք մեծ անախորժություն էին ստեղծում իրենց համար՝ կապված այդ իշխողների անիշխանական վարքի, երբեմն էլ սուլթանին դավաճանելու և շահի կողմն անցնելու հետ։ Այլ էր Միջագետքի և Բաղդադի դրությունը, որոնց աշխարհագրական դիրքը նպաստավոր էր նվաճելու և տիրելու համար, քանի որ նրանց նվաճումը վերջնական էր՝ սկսած Սելիմի և նրանից հետո՝ 1534 թ. Սուլեյմանի կատարած արշավանքների ժամանակվանից։

Այս հաշտությամբ վերջանում է օսմանցիների և պարսիկների մրցակցության ու պատերազմների առաջին էտապը, որը սկսվել էր 1514 թ.։ 1555 թ. մշակված դիվանագիտական բանաձևը Թուրք-իրանական հարաբերությունների մի տեսակ առանցք դարձավ։

1555 թ. պայմանագիրը, ինչպես և մյուս պայմանագրերը երկու պետությունների զավթողական քաղաքականության գործիքը հանդիսացան։ Իրանը և Թուրքիան թեև 1555 թ. հետո որոշ հաջողություններ ձեռք բերեցին իրենց նվաճողական քաղաքականության գործում, բայց հաշվի չառան նվաճված ժողովուրդների դիմադրությունն ու իրենց փոխադարձ հակա-

սությունները, որոնք հասցրին 1555 թ. պայմանների խախտմանը և նոր պատերազմի առաջացմանը։

Նոր սահմանի պահպանությունը ապահովելու համար Թուրքերը խրախուսում էին հայկական գյուղերի վրա իրենց տիրապետությունը հաստատած քրդական ֆեոդալներին, գյուղեր, որոնք ընկել էին կրկնակի ճնշման, այսինքն՝ Թուրքական փաշաների և քրդական ֆեոդալների լծի տակ։ Սրան ավելանում էր նաև հայերի կրոնական ճնշումը։

Այս հաշտությունից հետո երկու ոխերիմ թշնամի միապետների հարաբերությունները լավացան և նույնիսկ բարեկամական դարձան (թեև ոչ անկեղծ)։ Շահ Թահմազը փորձում էր Թուրքիայի հետ մերձեցման քաղաքականություն վարել, չնայած սրա անձեռնտու և անհեռանկար լինելուն։

ԳԼՈՒԽ IV

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1555 թ. կնքված հաշտությունից հետո մինչև 1579 թ. Թուրքիայի և Իրանի միջև խաղաղություն էր տիրում, եթե հաշվի չառնենք առանձին սահմանային միջադեպերը և երկու կողմերի առանձին զորախմբերի երբեմն կատարվող փոխադարձ հարձակումներն ու ներխուժումները մեկը մյուսի տերիտորիան։

Սակայն այս հաշտությունը կայուն չէր, որովհետև նախ՝ այդ պետություններից ոչ մեկը չէր հրաժարվել ագրեսիվ պլաններից (մանավանդ Թուրքիան), երկրորդ՝ երկուսի միջև եղած վիճելի հարցերը, այսինքն՝ պատերազմի գլխավոր պատճառները, չէին վերացված, հակասությունները չէին լուծվել և երրորդ (ինչպես նախորդ գլխում տեսանք)՝ այդ հաշտության պայմաններից գլխավորապես Թուրքիան էր դժգոհ և առիթ էր որոնում խախտելու այն։

Սակայն մինչև երկուսի միջև տեղի ունեցող նոր պատերազմի դեպքերին անցնելը, անհրաժեշտ է մի փոքր ծանոթանալ այդ երկրների ներքին ու արտաքին դրությանը՝ XVI դարի 50-ական թվականներից մինչև 1578 թ.։

1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԴ ՇՐՋԱՆՈՒՄ

Պետության ներքին ու արտաքին դրությունը Թուրքիայում վատացավ Սուլեյմանին հաջորդող սուլթան Սելիմ II-ի (1566—1574 թթ.) և ապա Մուրադ III-ի (1574—1595 թթ.) օրոք։ Սելիմ II-ը, որին «Հարբեցող» մականունն են տվել, չուներ իր հոր՝ Սուլեյմանի խոշոր հատկություններից ոչ մեկը, նկատում է Մարքսը[1]։ Այս երկու սուլթանների ժամանակվանից սկսած՝ թուրքական սուլթանները պատերազմում այլևս չէին գլխավորում իրենց զորքերին և չէին կառավարում պետությունը։ Նրանք (հատկապես Մուրադ III-ը) ժամանակի մեծ մասը անցկացնելով հարեմում, երկրի կառավարումը հանձնել էին իրենց հավատարիմ մարդկանց։ Սելիմ II-ի թագավորության շրջանի ներքին բացասական երևույթները, որոնք հատուկ էին Թուրքիայի սոցիալ-քաղաքական կյանքին ընդհանրապես, ավելի ուժեղ և ցայտուն կերպով զգացնել տվեցին իրենց։ Որոշ պատմաբանների կարծիքով՝ Սելիմ II-ի թագավորումը մի անցում էր դեպի թուրքական հզորության անկումը։ Թուրքական պետությունը Սուլեյմանից հետո թուլացավ և սկսեց անկում ապրել։ Իհարկե, եթե դեռ մինչև Սուլեյմանի թագավորության վերջին փուլը Թուրքիան տակավին բարձրացման շրջանում էր գտնվում, ապա դա շատ քիչ է բացատրվում այդ սուլթանի անձնական հատկություններով ու միջոցառումներով։

Դրա գլխավոր պատճառն այն էր, որ այդ ժամանակ դեռ չէին դրսևորվել այն տնտեսական և սոցիալական երևույթներն ու փոփոխությունները, որոնք պայմանավորեցին թուրքական պետության խիստ թուլացումն ու քայքայումը։ Այս կապակցությամբ նախօրոք պետք է նշել, որ XVI դարի երկրորդ կեսը բեկման դարաշրջան էր, որը նախապատրաստեց Օսմանյան կայսրության անկումը XVII դարում։ Թուրքական պետության հիմքերի քայքայման տարրերը, որոնք այն ժամանակվա թուրքական աղբյուրների վկայությամբ սկիզբ առան դեռևս Սուլեյմանի թագավորության վերջին շրջանում, իրենց զարգացումը ստացան արդեն նրա հաջորդների օրոք[2]։

[1] *Տե՛ս* Архив Маркса и Энгельса, т. VII, էջ 346:

[2] *Տե՛ս* В. Д. Смирнов, Кучибей, Геомюрджинский и другие турецкие писатели об упадке Турции, *էջ 174 և հջ., նաև ծանոթագրություն 2։*

XVI դարի 70—80-ական թվականների Թուրք-իրանական նոր պատերազմի նախօրյակին Թուրքիայի վիճակը, ինչպես երևում է վերևում նշվածից, այնքան էլ մխիթարական չէր, չնայած դեռ այնպես չէր վատացել, ինչպես հետագայում։ Սելիմ II-ի և Մուրադ III-ի ժամանակ տեղի են ունենում ենիչերիների և սփահիների մի շարք բունտեր և խռովություններ։ Ներքին դասակարգային հակամարտություններն ու պայքարն ավելի են սրվում։ Այդ շրջանում գյուղացիների մեջ տեղի են ունենում խմորումներ ու հուզումներ, որոնք տեղ-տեղ, գլխավորապես Փոքր Ասիայում, վեր են ածվում ապստամբության։ Դրա պատճառը գյուղացիների անտանելի վիճակն էր։ Ինչպես առաջ, այնպես էլ հիմա աշխատավորության մեջ առաջացած զանազան շարժումներն ու դժգոհությունները հանդես էին գալիս հերետիկոսությունների ձևով։ Կրոնական այդ քողի տակ թաքնված էր աշխատավորության պայքարն ընդդեմ տնտեսական ճնշման և քաղաքական իրավազրկության։ Մյուս կողմից՝ պետք է նկատել, որ ինչպես XVI դարի առաջին կեսին, այնպես էլ այդ շրջանում շիիզմի լողունգի տակ Փոքր Ասիայում հավաքվում էին սուլթանական իշխանության կողմից ստեղծված դրությունից դժգոհ տարրերը, որոնք հետևում էին այդ շարժումը հրահրող դերվիշներին[1]։

* * *

Այդ նույն ժամանակ Իրանում նույնպես դրությունը մխիթարական չէր, նույնիսկ մի փոքր ավելի վատ, քան Թուրքիայում։

Թահմազի թագավորության վերջում Սեֆեյան պետության ներքին դրությունը խիստ վատացավ։ Անշուշտ, երկարատև պատերազմը, որը նոր էր վերջացել, նույնպես ունեցավ իր բացասական ազդեցությունը Իրանի ներքին կյանքի վրա։ Ուժեղացող հարկերն ու ֆեոդալական շահագործումը քայքայում էին գյուղացիությանը և ծանր էին անդրադառնում երկրի էկոնոմիկայի վրա։ Աշխատավորությունը դաժանորեն

[1] Տե՛ս Ahmet Refik, On altinci asirda Rafizîlik ve Bektaşîlik վավերագրերի ժողովածուն, Jstambul, 1932։

կողոպտվում ու ճնշվում էր թե՛ պետության և թե՛ տեղական ֆեոդալների կողմից։ Դրությունն ավելի վատացավ 1571 թ. տեղի ունեցած սաստիկ սովի և դրան հետևող ժանտախտի պատճառով։ Իրանի մի շարք վայրերում ծայր են առնում ժողովրդական ապստամբություններ, որոնցից ամենաաչքի ընկնողները գյուղացիների և քաղաքային աշխատավորների ապստամբություններն էին Գիլանում՝ 1569 և 1571 թթ. և արհեստավորների ու քաղաքային չքավորների խոշոր ու երկարատև ապստամբությունը Թավրիզում՝ 1571—1573 թթ.։

Տեղի էին ունենում նաև տեղական իշխողների ընդվզումները շահի դեմ։ Բացի այդ, չէր դադարում երկպառակությունը թագավորական ընտանիքի անդամների միջև։

Տիրում էր աստիճանավորների և ֆեոդալների անսանձ կամայականությունը։ Եթե այս բոլորին ավելացնենք նաև այն, որ այդ նույն շրջանում ուզբեկական խաները հաճախակի սիստեմատիկ հարձակումների էին ենթարկում երկրի արևելյան տերիտորիան, ապա պատկերը ավելի պարզ կլինի։

Չնայած այս բոլորին, այնուամենայնիվ, շահ Թահմազը մինչև իր կյանքի վերջը կարողացավ թագավորությունը պահել և չթողեց, որ այն կազմալուծվի։ Բայց ի վերջո նա զոհ դնաց պալատական դավերին։ Թահմազի մահից հետո (1576 թ.) Իրանում ներքին պայքար և երկպառակություններ տեղի ունեցան կզլբաշական ավագանու զանազան խմբավորումների միջև, որոնք շահական գահի վրա արքայորդիներից առաջադրում էին իրենց դրածո հավակնորդներին։ Այս պատճառով երկրում ամբողջ տասը տարի անարխիա էր տիրում, որի ժամանակ շահի որդիներն ու թոռները գահի համար պայքարում էին միմյանց դեմ, իսկ իշխանությունը փաստորեն անցել էր կզլբաշների ցեղապետերի ձեռքը։ Սկզբում ուստաջլու ցեղի ավագանուն հաջողվեց գահ բարձրացնել Թահմազի որդիներից մեկին՝ Հայդար-միրզային։ Բայց դա մեծ դիմադրության հանդիպեց աֆշարների ցեղի ավագանու և չերքեզական խաների կողմից, որոնք առաջադրեցին իրենց դրածոյին՝ շահի մյուս որդուն, Իսմայիլին, որը հոր կողմից արդեն մոտ 20 տարի էր ինչ բանտարկված էր՝ իր հանդգնության կամ փառասիրության համար։ Այս պայքարում Հայ-

դարը սպանվեց, և գահին տիրացավ բանտից նոր ազատված Իսմայիլ II-ը (1577 թ. վերջին)։ Ինչպես հաղորդում է Հովհաննեսիկ Ծարեցին «Ժամանակագրության» մեջ, սա, որպեսզի ապահովի իր թագավորության անվտանգությունը, սպանել տվեց կամ կուրացրեց իր 8 եղբայրներին և 17 ազնվատոհմիկների[1]։ Իսմայիլը իր բռնակալությամբ ու դաժանությամբ երկյուղ և ատելություն առաջ բերեց կառավարող վերնախավի մեծ մասի մեջ։ Նա հրաման ուղարկեց սպանել նաև Թահմազի ավագ որդի Խուդաբանդային և սրա որդի Աբասին, բայց մինչև որ այդ դաժան հրամանը կկատարվեր, նա վախճանվեց։

Դրանից հետո, նույն թվականին գահին նստեցրին Իսմայիլի եղբորը՝ վերոհիշյալ Մուհամեդ Խուդաբանդային։ Այսպիսով, Իսմայիլի մահը ոչ միայն փրկեց Մուհամեդի կյանքը, այլև Իրանի գահը ամրացրեց նրա վրա։

Խուդաբանդան հիվանդոտ և կամազուրկ մի մարդ էր և, ինչպես հաղորդում է Դ՝ Ալեսանդրին, շատ չէր հետաքրքրվում աշխարհի գործերով[2]։ Սրա մասին Հովհաննեսիկ Ծարեցին գրում է. «Բայց անարի և վատթար ի գործս թագավորութեան և պակասեալ ի լոյսոյ ևս»[3], ուստի և պետության կառավարման գործը հանձնարարվեց սկզբում վեզիր Միրզա Սուլեյմանին, իսկ սրա մահից հետո՝ շահի որդուն՝ Համզա-միրզային։ Բայց դրանցից ոչ մեկին չհաջողվեց կարգ հաստատել։ Խորասանում ուստաջլու ցեղի ավագանին իրեն պահում էր ինքնիշխան, հրաժարվելով ենթարկվել Համզա-միրզային։ 1581 թ. շահ հռչակվեց Խուդաբանդայի կրտսեր որդիներից մեկը՝ Աբաս-միրզան, որը Խորասանի կուսակալն էր։ Այս պայմաններում պետության վիճակն ավելի վատացավ, երբ կզլբաշական խոշոր էմիրների կազմած պաշտոնական ակտով այն տրոհվեց կզլբաշների ցեղերի և նրանց ճյուղավորումների միջև, որտեղ իշխում էին այդ ցեղերի գլխավորնե-

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 267ա։
[2] Տե՛ս «Ուղեգրություններ», հ. Ա, էջ 339։
[3] ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 267ա։

ը, իսկ սրանք հաստատվեցին բեյլերբեյների կողմից։ Փաստորեն Խուդաբանդային մնաց սոսկ շահի տիտղոսը։

Շուտով մեծ վեզիր Միրզա Սուլեյմանի և կզլբաշական զինվորական ավագանու միջև պայքար սկսվեց՝ ազդեցության և իշխանության համար։ Այս հանգամանքն է՛լ ավելի թուլացրեց պետությունը, մանավանդ որ պետական միջոցները դրեթե սպառվել էին, իսկ գանձարանը կողոպտվել էր։

Այս ներքին պայքարը և գահական հեղաշրջումները զգալի չափով թուլացրել էին Իրանը։ Այս հանգամանքից և Խուդաբանդայի թուլությունից օգտվեց Թուրքիան և կրկին պատերազմ սկսեց Իրանի դեմ, չնայած որ, ինչպես տեսանք, Թուրքիայում ևս դրությունը մխիթարական չէր։ Սակայն նախքան այս պատերազմի դեպքերին անցնելը, հարկ ենք համարում մի փոքր կանգ առնել այս երկու երկրների արտաքին դրության վրա՝ պատերազմին նախորդող տարիներին։

* * *

Թուրքիայի արտաքին վիճակը այդ ժամանակ ընդհանուր առմամբ այնքան էլ մխիթարական չէր, թեև նրա հարաբերությունները եվրոպական մի քանի երկրների հետ վատ չէին։ Մյուս կողմից, եվրոպական մի քանի այլ պետությունների միջև Թուրքիայի դեմ մղվող պայքարում միասնություն չկար։ Ֆրանսիայի հետ շարունակվում էր Օսմանյան պետության տրադիցիոն լավ հարաբերությունը, թեպետև այդ պահին նրանք այլևս դաշնակիցներ չէին, բայց թշնամիներ նույնպես չդարձան։

Այս շրջանում ռուս-թուրքական հարաբերությունները նույնպես վատ չէին (գոնե առերես)։ 1559 թ. Սուլեյմանը Իվան Ահեղին դիմեց մի նամակով, որտեղ նա առաջին անգամ ռուսական միապետին անվանում էր ցար, խնդրելով նրան՝ հովանավորել ու պաշտպանել մորթիներ գնելու նպատակով Մոսկվա ժամանած թուրքական վաճառականներին[1]։

Եվրոպայում, առաջվա պես, Թուրքիան շարունակում էր իր ագրեսիան մի շարք պետությունների նկատմամբ։ Հուն-

[1] Տե՛ս Զեմերդին, նշվ. աշխ., էջ 279։

գարիայի դեմ մղվող պատերազմները չտվեցին շոշափելի արդյունքներ։ 1562 թ. պատերազմը վերջացավ այդ երկուսի միջև կնքված հաշտությամբ։ Սակայն իրականում ոչ ոք չէր մտահոգված այդ հաշտությամբ և չէր պահպանում խաղաղությունը. Հունգարիայի սահմանի վրա շարունակվում էին երկու կողմերի զորքերի փոխադարձ հարձակումները։

Միջերկրական ծովում այդ ժամանակ և դրանից առաջ էլ շարունակվում էին Թուրքական նավատորմի ընդհարումները մի շարք կրոպական պետությունների (բացի Վենետիկից), հատկապես Իսպանիայի ծովային ուժերի հետ, և հարձակումները՝ նրանց ծովափնյա քաղաքների վրա։

Թուրքական ագրեսիան կանխելու համար Վենետիկը, Պապը և Իսպանիան մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին Թուրքիայի դեմ կոալիցիա կազմելու համար։ Շուտով այդպիսին ստեղծվեց «Սրբազան լիգա» անունով, որի մեջ մտնում էին Վենետիկը, Հռոմը, Իսպանիան և Մալթան։ Որոշ ժամանակ անց սրան միացան Տոսկանայի դուքսը, Ճենովայի ռեսպուբլիկան, Սավոեան և մի քանի այլ հյուսիսային իտալական քաղաք-ռեսպուբլիկաներ։ Բացի դրանից, Վենետիկը, Պապը և Իսպանիան դիմեցին նաև Իրանի շահին՝ Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու համար։ Սակայն այն ժամանակ շահ Թահմազը տրամադիր չէր խախտելու Թուրքիայի հետ կնքած հաշտությունը, հատկապես հաշվի առնելով Իրանում ծագած ներքին դժվարությունները, ուստի նա մերժեց կրոպական պետությունների կողմից ուղարկված դեսպանությունների առաջարկները՝ Թուրքիայի դեմ կոալիցիայի մասին։

Շուտով «Սրբազան լիգայի» ռազմական ընդհարումը Թուրքիայի հետ անխուսափելի դարձավ։ 1571 թ. հոկտեմբերին Վենետիկի, Իսպանիայի և Պապի միացյալ ռազմանավատորմի և օսմանյան նավատորմի միջև Լեպանտոյի մոտ տեղի ունեցավ խոշոր և արյունահեղ ծովային ճակատամարտ, որտեղ Թուրքերը ծանր պարտություն կրեցին, կորցնելով իրենց նավերի և կենդանի ուժի մեծ մասը։ Թեև կոալիցիայի նավատորմը ևս ունեցավ զգալի կորուստներ, բայց և այնպես դա Օսմանյան պետության առաջին լուրջ պարտությունն է կրոպական պետություններից։

Այս առթիվ Կ. Մարքսը նշում է, որ «Թեմուրի (Լենկթեմուրի—Հ. Ն.) ժամանակվանից օսմանցիներն այդպիսի պարտություն չէին կրել»[1]։

Ճիշտ է, այդ պարտությունը Օսմանյան կայսրության համար դեռևս անմիջական լուրջ հետևանքներ չունեցավ և հաղթողները, շնորհիվ իրենց միջև եղած տարաձայնության և այլ հանգամանքների՝ չկարողացան զարգացնել այդ հաջողությունը, բայց, այնուամենայնիվ, նրա նշանակությունը մեծ էր։

Ինչ վերաբերում է այդ նույն շրջանի ռուս-թուրքական հարաբերություններին, ապա սկսած XVI դարի 60-ական թվականներից, դրանք վատանում են, կապված Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի ուժեղացող ազդեցության դեմ Թուրքիայի և Ղրիմի խանության մղած պայքարի հետ։ Ռուս-թուրքական հարաբերությունների մեջ տեղի ունեցած այս փոփոխությունը ամբողջապես Թուրքիայի կողմից էր կատարվում։ Այս առնչությամբ կարևոր է նշել, որ կրոպական վերոհիշյալ պետությունները և հատկապես Հաբսբուրգները դեռ վաղուց միշտ էլ փորձել են Ռուսաստանին ներգրավել հակաթուրքական կոալիցիայի մեջ և նրան պատերազմի դրդել Թուրքիայի դեմ։ Ռուս-թուրքական հարաբերությունների մոտալուտ անխուսափելի սրման պատճառներից մեկն էլ այն էր, որ Ռուսաստանի և բալկանյան ժողովուրդների միջև գոյություն ունեին լավ հարաբերություններ, և այդ ազգերի համար Ռուսաստանը հավանական ազատարար էր հանդիսանում։ Արդեն XVI դարի երկրորդ կեսին, ինչպես գրում էր Վենետիկի դեսպանը իր կառավարությանը, թուրքական սուլթանները վախենում էին, որ Բալկանյան երկրները հույս ունենալով Ռուսաստանի օգնության վրա, կարող էին ապստամբել և տապալելով թուրքական տիրապետությունը, հպատակվել Մոսկվայի իշխանությանը[2]։ Այդ ժամանակ Մոսկվայի պետության պլանների մեջ չէր մտնում իր հարաբերությունները

[1] Архив Маркса и Энгельса, т. VII, стр. 350.

[2] Տե՛ս Жигарев, Русская политика в Восточном вопросе, т. I, 1896, էջ 69։

սրել Թուրքիայի հետ կամ պատերազմ սկսել նրա դեմ։ Ուստի XVI դարի երկրորդ կեսից ընդհուպ մինչև XVII դարի սկիզբը նա իր կովկասյան քաղաքականության մեջ հեռու չէր գնում Թուրքիայի դիրքերը Հյուսիսային Կովկասում ջլատելու ուղղությամբ գործադրած ջանքերից։

Սա բացատրվում էր գլխավորապես նրանով, որ Մոսկվայի պետությունը XVI դարի երկրորդ կեսին և XVII դարի սկզբին ապրում էր ներքին հասարակական-քաղաքական ճգնաժամ[1]։

Այդ շրջանում հակաթուրքական կոալիցիայի (կազմակերպչորեն չձևակերպված) մեջ մտնող պետությունները համերաշխ չէին գործում։ Թուրքիայի և Ավստրիայի միջև պատերազմի ժամանակ Մոսկվան և Իրանը չօգնեցին Ավստրիային։

Երբ 1560-ական թվականների երկրորդ կեսին Մոսկվայի պետությունը Հյուսիսային Կովկասում և հատկապես Թերեքի վրա սկսեց կառուցել քաղաքներ, սուլթանը և նրա վասալ Ղրիմի խանը ոչ միայն խիստ բողոքեցին դրա դեմ, այլև Ռուսաստանին սպառնում էին զենքի ուժով[2]։ Նրանք ցարին ուղարկած իրենց նամակներում ոչ միայն պահանջում էին զորքերը դուրս բերել այդ վայրերից, այլև Կազանն ու Աստրախանը վերադարձնել իրենց՝ իբրև օրինական հավակնորդների։ Կարելի է ասել, որ այդ ժամանակվանից Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմը կանխորոշվում է՝ հրահրվելով լեհ-լիտվական դիվանագիտության կողմից։ Սուլթանը հրամայում է Ղրիմի խանին պատրաստվել Աստրախանի արշավանքին։ Թուրքերին առանձնապես հետաքրքրում էր Աստրախանը, որի վրայով էին անցնում դեպի Միջին Ասիա տանող ճանապարհները, հատկապես դեպի Իրան տանող ծովային նպաստավոր ճանապարհը։

Թուրքիան նպատակ ուներ զավթել Աստրախանը և

[1] Տե՛ս А. М. Полиевктов, Экономические и политические разведки Московского гос-ва в Закавказии в XVI—XVII вв., 1934, էջ 8։

[2] Մանրամասնությունները տե՛ս Н. А. Смирнов, Россия и Турция в XVI—XVII вв., т. I, 1946, էջ 91—92։

այն դարձնել բազա՝ Իրանի և Ռուսաստանի վրա հարձակվելու համար։ Սելիմ II-ը Թուրքական բանակին և Ղրիմի խանին հրամայեց Ազովի վրայով հարձակվել Աստրախանի վրա։

1569 թ. գարնանը Թուրքական մեծ բանակը Ղրիմի թաթարների հետ միասին սկսեց արշավանքը դեպի Աստրախան։ Այսպես սկսվեց ռուս-Թուրքական առաջին պատերազմը։

Թուրքերի ստրատեգիական խնդիրն էր Ազովի և Հյուսիսային Կովկասի վրայով ստեղծել տիրապետությունների մի համատարած գիծ, որը հարավից պետք է շրջապատեր ռուսական պետությունը։ Այս խնդրի հաջող կատարման դեպքում Թուրքիան կկարողանար ոչ միայն խանգարել Ռուսաստանի հարաբերությանը Վրաստանի և Իրանի հետ, այլև հարձակման մշտական սպառնալիքի տակ պահել այդ երկրները[1]։

Թեև Մոսկվան այդ ժամանակ չէր ցանկանում պատերազմ մղել Թուրքիայի դեմ, բայց ստիպված էր արժանի հակահարված տալ նրա ոտնձգությանը։

Ինչպես հայտնի է, Թուրքական բանակը չկարողանալով գրավել Աստրախանը և պարտություն կրելով, ստիպված էր ետ նահանջել։

Այսպիսով, Թուրքերի այս խոշոր ավանտյուրիստական ձեռնարկումը վերջացավ խայտառակ ձախողումով։

Թուրքերը համոզվելով, որ բացահայտ պայքարով նրանք չեն կարող տիրել Վոլգայի գետաբերանին, Մոսկվայի հետ վարած բանակցություններում Աստրախանի փոխարեն Կովկասի հարցն են դնում և բոլոր միջոցներով ձգտում են դուրս մղել ռուսներին Կովկասից և այնտեղից հարված հասցնել Վոլգայի գետաբերանին։ Այս իմաստով էլ սուլթանը ցարին ուղարկած իր պատասխան պաշտոնագրում (грамота) հաշտվելով Աստրախանի ռուսական տիրապետության հետ, իր հավակնությունն է հայտնում Հյուսիսային Կովկասի մուսուլմանական իշխանությունների նկատմամբ և պահանջում է ցարից այստեղ կառուցած քաղաքները վերացնել, որպես պայման բարեկամական հարաբերությունների պահպանման[2]։

[1] Տե՛ս Н. А. Смирнов, Նշվ. աշխ., էջ 127։

[2] Տե՛ս „Посольская книга", № 2, էջ 56։

Ռուսական կառավարությունը չցանկանալով գժտվել սուլթանի հետ, ընդունում է նրա այս պահանջն ու մի երկու ոչ կարևոր այլ պահանջներ և հայտնում է, որ Թերեքի վրայի քաղաքը կքանդվի։ Այս պատասխանը Կոստանդնուպոլիս տանող դեսպանին ցուցում էր տրված ամեն կերպ աշխատել բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ[1]։ Դրա հետ միասին, սակայն, սուլթանի և Ղրիմի խանի կողմից շուտով, կրկին ցարին ներկայացրած հավակնությունը Կազանի և Աստրախանի նկատմամբ՝ Մոսկվան լիովին մերժում էր։

Լեպանտոյի մոտ թուրքական նավատորմի կրած պարտությունից հետո Թուրքիան սկսում է ավելի ակտիվ քաղաքականություն վարել Արևելքում, որտեղ նա հույս ուներ հաջող պատերազմի միջոցով ձեռք բերել անհրաժեշտ միջոցներ՝ Արևմուտքում պայքարը շարունակելու համար։ Այս առնչությամբ էլ պետք է հասկանալ սուլթանի և Ղրիմի խանի կողմից Մոսկվային ներկայացրած ուլտիմատումը Կազանի և Աստրախանի վերաբերյալ։ Սակայն այս հարցում Մոսկվայի ցուցաբերած հաստատակամությունը, 1572 թ. Ղրիմի խանի կրած պարտությունը և մի շարք այլ հանգամանքներ թույլ չտվին Թուրքիայի և Ղրիմի դիրքերը և նրանց դարձրին ավելի զիջող, որն արտահայտվեց հաջորդ սուլթանի՝ Մուրադ III-ի՝ Մոսկվայի հետ հաշտվելու համար ձեռնարկած փորձերում։ Սակայն դրանով Թուրքիան երբեք էլ չէր հրաժարվում իր թշնամական հարձակողական քաղաքականությունից։ Այն թելադրվում էր ավելի շուտ դիվանագիտական նկատառումներով։ Բանը այն է, որ սուլթանը մտադրվելով պատերազմը սկսել Իրանի դեմ, որոշել էր ժամանակավորապես բարելավել իր հարաբերությունները Մոսկվայի հետ։

2. XVI ԴԱՐԻ 70—80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ինչպես տեսանք, Թուրքիան, որը պատեհ առիթի էր սպասում՝ Իրանին պատկանող մի շարք երկրների, հատկապես Անդրկովկասի նկատմամբ իր ագրեսիվ պլաններն իրագործելու համար՝ նոր քայլերի դիմեց նաև Արևելքում, Իրանի դեմ, օգտվելով այնտեղ տիրող ներքին պայքարից ու պալատական հեղաշրջումներից։ Շահ Թահմազի մահից շատ չանցած, պալատական արյունահեղ ընդհարումների ժամանակ, 1578 թ. Մուրադ III-ը վերսկսեց պատերազմը Իրանի դեմ, խախտելով 1555 թ. հաշտության պայմանագիրը[1]։

Օսմանյան կայսրության այս ագրեսիվ քաղաքականության ուժեղացումը հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք, որ XVI դարի երկրորդ կեսին Թուրքիան թևակոխելով լճացման և ապա անկման շրջան, ելք էր որոնում նոր պատերազմներում ու նվաճումներում, որպեսզի կարողանար կողոպուտի, կոնտրիբուցիաների, տուրքերի և տասնյակ հազարավոր գերիներին ստրկության վաճառելու միջոցով իր քայքայվող տնտեսությունը բարելավել։ Այս անգամ ևս Թուրքիայի խնդիրն էր զավթել Անդրկովկասի երկրները և Կասպից ծովի արևմտյան ափերը։

Պետք է նշել, որ ընդհանրապես թուրք-իրանական XVI—XVII դարերի պատերազմների և մասնավորապես այս պատերազմի մասին բավականին հարուստ տվյալներ կան թուրքական, հայկական, մասամբ և ռուսական աղբյուրներում։

Մուրադը հանձնարարեց Մուստաֆա-Լալա փաշային արշավանքի հաջողության համար նախօրոք հրահրել Իրանում տեղի ունեցող ներքին խռովությունները, մանավանդ Ադրբեջանում այդ ժամանակ հզոր թեքելու ցեղի կողմից սկսած ապստամբությունը, բացի այդ, ապստամբության դրդել Իրանի տիրապետության դեմ Վրաստանի, Մեգրելիայի, Շիրվանի և Դաղստանի տիրակալներին, ինչպես և Իրանի դեմ դուրս բերել չերքեզների իշխաններին։

Մուստաֆա-Լալա փաշան հսկայական բանակով (մոտ 200 000) շարժվեց դեպի Վրաստան, ձեռնարկելով, թե գնում է մի շարք վրացական անհնազանդ իշխանների հպատակեցնե-

[1] Մանրամասնությունները տե՛ս Ն. Ա. Սմիրնովի նշվ. աշխ., էջ 123—124։

[1] Տե՛ս „Царьградские письма о древних и нынешних турках и о состоянии и т. д.", 1889, էջ 259։

զու։ Նա սկզբում վերականգնեց Ղարսի բերդը՝ խախտելով 1555 թ. պայմանագիրը, Ղարսի մարզը բնակեցրեց մարդկանցով, որից հետո շարժվեց Վրաստանի վրա՝ ամենուրեք տարածելով ավերածություն ու մահ։ Այդ ժամանակ մեծաքանակ զորքով թուրքական բանակի դեմ շարժվեց իրանական բանակի գլխավոր հրամանատար Թոխմախ խանը, ցանկանալով արգելել Մուստաֆա փաշայի մուտքը Վրաստան[1]։

Թուրքական զորքը շարժվելով Արդահանից, գրավում է մի քանի բերդեր։ Այդ ընթացքում տեղեկություն է ստացվում, որ Թոխմախ խանը մի երկու այլ խաների հետ 30 հազար զինվորներով գտնվում է Զըլդիր բերդի մոտ։ Այս մարտերի ժամանակ գլխավոր հրամանատար Մուստաֆա-Լալան կռվող օսմանցիներին օգնության է ուղարկում մի քանի փաշաների՝ իրենց զորքերով[2]։

Շուտով Զըլդիր բերդի մոտ տեղի ունեցավ երկու բանակների գլխավոր և խիստ արյունահեղ ճակատամարտը, որտեղ Թոխմախ խանի բանակը պարտություն կրեց և նահանջեց, տալով մեծ կորուստներ։ Փեչևիի տվյալներով՝ հաղթողները Մուստաֆա փաշային ներկայացրին հինգ հազար սպանված կզլբաշների գլուխները և բազմահազար գերիներ։ Փաշայի հրամանով գլխատեցին անվանի գերիներին[3]։

Օսմանյան բանակը նվաճեց գրեթե ողջ Վրաստանը, որն այդ ժամանակ թուլացել էր՝ շնորհիվ վրացական իշխող դինաստիայի չորս ճյուղերի՝ շառավիղների միջև տեղի ունեցող երկպառակության։

Դրանից հետո թուրքական բանակը, առանց դիմադրության հանդիպելու, մտավ Թիֆլիս և մեծ կոտորածներ ու

[1] Տե՛ս «Թարիխի Փեչևի», հ. 2, էջ 39, Ա. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 48։

[2] Տե՛ս «Թարիխի Փեչևի», հ. 2, էջ 40, Ա. Սաֆրաստյան, Նշվ. աշխ., էջ 42։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 49։ Այս դեպքերի մասին պարսկական «Շերեֆ Նամե»-ի հեղինակը հաղորդում է, որ թուրքերի դեմ այդ ժամանակ դուրս եկած Աղբրեջանի բեյլերբեյ Ամիր խան Մովսիսյանը իր բանակով և Ղարաբաղի բեյլերբեյ Իմամ-Կուլի-սուլթան կաջարի զորքերի աջակցությամբ ուժեղ հարված հասցրեց և մեծ կորուստ պատճառեց

կողոպուտներ կատարեց[1]։ Նվաճված Վրաստանը թուրքերի կողմից բաժանվեց չորս կուսակալությունների, որոնց գլուխ կարգվեցին թուրք փաշաներ, բացի Կախեթիայից, որի կուսակալը մնաց վրացի իշխան Ալեքսանդրը։ Դրանից հետո Մուստաֆան Վրաստանում մի շարք նոր բերդեր կառուցելով կամ եղածները վերանորոգելով, ամրացնելով ու այնտեղ կայազորներ թողնելով, շարունակեց արշավանքն ու նվաճումները[2]։

Դրանից հետո տեղի ունեցող պատերազմական գործողություններն ընթանում էին փոփոխակի հաջողությամբ, բայց մեծ մասամբ հօգուտ թուրքերի։ Անհրաժեշտ է նշել, որ այս պատերազմում ևս թուրքական բանակը թնդանոթներ ու այլ հրազեն ուներ, որպիսին պարսիկները սկզբում չունեին[3]։

Օսմանյան բանակը շարունակելով հարձակումը, իրանական բանակի հետ ունեցած նոր ընդհարումներում տարավ մի շարք հաղթանակներ, ինչպես, օրինակ՝ սեպտեմբերի 8-ին՝ Կանակա գետի մոտ, այնուհետև, Քուռ գետի ափերին, իսկ դեկտեմբերի 8-ին ջախջախեց իրանական մի այլ բանակի (հավանաբար Շիրվանի ճակատամարտում)։ Այս արշավանքի և ռազմական գործողությունների հետևանքով Լալա-Մուստաֆայի բանակը զավթեց Հայաստանը, Շիրվանը, Դիլանը, Ադրբեջանի մեծ մասը, Շաքին և Դերբենդը՝ սոսկալի ավերածություններ և չտեսնված ոճիրներ գործելով այդ վայրերում։ Այս մասին «Царьградские письма»-ի հեղինակը գրում է, որ թուրքերի զավթումներն ուղեկցվում էին հրով ու սրով, դիմադրողների նկատմամբ չտեսնված դաժանությամբ, սոսկալի սանձարձակությամբ և մոլեգին վերաբերմունքով նաև խաղաղ բնակիչների նկատմամբ[4]։ Իհարկե, այդ կռիվներում պարսիկները նույնպես երբեմն զգալի հարված-

օսմանցիներին՝ Իրա և Ալազան գետերի միջև, բայց շուտով, դրանից հետո ինքը խոշոր պարտություն կրեց և նահանջեց. տե՛ս „Сборник статей по истории Азербайджана", вып. I, էջ 272։

[1] Տե՛ս Hammer, Նշվ. աշխ., հ. 2, էջ 480—481։

[2] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 267ա։

[3] Տե՛ս ձեռագիր № 1496, էջ 211բ։

[4] Տե՛ս „Царьградские письма...", էջ 270։

ներ էին հասցնում թուրքերին և մեծ կորուստներ պատճառում նրանց։

Պետք է ասել, որ թուրքերի այդ հաջողություններին նպաստեց նաև ադրբեջանական ֆեոդալների մի մասի (սյունիների) և Ադրբեջանի ու Հայաստանի քրդական շատ ցեղերի՝ Սեֆևյաններից դժգոհ ավագանու անցումը թուրքերի կողմը[1]։

Բացի դրանից, օսմանցիների հաղթանակը հեշտացավ նաև կզլբաշական էմիրների միջև տեղի ունեցող երկպառակությամբ, քանի որ նրանք չէին ցանկանում ենթարկվել ընդհանուր հրամանատարությանը[2]։

Հայկական մի քանի աղբյուրների տվյալներով այս պատերազմում նույնպես Արարատյան դաշտը և հատկապես նրա կենտրոն Երևան քաղաքը կրեցին խիստ ծանր հարվածներ և ենթարկվեցին անասելի աղետների։ Երբ 1579 թ. աշնանը օսմանյան բանակը Լալա-Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ մոտեցավ Երևանին, քաղաքը համարյա ոչ մի դիմադրություն ցույց չտվեց և անձնատուր եղավ։ Չնայած դրան, թուրքերը անխիղճ կողոպուտի ենթարկեցին և հրդեհեցին քաղաքը։

Ութ ամիս տևող պատերազմական գործողություններից ու նվաճումներից հետո Մուստաֆա փաշան նվաճված մարզերում թողնելով նշանակված կուսակալներին՝ իրենց կայազորներով, բանակի գլխավոր ուժերի հետ, բազմահազար գերիներով վերադարձավ Էրզրում ձմեռելու[3]։

[1] Տե՛ս «Թարիխի Փեչևի», էջ 54։

[2] Տե՛ս „Царьградские письма и т. д.", էջ 270:

[3] Գերմանիայի կայսեր դեսպան Տեկանդերը, որը XVII դարի սկզբին այցելել է Իրան, հայտնում է, որ 1578 թ. թուրքերը հարձակվելով Իրանի վրա, մի շարք վայրեր նվաճեցին՝ շահի երկու եղբայրների և մի քանի բարձր հրամանատարների դավաճանության շնորհիվ և գերի տարան շահի որդիներից մեկին (Какаш и Тектандер, Путешествие в Персию через Московию 1602—1603 гг., 1896, էջ 34)։ Պետք է ասել, որ այս փաստերի ճշտությունը դժվար է երաշխավորել, քանի որ մեր ձեռքի տակ եղած աղբյուրներից ոչ մեկում նման տեղեկություններ չկան։

Դրանից հետո Շիրվանի կուսակալ Յուզդեմիր Օսման փաշան մեծ զորքով (այդ թվում նաև կովկասյան լեռնցիներից) Դերբենդից հարձակվելով պարսիկների վրա, Ղրիմի խանի զորքերի օգնությամբ երեք օր տևող ճակատամարտում տարավ նոր հաղթանակ[1]։

Այսպիսով, Օսման փաշան այս նոր արշավանքի ու կռիվների հետևանքով մի շարք նոր վայրեր (քաղաքներ և գավառներ) զավթեց Աղվանից աշխարհում, Ղարաբաղում և Հայաստանում, կատարելով չտեսնված ավերածություն ու կոտորածներ, թեև ինքն էլ ունեցավ մեծ կորուստներ։ Պարսից շահ Խուդաբանդան փախավ Խորասան։ Այս զավթած մարզերում թուրքերը և թաթարները մեծ քանակությամբ գերիներ տարան թե՛ հայերից և թե՛ ադրբեջանցիներից։

Ռուսական աղբյուրներում՝ այս պատերազմում պարսիկների կրած պարտության պատճառներից մեկը համարվում է Խուդաբանդայի և նրա որդու՝ Համզա-միրզայի միջև եղած թշնամանքը, երբեմն էլ արյունահեղ ընդհարումները[2]։

Բայց Օսման փաշայի հաջողությունը երկար չտևեց։ Այն ժամանակ, երբ օսմանյան բանակի գլխավոր հրամանատարը զորքով գտնվում էր Էրզրումում, իրանական բանակը Շիրվանում կրկին հարձակման անցավ թուրքերի դեմ։ Այս անգամ այդ գործի նախաձեռնողները եղան պարսից թագուհի Մահդի Ուլեան և նրա որդի Համզա-միրզան (Խուդաբանդայի կինը և որդին)։ Աղբյուրների վկայությամբ սրանք քաջալերեցին շահին և նրա հրամանով կանգնելով զորքի գլուխ, հարձակվեցին օսմանցիների վրա Շիրվանում, ցուցաբերելով մեծ հերոսություն ու վճռականություն։ Նրանց գլխավորությամբ իրանական բանակը ջախջախեց Օսման փաշայի բանակը, ստիպեց նահանջել Դերբենդ և կրկին ետ վերցրեց Շամախին, Շիրվանն ու մի քանի հարևան գավառներ[3]։

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 267բ։

[2] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией", т. I, под. ред. Н. И. Веселовского, էջ 133—134։

[3] Տե՛ս Փիրղալեմյան, Նշվ. ձեռագիրը, էջ 312։

Շուտով Ղրիմի խանը օգնության է գալիս Թուրքերին և կրկին գրավում Շամախին։ Իրանի բանակը Թագուհու գլխավորությամբ դուրս է գալիս սրա դեմ և տեղի ունեցած ճակատամարտում պարտություն է մատնում Թաթարներին։ Այդ կռվում Թաթարները շատ մեծ կորուստ տվեցին. սպանվեց նաև նրանց խանը, և զորքը ցրիվ եկավ[1]։ Դրանից հետո պարսկական բանակը պաշարում է Թիֆլիսը և սպառնում Էրզրումին ու Բաղդադին։ Օսման փաշան փախչելով Դերբենդ, այնտեղից օգնական զորք է խնդրում սուլթանից։ Ըստ Չամչյանի[2], սուլթանը մի քանի գունդ օգնական զորք է ուղարկում սրան։ Բայց պարսիկները սրանց ևս հաղթելով և վռնդելով, մի շարք քաղաքներ են գրավում Աղվանում, Շիրվանում, Հայաստանում, այդ թվում նաև Երևանը, իսկ Օսման փաշան նահանջելով Կովկասի լեռները, սկսում է զորք հավաքել լեռնցիներից ու Թաթարներից։

Ըստ Երեմիա Չելեբու՝ օսմանցիները կարողացան խորամանկությամբ և դավադրությամբ իրենց ձեռքում պահել նվաճած մարզերի ու քաղաքների մեծ մասը[3]։ Թեև պարսկական տասը հազարանոց զորքը Իմամ-Կուլի խանի հրամանատարությամբ 4 ամիս պաշարեց Թիֆլիսը, բայց չկարողացավ գրավել այն։ Թիֆլիսում պաշարված Թուրքերին զորքով օգնության է գալիս Հասան փաշան և իրանական զորքին ստիպում ետ նահանջել։

Այս դեպքերից հետո Մուստաֆա փաշան ետ կանչվեց սուլթանի կողմից (1579 Թ.) և նրա փոխարեն Իրանի դեմ կռվող բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց նոր, մեծ վեզիր Սինան փաշան։ Դրա հետ միասին շտապ կերպով 10 հազար ենիչերիներ ուղարկվեցին Անդրկովկաս՝ տեղի գործող բանակին օգնելու։

Սինան փաշան պարսկական բանակին ստիպեց ետ գնալ

[1] Տես Երեմիա Չելեբի Քեոմուրջեան, Համառօտ պատմութիւն օսմանեան (Պետ. Մատենադարանի ձեռ. № 1675, էջ 79բ)։

[2] Տե՛ս Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, էջ 530։

[3] Տե՛ս Երեմիա Չելեբի, նշվ. աշխ., էջ 79բ։

Վրաստանից և շարունակելով առաջխաղացումը, սկսեց սպառնալ Թավրիզին (1580 Թ.)։

Կզլբաշները նահանջելիս հաճախակի հարձակումներ էին կատարում Թուրքական զորքերի ու գումակների վրա և զգալի հարվածներ հասցնում նրանց։ Այդ ժամանակ լուր է ստացվում, որ շահը 60 հազար զորքով շարժվում է Թուրքիայի վրա։ Նույն պահին վրացիները, որոնք վաղուց ազատագրական պայքարի էին դուրս եկել թե՛ Թուրքական և թե՛ իրանական ագրեսորների դեմ, հարձակումներ են կատարում օսմանյան զորքերի վրա։ Այս բոլորը ստիպեցին Սինան փաշային իր բանակի գլխավոր ուժերը ետ տանել Ղարս, որտեղ պատրաստվում էր Թավրիզի վրա արշավելու[1]։ Բայց շուտով նա ընդունելով շահի առաջարկը՝ զինադադար կնքեց նրա հետ և սուլթանի թույլտվությամբ վերադարձավ Կոստանդնուպոլիս։

Գրեթե այդ նույն ժամանակ այնտեղ ժամանեցին պարսից շահի դեսպանները՝ հաշտություն կնքելու առաջարկով, ըստ երևույթին պատրաստ լինելով զգալի զիջումներ անելու Թուրքերին կամ գրեթե ընդունելու նրանց պահանջները։ Սակայն պարսկական պատգամավորների միջև եղած տարաձայնության և նրանց մի մասի անընդունելի պայմանների պատճառով սուլթան Մուրադը հրաժարվելով բանակցություններից, բանտարկեց Իրանի դեսպանին՝ նրա մարդկանց հետ միասին[2]։ Պատերազմը շարունակվեց։

1582 Թ. սուլթանը արևելյան բանակի գլխավոր հրամանատար նշանակեց Վրաստանի կուսակալ Ֆահրադ փաշային, որը 60 հազար զորքի գլուխ անցած՝ շարժվեց Իրանի վրա։ Գրավելով Երևանը, որը զինադադարով կրկին պարսիկներին էր անցել, Թուրքերը նորից ավերման ենթարկեցին այն։ Դրանից հետո նա գրավեց Գանձակը։

Այս արշավանքի և Երևանի գրավման մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում մի ավետարանի հիշատակարան. «...Ի Թուականս Հայոց ՌԼԳ (1584), որ յայսմ տարոյս գնաց Ֆահրատ փաշայն ԳՃՌ (300 000) հեծելազու-

[1] Տե՛ս «Թարիխի Փեչևի», հ. 2, էջ 66—68։

[2] Տե՛ս Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., էջ 439—440։

բաւք ի վերայ Երևան քաղաքին, փախոյց զտերն, որ նստեալ էր անդ, Մահմետ խանն և շինեաց անդ նորայ հիմն բերդ մեծ և զարմանալի...»։ Այնուհետև նկարագրվում է հայերին հասցված տառապանքների մասին[1]։ Փեչևին հաղորդում է, որ Ֆահրադ փաշան Երևանը գրավելուց և բերդը վերականգնելուց հետո այդտեղ բեյլերբեյ է նշանակում Ջղալե-Զադե-Յուսուֆ փաշային[2]։

Այդ նույն ժամանակ Թուրքական այլ զորավարներ ևս հյուսիսից արշավեցին կղզբաշների վրա և զգալի հաջողություններ ունեցան։ Թուրքերը շարունակում էին Դաղստանի նվաճումը և առաջխաղացումը դեպի հյուսիս։

Հյուսիսային Կովկասում ռազմական գործողությունների ծավալման համար Թուրքական կառավարությունը 1582 թ. Կաֆայից (Թեոդոսիա) Դաղստան ուղարկեց 6 հազարանոց օժանդակ զորք՝ Ջաֆար փաշայի հրամանատարությամբ[3]։

1583 թ. գարնան սկզբին Իմամ-կուլի խանը 50 հազարանոց բանակով արշավանքի դուրս եկավ Դաղստանում գործող Թուրքական (Օսման փաշայի) զորքի դեմ։ Նույն թվականի մայիսի 9-ին Դերբենդի հարթավայրում խիստ արյունահեղ ճակատամարտ տեղի ունեցավ երկու բանակների միջև։

Պարսիկներն ի վերջո պարտություն կրելով ու մեծ կորուստներ տալով (10 հազար սպանված և 3 հազար գերի), դիմեցին փախուստի։ Այս ճակատամարտի մասին Փեչևին հաղորդում է, որ օսմանցիների հաղթանակի հետևանքով 7500-ից ավելի կղզբաշների գլուխներից կառուցեցին աշտարակ[4]։

Թուրքերը հետապնդելով պարսիկներին, կրկին ներխուժեցին Աղվանից երկիրը և իրենց հաղթական կամպանիան ավարտեցին Բաքվում։ Դրանից հետո Թուրքիան սկսեց համարյա թե գերիշխել Կովկասում և Կասպից ծովի վրա։

Կարևոր է նշել, որ Թուրք-իրանական այս պատերազմի ժամանակ ուղբեկները նույնպես հարձակումներ սկսեցին

[1] Տե՛ս «Էջմիածին» հանդես, 1950, № 11—12, էջ 87։
[2] Տե՛ս Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 70։
[3] Տե՛ս Hammer, նշվ. աշխ., հ. 2։
[4] Տե՛ս «Թարիխի Փեչևի», հ. 2, էջ 68—78։

Իրանի դեմ։ Բուխարայի պետությունը այդ տարիներին, այսինքն՝ Աբդուլլահ II խանի օրոք հասավ զարգացման բարձր աստիճանի։ Աբդուլլահը մեծ չափով ընդարձակեց իր պետության սահմանները բոլոր ուղղություններով։

Աբդուլլահ II-ը կրկին ներխուժեց Խորասան ու գրավեց մի քանի քաղաքներ և այլ բնակավայրեր, այնպես որ Սեֆևյանները փաստորեն ստիպված էին պատերազմել երկու ռազմաճակատներում։

Այս հանգամանքը նույնպես դեր խաղաց պարսիկների՝ Թուրքերից կրած պարտությունների գործում։ Այս պայմաններում Իրանի արքունիքում շփոթություն ու հուզմունք էր տիրում, իսկ ավագանու շրջանում ներքին պայքարն ու խռովությունները է՛լ ավելի սաստկացան։

Այսպես էր դրությունը Իրանում, երբ սուլթան Մուրադ III-ը, զավթողական նոր պլաններ իրագործելու, այսինքն՝ Ատրպատականը և Թավրիզը ևս նվաճելու նպատակով, նոր արշավանք ձեռնարկեց Իրանի դեմ։ Այս խնդրի իրագործումը նա հանձնարարեց մեծ վեզիր Օսման Յուզդեմիր փաշային, որը նշանակված էր Արևելքում գործող բանակի գլխավոր հրամանատար։ Օսման փաշան մեծ բանակով (մոտ 150—200 հազար) արշավեց Իրանի վրա[1]։ Որոշ աղբյուրների տվյալներով՝ շուտով նա գրավեց Թավրիզը, քաղաքի կայազորի դիմադրությունը կոտրելուց հետո[2]։

Թավրիզը գրավելուց հետո օսմանյան զինվորները սկսում են վայրագություններ գործել. քաղաքը 3 օր շարունակ ենթարկում են կողոպուտի ու ավերածության և կոտորում բազմահազար բնակիչներ։ Թուրքերի այդ արարքները առաջ են բերում քաղաքացիների ապստամբությունը, որը դաժանո-

[1] Տե՛ս «Թարիխի Փեչևի», հ. 2, Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 76։
[2] Բարսեղ Վարագեցին այդ մասին հետևյալն է գրում իր հիշատակարանում. «Եւ չուեալ գնաց (Օսման փաշան—Հ. Ն.) ի շահաստան ի Թաւրէզ քաղաք. և ելեալ ընդդեմ նոցա ազգէն պարսից որդի Թագաւորին Խուզապանտայի Ամիր Համզա Միրզան. և բանակեցան ճակատ առ ճակատ». Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 36։

բեն ճնշվում է օսմանցիների կողմից (1585 թ. սեպտեմբերին)[1]։

Օսման փաշան վերակառուցեց Թավրիզի բերդը և ամրացրեց քաղաքը, տեղի բնակչության թիվը ավելացնելով ի հաշիվ շրջակայքի բնակչության[2]։

Թավրիզի բնակչության թշնամական վերաբերմունքը և բանակի մատակարարման դժվարությունը թուրքական հրամանատարությանը ստիպում են բանակի գլխավոր ուժերը դուրս բերել քաղաքից, միջնաբերդում թողնելով ոչ մեծ կայազոր։ Դուրս գալուց առաջ օսմանյան զորքը կրկին կողոպուտի է ենթարկում քաղաքը, կոտորում մոտ 15 000 հոգու, գերեվարում բազմահազար կանանց ու երեխաների։

Իմանալով այս մասին՝ Համզա-միրզան, ըստ Փեչևիի, 30 000-անոց բանակով շարժվում է դեպի Թավրիզ, անսպասելիորեն հարձակվում Ջղալե-Զադեի զորքի վրա և տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում խիստ պարտություն մատնում նրան (1585 թ. սեպտեմբերի 27-ին)։ Այնուհետև, շատ չանցած նա նույն տեղում հարձակվում է Օսման փաշայի բանակի վրա և մեծ կորուստ պատճառում նրան (մոտ 20 000), որը այդ նույն պարտության օրը (հոկտեմբերի 29-ին) մեռնում է վշտից։ Դրանից հետո պարսկական զորքը Համզա-միրզայի գլխավորությամբ պաշարում է Թավրիզի միջնաբերդը, որտեղի թուրքական կայազորը համառ դիմադրություն էր ցույց տալիս, չնայած իր կրած մեծ դժվարություններին[3]։ Պաշարումը ձգձգվում է, և կատաղի կռիվներ են տեղի ունենում։ Միայն կզլբաշական էմիրների մի մասի խռովությունը Իրանում Համզա-միրզային ստիպեց վերացնել պաշարումը։

Թավրիզից հետ մղված պարսիկները իրենց ուժերը կենտրոնացրին Ղարաբաղի և Գանձակի կողմերում, որտեղ գտնվում էին նաև Խուդաբանդա շահը և Համզա-միրզան։

[1] Տե՛ս «Սիմէօն վարդապետի Ապարանեցւոյ վիպասանութիւն, ակս Պահլաւունեանցն զարմի և Մամիկոնեանցն սեռի», Վաղարշապատ, 1870։

[2] Տե՛ս «Թարիխի Փեչևի» (Ա. Մաֆրատյան, նշվ. աշխ., էջ 76)։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 73։

Օսմանին իրեն սերասքեր փոխարինող Վանի կուսակալ Ջղալե-Զադե փաշան (Ջղալ-օղլի) մի քանի ընդհարումներ ունեցավ Համզա-միրզայի հետ։ Միաժամանակ պարսիկների դեմ ռազմական գործողություններ էր վարում նաև Ֆահրադ փաշան։ Ընդհարումները փոփոխակի հաջողությամբ տեղի էին ունենում Անդրկովկասի զանազան վայրերում, որոնց ընթացքում թուրքերը մի քանի նոր վայրեր զավթեցին Անդրկովկասում, հատկապես Հայաստանում։ Որոշ հաջողություններ ունեցան նաև այն կզլբաշները, որոնք պաշարել էին Վանը, Երևանը և Թիֆլիսը։ Համեմատաբար հաջող ռազմական գործողություններ էր վարում Համզա-միրզան, որը մի քանի հաղթանակներ տարավ օսմանցիների դեմ։ Չնայած թուրքական զորքերի գերազանցությանը, նա կարողանում էր շոշափել նրանց թույլ տեղերը և անսպասելի հարվածներ հասցնել։ Թավրիզը կորցնելով հանդերձ, Համզայի հեծելազորը համառորեն գրոհում է թուրքերի վրա և ստիպում նրանց, ի վերջո, նահանջել Ադրբեջանից։

Թուրքերի դրությունը մխիթարական չէր։ Սակայն կզլբաշների ավազակային շրջանում տիրող երկպառակությունը շուտով վատացրեց պարսկական զորքի վիճակը։ Համզա-միրզան պալատական ու ցեղական ավազակային դավադրության և օգնություն չստանալու պատճառով պարտություն կրեց Ջղալե-Զադեից, բայց դրանից չընկճվելով, նոր հարձակումներ կատարեց և ուժեղ հարվածներ հասցրեց Սալմաստին ու Երևանին։ Սակայն ներքին խառնակությունը թույլ չտվեց պտուղներ ստանալ այդ հաղթանակներից, և Թավրիզը մնաց թուրքերի ձեռքում։

Շուտով (1585 թ. վերջին) Համզա-միրզան այդ երկպառակության և դավադրության անմիջական զոհը դարձավ։ Կարա-Աղաշում ձմեռելու ժամանակ Համզա-միրզան կզլբաշական էմիրների մարդասպան մի պալատականի ձեռքով սրախողխող արվեց (1587 թ.)[1]։

Համզայի մահից հետո գահաժառանգ դարձավ Աբաս-միրզան։ Պետք է ասել, որ Համզա-միրզայի նման քաջարի

[1] Տե՛ս «Ցիշատակք պատմութեան ինքնակալութեան օսմանցւոց», ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 222ա։

զորավարի և թագաժառանգի սպանությունը Իրանի համար ծանր կորուստ էր։ Նրա մահով կորավ թուրքական նվաճողներից շուտով ազատվելու ամեն մի հույս։ Այս հանգամանքը և երկրում տիրող ներքին պայքարը է՛լ ավելի թուլացրին Իրանին. այդ առիթից օգտվեցին թուրքերը։ Համզայի մահից հետո գերակշռությունը կրկին անցավ նրանց կողմը։ Այս դեպքը շփոթություն և քայքայում առաջ բերեց պարսից զորքի մեջ։ «Եւ իբրև այս այսպես եղև, ցրուեցան Պարսիկքն ըստ իւրաքանչիւր ոք, ոչ գիտելով զտեղի իւր, իբրև զգիշատեալ հօտ որոց ոչ իցէ հովիւ։ Եւ և զի խրոխտ հրաման թագաւորին Մուրատի Յօթմանցոյ պատեալ էր զնոսա որպէս զկղզի նման ծովոյ»,—գրում է Հով. Ծարեցին[1]։ Այդ պայմաններում ոչ միայն ոչինչ հնարավոր չեղավ ձեռնարկել օսմանցիների դեմ, այլև շուտով իրանական ամբողջ բանակը կազմալուծվեց։ Խուդաբանդան ստիպված էր բանակցություններ վարել օսմանցիների հետ զինադադար կնքելու համար, բայց դրանից բան դուրս չեկավ, քանի որ թուրքերի պահանջը՝ իրենց զիջելու Ղարաբաղը, մերժվեց, և պատերազմը շուտով վերսկսվեց։

Իրանական բանակը սկսեց պարտություններ կրել և նահանջել[2]։ Թուրքերը կրկին մի շարք վայրեր զավթեցին գլխավորապես Ադրբեջանում։ Ֆահրադ փաշան կարողացավ արագ կերպով փոխհատուցել թուրքական բանակի առաջվա անհաջողությունները։ Նա ստիպեց կզլբաշներին թողնել Թավրիզը և ետ գնալ նրանց կողմից պաշարված քաղաքներից։

Այս նույն ժամանակ ավելի սպառնալից էին դարձել ուզբեկները, որոնք կրկին հարձակման անցնելով Իրանի արևելյան սահմանի վրա, զավթել էին մի քանի վայրեր, այդ թվում Հերաթը (1585 թ.), ամայացնում էին Խորասանը, իսկ 1587 թ. գրավեցին սրբազան քաղաք Մեշհեդը, որտեղ Աբդուլահ խանի հրամանով խեղդեցին բոլոր պարսիկներին։ Նման կոտորածներ նրանք կատարեցին նաև Նիշապուրում, Սերզեվարում, Խափարայինում և այլուր[3]։

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 269ա։
[2] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 292բ։
[3] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 269բ։

Այս մասին տեղեկություններ կան նաև ռուսական աղբյուրներում։ Ռուսական դեսպան Գրիգորի Վասիլչիկովը իր հաղորդագրության մեջ գրեթե հաստատում է այս տեղեկությունները[1], թեև որոշ հարցերում մի փոքր այլ մոտեցում ունի։ Մյուս կողմից՝ ներքին պայքարը վերնախավում, պալատական դավադրությունները և խաների ու ֆեոդալների ապստամբությունները, որոնք շարունակվում էին երկրում, խիստ ծանր դրություն էին ստեղծել Սեֆեյան պետության համար։

Այդ ժամանակ, այսինքն՝ 1587 թ. օսմանյան բանակները սուլթանի հրամանով կրկին հարձակման անցան Իրանի դեմ[2]։ Ֆահրադ փաշան Բաղդադի մոտ ջարդեց իրանական 15 հազարանոց բանակը և գրավեց Բաղդադը։ Այս հաջողությունից և Թավրիզը զավթելուց հետո Թուրքիան տիրեց Իրանի արևմտյան գավառներին՝ ներառյալ Իրաք աջամիի մեծ մասը, Լուրիստանը և Խուզիստանը։ Այնուհետև թուրքերը 1588 թ. նվաճեցին Գանձակը և Ղարաբաղը, իսկ կզլբաշների զորքին, մեծ ջարդ տալով, հետապնդեցին մինչև Արաքս գետը[3]։

Այսպիսով, այս պատերազմների (1578—1588 թթ.) ընթացքում օսմանցիները Իրանից զավթեցին հետևյալ երկրները (մարզերը) և քաղաքները՝ Հայաստանի մնացած մասը, Վրաստանը, Ադրբեջանը, Շիրվանը, Ղարաբաղը, Իրաքի մի մասը Բաղդադով հանդերձ, Երևանը, Էջմիածինը, Կաղզվանը, Նախիջևանը, Թավրիզը, Շաբրանը, Կաբալեն, Աղդաշը, Ռեշտը, Քեշկը, Մախմուդովը, Խոյը, Սալմաստը, Ջուլամերկը, Թիֆլիսը, Գորին, Գանձակը, Շաքին, Շամախին, Բաքուն, Գուրվանը, Ջակամը՝ մինչև Դերբենդ ներառյալ, Բերդան և Համադանը։ Թուրքերի այս հաջողությունները մասամբ բացատրը-

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.“, т. I, էջ 109—110։
[2] Ըստ Փեչևիի՝ 1587 թ. պարսիկները առաջարկում են հաշտություն կնքել։ Սուլթանը համաձայնվում է, բայց այդ խաղաղությունը շատ կարճատև է լինում։ Շուտով պատերազմական գործողությունները վերսկսվում են։ Պետք է նկատել, որ այս մասին բացի Փեչևիից ուրիշ ոչ մի աղբյուր չկա։ Ուստի մեզ մնում է տարակուսել այդ տեղեկության ճշտության վրա։
[3] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 269բ։

վում են նաև նրանով, որ այդ ժամանակ Աբասը զբաղված էր նաև ուզբեկների խան Աբդուլլահի դեմ մղած պատերազմով։

Երբ օսմանյան բանակը նոր հաջող նվաճումներ էր կատարում հիշյալ վայրերում, ուզբեկները շարունակում էին իրենց հարձակումներն ու նվաճումները Իրանի արևելքում։ Իր քաղաքները Թուրքերից պաշտպանելու նպատակով Շահ-Աբասի կատարած արշավանքը սկզբում արդյունք չտվեց, քանի որ նա ժառանգություն էր ստացել ուժասպառ մի պետություն և թույլ բանակ (չնայած որ, այնուամենայնիվ, ժամանակավոր ու մասնակի հաջողություններ ունենում էր. օրինակ՝ նա Թուրքերից ետ նվաճեց Գիլանը Ատրապատականում, այնուհետև ուղևորվեց հարավ և գրավեց Լուրիստանը. բայց դրանով դրությունը չբարելավվեց)։ Այս պայմաններում նա հասկանում էր օսմանցիներին լուրջ դիմադրություն ցույց տալու անհնարինությունը, մանավանդ որ Բուխարայի խանի դեմ սկզբում ձեռնարկած նրա ռազմական գործողությունը հաջողություն չունեցավ։ Խորասանից նա ետ եկավ Թուրքերի խիստ ճնշման պատճառով։ Նա նույնիսկ փորձեց Բուխարայի խանի հետ հաշտվել և դաշինք կնքել՝ խնդրելով իրեն օգնել Թուրքիայի դեմ, բայց մերժվեց կտրականապես։ Օգտվելով Աբասի բացակայությունից, ուզբեկները կրկին հարձակման անցան և գրավեցին ու կողոպտեցին ողջ Խորասանն ու հատկապես Մեշհեդ քաղաքը (1587—1588 թթ.)։

Այդ պատճառով Աբասը Թուրքերին առայժմ թողնելով, իր գլխավոր ուշադրությունը դարձրեց դեպի արևելք և արշավեց ուզբեկների վրա՝ ցանկանալով իր հաշիվը մաքրել Բուխարայի հետ, որովհետև նախ՝ նա ի վիճակի չէր երկու ճակատի վրա միաժամանակ պատերազմելու, և երկրորդ՝ Թուրքական բանակն ավելի ուժեղ էր, և շատ դժվար էր առայժմ նրա դեմ կռվել[1]։ Ուզբեկների ու թաթարների դեմ Աբասը բավական երկարատև հաջող պատերազմներ մղեց, որոնց մասին խոսք կլինի հետևյալ գլխում։

Ստեղծված դրությունից դուրս գալու և երկրի մյուս մասերի վրա կախված վտանգը կանխելու համար Աբասը ստիպված համաձայնվեց հաշտություն կնքել Թուրքիայի հետ, որպեսզի նախ՝ շեղոքացնի արևմտյան հակառակորդին և ապա հաղթի արևելյան թշնամուն։ Այս նպատակով նա դեսպանություն ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ հաշտության բանակցություններ վարելու համար։

Հաշտության վերաբերյալ բանակցությունները երկու կողմերի միջև սկսվել էին դրանից առաջ, 1589 թ., Իրան ժամանած Թուրքական դեսպանների և շահի միջև, բայց ձգձգվում էին։ Թուրքական դեսպանները շահից պահանջում էին նրա եղբոր որդուն՝ Իսմայիլ միրզային, իբրև պատանդ ուղարկել սուլթանի մոտ և բարեկամական կապեր հաստատել նրա հետ նաև դինաստիական ամուսնության միջոցով[1]։ Դրա դիմաց սուլթանը իբր թե խոստանում էր Իրանից գրավված Թավրիզը, Շիրվանի երկիրը, Շամախին, Բաքուն, Դերբենդը և այլ քաղաքներ վերադարձնել շահին, իսկ զորքերը դուրս բերել այդ վայրերից և հավերժական հաշտություն կնքել։ Իսկ եթե շահը չհամաձայնվեր այդ կատարելու և Թուրքական դեսպանների հետ միասին իր դեսպաններին չուղարկեր, այդ դեպքում Թուրքական զորքերը կհարձակվեին Ղազվինի և մյուս քաղաքների վրա։ Շահի մոտ ուղարկված ցարական դեսպան Գրիգորի Վասիլչիկովի հաղորդածով սկզբում Շահ-Աբասը համաձայնվում է հաշտություն կնքել Թուրքերի հետ և ընդունել նրանց պայմանը, եթե սուլթանը սկզբում ետ կվերադարձներ Թավրիզն ու Շիրվանը։ Բայց երբ Վասիլչիկովը Իրան է ժամանում և առաջարկում է ցարի պայմաններն ու օգնությունը Թուրքիայի դեմ, նա սկսում է տատանվել և խուսանավել, մանավանդ որ Թուրքերի խոստումներին չէր հավատում։ Բնորոշ է, որ Շահ-Աբասը Թուրքիայի հետ բանակցություններ վարելու ժամանակ, երբ ժամանում է ռուսական դեսպանը, աշխատում է թաքցնել իր գործողությունները թե՛ մեկից և թե՛ մյուսից[2]։

---

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 223բ։

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 24—25. այլ աղբյուրների կողմից այս հաղորդումը չի հաստատվում։

[2] Տե՛ս նույն տեղը, հ. I, էջ 107—108։

Չնայած այս բոլորին, այնուամենայնիվ, ինչպես տեսանք, Շահ-Աբասը համաձայնվեց Թուրքիայի հետ հաշտություն կնքել՝ խուսափելու համար թուրքական զորքի հետագա հարձակումներից։ Թուրքական զորքի հաջողությունները և նրանց նորանոր զավթումները այս բանակցությունների ընթացքում խիստ անհանգստացրին շահին և նրա մերձավորներին, քանի որ սրանց ձեռքին շատ քիչ տերիտորիա էր մնացել[1]։ Իրանական բանակը շատ էր թուլացել և ի վիճակի չէր ոչ միայն ուժեղ հակահարված տալու, այլև լուրջ դիմադրություն ցույց տալու թուրքերին, մանավանդ որ նա ստիպված էր միաժամանակ կռվել Բուխարայի զորքի դեմ։

Սրանով է բացատրվում Շահ-Աբասի՝ Թուրքիայի հետ հաշտություն կնքելու փաստը։

Հաշտությունը երկու կողմերի միջև կնքվեց Կոստանդնուպոլսում, 1590 թ. մարտի 21-ին, Իրանի համար ծանր պայմաններով։ Դրանով թուրքերի ձեռքում մնացին նրանց գրաված գրեթե բոլոր տերիտորիաները, այսինքն՝ ողջ Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը՝ Թավրիզով հանդերձ (բացի Արդեբիլից և Թալիշից), Քուրդստանը և Լուրիստանի նշանակալից մասը։ Այս երկրների մեջ էին մտնում Գանձակը, Ղարաբաղը, Շիրվանը, Դերբենդը, Կասպից ծովի նավահանգիստները, Շեհրիզորը և Երևանը[2]։ Այնպես որ շահի ձեռքին մնաց իր պետության տերիտորիայի (մարզերի) մոտ 1/3 մասը միայն։ Բացի դրանից, Իրանի շահը պարտավորվեց նաև Թուրքիային վճարել ռազմատուգանք։

Որպես հաշտության պայմանագիրը չխախտելու երաշխիք՝ Հայդար-միրզան պատանդ էր մնում Կոստանդնուպոլսում։ Այս հաշտությամբ վերջացավ թուրք-իրանական պատերազմների երկրորդ էտապը։

Իհարկե, կնքելով այդ հաշտությունը, Շահ-Աբասը երբեք էլ մտադրություն չուներ այն պահպանել երկար ժամանակ։ Նրա կողմից արված այդ զիջումը միայն տակտիկական

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 109։

Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 225բ։

ու ժամանակավոր բնույթ էր կրում։ Նա ցանկանում էր ժամանակ շահել՝ Բուխարայի խանի հետ իր հաշիվը մաքրելու, ուժերը վերադասավորելու, անհրաժեշտ չափով պատրաստվելու, ինչպես և երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու համար, որպեսզի հարձակման անցնի օսմանցիների դեմ։ Պետք է ասել, որ հետագա դեպքերն արդարացրին նրա վարմունքը։

Ամփոփելով այս պատերազմի արդյունքները, պետք է նշել, որ այն վերջացավ Իրանի պարտությամբ, նրա տերիտորիայի խոշոր կորստով։ Սրա պատճառները արդեն հայտնի են։ Խոսելով Սեֆևյանների պետության ռազմական թուլության մասին, պետք է ավելացնել, որ կանոնավոր բանակի բացակայությունը, շահի անկանոն հեծելազորի մարտական վատ հատկությունները, խիստ թույլ և փոքրաթիվ հետևազորը, բավարար քանակությամբ հրետանու բացակայությունը, այս բոլորը բնութագրում էին իրանական հետամնաց բանակին։ Այս պատճառների մեջ, բացի իրանական բանակի թուլությունից, ամենակարևորը մենք համարում ենք այն սոցիալական սուր բախումները, գլխավորապես ժողովրդական շարժումները, որոնք տեղի էին ունենում XVI դարի երկրորդ կեսին (որոնց մասին արդեն հիշատակել ենք)։

Սակայն չպետք է կարծել, որ այդ նույն ժամանակ Թուրքիայում դրությունը լավ էր։ Ընդհակառակը, ինչպես վերևում ասվեց, այստեղ նույնպես ներքին դրությունը մխիթարական չէր թե՛ տիրող վերնախավում (հատկապես պալատական) եղած ներքին պայքարի ու դավերի և թե՛ դասակարգային ու ազգային-ազատագրական պայքարի տեսակետից։ Եվ այս հանգամանքը քիչ դեր չխաղաց սուլթանի կողմից պատերազմը դադարեցնելու և Իրանի հետ հաշտություն կնքելու գործում։

3. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Վերևում մենք տեսանք, որ շամլու և ուստաջլու ցեղերի առաջնորդները դեռևս 1581 թ. Աբասին շահ էին հռչակել Խորասանում։ 1587 թ. շամլու և ուստաջլու ցեղերի կզլբաշա-

կան ավագանու մի խմբավորում նրանց ցեղերի մասնակցությամբ գրավեց Ղազվինը և գահ բարձրացրեց Խուդաբանդայի կրտսեր որդի Աբասին, որը շահ դարձավ Աբաս I անունով (1587—1629 թթ.)։

Դրանով Խուդաբանդայի իշխանությունը փաստորեն լիովին ոչնչացվեց, և հենց նույն թվականին էլ նա մեռավ՝ հայտնի չէ բնական, թե բռնի մահով։ Այդ ժամանակվանից Իրանում Շահ-Աբասի հավակնությանն ու կարիերային գրեթե ոչ մի հակառակություն արդեն չկար։

Այժմ, երբ իրենց գլխավոր հակառակորդները մեջտեղից վերացվել էին, պետության մասնատվածության այս կողմնակիցները՝ վերոհիշյալ ավագանու ներկայացուցիչները, որոնք ձգտում էին պահպանել փաստական ինքնուրույնությունը, պատանի Աբասին գահ բարձրացնելով՝ հույս ունեին ամբողջովին իրենց ենթարկել նրան և երկրում իշխել սեփական շահերին համապատասխան։ Բայց նախօրոք պետք է ասել, որ Աբասը ենթարկվելու տրամադրություն չուներ։ Հետագայում կփորձենք ցույց տալ, թե ինչ միջոցներով նա ազատվեց նրանց խնամակալությունից։

Ինչպես տեսանք, Շահ-Աբասի իշխանության առաջին տարիներին երկրի և շահական իշխանության թե՛ ներքին և թե՛ արտաքին դրությունը տխուր պատկեր էր ներկայացնում։ Երկրի ներսում տեղի էին ունենում ֆեոդալական ներքին կռիվներ, ժողովրդական ապստամբություններ և առանձին խանների ընդվզումներ՝ ուղղված կենտրոնական իշխանության դեմ։ Օրինակ՝ 1588 թ. ապստամբեց Լուրիստանի տիրակալ Շահ-Վերդի խանը, 1589 թ. Խորասանում խռովություն բարձրացրեց արքայազն Ռուստամ-միրզան։ Ֆարսում ապստամբության դիմեցին կզլբաշական զուլքուդար, իսկ Քիրմանում՝ աֆշար վաշկատուն ցեղերը։ Այս ապստամբությունները ճնշվեցին։ Սպահանում ընդվզեց տեղական կառավարիչ Յուլի-բեկը, որի հետ շահը համաձայնության եկավ 1590 թ.։ Գիլանում Խան-Ահմեդ խանը բանակցությունների մեջ մտավ Թուրքիայի հետ, իսկ հետո բացահայտորեն անցավ նրա կողմը (1590 թ.)։ Նա ջարդվեց շահական զորքի կողմից և փա-

խավ 1592 թ.։ Սակայն հարկերի բարձրացումը առաջ բերեց Գիլանի ժողովրդական մասսաների ապստամբությունը, որը շահի զորքը մեծ դժվարությամբ հաղիվ կարողացավ ճնշել (1593 թ.)։ Նույն տարին ճնշվեցին նաև Թալիշում ու Լուրիստանում տեղի ունեցած ժողովրդական ապստամբությունները, իսկ 1595 թ.՝ Սեյիդ Մուբարեկի ապստամբությունը Արաբբստանում։ Դրանից հետո Շահ-Աբասը արշավանք ձեռնարկեց Մազանդարանի վրա և գահընկեց արեց տեղական տիրակալների չորս դինաստիաներին (1596 թ.)։

Այս փաստերը վկայում են, որ Աբասի թագավորության առաջին շրջանում պայմանները բավականին աննպաստ էին երկրի կառավարման համար։ Շահ-Աբասը, սակայն, խելոք անձնավորություն էր և ընդունակ պետական գործիչ, թեև իր եղբոր զինվորական տաղանդն ու քաջությունը չուներ։ Նա կարողացավ կարճ ժամանակում բարելավել պետության թե՛ ներքին և թե՛ արտաքին դրությունը։

Պետք է նշել, որ պարսկական, մասամբ և հայկական աղբյուրներն ու բուրժուական մի քանի պատմաբաններ խիստ ջատագովում են Շահ-Աբասին և չափազանցնում նրա անձնական բարեմասնություններն ու կատարած գործերը։

Ստորև կտեսնենք, որ Շահ-Աբասը տիրող դասակարգի և հատկապես իր կողմնակից վերնախավի օգնությամբ բավականին միջոցառումներ իրագործեց իշխանության ամրացման և ամբողջությամբ վերցրած ֆեոդալական դասակարգի տիրապետությունը երկրում ուժեղացնելու համար։ Սակայն նրա անձնավորության չափից ավելի մեծարումը տեղին չէ և տենդենցիոզ է։

Պարսկական աղբյուրների կողմից այդ վերաբերմունքը հասկանալի է և բացատրության կարիք չունի, իսկ հայկական որոշ աղբյուրների նման վերաբերմունքը բացատրվում է նրանով, որ Աբասը, ելնելով իր պետության տնտեսական ու քաղաքական շահերից, հովանավորում էր նաև հայ եկեղեցուն ու հոգևորականությանը, ինչպես և հայ վաճառականներին։ Այս պատճառով էլ ժամանակակից հայ պատմագիրները, որոնք գրեթե բոլորն էլ պատկանել են կղերականու-

թյանը, բարյացակամ վերաբերմունք են ցուցաբերում Շահի նկատմամբ։ Անշուշտ, Շահ-Աբասը Իրանի նշանավոր շահերից էր և շատ բան է արել իր պետության ուժեղացման և տնտեսական ու կուլտուրական զարգացման համար։ Սակայն դրանով հանդերձ, չպետք է գերագնահատել նրա անձնական հատկություններն ու կատարած դերը, մանավանդ աչքաթող անելով այդ գործունեության դասակարգային կողմը։ Նա տիպիկ արևելյան դաժան բռնակալ էր և հայտնի էր իր անագորույն արարքներով։ Պետք է ասել, որ մի քանի հայկական աղբյուրներ էլ ոչ միայն չեն մեծարում Շահ-Աբասին, այլ ընդհակառակը՝ բացասական կարծիք են հայտնում նրա անձնավորության մասին (օրինակ՝ գրիչ Մինաս քահանան՝ «Վարք հարանցի» հիշատակարանում[1], ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրի հեղինակը[2] և ուրիշներ)։ Ա. Դավրիժեցին նույնպես խիստ բացասական կարծիք է հայտնում Աբասի մասին՝ կապված հայերի տարագրության հետ, նրան համարելով աշխարհավեր, «անվթար կամարարն սատանայի» և այլն։ Իսկ ռուսական աղբյուրի վկայությամբ Շահ-Աբասը ամբողջ երկրում ատելություն էր առաջ բերել իր նկատմամբ՝ դաժան սպանությունների և անխիղճ բռնություններ գործադրելու պատճառով[3]։ Եթե շահագործող դասակարգի որոշ խավեր հասկանալի պատճառով նրան մեծարել են, ապա դրանց չի կարելի շփոթել ժողովրդի հետ։

Շահ-Աբասը կարողացավ ժամանակի ընթացքում հաղթահարել երկրում ստեղծված դժվարությունները և իր ձեռքում կենտրոնացնել պետության բոլոր ուժերը։ Ամենից առաջ նա զգալիորեն ամրացրեց երկրի ներքին դրությունը և շահական իշխանությունը։ Նա վերջ տվեց Մուրշիդ-կուլի խանի ճնշող խնամակալությանը՝ նրան սպանելու միջոցով։ Այնուհետև վճռական միջոցներով ճնշեց Գիլանում ու Գորգանում դեռևս Խուդաբանդայի ժամանակ ծագած ապստամբությունը և նվա-

[1] Տե՛ս Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թավրիզի, 1910։

[2] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 222բ։

[3] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. II, էջ 343—344։

ճեց այդ մարզերը։ Դրանից հետո նա զբաղվեց արտաքին թշնամիներով։

Թուրքիայի ներքին քաղաքական դրությունը այս շրջանում դարձյալ վատ էր, եթե չասենք՝ ավելի էր վատացել։ Չէին դադարում ներքին պալատական երկպառակությունները, ֆեոդալական ներքին ընդհարումները և ժողովրդական ապստամբություններն ու զինվորական խռովությունները։

Այս պատերազմների ժամանակ երկրում տեղի ունեցան ենիչերիների մի շարք խռովություններ և ժողովրդական ապստամբություններ, որոնք արտահայտությունն էին տնտեսական այն անկման, որ սկսել էր ապրել Օսմանյան կայսրությունը, և արդյունքն՝ այն անտանելի վիճակի, որի մեջ ապրում էին ժողովրդական մասսաները։ Նրանք երբեք այդքան զրկանքներ ու աղետներ չէին կրել, ինչքան սուլթան Մուրադ III-ի ժամանակ։ Պաշտոնյաների կամայականությունը նրա օրոք հասել էր աննախընթաց չափերի։ Ժողովուրդը ապստամբում էր ընդդեմ վալիների կողոպուտի ու բռնությունների, ռազմական կարիքների և արքունիքի հեքիաթային շռայլության համար գանձվող խիստ ծանր հարկերի։ Բանակը, հատկապես ենիչերիները շարունակ բունտեր էին բարձրացնում։ Օրինակ՝ աղբյուրներից մեկի վկայությամբ XVI դարի 80-ական թվականների վերջերին (գուցե 1590 թ.) Կոստանդնուպոլսում տեղի է ունեցել «ապստամբութիւն մի մեծ և սաստիկ ահարկու»[1]։ Ապստամբությունը այնքան լուրջ է եղել, որ սուլթանը հարկադրյալ զիջումներ է արել ապստամբներին։

Մենք գիտենք նաև, որ այս նույն ժամանակ Փոքր Ասիայում արդեն տեղի էին ունենում ջալալիների ընդհանուր շարժման մի շարք բռնկումներ, որոնք ցայտուն արտահայտություն էին Թուրքիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության ընդհանուր վատացման։ Սակայն ջալալիների շարժումը շատ ուժեղ կերպով բռնկվեց և լայն ծավալ ստացավ միայն XVII դարի սկզբներին, որի մասին կխոսվի համապատասխան տեղում։

[1] ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 228ա։

* * *

XVI դարի 70-ական թվականներին Թուրքիայի հարաբերությունները Մոսկվայի հետ՝ նրա առջև ծառացած նոր արտաքին քաղաքական խնդիրների առնչությամբ, սկսում են փոխվել։ Ինչպես վերևում տեսանք, այդ շրջանում Թուրքիան պատերազմի պատրաստվելով Իրանի դեմ, փորձեց ժամանակավորապես թեկուզ առերես բարելավել իր հարաբերությունները Մոսկվայի պետության հետ և պատերազմի ընթացքում էլ աշխատում էր արտաքուստ չարել այդ հարաբերությունները։ Իրանը նույնպես իր հերթին ամեն կերպ աշխատում էր ոչ միայն լավ հարաբերություններ պահպանել Մոսկվայի հետ, այլև դաշինքի միջոցով նրան (ինչպես և Եվրոպական այլ պետությունների) դուրս բերել Թուրքիայի դեմ։ Թուրքիայի հարաբերության սրվելը Լեհաստանի հետ և 1578 թ. Իրանի դեմ պատերազմ սկսվելը բարդացրին նրա դրությունը։

Մոսկվայի պետությունը Իվան IV-ի ժամանակ իր հերթին թեև որոշ նկատառումներով (տե՛ս վերը) չէր ցանկանում հարաբերությունները վատացնել Թուրքիայի հետ, բայց XVI դարի 80-ական թվականներից, որոշ հանգամանքների պատճառով, ստիպված էր շեղվել այդ քաղաքականությունից։ Դրա պատճառը ըստ էության Լեհաստանի նոր թագավոր Ստեփան Բատորիի՝ Ռուսաստանի նկատմամբ բռնած թշնամական դիրքն էր, որը միաժամանակ կապ ուներ Թուրքիայի քաղաքականության հետ, քանի որ Բատորին սուլթանի դաշնակիցն էր։ Այսպիսով, 80-ական թվականների առաջին կեսին փաստորեն թուրք-լեհական կոալիցիա էր ստեղծվել Ռուսաստանի դեմ։

Լեհաստանը ստիպված էր կատարել իր «հովանավորի» բոլոր պահանջները։ Բացի այդ, սկսած XVI դարի 70-ական թվականներից և 80-ական թվականների վերջերին նա, ելնելով իր արտաքին քաղաքական շահերից, կրկին մերձենալով սուլթանի հետ, համոզում էր նրան հաշտվել շահի հետ[1]։ Այնպես որ սուլթանի կողմից շահի հետ հաշտություն կնքելու գործում այս հանգամանքը ևս որոշ դեր խաղաց։ Մյուս կողմից՝ Իրանի դեմ Թուրքիայի մղած պատերազմը Անդրկովկասում, նրա կատարած զավթումները և մանավանդ թուրքական զորքերի թափանցումը Հյուսիսային Կովկաս հարավից (Դերբենդի գրավումը և այլն), խիստ անհանգստացնում էին Մոսկվային, քանի որ Թուրքիայի այդ հաջողությունները սպառնում էին ռուսական պետության հարավային տիրապետություններին։

Հյուսիսային Կովկասում թուրքերի ստրատեգիական խնդրի հաջող կատարման դեպքում օսմանցիները կարող էին ոչ միայն խանգարել Ռուսաստանի ամեն մի հարաբերությունը Վրաստանի և Իրանի հետ, այլև այդ երկրները պահել հարձակման մշտական սպառնալիքի տակ։ Դրա հետ միասին ոչ միայն Սեֆեյան տերության, այլև Ռուսաստանի համար միանգամայն վնասակար էր այն հանգամանքը, որ Դաղստանը և Կասպից ծովի ափերը գտնվեին օսմանցիների ձեռքում, իսկ կասպյան ճանապարհը՝ դրա հետևանքով անցներ նրանց հսկողության տակ։ Բացի այդ, Անդրկովկասի երկրների զավթումը օսմանցիների կողմից Մոսկվայի համար վնասակար էր նաև տնտեսական տեսակետից, քանի որ դա կհասցներ այն բանին, որ Իրանից Արևմտյան Եվրոպա Վոլգա-կասպիական ճանապարհով արտահանվող ապրանքը, հատկապես մետաքսը, այժմ կսկսեին Եվրոպա արտահանել միջերկրածովյան նավահանգիստների միջոցով՝ շրջանցելով Մոսկվան։ Դա մեծ վնաս կհասցներ Ռուսաստանի արտաքին առևտրին։

Բայց և այնպես նշված պլանների իրագործման ուղղությամբ սուլթանական կառավարությունը նախապատրաստական քայլեր էր կատարում թե՛ ռազմական և թե՛ դիվանագիտական ճանապարհով՝ գաղտնի հարաբերությունների մեջ մտնելով Ռուսաստանին հարևան մուսուլմանական երկրների վերնախավերի հետ և կրկին արշավանքի պատրաստվելով դեպի Աստրախան։ Ահա թե ինչու Իվան IV-ը մի կողմից՝ դիմեց Ռուդոլֆ կայսրին (1580 թ.)՝ Թուրքիայի և Լեհաստանի դեմ միասին հանդես գալու համար, մյուս կողմից՝ դարձյալ այդ

[1] Տե՛ս „Памятники дипломатических сношений России с державами иностранными", СПб, 1852, т. 1, էջ 136։

նպատակով միջոցներ ձեռնարկեց մերձենալու Իրանի շահի հետ, ելնելով երկու պետությունների ընդհանուր առևտրական և արտաքին քաղաքական շահերից։ Այս հողի վրա Ռուսաստանի և Իրանի միջև XVI դարի 70—80-ական թվականներին տեղի ունեցող բանակցությունների մերձավոր նպատակն էր՝ դրավել Թերեքի վրայով գնացող ճանապարհը՝ այն օգտագործելու համար դեպի Իրան թուրքական զորքերի շարժումը խանգարելու նպատակով։ Հենց այդ խնդրով էլ ցարը (արդեն Ֆեոդոր Իվանովիչը) դիմում էր շահին հետևյալ խոսքերով. «...և նոգայների հետ միասին հրազենով զինված ուժով պետք է կռվի դալ թուրքերի և Ղրիմի թաթարների դեմ Թերեքի վրա, որպեսզի ճանապարհը կտրեք և թուրքական զորքին թույլ չտաք Թերեքի վրայով քո կալբաշական հողն անցնելու...»[1]։ Այնուհետև նա առաջարկում էր եղբայրական սիրով միանալ և միացյալ ուժով կանգնել իրենց թշնամիների դեմ։ Իսկ որոշ ժամանակ անց Ֆեոդոր Իվանովիչը դեսպան Գ. Վասիլչիկովի միջոցով ուղարկած պաշտոնագրում հայտնում էր շահին, որ ինքը լսել է այն արշավանքի մասին, որ Իրանի վրա ձեռնարկել են Թուրքիան և Ղրիմի խանը, որոնք փորձում են խանգարել Ռուսաստանի և Իրանի միջև եղած բարեկամությունը, և որ նա կարգադրել է, ի նշան շահի նկատմամբ ունեցած սիրո և բարեկամության, Թերեքի վրա կրկին քաղաք կառուցել և Աստրախանից մեծ զորք բերել այդտեղ։ Եվ հենց որ թուրքական զորքը կարշավի Իրանի վրա, ցարի կարգադրությամբ նրա զորքը կհարձակվի նրանց վրա, որպեսզի թույլ չտա անցնելու Իրան[2]։ Բացի դրանից, թուրքերի և մյուսների հնարավոր հարձակումը Աստրախանի վրա խանգարելու համար Մոսկվան ռուսական ջոկատներ է ուղարկում Դոնի շրջանը։ Բանակցությունների հետագա ընթացքից իմացվում է, որ շահը դրական պատասխան է տալիս ցարի առաջարկին. XVI դարի 80—90-ական թվականներին Ռուսաստանի և Իրանի միջև դիվանագիտական լավ հարաբերություններ

[1] „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, стр. 5.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 54։

են հաստատվում. ռուս-իրանական առևտուրը նկատելի չափով աշխուժանում է։

Թուրքերը, ըստ երևույթին, չուզենալով ընդհարվել Ռուսաստանի հետ, Թերեքի վրայով չհարձակվեցին Իրանի վրա, այլ փորձեցին անցնել Կախեթիայով, որտեղ, ինչպես տեսանք, հանդիպեցին Ալեքսանդրի վճռական մերժումին։

XVI դարի 80-ական թվականների վերջերին Ռուսաստանի և Իրանի հարաբերություններն ավելի բարելավվեցին և Թուրքիայի դեմ միատեղ պայքարի շուրջը տեղի ունեցող բանակցությունները ավելի կոնկրետ բնույթ ստացան։ Այս առնչությամբ պետք է ընդհանրապես նկատել, որ 80-ական թվականների կեսերից Ռուսաստանի և Իրանի միջև սկսվում են կանոնավոր դիվանագիտական հարաբերություններ։ Ռուս-իրանական դաշինքի ուղղությամբ կատարվող քայլերի որոշ հաջողությանը նպաստեց նաև հակաթուրքական կոալիցիայի ստեղծումը, որի շնորհիվ Մոսկվայի պետությունը հույս ուներ լուծելու, բացի այլ պրոբլեմներից, նաև կասպիական պրոբլեմը։ Այս պլանների մեջ մտնում էր նաև Կովկասի հարցը։ Սակայն մի շարք պատճառներով ռուսական պլաններին չէր վիճակված առայժմ իրականանալու։

Երկու միապետներն էլ փոխադարձորեն կոնկրետ խոստումներ էին տալիս միմյանց օգնելու և թուրքերի դեմ Հյուսիսային Կովկասում դուրս գալու վերաբերյալ[1]։ Իսկ Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության նախօրյակին Շահ-Աբասը ցարին արած այդ առաջարկի հետ միասին համաձայնում էր նրա առաջարկություններին և Թուրքիայի դեմ նրա ցույց տված օգնությանն իրրև պայման խոստանում Ռուսաստանին տալ թուրքերի կողմից օկուպացված Դերբենդ ու Բաքու քաղաքները՝ իրենց առափնյա տերիտորիայով, որոնք կգրավեին ռուսական զորքերը[2]։ Այս խոստումը շահը հաստատում է 1590 թ. ցարին գրած պաշտոնագրում[3]։ Դեռ ավելին. դրանից

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 61։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 88։ Նման առաջարկ և խոստում դրանից առաջ տվել էր նաև Թուդարանդա շահը նույն պայմանով (տե՛ս С. Белокуров, Сношение России с Кавказом, 1888, էջ 563—564)։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 129։

մի փոքր անց՝ Շահ-Աբասը ռուսական դեսպանի հետ ունեցած խոսակցության ժամանակ դարձյալ խոստանում է այդ քաղաքները հանձնել Ռուսաստանին, եթե նույնիսկ դրանք գրավեն ոչ թե ռուսական, այլ իր զորքերը[1]։

Ռուսական դեսպանը հայտնում է, որ ցարը հրամայել է թույլ չտալ թուրքական և Ղրիմի զորքերին անցնել Թերեքը և այդտեղից հարձակվել Իրանի վրա, որի համար հրամայել է նաև Աստրախանի և Թերեքի վոյեվոդներին գնալ թուրքերի վրա և այլն[2]։ Իհարկե, Հյուսիսային Կովկասում Մոսկվայի պետության միջոցառումների գլխավոր նպատակը ոչ թե Իրանին օգնելն էր, այլ իր սեփական շահերի պաշտպանությունը։

Սակայն Շահ-Աբասի վերոհիշյալ առաջարկները պրակտիկ հետևանքներ չունեցան։ Ինչպես Մոսկվայի պետությունը, այնպես էլ Իրանը, չնայած Թուրքիայի հանդեպ ունեցած նրանց թշնամական դիրքին, իրականում յուրաքանչյուրն իր սեփական քաղաքականությունն էր վարում՝ ըստ իր շահերի և ըստ պարագաների։

Թուրքական սուլթանը իր հերթին աշխատում էր առերես բարյացակամ վերաբերմունք ցույց տալ Մոսկվայի պետությանը, չնայած նրա հանդեպ ունեցած իր գաղտնի թշնամանքին և ագրեսիվ պլաններին. նա առաջարկում էր ցարին բարեկամություն ու դաշինք՝ Իրանի հետ նրա ունեցած հարաբերությունը խզելու պայմանով։

Ֆեոդոր Իվանովիչը քաղաքավարի կերպով մերժեց սուլթանի այդ առաջարկը, շարունակելով բարեկամական հարաբերությունը Իրանի նկատմամբ, և Իրան գնացող ռուսական դեսպաններին ցուցմունք տրվեց շահին հայտնել այս մասին։

Բացի Ռուսաստանի նկատմամբ գործադրած ապարդյուն փորձերից (խանգարելու դաշինքը Իրանի հետ), սուլթանը նույն ոգով ներգործում է նաև Բուխարայի խանի վրա։

Որոշ ժամանակ անց սուլթանը, տեղեկանալով իր դեմ պատրաստվող դաշինքի մասին և ցանկանալով ջլատել այն,

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 96։

[2] Նույն տեղը, էջ 97։

կրկին դիմում է ցարին՝ առաջարկելով միատեղ գործել Իրանի դեմ, խոստանալով նրան տալ շահից գրաված քաղաքները. բայց ցարը այս անգամ էլ մերժում է այդ առաջարկությունը[1]։ Դրա հետ միասին Թուրքիան Իրանի հետ շարունակում էր պատերազմը դադարեցնելու վերաբերյալ բանակցությունները, որոնք, ինչպես գիտենք, սկսվել էին դեռևս Խուդաբանդայի օրոք։

Կրկին անդրադառնալով XVI դարի 70—80-ական թվականներին Թուրքիայի և Եվրոպական պետությունների հարաբերություններին, պետք է ասել, որ ինչպես առաջ, այնպես էլ այժմ թուրքական հարցը խիստ զբաղեցնում էր այդ պետություններին ոչ միայն ռազմա-քաղաքական, այլև տնտեսական տեսակետից։ Ճիշտ է, նոր ծովային ճանապարհների հայտնագործման հետևանքով Լևանտի առևտուրը, որտեղ Թուրքիան կարևոր տեղ էր գրավում, մեծ չափով վնասվեց, բայց և այնպես տնտեսական առումով Օսմանյան կայսրությունը դեռևս զգալի նշանակություն ուներ Արևմտյան Եվրոպայի համար։

Անգլիային հաջողվեց ձեռք բերել ազատ առևտրական նավագնացության իրավունք և իր վաճառականների համար Թուրքիայի նավահանգիստներն ու առևտրական կետերը այցելելու ազատություն։ Դրա հետ միասին անգլիական հպատակները ևս ստացան այն արտոնությունները, որոնք մինչ այդ շնորհվել էին ֆրանսիական, վենետիկյան և Թուրքիային բարեկամ մի քանի այլ երկրների հպատակներին[2]։ 1582 թ. Ֆրանսիային հաջողվեց վերանորոգել 1536 թ. պայմանագիրը՝ դարձյալ կապիտուլյացիոն ակտով։

Այսպիսով, Թուրքիան մի կողմից՝ գրեթե անընդհատ պատերազմներ մղելով Արևմուտքում ու Արևելքում, մյուս կողմից՝ բարեկամական ու առևտրական պայմանագրեր կնքելով մի շարք երկրների հետ, մշտապես աչքի ընկնող դեր էր խաղում XVI դարի միջազգային հարաբերությունների սիստեմում։

[1] Տե՛ս Белокуров, Сношения России с Кавказом, էջ 42։

[2] Տե՛ս W. Jorga, Geschichte des Osmanischen Reiches, Jota, 1910, B. III, էջ 253։

Թուրք-իրանական այս պատերազմի ժամանակ սուլթանը Եվրոպայի կողմից իր թիկունքը ապահովելու համար որոշեց ըստ հնարավորին խաղաղ հարաբերություններ պահպանել արևմտաևրոպական պետությունների հետ։

Ըստ Ցինկայզենի, XVI դարի վերջին քառորդից Եվրոպայում տարածվում են Թուրքիան հեշտությամբ նվաճելու նախագծեր՝ սուլթանի՝ քրիստոնեահպատակների ընդհանուր ապստամբության և Ռուսաստանի աջակցության դեպքում։ Նախագծերում այս ուղղությամբ արվում են կոնկրետ առաջարկներ[1]։ Սակայն այս նախագծերը ևս մնում են լոկ նախագծեր։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Թուրք-իրանական այս պատերազմի ժամանակ ևս եվրոպական պետությունների հակաթուրքական կոալիցիան Ռուսաստանի մասնակցությամբ իրականում կոնկրետ և գործնական արդյունք չունեցավ հիշյալ պատճառներով և մնաց սոսկ թղթային համաձայնություն ու ցանկություն՝ մի շարք պետությունների միջև, որոնք ոչ մի կոնկրետ քայլ չկատարեցին Թուրքիայի դեմ, եթե չհաշվենք հաճախակի տեղի ունեցող սահմանային ընդհարումները, որոնց մասին խոսվեց վերևում։ Առավել ևս անգործնական ու ֆիկտիվ դուրս եկավ Իրանի և այդ պետությունների ծրագրվող դաշինքը Թուրքիայի դեմ։ Այնպես որ այս պատերազմում վերջինս իր ռազմական ուժերի գերազանց մասը զբաղեցրել էր արևելքում՝ Իրանի դեմ, որը համեմատաբար թույլ բանակով ստիպված էր կռվել ոչ միայն օսմանյան գերազանց ուժերի, այլև միաժամանակ ուզբեկների խանի դեմ։

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Ժամանակակից հայ գրիչները շափազանց խոր կսկիծով են նկարագրում հայ ժողովրդի կրած սոսկալի տառապանքները պատերազմների ընթացքում դաժան նվաճողների գազանային արարքներից։

Հայաստանը ենթարկվում էր անասելի ավերածության,

[1] Տե՛ս J. Zinkeisen, Geschichte des Osmanischen Reiches in Europa, B. III, էջ 397։

նրա բնակիչները տասնյակ հազարներով կոտորվում էին և գերի տարվում իրար փոխարինող նվաճողների կողմից։ Մի աղբյուրի համաձայն՝ XVI դարի 80-ական թվականների սկզբին, երբ թուրքերը զավթեցին մի շարք մարզեր ու քաղաքներ (այդ թվում Երևանը, Նախիջևանն ու Թավրիզը), այդտեղից 60 000 հայ, ադրբեջանցի և պարսիկ գերիներ տարան Հունաստանի կողմերը։ Մի այլ ժամանակակից գրչի հաղորդած տեղեկությամբ՝ թուրքերը արշավանքի ու նվաճումների ժամանակ (երևի 1578—1579 թթ.) գերեվարել են 72 000 հայի։ Մեկ ուրիշ արշավանքի ժամանակ (թիվը չի նշված) միայն Արարատյան գավառից նրանք գերեվարեցին 60 000 բնակչի[1]։ Ժողովրդի կրած այս աղետների մասին շատերն են գրել։ Կարևոր է նաև նշել, որ թուրքական ու պարսկական աղբյուրները նույնպես հաստատում են հայկական աղբյուրների հաղորդածները, հաճախ իրենք ևս նկարագրելով զավթիչների կատարած դաժան արարքներն ու հայ բնակչության կրած տառապանքները։

Ահա թե ինչ է գրում Առաքել Դավրիժեցին. «Եւ այս թագաւորս սուլթան Մուրատս առաքեաց բազում զօրս ի վերայ Պարսից աշխարհին և էառ զԹաւրէզ և զԵրևան, զԳանջայ և զԱրշար և զՇամախի, մինչ ի դուռն Ալանաց, զոր եդեալ է Աղեքսանդր Մակեդոնացին, Լ. աւուր ճանապարհ զլայնութիւնն և զերկայնութիւն տիրեաց աշխարհացն, ԺԵ ամ հեծելակոխ եղեալ, ի սովու և ի սրոյ բազումք մեռան և բազում երկիր աւերեցան, յետոյ սակաւ մի խաղաղութիւն եղև»[2]։

Հով. Ծարեցին պատմում է. «Արդ զնեղութիւն և զդառնութիւն վշտաշատ ժամանակիս ո՞վ կարէ ընդ գրով արկանել, ո՞վ եղբայրք, բայց փոքր ի շատէ ողբալով ասասցուք, քանզի յաղագս ծովացեալ մեղաց իմոց յազգն մահմետականաց, որ ըմբռնեալ էին զգաւառս Հայոց, աւերելով և գերելով զամենայն շէնս և զանշէնս, և տիրեալ բնակէին... այլ և ոչ գոյր փախըստեան ճարակ և թաքստեան տեղիք, այլ ամենայն մարդ ի տարակուսանս կայր, և երանի տային մեռելոցն և ոչ այս

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 9223, էջ 1ա։
[2] Տե՛ս նույն տեղը, ձեռագիր № 2776, էջ 266բ։

կենդանեացս... այլ դեռ ևս կամք գլխակորեալք ի ներքոյ շար ծառայութեան նոցա և ի հայրենի գաւառաց արտաքսեալ, ցիր և ցան եղեալ ընդ ոլորտս տիեզերաց և իշխանազինք և ազատածինք, ծառայք լեալ ազգին մահմետականի»[1]։

Սիմեոն Տիգրանակերտցին խոսելով 1578—1589 թթ. Թուրքական արշավանքների ու նվաճումների մասին, նշում է. «...և աւերեցին զբազում երկիր, և զամենեսեանն ի սուր սուրերի մաշեցին. և ի քրիստոնէից բազում և անթիւ գերի վարեցին. զոմանս սրոյ ճարակ տուին, և զբազումս գերեցին, զայր և զկին, զմեծ և զփոքր, զաղջկունս և զանմեղ տղայս ի քրիստոնէից. և այլ բազում ոճիրս գործեցին, զոր ոչ կարէ ոք ընդ գրով արկանել կամ լեզուով ճառել զդառնութիւն և զնեղութիւն ժամանակիս։ Եւ ոչ թէ մի ամ գործեցաւ ոճիրս այս, Գ—Դ տարի այսպէս վրդովումն եղև աշխարհիս»[2]։

Այդ նույն դեպքերի ժամանակ Հայաստանի գլխին եկած աղետների մասին ավելի մանրամասն հաղորդում է նաև ժամանակակից գրիչ Առաքել Սարկավագը 1586 թ. Հովհաննու ավետարանի վերջում. «Որ վասն մեր ծովացեալ մեղացս համար աստուած դառնացաւ։ Որ. Ը. ամ բարկութիւն եղաւ աշխարհիս. Դ. պատուհաս եկաւ ի վերայ մեր սուրն, սովն, գմահն մահտարաժամն, և միւս ցաւն՝ գայլ. որ մեռեալն ի գերեզման՝ հանէր և ուտէր»։ Պատմելով Թուրքական զորքի արշավանքի ու նվաճումների մասին, նույն հեղինակը շարունակում է. «...յետոյ տարին՝ գերեցին Արևանայ (Երևան) յերկիրն ու Կ. Ռ. այր ու կին և այլ թիւն ոչ գիտենք մեծին և փոքու մեռածին և կորածին, բայց միայն Հայրն գիտէ.», և ապա. «Ով եղբայրք, Ը. ամս. Ե. տարպայ յարևմտից զաւրքն գլխաւորաւք եկաւ յարևելս ի Շահստան, շինեցին Արևանա բերդն, և ցրուեցաւ ազգս հայոց, և նուազեաց ամենայն բարի։ ...հէնց ջարդ եղաւ Գ. աւուր, որ զարիւն լաշն կու տանէր»[3]։

[1] ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 266բ։

[2] Հ. Աճառյան և Հ. Մանանդյան, Հայոց նոր վկաները Վաղարշապատ, 1903, էջ 413—414։

[3] Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարյան ի Վենետիկ, էջ 667—668։ Այս պատերազմի ժամանակ Թուրքերի գավթած հայկական մարզերում կատարած քստմնելի

Այս արշավանքների ու ռազմական գործողությունների և դրանց հետ կապված ավերածությունների ու կողոպուտների հետևանքով ամեն անգամ նշված մարզերում ու բնակավայրերում սկսում էին մոլեգնել սովն ու համաճարակը, որոնք անողոք կերպով հնձում էին մնացած բնակչությանը։ Այս մասին նույնպես աղբյուրները, հատկապես հայկական, լի են սրտաճմլիկ հաղորդումներով։ Այսպես, օրինակ՝ Հով. Մարեցին բավականին մանրամասն պատմում է. «Եղուկ թշուառականիս և պատմութեանս, եղբայրք։ Քանզի բազումք ի պիղծ մսէ, զազիր շանց և կատուաց կամաւ յաղեալ եղեն և մարմնոց մարդկան ևս... Եւ այլ ամենայն տեղիք այսպիսի եղև վիշտ սովոյն ի Ռ և ԻԸ և ԻԹ (1579, 1580) թուականս... Եւ զթիւ մահուամբ սովով և սրով մեռելոցն և գերելոցն բնաւ ոչ կարեմ ընդ թիւ բերել և գրով արկանել...»[1] և այլն։

Միաժամանակ նույն հեղինակը վկայում է 1579 թ. տարածված ժանտախտի մասին (հատկապես Գանձակի երկրում և Ղարաբաղում), որը նույնպես բնակչությունից մեծ քանակությամբ զոհեր տարավ։

Այս բոլորի հետ միասին դրությունն ավելի էր ծանրանում այն պատճառով, որ սուլթանական կառավարությունը, գավթելով նշված երկրները, իսկույն սկսեց կողոպտել դրանք։ XVI դարի վերջից Թուրքիան ապրելով տնտեսական անկում, փորձում էր ելք որոնել հարկերի խիստ բարձրացման ճանապարհով։ Այդ պատճառով էլ հարկապահանջությունն անտանելի չափերի էր հասել։ Հարկային այս քաղաքականությունից ամենից առաջ տանջվում էին գյուղացիները՝ անկախ ազգային տարբերությունից։ Ա. Դավրիժեցու վկայությամբ՝ հարկերի ծանրության պատճառով Դիզակի և Ղարաբաղի՝ հայերով բնակեցված շրջանների բնակչության $^3/_4$ մասը դեսուդեն էր փախել[2]։

Շերեֆ-խան Բիթլիսին հաղորդում է, որ Մարաղայի շըր-

արարքների մասին է պատմում նաև մի այլ ժամանակակից անհայտ գրիչ. տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 251։

[1] ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 267բ—268ա։

[2] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ.։

չանը հսկայական հարկման էր ենթարկվել։ Տեղի ռայաթները՝ գյուղացիները շատ չանցած փախչում են իրենց բնակավայրերից. շրջանը լիովին քայքայվում է[1]։

Բացի վերոհիշյալ հեղինակներից, մի շարք այլ գրիչներ ևս հաղորդում են նման դեպքերի, աղետների ու հարկային դաժան ծանրության մասին։ Սակայն վերևում բերված փաստերն էլ բավական են պատկերացում կազմելու հայ ժողովրդի ողբալի վիճակի մասին՝ այդ պատերազմների ընթացքում։

Այս պայմաններում հայերը իհարկե լուռ ու հնազանդ չէին տանում օտարերկրյա զավթիչների և բռնադատիչների պատճառած աղետներն ու տանջանքները։ Նրանք ազատագրման փորձեր էին կատարում դժնդակ դրությունից դուրս գալու համար։ Այս առնչությամբ առհասարակ պետք է նշել, որ սկսած XVI դարից Անդրկովկասի երկրները, այդ թվում Հայաստանը, գտնվելով երկու հակադիր ուժերի միջև և դառնալով նրանց զավթողական պատերազմների ասպարեզ, ազատագրական համառ պայքար են մղում երկու նվաճողների դեմ։ Բայց որովհետև ստեղծված պայմաններում (հատկապես հայերի համար) հնարավոր չէր սեփական ուժերով, մանավանդ կազմակերպված ու զինված միջոցներով իրագործել իրենց պլաններն, ուստի նրանք դիմում են օտար՝ եվրոպական քրիստոնյա պետությունների օգնությանը։ Այս գործի նախաձեռնողներն ու ղեկավարները հանդիսացան հիմնականում հոգևորականները՝ կաթողիկոսների գլխավորությամբ։ Այս նպատակով XVI դարում տեղի ունեցան երկու գաղտնի ժողովներ, որոնցում, բացի հոգևորականներից, մասնակցում էին նաև աշխարհականներ։ Առաջին ժողովը տեղի ունեցավ դեռևս նախորդ պատերազմի ժամանակ, 1547 թ. էջմիածնի վանքում, որին նախագահում էր Ստեփանոս կաթողիկոս Սալմաստեցին։ Այս ժողովի մասին շատ քիչ տեղեկություն կա աղբյուրներում ու գրականության մեջ։ Ժողովը որոշում է կաթողիկոսին ուղարկել Եվրոպա՝ հայերի ազատագրման համար խնդրելու

[1] Տե՛ս „Шереф-намэ", т. I, էջ 254 (И. П. Петрушевский, Очерки по истории феод. отношений в Азербайджане и Армении XVI нач. XIX вв., стр. 325—326).

քրիստոնյա պետությունների օգնությունը։ Նախատեսվում է, ամենից առաջ, այս խնդրով դիմել Հռոմի պապին, պատրաստակամություն հայտնելով՝ հարկ եղած դեպքում ընդունելու հայկական և հռոմեական եկեղեցիների միության առաջարկը։ Սակայն Հռոմին դիմելու վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ մեզ հայտնի չէ (գուցե չի մնացել)։ Մեզ հասել է միայն Վենետիկի կառավարությանը 1547 թ. ուղղված (Ստեփանոս Սալմաստեցու կողմից ներկայացված) մի աղերսագրի որոշ հատված։ Սալմաստեցու այս բանակցությունները, որով նա օգնություն էր խնդրում պապից[1], ոչ մի արդյունք չտվեցին։ Հռոմի հետ համաձայնության չգալու պատճառը, իհարկե, միայն կրոնական հարցում եղած տարաձայնությունը[2] չէր։ Միանգամայն միամտություն էր Հռոմի պապից սպասել աջակցություն որևէ ժողովրդի ազգային-ազատագրության գործում, մանավանդ որ այն ժամանակ՝ ռեֆորմացիոն շարժման պայմաններում նրա դրությունը շատ ծանր էր։

Ստեփանոս կաթողիկոսի առաքելությունը դեպի Գերմանիա, Լեհաստան և Ռուսաստան նույնպես ոչ մի հաջողություն չունեցավ։

Երկրորդ գաղտնի ժողովը, էջմիածնի ժողովի նմանությամբ, տեղի ունեցավ 1562 թ. Սեբաստիայում, Միքայել կաթողիկոսի նախաձեռնությամբ։ Այստեղ նույնպես որոշվեց կրկին պատգամավորություն ուղարկել Եվրոպա՝ նույն նպատակով։ Պատգամավորությունը Աբգար Դպրի գլխավորությամբ դարձյալ մեկնում է Վենետիկ ու Հռոմ՝ գոժի և պապի հետ բանակցելու, իր հետ տանելով պապին ուղղված դիմումը։ Պետք է նշել, որ առաջին պատգամավորության արդյունքը (ավելի ճիշտ՝ անհաջողությունը) ոչ ոքի հայտնի չէր և երկրորդ ժողովի ու պատգամավորության նախաձեռնողները շարունակում էին հույս դնել եվրոպական պետությունների, հատկապես պապի օգնության վրա։ Դիմումի մեջ իբրև պայման առաջարկվող դաշինքի և սպասվող օգնության՝ դարձյալ համաձայնություն էր տրվում երկու եկեղեցիների միության,

[1] Տե՛ս Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, 1898, էջ 325—330։
[2] Տե՛ս Ի. Զամչյան, Պատմութիւն Հայոց, հ. 3, էջ 518։

ավելի ճիշտ՝ հայկական եկեղեցու՝ Հռոմին ենթարկվելու վերաբերյալ[1]։ Չնայած պապի (Պիոս IV) սիրալիր ընդունելությանն ու խոստումներին, այս դեսպանությունը ևս ոչ մի արդյունք չունեցավ։ Հռոմին դիմելու երրորդ ապարդյուն փորձը կատարվեց 1585 թ., այս անգամ՝ Սսի կաթողիկոս Ազարիա Ջուղայեցու, Կիլիկիայի մի շարք բարձր հոգևորականների և իշխանների կողմից։ Սրանք նույնպես բանակցություններ սկսեցին պապի հետ նույն նպատակով, բայց իզուր։ Այս անգամ ևս ապացուցվեց, որ Հռոմը ոչ մի տրամադրություն և հնարավորություն չուներ օգնելու հայերին, այլ միայն ցանկանում էր օգտագործել այդ հանգամանքը իր կրոնական իշխանությունը նաև հայկական եկեղեցու վրա տարածելու համար։

Հայերը միամտաբար, քաղաքական դժբախտ հանգամանքների պատճառով օգնության էին դիմում նույն պապությանը, որը թշնամի էր ամեն մի քաղաքական ու կրոնական ազատության։

Այսպիսով, հայ գործիչների ազատագրման առաջին նման փորձերը ոչ մի արդյունք չտվեցին և չէին էլ կարող տալ։

---

[1] Տե՛ս Մ. Ջամշյան, նշվ. աշխ., էջ 320, Մ. Օրմանյանը իրավացիորեն գտնում է, որ Էջմիածնի կողմից տրված այդպիսի համաձայնությունը միայն առերես էր, և իրականում նամակի հեղինակները նման մտադրություն չունեին («Ազգապատում», պր. II, էջ 2252)։

ԳԼՈՒԽ V

ԹՈՒՐՔ–ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVI ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XVII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ինչպես վերևում ասվեց, սկսած XVI դարի երկրորդ կեսից, նկատվում են Թուրքիայի տնտեսական և ապա սոցիալ-քաղաքական անկման նշաններ։ Իսկ դարի վերջից և մանավանդ XVII դարի սկզբին Թուրքիան մտնում է ներքին ճգնաժամի և ռազմական անհաջողությունների շրջանը[1]։

Սուլթան Սուլեյման I-ի հաջորդների ժամանակ քայքայման տարրերն արդեն պարզ կերպով դրսևորվեցին, և Օսմանյան վաղանցիկ ռազմական պետությունը սկսեց անկում ապրել։ Ճիշտ է նկատում հայ պատմաբան Լեոն, թե «Զինվորական բռնապետությունները իրենց մեջ կրում են անկման սկզբունքները»[2]։

Այս հանգամանքը հաստատում է նաև թուրքական «Tarih-ը, որը գրում է, թե «Սուլեյման Օրենսդրի ժամանակ իր գագաթնակետին հասած օսմանյան սուլթանության մեջ նվաճումների, հարստության և բարօրության հետ միասին սկսել

---

[1] Թուրքիայի անկման և դրա պատճառների մասին ավելի մանրամասն շարադրված է մեր Համալսարանի «Գիտական աշխատություններ»-ի հ. 47-ի 2-րդ գրքում (Պատմական գիտությունների սերիա), 1955։

[2] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 35։

էին նկատվել նաև առաջացող անկման և կործանման (վախճանի) նշաններ»[1]։

Մի այլ տեղ թուրք պատմաբանները, խոսելով մի փոքր ավելի ուշ շրջանի մասին, ընդունում են, որ պետության մեջ և օսմանցիների կյանքում արդեն երևան են գալիս ճահճացման և անկման երևույթները[2]։

Օսմանյան կայսրության անկման պատճառների մասին հարուստ տեղեկություններ են հաղորդում թուրքական մի շարք ժամանակակից հեղինակներ, որոնցից առանձնապես պետք է հիշատակել վերևում նշված Խոջի-բեկ Քյոմուրջիին[3] ու Սելյանիկիին։

Խոջի-բեկը, սուլթան Մուրադ IV-ին 1633 թ. ներկայացրած զեկուցման («Ռիսալե»-ի) մեջ ոչ միայն նկարագրում է Թուրքական կայսրության ընդհանուր անկման պատկերը, այլև կոնկրետ կերպով փորձում ցույց տալ այն պատճառները, որոնք, նրա կարծիքով, երկիրը հասցրել էին քայքայման։ Միաժամանակ նա առաջարկում է մի շարք միջոցներ, որոնք անհրաժեշտ էին կորցրած հզորությունը վերականգնելու համար։ Խոջի-բեկի հիմնական միտքը, որը կարմիր թելի պես անցնում է «Ռիսալե»-ի միջով, հանգում է նրան, որ թուրքական պետության թուլացումն ու քայքայումը սկսվեցին 1582 թվականից հետո, երբ սուլթաններն ու նրանց վեզիրները դադարեցին ճանաչել ռազմա-ֆեոդալական տարրերին։

Այդ նոր քաղաքականության էությունը կայանում էր նրանում, որ սկսած 1584 թ., ռազմա-ֆեոդալական լեննիկներից խլում էին իբրև ռազմական լեն շնորհված կալվածքները՝ գանձարանի օգտին և դրանք բաժանում ռազմական գործի հետ կապ չունեցող զանազան մարդկանց։

Խոջի-բեկը «Ռիսալե»-ի մի այլ տեղում նշում է. «Մեծ և փոքր կալվածքների տերերից, որոնք կազմում են իսկական զինվորները՝ հանուն հավատքի և պետության, այժմ խլված են ապրուստի միջոցները և նրանցից ոչ մի հետք և ոչ մի կալվածք չի մնացել»[1]։ Սակայն, ինչպես Խոջի-բեկն է հաղորդում, շուտով այդ «խորթ» տարրերը դառնալով կալվածքների տերեր, տեղ են գրավում և սկսում են կարևոր դեր խաղալ պետական կյանքում։ Իսկ այժմ այդ դերիլիկների վերաբերյալ մայրաքաղաքում տալիս են բերաթներ։ Մոտավորապես նույն միտքն է արտահայտում Սելյանիկին[2]։ Մյուս կողմից՝ սուլթանական կալվածքների մեծ մասն անցել էր և շարունակում էր անցնել զանազան մարդկանց (այդ թվում նաև վեզիրների) ձեռքը։

Այս պայմաններում մեծ չափով աճել էր արքունական կլիկի նշանակությունը։ Պետական գործերը սկսել էին վճռվել ոչ այնքան կառավարական ապարատի, որքան սուլթանական շրջապատի (պալատական ֆավորիտների) կողմից։ Սուլթաններն անվանապես մնալով պետության ղեկավարներ, պալատական սպասավորներին և հարեմին էին վստահել երկրի կառավարման գործը։

Այս երևույթը հատկապես ցայտուն կերպով արտահայտվեց Մուրադ III և Մուհամեդ III սուլթանների օրոք։ Միաժամանակ երկրում ուժեղանում էր ֆեոդալական ապակենտրոնացումը, հեղինակազրկվում էր կենտրոնական իշխանությունը։

Նախկին սփահիների (լեննիկների) փոխարեն երևան եկան նոր ֆեոդալական կալվածատերերը։ Իհարկե, Խոջի-բեկը իրավացի չէ, երբ կարծում է, թե կալվածքների տնօրինումը բեյլերբեյների և սանջակբեյների կողմից լավ էր և ամեն ինչ կարգին, որ իբր թե այն ժամանակ անարդարություններ չէին լինում, իսկ եթե լինում էին, իբր թե կենտրոնական կառավարության կողմից կասեցվում էին։ Այս երևույթի հետ անմիջապես կապ ունի նաև բանակի կազմի վատացումը, չնայած քանակական աճին։ Այս մասին բացատրություն է տալիս Սելյանիկին[3]։

[1] „Tarih", հ. 3, էջ 61 ծանոթ.։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 114։
[3] «Ռիսալե», տե՛ս Վ. Դ. Սմիրնով. Նշվ. աշխ., 1873։

[1] Վ. Դ. Սմիրնով, Նշվ. աշխ., էջ 120—121։
[2] Տե՛ս Тарихи Селяники, Рукопись ин-та востоковедения, Л., էջ 241а։
[3] Տե՛ս նույն տեղը։

«Այսպիսով, սովորություններն ու կանոնները խախտված են,— եզրակացնում է Խոջի-բեկը, օրենքը և որոշումները (постановления) չեղյալ են դարձած»[1]։ Համարյա նույն բանը հաղորդում է նաև Սելյանիկին իր նշված աշխատության մեջ։

Խոջի-բեկը խոսում է աստիճանավորների, ինչպես և պալատականների այլասերվածության, կաշառակերության և պետական ապարատը ամեն տեսակի տարրերով խճողված լինելու մասին[2]։

Մոտավորապես նույնպիսի երևույթներ տեղի են ունենում նաև բանակում։ Նույն և մի շարք այլ աղբյուրների հաղորդած տեղեկություններով՝ օսմանյան բանակն այլասերվում և թուլանում է՝ ամենից առաջ լենային հողատիրության մեջ կատարված վերոհիշյալ փոփոխությունների և զորքի կազմում ամեն տեսակի օտար տարրեր թափանցելու հետևանքով։

Խոսելով այն մասին, որ առաջներում լենային հողատերերը հանդիսանում էին պրովինցիաների հոգին և մեծ դեր խաղում պատերազմներում, Խոջի-բեկը նշում է, որ այժմ պատերազմի ժամանակ նրանցից կազմված բոլոր զինվորներից շատ քիչ մարդ է հավաքվում. դրանց մեծ մասը այդ հողատերերի վարձակալներն ու ծառաներն են[3]։

Ֆեոդալական աշխարհազորի՝ պատերազմին մասնակցելուց հետզհետե խուսափելու պատճառով սուլթանական կառավարությունը ստիպված ավելացնում էր վարձկան զորքի քանակը։

Ըստ Խոջի-բեկի՝ սա հետևանք էր այն բանի, որ զինվորականներից խլված լենները իբրև մասնավոր սեփականություն վաճառվում կամ ընծայվում էին պալատական ծառայողներին[4]։

Թուրքական աղբյուրները հաղորդում են նաև ենիչերիների կորպուսի մեջ կատարված փոփոխության և նրա կազմի այլասերման մասին, որը տեղի ունեցավ սուլթանների թուլությամբ. նրա շարքերը սկսեցին մտնել նաև հասակավոր (ընտանիքավոր) մուսուլմանները։ Բացի այդ, ենիչերիներն իրավունք ստացան ընտանիք ունենալու։ Այս և այլ փոփոխությունները առաջ բերեցին ենիչերական զորաբանակի ռազմունակության խիստ անկում։

Այս նոր տարրերը ամեն կերպ խուսափում էին արշավանքներից և նույնիսկ փախչում պատերազմի դաշտից։

Այսպիսով, պետական միջոցների մեծ մասը ծախսվում էր զորքի վրա, որը բաղկացած էր առավելապես ֆիկտիվ կոնտինգենտից[1]։ Նման մի շարք հանգամանքներ թուլացրին օսմանյան բանակը և Թուրքիային հասցրին ռազմական լուրջ դժվարությունների ու պարտությունների։

Ֆրանսիացի գիտնական և ռազմական մասնագետ Մարսիլին XVII դարի Օսմանյան կայսրության ռազմական վիճակի վերաբերյալ իր աշխատության մեջ թուրքական բանակի ոչ մխիթարական դրության ու անկման մասին հետևյալն է գրում. «Ժամանակի ընթացքում շատ հոռի գործածությունները մուտք գործեցին նրանց զինվորական ռեգլամենտը, որոնք կայսրության ողջ կորպուսի դատապարտելի վիճակի պատճառը հանդիսացան։ Զորքը փչացել է, իսկ շուտով էլ բոլորովին ձեռքից կգնա։ Կայսրական իշխանությանն արդեն գրեթե չեն ճանաչում, որն, անշուշտ, ժամանակի ընթացքում ոչնչանալու է»[2]։ Իհարկե, այդ անհաջողությունների պատճառը միայն դա չէր, կային նաև ուրիշ հանգամանքներ։ Սակայն այդ մասին հետո։

«Մի խոսքով,— եզրակացնում է Խոջի-բեկը,— գերագույն իշխանության հզորությունը և ուժը զորքի մեջ է։ Զորքի զորությունը պահպանվում է գանձարանի միջոցով։ Գանձարանը հավաքում է բնակչությունից։ Իսկ վերջինիս գոյությունը պայմանավորված է արդարությամբ։ Ներկայումս մեր գործերը

---

[1] Վ. Դ. Սմիրնով, նշվ. աշխ., էջ 135—136։

[2] Տե՛ս «Ռիսալե», Վ. Դ. Սմիրնովի նշվ. աշխ., էջ 106։

[3] Տե՛ս Խոջի-բեկ, Վ. Դ. Սմիրնովի նշվ. աշխ., էջ 121։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 144։

[1] Տե՛ս Վ. Դ. Սմիրնով, նշվ. աշխ., էջ 249։

[2] Марсилии, Военное состояние оттоманской империи, 1737, стр. 137.

վերջնականապես խանգարված են, բնակիչներն աղետալի վիճակում են... իսլամական տիրույթները ձեռքից գնում են, իսկ դրա դեմ, այնուամենայնիվ, միջոցներ ձեռք չեն առնվում, որպի՞սի անհոգություն»[1]։

Թուրքական աղբյուրների վերը նշված բոլոր տվյալները Թուրքիայի տնտեսական և քաղաքական անկման փաստերի ու պատճառների վերաբերյալ ճիշտ և սպառիչ պատասխան չեն տալիս առաջադրված հարցին։ Այդ բոլոր երևույթները, որոնք անտարակույս կապված էին Օսմանյան կայսրության թուլացման հետ, հանդիսանում են գլխավորապես թուրքական ֆեոդալական պետության բուն տնտեսական հիմքի, հողատիրության լենային սիստեմի խոր ճգնաժամի, այլ կերպ ասած, թուրքական ֆեոդալական տնտեսության կոնսերվացման և նեխման ոչ թե պատճառը, այլ հետևանքը։

Օսմանյան պետության քայքայումն ու անկումը անխուսափելի էին, որովհետև ռազմական նվաճումների և նվաճած ժողովուրդներին կողոպտելու պայմաններում ռազմա-ֆեոդալական կարգը ոչ թե հետագա զարգացում ստացավ, որով հնարավոր կլիներ տնտեսության ամրապնդում ու առաջխաղացում, այլ այլասերվեց ու քայքայվեց, շարունակելով հենվել միայն զենքի, իրրև պետության պահպանման միակ միջոցի վրա։

Բնութագրելով Թուրքիայի սոցիալ-տնտեսական կարգը, Մարքսն ու Էնգելսը ընդգծում են, որ նա կանգնած էր «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա»[2]։

Անընդհատ տեղի ունեցող պատերազմները,—որոնք քայքայում էին նաև թուրքական ժողովրդական մասսաներին,—վարձկան զորքի մեծացումը, արքունի ու պետական ապարատի վիթխարի ծախսերը օսմանյան պետությանը կանգնեցրին ֆինանսական ծանր դրության առջև։ Այս բոլորը պահանջում էին նորանոր միջոցներ։ Այդ վիճակից դուրս գալու համար, կառավարությունը է՛լ ավելի էր կեղեքում ժողովրդին և առուծախի առարկա դարձնում պետական պաշտոններն ու արքունական լենները։ Այս հանգամանքը առավել ևս բացասաբար էր անդրադառնում Թուրքիայի առանց այն էլ հետամնաց տնտեսության վրա։ Թուրքական աղբյուրները վկայում են երկրի տնտեսական քայքայման մասին։ Այս, ինչպես նաև վարձկան բանակի թվի աճի մասին հաղորդում է ժամանակակից թուրք պատմաբան Քյաթիբ-Չելեբին[1]։

Հարկային ճնշումների և տնտեսական դժվարությունների ամբողջ ծանրությունն ընկնում էր ժողովրդի, մանավանդ գյուղացիության վրա։ Նրա կեղեքումը չտեսնված չափերի էր հասնում։ Խոջի-բեկը հետաքրքիր թվական տվյալներ է բերում գյուղացիության հարկերի խիստ բարձրացման վերաբերյալ[2]։

Հարկ է նշել, որ «Tarih»-ի հեղինակները նույնպես ընդունում են այդ շրջանում օսմանյան կառավարության ֆինանսական ծանր դրությունը և շարաշահումների ու կաշառակերության պայմաններում ժողովրդի կողոպտման փաստը[3]։

Խոսելով հարկերի ավելացման և այդ կապակցությամբ բնակչության անտանելի ճնշման մասին, Սելյանիկին գրում է. «Պետության գավառներում արտակարգ հարկերը հպատակ ժողովրդին հասցրել են այն աստիճանի, որ նրա համար զրկվելի է դարձել այս աշխարհը և նրանում գտնվող ամեն ինչ»[4]։ Վերջում նա նշում է, որ «Երկրի հպատակները լիովին քայքայվել են»[5]։

Խոջի-բեկը, կոնկրետ փաստերով նկարագրելով բնակչության ծանր վիճակը, գրում է. «Կարճ ասած՝ այդպիսի կեղեքումներ ու հարստահարություններ, որոնց ենթարկվում են շքավոր բնակիչները, երբեք, աշխարհի ոչ մի երկրում, ոչ մի պետության մեջ չի եղել։

Ճնշվածների սրտառուչ հառաչանքները տների պատեր են

---

[1] «Միսալե», Վ. Դ. Սմիրնովի նշվ. աշխ., էջ 147։

[2] Маркс и Энгельс, Соч., т. IX, стр. 374.

[1] Տե՛ս Ա. Ս. Տվերիտինովայի „Восстание Кара-Языджи-Дели Хасана в Турции", էջ 38։

[2] Տե՛ս Խոջի-բեկ, Վ. Դ. Սմիրնովի նշվ. աշխ., էջ 148։

[3] Տե՛ս „Tarih", հ. III, էջ 115։

[4] Селяники, նշվ. աշխ., էջ 325ա, բ։

[5] Նույն տեղը, էջ 325բ։

քանդում, իսկ տանջվածների արցունքները պետությունը խեղդում են կորստյան ալիքների մեջ»[1]։

Այսպիսով, ժողովուրդը քայքայվել էր. գյուղատնտեսությունը ճգնաժամ էր ապրում։ Գյուղացիները թողնում էին հողը և փախչում քաղաքներ, այնտեղ աշխատանք որոնելու ապարդյուն փորձեր կատարում։

Գյուղատնտեսության աղքատացումն ու քայքայումը իր հերթին խորացնում էին պետության դժվարությունները, քանի որ գյուղացիությունը դառնում էր անվճարունակ և, բացի այդ, նրա մոտ չկար շահագրգռվածություն արտադրությունն ընդլայնելու գործում։

Ինչպես եզրակացնում է Համմերը, «քայքայումն ընդհանուր բնույթ էր ընդունել ծվատված մարզերի (երկրների) կորստյան, դեռևս պահպանված (մնացած) մարզերի ամայացման՝ անմարդաբնակ դառնալու, հարկերի և կեղեքումների ծանրության, կուսակալների և զինվորների գիշատիչ արարքների, դատավորների և վեզիրների կաշառակերության ու ծախվածության, ենիչերիների ու սպահիների գերիշխանության և ամբարտավանության, Աբազա փաշայի և Բաղդադում ընդվզած ապստամբների, օրենքների (Kanuns) լիակատար անկման պատճառով»[2]։

Ինչպես թուրք, այնպես էլ նվաճված ժողովուրդների վայրագ շահագործումը այդ խավերի ծայրաստիճան աղքատացում և տնտեսության քայքայում էր առաջ բերում, արգելակում էր երկրի տնտեսական կյանքի զարգացմանը և այն մատնում լճացման, հետամնացության։ Ահա հենց այս էր թուրքական պետության թուլացման ու անկման կարևորագույն պատճառներից մեկը։

Այժմ քննության առնենք մյուս պատճառները։

Մինչև այժմ թուրքական հսկայական կայսրությունը պահվում էր գլխավորապես միայն նվաճումներով և պարտված ժողովուրդների նկատմամբ գործադրվող դաժան բռնություններով։ Նվաճումները անհաշիվ հարստություններ էին բերում սուլթանին և օսմանյան ավագանուն։ Սակայն այս

[1] «Թիսալե», նշվ. աշխ., էջ 142—143։
[2] I. Hammer, Geschichte d. Osmanischen Reiches, B. II, S. 835.

ճանապարհով չէր կարելի երկար առաջ գնալ և պահպանել գոյություն ունեցող կարգերը, մանավանդ որ դրանք ուղեկցվում էին արտադրողական ուժերի ավերումով։

Էնգելսը նշում է ֆեոդալական պետության երեք կարևորագույն ֆունկցիաները Արևելքում. արտաքին կողոպուտը (ռազմական գործը), ներքին կողոպուտը (ֆինանսների դեպարտամենտը) և վերարտադրության հոգսը (հասարակական աշխատանքների դեպարտամենտը՝ ջրառոռոգման կառուցումները կարգին վիճակի մեջ պահելը, որն Արևելքում կատարվում էր պետության ուժերով)[1]։ Սա վերաբերում է նաև Թուրքիային, միայն այն վերապահումով, որ այնտեղ երրորդ ֆունկցիան, այսինքն՝ վերարտադրության հոգսը սուլթանական կառավարության մոտ շատ թույլ կերպով էր հանդես գալիս։

XIX դարի առաջին կեսի ռուս ականավոր պատմաբաններից մեկը՝ Գլինկան, բնութագրելով թուրքական պետությունը, հետևյալն է գրում. «Թուրքերը բնակություն հաստատելով Եվրոպական մարզերում, տարածեցին (раскинули) միայն ռազմական զորակայանը, իսկ որևէ քաղաքական և քաղաքացիական գոյություն չստեղծեցին, որն ընդունակ լիներ հավասարվելու դարերի ընթացքին և մարդկության աստիճանական կատարելագործմանը։ Ամենուրեք, ուր փայլում էր նրանց սուրը, զրնգում էին ստրկության շղթաները»[2]։

Թուրքական կայսրության անկման գլխավոր պատճառներից մեկն էլ այն էր, որ երեք աշխարհամասերում զավթելով հսկայական տերիտորիաներ, թուրքերն ընդունակ չէին դրանք յուրացնելու. նրանք այդ երկրների արտադրության հին ֆեոդալական եղանակի մեջ փոփոխություն չմտցրին, այլ բավարարվեցին միայն հարկերով, ռազմատուգանքներով ու կողոպուտով։ Այս առնչությամբ Մարքսն ու Էնգելսը նշել են. «Զավթումը շատ շուտով ամենուրեք իր վերջն ունի, իսկ երբ արդեն այլևս բան չկա զավթելու, ապա հարկավոր է սկսել

[1] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XXI, էջ 494։
[2] С. С. Глинка, Картина историческая и политическая Порты Оттоманской, 1830, стр. 108.

արտադրել...»[1]։ Բայց դրա համար անհրաժեշտ պայմաններ չկային։ Թուրքական ֆեոդալները գտնվելով զարգացման ցածր աստիճանի վրա, տնտեսությամբ չէին զբաղվում։ Նրանք նյութական բարեկեցության երկու աղբյուր գիտեին. անմիջական արտադրողների գիշատիչ շահագործումը և պատերազմներից ձեռք բերած ռազմաավարը։

Թուրքիայի հզորության անկման, սոցիալական ու քաղաքական կարգերի կործանման մյուս հիմնական պատճառը պետության ռազմալենային կառուցվածքի քայքայման պրոցեսն էր և առաջին հերթին հողատիրության լենային սիստեմի ճգնաժամը։

Լենային հողերի կատեգորիան, որը մի ժամանակ թուրքական ռազմա-ֆեոդալական դասի տնտեսական բարեկեցության և Օսմանյան կայսրության ռազմա-քաղաքական բարեհաջող վիճակի հիմքն էր, աստիճանաբար սկսում է կորցնել իր նշանակությունը։

Շուտով սկսեց զգացվել հողային սեփականության շահավետությունն ու հրապույրը և փոխվեց ֆեոդալների վերաբերմունքը հողատիրության նկատմամբ։ Առաջներում թուրքական ֆեոդալները իրենց հողային տիրույթները դիտում էին գլխավորապես իբրև հարկային եկամուտների աղբյուր։ Բայց հետզհետե փողը սկսում է քաղաքականության մեջ ղեկավար դեր խաղալ։ Ապրանքա-դրամական հարաբերությունների ծավալումը ֆեոդալներին դրդում էր հողից ավելի շատ եկամուտ քամել և բնատուրքերն ու հողերը փողի վերածել։ Նրանք սկսում են հետաքրքրվել հողի ոչ միայն ֆիսկալ (գանձարանահասույթային), այլև տնտեսական շահագործումով, բայց, իհարկե, ոչ թե նոր, այլ հին ֆեոդալական ձևերով։

Աճում էր մասնավոր հողատիրությունը։

XVI դարից սուլթանները սկսում են հողերը լայնորեն բաժանել արքունի և մյուս քաղաքացիական պաշտոնյաներին՝ փաստորեն իբրև մասնավոր սեփականություն։ Սրա և վերը նշված հանգամանքի հետևանքով հետագայում ուժեղանում է խոշոր ֆեոդալական կալվածատիրական հողատիրությունը։

[1] Архив Маркса и Энгельса, т. I, стр. 248.

XVI դարի վերջերից ֆեոդալական արիստոկրատիան ձգտում էր լենային կալվածքները դարձնել մասնավոր սեփականություն. ֆեոդալական արիստոկրատիայի սեպարատիզմի դեմ մղած պայքարում սուլթանները իրենց համար նեցուկ էին ստեղծում գահին նվիրված մարդկանցից, նրանց նվիրելով հին, խոովարար ֆեոդալներից խլված կալվածքները։ Ըստ էության արտադրության եղանակը չէր փոխվել։ Առաջվա պես նա հենվում էր մանր գյուղացիական տնտեսությունների ֆեոդալական շահագործման վրա, և նրա հիմքը հանդիսանում էր հողի ֆեոդալական սեփականությունը։ Նոր ֆեոդալ-կալվածատերերը այդ լենները հետզհետե փաստորեն վերածեցին իրենց կալվածքների, որոնք կապ չունեին ոչ զինվորական ծառայության և ոչ էլ պետության հանդեպ ունեցած այլ անձնական պարտավորությունների հետ։ Աստիճանաբար ստեղծվում էր խոշոր ֆեոդալական-կալվածատիրական հողատիրություն։ Թիմարի և զիամեթի տերերը՝ լեննիկները աստիճանաբար վերածվեցին սեփականատեր-կալվածատերերի, որոնց համար հողատիրությունը դարձել էր արդեն հարստության հիմնական աղբյուրը։ Նոր ֆեոդալ-կալվածատերերը մտցնում էին գյուղացիության ֆեոդալական շահագործման նոր ձևեր, ուժեղացնում էին նրա ճորտական կախումը և ճնշումը։ Նրանք չնպաստեցին գյուղատնտեսության զարգացմանը։ Գյուղատնտեսությունը դեգրադացիայի էր ենթարկվում, բայց ֆեոդալները հարստանում էին։ Այս և նման նոր շահագործողների մասին Մարքսն ասում է. «Հին շահագործողի փոխարեն, որի շահագործումը ավելի կամ պակաս չափով նահապետական բնույթ էր կրում, որքանով գլխավորապես հանդիսանում էր քաղաքական իշխանության գործիք, հանդես է գալիս դաժան և ագահ բախտախնդիրը (выскочка)»[1]։

Դառնալով կալվածատեր, լենի տերը կորցնում էր պետն մի շահագրգռվածություն դեպի արշավանքները, որոնց մասնակցելը վնասում էր իր տնտեսական շահերին։ Այսպիսով, թուրքական ֆեոդալն այլևս շահագրգռված չէր հետագա նվաճումների և կենտրոնական իշխանության ուժեղացման

[1] К. Маркс, Капитал, т. III, 1935, стр. 428.

գործում։ Այս նոր խավը, փողատեր լինելով, ձեռք է բերում նաև իշխանություն և քաղաքական մեծ դեր խաղում։ Բացի դրանից, գրեթե անընդհատ պատերազմները հյուծել էին զինվորական լեննիկների և գյուղացիության մարդկային ու նյութական ռեսուրսները։

Մյուս կարևոր հանգամանքը, որով նույնպես բացատրվում է Օսմանյան կայսրության անկման և հետադիմության պատճառը, այն է, որ Թուրքիայում նատուրալ տնտեսությունը XVI—XVII դարերում զգալի չափով քայքայվել էր, բայց արտադրության ֆեոդալական եղանակը շարունակում էր իշխել։

Առևտրա-վաշխառուական կապիտալը ներթափանցում էր հին ռազմա-ֆեոդալական սիստեմի և հողատիրության մեջ, բայց չէր նպաստում նոր, ավելի պրոգրեսիվ հարաբերություններ ստեղծելուն։ Այս բոլորի պատճառով Թուրքիայում արտադրության ֆեոդալական եղանակը շատ դանդաղ էր ենթարկվում քայքայման։

Այն ժամանակ, երբ Եվրոպայում XVI—XVII դարերում աճում էին նոր արտադրողական ուժեր, տեղի էր ունենում կապիտալի նախասկզբնական կուտակում, Թուրքիայում դրա համար դեռևս նախադրյալներ չկային։ Արտադրության ֆեոդալական եղանակը այստեղ դանդաղորեն անկում ապրելով, տնտեսական կյանքում առաջ բերեց լճացում։

Ինչպես հայտնի է, ամեն մի հասարակության, այդ թվում և թուրքական ֆեոդալական հասարակության պայմաններում, միշտ էլ գոյություն է ունեցել ապրանքային արտադրություն։

Ապրանքային արտադրությունը իր մեջ պոտենցիալ կերպով կրում է ապագա կապիտալիստական արտադրության սաղմը։ Սակայն այս սաղմը Թուրքիայում, նշված ժամանակամիջոցում չկարողացավ զարգանալ՝ արտադրության կապիտալիստական եղանակի վերաճելու ճանապարհով։ Ուստի այնտեղ սոցիալ-տնտեսական կարգը դատապարտվեց լճացման ու աստիճանական անկման։ «Ծնված լինելով պատերազմում և պատերազմի համար, Օսմանյան պետությունը կարող էր պահպանել իր կենսունակությունը մինչև այն ժամանակ

միայն, քանի դեռ կենսունակ էր նրա ռազմա-ֆեոդալական սիստեմը»,— իրավացիորեն նկատում է պրոֆ. Ա. Ֆ. Միլլերը[1]։

Իրենք՝ թուրքերն իրենց պետության մասին ասում էին, որ «նա սրով ձեռք է բերվել, սրով էլ միայն կարող է պահպանվել»։ Իսկ այդ սուրն այլևս առաջվա պես կտրուկ չէր։

Թուրքիայի, և առհասարակ Արևելքի երկրների, հետամնացությունը կապված էր նաև քաղաքների բնույթի հետ, որտեղ ուշ միջնադարում ևս գերիշխում էին ֆեոդալները՝ քաղաքացիների անձի և գույքի նկատմամբ իրենց անսահմանակամայականությամբ։ Սա Արևելքում լինելով ընդհանուր երևույթ, զգալի չափով արգելք էր հանդիսանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։ Այսպիսով, թուրքական քաղաքը մնում էր ֆեոդալական, և այնտեղ բուրժուական տարրերը վճռական դեր չէին խաղում։ Ֆ. Էնգելսը, վերլուծելով ֆեոդալական Թուրքիայի նորմալ տնտեսական զարգացմանը խանգարող պատճառները, գրում է. «Իսկապես, թուրքական, ինչպես նաև ամեն մի այլ արևելյան տիրապետություն, անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ։ Ստացվող հավելյալ արժեքը ոչնչով չի ապահովված սատրապների և փաշաների գիշատիչ ձեռքերից. ներկա չէ բուրժուական վաստակի (приобретение) առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և նրա սեփականության ապահովությունը»[2]։

Մյուս կողմից, երբ աշխարհագրական հայտնագործությունների հետևանքով միջազգային առևտրի գլխավոր ուղիները փոխադրվեցին Ատլանտյան օվկիանոսը՝ միջերկրածովյան առևտրի նշանակալից անկում տեղի ունեցավ։ Այդ հանգամանքը բացասաբար ազդեց նաև Թուրքիայի առևտրի վրա և վերջինս նույնպես դուրս մնաց Եվրոպայի տնտեսական զարգացումից։

Թուրքական ռազմա-ֆեոդալական կարգի կոնսերվացման գործում մեծ դեր է խաղացել օտարերկրյա կապիտալի տըն-

[1] А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар, М.—Л., 1947, стр. 36.

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. II, стр. 22.

տեսական էքսպանսիան Թուրքիայում՝ նպատակ ունենալով մենաշնորհի ենթարկել նրա շուկան և երկիրը վերածել ագրարա-հումքային կցորդի։ XVI—XVIII դարերում եվրոպական արդյունաբերության բուռն զարգացումը ուժեղացրեց այդ երկրների ճնշումը թուրքական էկոնոմիկայի վրա, որը արհեստի և առևտրի անկում առաջ բերեց Թուրքիայում։ Օտարերկրյա կապիտալը XVI—XVII դարերում այնտեղ գրավեց ամենից առաջ ապրանքաշրջանառության բնագավառը։ Նա ջանում էր իրեն ենթարկել տեղական արտադրությունը, երբեք չփորձելով վերակազմել այն նոր, կապիտալիստական ձևով։

Այս գործում մեծ դեր խաղացին այսպես կոչված կապիտուլյացիաները, այսինքն՝ թուրքական սուլթանների կողմից եվրոպական պետությունների՝ Օսմանյան կայսրության մեջ գտնվող հպատակներին տրված առևտրական արտոնությունները։ Առաջին կապիտուլյացիան կամ առևտրական կոնվենցիան արձանագրվել է Սուլեյման II-ի օրոք, 1535 թ., Ֆրանսիայի հետ կնքված և Կարլոս V-ի դեմ ուղղված ռազմա-քաղաքական դաշինքի մեջ[1], որով թուրքական կառավարությունը ֆրանսիացիներին առևտրական հատուկ արտոնություններ ընձեռեց Մերձավոր Արևելքում։ Հետագայում այդ պայմանագրերը մի քանի անգամ վերանորոգվեցին և լրացվեցին։ Սուլթաններից նման արտոնություններ հետագայում ստացան նաև եվրոպական այլ պետություններ՝ Անգլիան և Հոլանդիան։ Այն ժամանակ կապիտուլյացիաները դեռևս անհավասար պայմանագրերի բնույթ չէին կրում։ Նրանք սուլթանի սուվերեն կամքի արդյունք էին և կարող էին ուզած ժամանակ նրա կողմից ետ վերցվել։ Կապիտուլյացիաների էության սպառիչ բնութագրումը և նրանց ծագման պատմությունը տվել է Մարքսը։ «Որքանով որ Ղուրանը ամեն օտարերկրացու թշնամի է հայտարարում,— գրում է Մարքսը,— ապա ոչ ոք սիրտ չի անում հանդես գալ մուսուլմանական երկրում առանց նախազգուշական միջոցներ ձեռք առնելու։ Ուստի նման ժողովրդի հետ առևտուր անելու համարձակության դիմող առաջին եվրոպական վաճառականները փորձում էին սկզբում ապահովել իրենց անձի համար բացառիկ պայմաններ ու արտոնություններ, որոնք, սակայն, հետագայում տարածվում էին նրանց ամբողջ ազգի վրա։ Այսպես է եղել կապիտուլյացիաների ծագումը։ Կապիտուլյացիաները Բ. Դռան կողմից զանազան եվրոպական ազգերին տրված դիպլոմներ, շնորհագրեր և արտոնություններ էին, որոնցով այդ ազգերի հպատակներին իրավունք էր տրվում անարգել կերպով մուտք գործել մահմեդական երկրները և հանգիստ կերպով զբաղվել իրենց գործերով ու կատարել իրենց կրոնական պաշտամունքը։ Պայմանագրերից նրանք տարբերվում են այն կարևոր հատկանշով, որ չեն հիմնվում փոխադարձության վրա, չեն քննարկվում շահագրգռված երկրների հետ համատեղ և չեն հաստատվում նրանց կողմից՝ փոխադարձ շահավետության և զիջումների հիման վրա։ Ընդհակառակը, նրանք միակողմանի կերպով շնորհված արտոնություններ են, որոնք, հետևապես, համապատասխան կառավարությունը կարող է, ըստ իր հայեցողության, ետ վերցնել»[1]։

Այդ կապիտուլյացիաներից էլ հետագայում սկիզբ է առնում օտարերկրյա տերությունների պրոտեկտորատի իրավունքը Թուրքիա այցելող կամ այնտեղ բնակվող իրենց հպատակների նկատմամբ։ Այսպիսով, սուլթանների շնորհած այդ կապիտուլյացիաները ժամանակի ընթացքում դարձան օսմանյան պետության գաղութային ստրկացման գլխավոր լծակներից մեկը և ստեղծեցին «կապիտուլյացիոն ռեժիմ», որը կաշկանդում էր ժողովրդական տնտեսության զարգացումը։ Օտարերկրյա կապիտալը կապիտուլյացիաների շնորհիվ տնտեսական խոշոր դեր էր խաղում Թուրքիայի կյանքում և XVI դարի վերջերից հաստատուն դիրք էր գրավել Մերձավոր Արևելքում։

Այս բոլորի հետևանքով քայքայվեց Օսմանյան կայսրության տնտեսությունը, և ամենից առաջ կրճատվեց տեղական առևտուրը։

Գոյություն ունեցող ապրանքադրամական հարաբերու-

[1] Տե՛ս նախորդ գլուխը։

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. X, стр. 8.

թյունները նպաստում էին թուրքական գյուղացիության տընտեսական քայքայմանը և գյուղատնտեսության դեգրադացիային։ Ստեղծված նման դրության պատճառով երկրում արհեստականորեն կասեցվում էին արտադրողական ուժերի զարգացման նախադրյալները։

Մյուս կողմից, նվաճված ժողովուրդների տնտեսական զարգացումը արգելակվում էր թուրքական ֆեոդալների և աստիճանավորների կողոպտիչ քաղաքականությամբ, կոպիտ ու բարբարոսական ճնշումով և տուրանական դեսպոտիզմով։ Իրենց տնտեսական և կուլտուրական զարգացման մակարդակով թուրքերից ավելի բարձր կանգնած՝ նվաճված ժողովուրդների վրին թուրքական պետությունը փաթաթում էր իր հարկային սիստեմը, ուղղակի կողոպուտը, արտադրողական ուժերի զարգացման պայմանների բացակայությունը, վերևում նշված բարբարոսական ճնշումը և այլն, դրանով այնպիսի պայմանների մեջ դնելով նրանց, որ վերջիններիս տընտեսական հետագա առաջխաղացումը համարյա անհնար էր դառնում։

Ա. Մյուլլերը թուրքերի կողմից նվաճած երկրների ժողովուրդների վիճակի մասին հետևյալն է ասում. «Մուհամեդ նվաճողի և Սելիմի կողմից զավթված ամբողջ խոշոր մարզերից՝ Փոքր Ասիայից, Արևմտյան Հայաստանից, Միջագետքից, Սիրիայից, Արաբիայից և Եգիպտոսից ոչ մեկը չկարողացավ կրկին հասնել թեկուզ որևէ բարեկեցության՝ թուրքական կառավարման ներքո, որի սոսկ նպատակն էր պահպանել արտաքին կարգը և ծծել պրովինցիաների բոլոր հյութերը»[1]։

Այս բոլորից երևում է, որ այդ շրջանում Թուրքիայի արտադրական հարաբերություններում ստեղծված այդ դրությունը խանգարում էր արտադրողական ուժերի հետագա զարգացմանը և, հետևապես, առաջ էր եկել արտադրողական ուժերի լճացում, որի հետևանքով ռազմա-լենային սիստեմը քայքայվում էր, և դրա փոխարեն տնտեսության զարգացումը կապիտալիզմի ուղիով չէր ընթանում։

[1] А. Мюллер, История ислама, т. III, стр. 373.

Հետաքրքիր է նշել, որ նորագույն թուրքական պատմագրությունը ևս չի ժխտում Օսմանյան կայսրության անկման փաստը՝ սկսած XVI դարի վերջերից։ Միայն թե նա այլ կերպ է մեկնաբանում այդ երևույթը։ Ըստ «Tarih»-ի՝ Օսմանյան կայսրության պատմության 1579—1684 թվականների շրջանը «լճացման» շրջան է, որը նրա անկման սկիզբն է, 1683—1699 թվականների շրջանը՝ նահանջի, իսկ 1792—1919 թվականների շրջանը՝ կայսրության քայքայման և անկման շրջան։ Դրա հետ միասին նա գտնում է, որ XVII դարի սկզբներին լճացման հետ միասին սկսեցին առաջ գալ նաև անկման տենդենցներ[1]։ «Թարիխը» փորձում է թվել Թուրքիայի լճացման պատճառները, որոնք ըստ էության չեն համապատասխանում իրականությանը։ Ըստ նրա հեղինակների՝ ռազմավարի բացակայության պատճառով պետությունը սկսեց ֆինանսական նեղություն կրել, աճեցին շարաշահումները, կաշառակերությունը, իսկ ժողովուրդը ենթարկվեց կողոպտման[2]։

Թուրքիայի սոցիալ-տնտեսական այս վիճակը իր արտահայտությունը պետք է գտներ և իրոք գտավ նրա քաղաքական կարգերում։ Երկրի հետամնացությունը քաղաքական բնագավառում արտահայտվեց նրանում, որ արևելյան այլ պետությունների նման Թուրքիայում ևս պետության գերիշխող ձևը մնաց ֆեոդալական բռնակալությունը (դեսպոտիզմը), չվերածվելով աբսոլյուտիզմի։

Արևելքի մյուս երկրների նման, այդ շրջանում Թուրքիայում չստեղծվեց բազմազգ կենտրոնացված ֆեոդալ-աբսոլյուտիստական պետություն, որպիսին կազմավորվեց Արևելյան Եվրոպայում։

Նվաճված ամբողջ տերիտորիայում, բացառությամբ Անատոլիայի և Արևելյան Թրակիայի մի փոքր մասի, թուրքերը շարունակում էին լինել սոսկ օկուպանտներ։ Ուստի թուրքական տիրապետությունը կայսրության մյուս ազգությունների վրա, որոնցից շատերը սոցիալ-տնտեսական տե-

[1] Տե՛ս „Tarih", հ. III, էջ 68։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 113։

սակետից զարգանում էին թուրքերից ավելի արագ, դարձավ ռեակցիոն վերապրուկ[1]։

Տնտեսական ծանր վիճակը, ժողովրդի անտանելի կեղեքումն ու ճնշումը, հպատակ ժողովուրդների դաժան հալածանքները, ինչպես նաև լենային հողատերերի (մանր ու միջակ ֆեոդալների) քայքայումը, Օսմանյան կայսրության մեջ խիստ սրել էին սոցիալական և ազգային հակամարտությունները, որոնք այդ շրջանում իրենց կոնկրետ արտահայտությունն էին գտնում հաճախակի տեղի ունեցող ապստամբությունների, ազատագրական շարժումների և զինվորական բունտերի մեջ։ Եթե հաշվի առնենք նաև արքունիքի և կենտրոնական ապարատի այլասերվածությունը և զանազան կողմնակի անձանց (կանանց, ներքինիների և այլոց) ձեռքին սուլթանական կառավարության խաղալիք դառնալը, ապա ավելի պարզ կերևա, թե ինչու էին ջլատվում պետության ուժերը։

Այդ շրջանում երկրում գրեթե անիշխանություն էր տիրում։ Տեղի էին ունենում ֆեոդալների սեպարատիստական ապստամբություններ։ Կենտրոնական կառավարությունը իր բանակով ֆեոդալներին պետք էր միայն ժողովրդին շահագործելու, գյուղացիական ապստամբությունները ճնշելու և արտաքին պատերազմներ մղելու համար։

Ստեղծված դրությունից դուրս գալու ելքը թուրքական կառավարողները դարձյալ զավթողական պատերազմները շարունակելու մեջ էին որոնում։ Բայց անհաջող պատերազմներն է՛լ ավելի էին ծանրացնում երկրի ներքին ու արտաքին դրությունը։

Իբրև բնակչության դրության վատթարացման անմիջական հետևանք և ներքին ու արտաքին դժվարությունների արդյունք՝ 1591—1628 թվականների ժամանակամիջոցում Թուրքիայի վրայով ապստամբությունների մի հսկայական ալիք անցավ, որն ընդգրկում էր գլխավորապես գյուղի և քաղաքի աշխատավորությանը[2]։ Բավական է ասել, որ Սուլթան Մուրադ III-ի օրոք (1574—1595 թթ.) Թուրքիայում մոտ տասը ժողովրդական ապստամբություններ, տեղական ֆեոդալ կառավարիչների ընդվզումներ և զինվորական խռովություններ կամ բունտեր տեղի ունեցան։ 1591 թ. տեղի ունեցած ապստամբությունն այնքան մեծ էր և ուժեղ, որ 19 նահանգներ հրաժարվեցին սուլթանական իշխանությունը ճանաչելուց։

Աղբյուրները հաղորդում են, որ 1593 թ. Կոստանդնուպոլսում սփահիները և այլ զինվորականներ խռովություն բարձրացրին աշխատավարձը լրիվ չստանալու պատճառով։ Սուլթան Մուրադը ստիպված էր զիջումներ անել խռովարարներին։ Բայց ընդհարումները շարունակվեցին և տեղի ունեցավ մեծ արյունահեղություն[1]։ Ի վերջո, մեծ դժվարությամբ հաղիվ հաջողվեց խռովությունը ճնշել։

XVI դարի վերջին տասնամյակում հաճախակի տեղի էին ունենում աշխատավորների ապստամբություններ (օրինակ՝ 1591—1592 թթ. Դիարբեքիրի ապստամբությունը[2] և 1592—1593 թթ. Բաղդադում տեղի ունեցած անկարգությունները, 1595—1596 թթ. ժողովրդական ապստամբությունը Կարամանիայում, բնակչության ընդհարումները զորքերի հետ Էրզրումում, Թավրիզում և այլ վայրերում)[3]։

1595—1596 թվականներին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած սփահիների բունտի մասին հաղորդում է Խոջի-բեկը[4]։ Նույն դեպքի մասին վկայում են նաև ռուսական աղբյուրները[5]։

Բացի նշված ապստամբություններից, թուրքական տարեգիրները հաղորդում են, որ սուլթան Մուհամեդ III-ի թագավորության ժամանակ Կոստանդնուպոլսում սփահիներն ըմբոստացան կառավարության դեմ, բունտություններ գործադրեցին, պահանջեցին պաշտոնանկ անել և մահապատժի են-

---

[1] Տե՛ս А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар, էջ 355։

[2] Մեր նպատակից դուրս է հատուկ ուսումնասիրության նյութ դարձնել և լայնորեն զբաղվել և դասակարգային և ազատագրական պայքարի հարցով։

[1] Տե՛ս „Посольская книга", № 3, էջ 233։

[2] Տե՛ս „Тарихи-Селяники", էջ 199ա։

[3] Տե՛ս Նույն տեղը, էջ 132բ, 134ա, 263բ։

[4] Տե՛ս «Ռիսալե», Նշվ. աշխ., էջ 104—105։

[5] Տե՛ս Н. А. Смирнов, Россия и Турция в XVI—XVII вв., 1946, էջ 145։

թարկել մի շարք բեյլերբեյների, մեծ նեղություն պատճառելով բնակիչներին։ Կառավարությանը մեծ դժվարությամբ, հազիվ հաջողվեց ենիչերիների օգնությամբ ճնշել այդ ֆեոդալական խռովությունը։ Այդպիսի խռովություն տեղի ունեցավ նաև 90-ական թվականների վերջերին, որը նույնպես ճնշվեց։

Այդ խռովություններն ու բունտերը հաճախակի էին ենիչերիների շրջանում։ Վերջիններս այնքան սանձարձակ էին դարձել, որ համարյա տեր ու տնօրինություն էին անում Կոստանդնուպոլսում և, միջամտելով պետական կյանքին, սուլթանական իշխանության հետ վարվում էին, ինչպես կամենային։ Նրանք հաճախ նաև մասնակցում էին պալատական դավադրություններին ու հեղաշրջումներին։ Նրանց ձեռքումն էր ռեալ ուժը և նրանք միշտ բլոկի մեջ էին գտնվում իրենց ավելի շատ վճարող ավագանու այս կամ խմբավորման հետ։

Այսպիսի դեպքերում կառավարությունը, բացի այլ միջոցներից, հաճախ նաև ստիպված էր բավարարել ապստամբների պահանջները։

Այն տրադիցիոն պարգևատրումները, որ ամեն մի սուլթան գահ բարձրանալիս անում էր ենիչերիներին, վեր էին ածվել մի տեսակ պարտադիր տուրքի, որով սուլթանները, կարծեք թե, գահի իրավունք էին գնում նրանցից։ Ենիչերիները դարձել էին կարծես պրետորիական գվարդիա։

1599 թ. տեղի ունեցած ենիչերական ապստամբության և Թուրքիայի ասիական մարզերում ծագած խռովությունների մասին հայտնում է Մատենադարանի № 1496 ձեռագրի հեղինակը[1]։

Եթե մայրաքաղաքում մեծ մասամբ հաջողվում էր համեմատաբար հեշտությամբ ճնշել խռովությունները, ապա գավառներում դա ավելի դժվար էր։ Այնտեղ դրանք գնալով աճում էին։ Այս ներքին պայքարը և ժողովրդական շարժումները մեծ հարված էին հասցնում թուրքական ռազմա-ֆեոդալական կարգերին և խարխլում ու թուլացնում Օսմանյան կայսրությունը։ Բոլոր ապստամբությունները և բունկումները

[1] Տե՛ս ՀՍՍՌ Գետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 253ա։

շուտով վերածվեցին մի հսկայական շարժման, որին մասնակցում էին, բացի թուրքերից, նաև այլ ժողովուրդներ։

Այս ապստամբություններից ամենամեծը, ամենատարածվածը և երկարատևը այսպես կոչված ջալալիների շարժումն էր, որը Օսմանյան կայսրության վերը նշված հասարակական-տնտեսական հարաբերությունների ճգնաժամի կոնկրետ արտահայտություններից մեկն էր, որով բռնված էին գլխավորապես Փոքր Ասիան, Հայաստանն ու Ադրբեջանը։ Այդ շարժումը խառը բնույթ էր կրում մասնակիցների թե՛ սոցիալական և թե՛ ազգային կազմով (գյուղացիներ, քաղաքի աշխատավորներ, մանր ֆեոդալներ և այլն) և բաղկացած էր միաժամանակ կամ տարբեր ժամանակներում տեղի ունեցող մի շարք առանձին ապստամբություններից և նույնիսկ ավազակային-կողոպտիչ բնույթ կրող ելույթներից՝ ապստամբությանը հարած ամեն տեսակի ավազակային-ֆեոդալական բախտախնդիր տարրերի պատճառով։

Ջալալիների այս ընդհանուր շարժման մեջ ամենախոշոր և հզոր ապստամբություններն են եղել Կարա-Յազիջիի և Դալի-Հասանի ապստամբությունը, որը տեղի է ունեցել 1599—1603 թվականներին, Հյուսեին փաշայինը՝ 1601 թ., Ահմեդ փաշայինը՝ 1604 թ., Գալանտար օղլու և Ջանփոլադ օղլու ապստամբությունները՝ 1606 և 1607 թվականներին և այլ ապստամբություններ[1]։

Ապստամբների գլուխ էին կանգնած նաև բարձրաստիճան տեղական պաշտոնյաներ ու զինվորականներ, նույնիսկ կուսակալ-փաշաներ, որոնց բանակների թիվը երբեմն հասնում էր տասնյակ հազարների։ Բայց ամենից շատ էին մանր ջոկատները, որոնցից շատերը գրեթե ավազակային հրոսակախմբեր էին[2]։ Այս խմբերին հաճախ հարում էին բազմաթիվ աշխատավորներ։ Կային նաև համարյա զուտ աշխատավորական խավերից կազմված ջոկատներ։

[1] Կարա-Յազիջիի և Դալի-Հասանի առաջին ապստամբության մասին բավական արժեքավոր հետազոտություն է Ա. Ա. Տվերիտինովայի նշվ. աշխ.-ը, որը գրված է գլխավորապես թուրքական աղբյուրների հիման վրա։

[2] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 63—64։

Այս ապստամբությունների մեջ առավել նշանավորը Կարա-Յազիջիի ապստամբությունն է։ Կարա-Յազիջին ենիչերական գնդի հրամանատար էր։ Իր հրամանատարության տակ հավաքելով պատերազմի դաշտից փախած կամ վերադարձած զինվորներից շատերին (մոտ 36 հազար, գլխավորապես սփահիներ), նա ապստամբություն բարձրացրեց. երկու անգամ պարտության մատնելով կառավարական զորքերին, ամբացավ Եդեսիայի բերդում և անջատվելով Օսմանյան պետությունից, իրեն թագավոր հռչակեց։ Երկու տարուց հետո Կարա-Յազիջին պարտություն կրեց և փախավ, որից հետո շուտով մեռավ։ Նրա տեղը բռնեց նրա եղբայր Դալի-Հասանը, որի ղեկավարությամբ ապստամբությունը շարունակվեց ավելի մեծ ուժով [1]։

Երկու եղբայրները, բացի Եդեսիայից, գրավեցին նաև փոքրասիական մի շարք այլ մարզեր։

Ի վերջո, 1603 թ. Դալի-Հասանը հաշտվեց սուլթանի հետ, և նրա ապստամբությունը հիմնականում լիկվիդացվեց։

Այս ապստամբությունների դեմ սուլթանական կառավարության և առանձին կուսակալների կողմից ձեռնարկված արշավանքները մեծ մասամբ անհաջողությամբ էին վերջանում, և կառավարական զորքերը պարտություն էին կրում[2]։ Միայն մեծ վեզիր Մուրադ փաշային հաջողվեց 1607—1608 թվականներին հիմնականում ջարդել նրանց ուժը (տե՛ս ստորև)։

Բացի այս կարգի ապստամբություններից, կան նաև որոշ տվյալներ հպատակ ու ճնշված ժողովուրդների կողմից թուրքական տիրապետության դեմ այդ շրջանում մղած ազատագրական պայքարի մասին (թեև ոչ լրիվ), ինչպես, օրինակ՝ բալկանյան և անդրկովկասյան ժողովուրդների ապստամբությունների, արաբների և թուրքմենների ըմբոստացման և հնազանդությունից դուրս գալու[3] և այլ նման դեպքերի մասին,

[1] Տե՛ս Գ. Այվազովսկի, հ. Ա, էջ 482։

[2] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 5959, էջ 98ա—101բ։ Ջալալիների շարժման մասին բավականին տեղեկություններ են տալիս նաև բազմաթիվ այլ, այդ թվում թուրք պատմագիրներ։

[3] Այս վերջին դեպքի մասին վկայում է Խոջի-բեկը իր «Ռիսալեթ»-ում. տե՛ս Վ. Դ. Սմիրնովի նշվ. աշխ., էջ 145։

որոնք և ուժեղանում էին շնորհիվ Թուրքիայի թուլացման։ Հատկապես XVI դարի վերջերից և XVII դարի սկզբներից ավելի բուռն կերպով է տեղի ունենում Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների ազատագրական շարժումների ընդհանուր զարթոնքը։

Այս ժամանակամիջոցում բուլղարները, սերբերը, չերնոգորցիները, հույները և մյուսները բազմիցս ապստամբություններ են բարձրացրել թուրք տիրողների դեմ։ Սակայն պետք է նշել, որ բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժման ամենատարածված և բնորոշ ձևը հանդիսացել է մշտական պարտիզանական պայքարը, այսինքն՝ հայդուկների շարժումը Բուլղարիայում և Սերբիայում, ուսկոկներինը՝ Դալմաթիայում և կլեֆտներինը՝ Հունաստանում, որոնք առաջ էին եկել դեռևս XV դարից և բավական զգալի հարվածներ էին հասցնում թուրքական բանակին, թուրքական ու սեփական ֆեոդալներին։ Բացի սրանից, բալկանյան ժողովուրդները նաև մասսայական ապստամբություններ էին բարձրացնում օսմանյան տիրապետության դեմ։

Վրաստանում ևս XVI դարի վերջերին և հետագայում մի քանի ժողովրդական ապստամբություններ տեղի ունեցան Թուրքիայի դեմ։ Դրանցից առանձնապես հիշատակության արժանի է 1598—1601 թվականների ապստամբությունը Սիմոն թագավորի ղեկավարությամբ։ Ապստամբները բավականին հաջողություններ ունեցան և սկզբում պարտության մատնեցին Վրաստանում գտնվող թուրքական զորամասերին։ Այնուհետև, նրանք երկար ժամանակ հերոսաբար դիմադրում էին, մինչև որ նրանց դեմ մեծ բանակով ուղարկված Ջաֆար փաշային հաջողվեց գերի վերցնել Սիմոնին և ապստամբությունը ճնշել[1]։ Ուշագրավ է, որ այս ապստամբության ժամանակ հայերի և հույների, ինչպես նաև հայերի և վրացիների միացյալ շարժման փորձեր էին տեղի ունենում։

Այս բոլորով հանդերձ, սակայն, Օսմանյան կայսրությունը XVI դարի վերջերին և XVII դարի սկզբներին դեռևս մեծ ու վտանգավոր ուժ էր ներկայացնում, դեռ շարունակում էր

[1] Տե՛ս Հովհ. Մարեցի, Ժամանակագրություն, էջ 270ա—271բ։

Եվրոպայում մասնակի ռազմական հաջողություններ ունենալ և մնում էր գրեթե ամենամեծ պետությունը թե՛ տերիտորիայով և թե՛ բնակչության թվով։ Բայց և այնպես Օսմանյան կայսրությունը այժմ արդեն այն չէր, ինչ որ Սելիմ I-ի և Սուլեյմանի ժամանակ։

* * *

Այս շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքական դրությունը ևս սկսել էր վատանալ և նրա հարձակողական ուժը կոտրվել էր, որի պատճառը ոչ միայն եվրոպական մի քանի պետությունների ուժեղացումն էր, այլև գլխավորապես վերև նշված՝ երկրի ներքին վատ դրությունը։ Թուրքական պետության սկսված անկումը իր ցայտուն արտահայտությունը գտավ նրա ռազմական անհաջողությունների, հետագայում տերիտորիալ կորուստների մեջ։

Երկրում սկսված ճգնաժամի պայմաններում պետության դրությունը ավելի էր բարդանում նրանով, որ այդ ժամանակ նա անընդհատ պատերազմներ էր մղում մի շարք պետությունների դեմ թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում։ Այդ պատերազմներում, սկսած XVI դարի 70-ական թվականներից, Թուրքիան սկսում է մեծ դժվարությունների հանդիպել և պարտություններ կրել։ Ռազմական այն ուժը, որով թուրքերը մեծ հզորության հասան և հսկայական նվաճումներ կատարեցին, այլևս ի վիճակի չէր կատարելու այդ դերը և շուտով՝ նաև պահպանելու նույնիսկ նվաճված տերիտորիաները։ Իհարկե, XVI դարի վերջերին և XVII դարի սկզբներին Թուրքիան դեռևս շարունակում էր նաև ռազմական մասնակի հաջողություններ ունենալ։ Նա մի շարք հաղթանակներ տարավ և որոշ նվաճումներ կատարեց, սակայն նրա այս և հետագա ռազմական մասնակի ու ժամանակավոր հաջողությունները թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում նախ կայուն ու տևական չէին և ապա՝ արդեն հիմնականում ավելի շատ պաշտպանողական, քան հարձակողական բնույթ էին կրում։ Այսպիսով, Օսմանյան կայսրությունը մեծ նվաճողական պատերազմների շրջանը ավարտեց XVI դարի վերջին։ Այս առնչությամբ Էնգելսը նկատում է, որ նրա «հարձակողական ուժը կոտրվել

էր արդեն հարյուր տարի դրանից առաջ (այսինքն՝ XVI դարի վերջերին — Հ. Ն.), իսկ պաշտպանողականը, որ դեռևս նշանակալից էր, նույնպես սկսել էր նվազել»[1]։

Թուրքիայի հարաբերությունը Մոսկվայի պետության հետ նախորդ շրջանի համեմատությամբ առանձին փոփոխություն չկրեց։ Երկու պետություններն էլ (մանավանդ ռուսական) դեռևս հնարավորություն և մտադրություն չունեին պատերազմ սկսելու մեկը մյուսի դեմ, չնայած որ Թուրքիան պատրաստություններ էր տեսնում և հարմար առիթի սպասում Մոսկվայի նկատմամբ իր պլաններն իրագործելու համար։ Երկու կառավարությունների միջև բանակցություններ էին տեղի ունենում, որոնց ընթացքում թուրքական կառավարությունը պահանջում էր վերջ տալ թուրքերի վրա Դոնի և Թերեքի կազակների հարձակումներին։ Սրան իբրև պատասխան սուլթանի ցուցումով Ղրիմի խանը հաճախակի հարձակումներ էր կատարում ռուսական պետության վրա։ Բացի դրանից, սուլթանը ցարին ուղարկած իր պաշտոնագրում սպառնում էր մեծ զորքով բնաջնջել բոլոր կազակներին, եթե սրանք վերջ չտային իրենց հարձակումներին, մանավանդ որ նա ենթադրում էր, որ կազակները գործում էին Մոսկվայի հրամանով։ Այնուհետև սուլթանը ամուր բարեկամություն էր խոստանում ցարի հետ[2] իր պահանջը կատարելու պայմանով։ Սուլթանը դժգոհ էր նաև այն պատճառով, որ վերջին շրջանում ռուսները մի շարք քաղաքներ ու բերդեր էին կառուցել ու կառուցում Դոնի շրջանում և Հյուսիսային Կովկասում, սպառնում էր Ղրիմի խանի միջոցով գրավել ռուսական հողերը[3]։

Անշուշտ, թուրքական կառավարությունը իրավունք ուներ կասկածելու բարեկամական հարաբերությունների վերաբերյալ Մոսկվայի հավաստիացումներին և ճշտելու նրա դիրքը իր նկատմամբ, թեև իր հավաստիացումները նույնպես անկեղծ չէին, քանի որ Մոսկվայի կառավարությունը մի կողմից՝ իր դեսպաններն էր ուղարկում Կոստանդնուպոլիս, հա-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. II, стр. 9.
[2] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 291:
[3] Տե՛ս „Посольская книга", № 3, էջ 183:

վաստիացնելով իր բարեկամությունը, իսկ մյուս կողմից՝ ավստրիական և իրանական արքունիքների հետ շարունակում էր բանակցությունները։

1593 թ. աշնանը ավստրիական կառավարությունը իր դեսպանի միջոցով, որը եկել էր հակաթուրքական կոալիցիայի լայն ծրագրով, Մոսկվայի կառավարությանը առաջարկում էր դաշինք կնքել Թուրքիայի դեմ, ռազմական օգնություն ցույց տալ իրեն՝ Թուրքիայի դեմ սկսած պատերազմում, հաշտվել Շվեդիայի հետ և սրան այդ դաշինքի մեջ ներգրավել. նա խնդրում էր նաև համոզել Շահ-Աբասին՝ հաշտություն չկնքել Թուրքիայի հետ և միանալ իրենց կոալիցիային[1]։ Այս առաջարկությունները Ավստրիայի կողմից կրկնվեցին նաև հետագայում։

Մոսկվայի կառավարությունը պատասխանում էր, որ ինքը ցանկանում է միանալ Ավստրիայի և մյուսների հետ Թուրքիայի դեմ, բայց ուզում էր պարզել, թե այդ միության մեջ մի շարք կարևոր պետություններ (Իսպանիան, Վենետիկը, Լիտվան, Հռոմի պապը և այլն) մտնելո՞ւ են, թե՞ ոչ։ Նա խոստանում էր կատարել Ավստրիայի խնդրանքը, բայց խուսափում էր իր խոստումն իրագործել։ Մի քանի տարուց հետո, շարունակվող բանակցություններում Բորիս Գոդունովը հայտնում էր, որ կողմնակից է հակաթուրքական կոալիցիա ստեղծելուն և պատրաստ է զինված ուժով օգնել կայսրին՝ Թուրքիայի դեմ, բայց Լիտվան և Լեհաստանը իր զորքին թույլ չեն տա անցնելու։ Այս բոլորի պատճառով Մոսկվայի պետությունը գործնական քայլերի չդիմեց այդ ուղղությամբ։

Միևնույն ժամանակ 1594 թ. սկզբին Հռոմի պապը իր դեսպանի միջոցով ամեն կերպ աշխատում էր համոզել Մոսկվային՝ մասնակցելու քրիստոնեական պետությունների հակաթուրքական բլոկին, վախեցնելով նրան՝ հակառակ դեպքում Թուրքիայի կողմից Ռուսաստանին սպառնացող լուրջ վտանգով[2]։ Հրահրելով մի շարք եվրոպական պետությունների

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 291:

[2] Տե՛ս „Древняя Российская Вивлиофика", 1789, ч. XII, էջ 455:

միատեղ զինված ելույթը Թուրքիայի դեմ, պապը միաժամանակ խնդիր էր դնում պայքարի դրդել Իրանին ու Վրաստանին՝ նրա կողմից իրենցից խլված հողերը ետ վերցնելու համար, իհարկե, ամեն կերպ օգնություն ցույց տալով նրանց։ Նա ամեն կերպ խրախուսում էր Ռուսաստանին, հեշտ հաղթանակ խոստանալով թուլացած Օսմանյան կայսրության դեմ։ Բայց Մոսկվայի կառավարությունը խոհեմությամբ հաշվի առնելով ներքին ու արտաքին պարագաները և հույս չդնելով հավանական դաշնակիցների ու պապի խաբուսիկ փաստարկումների վրա, չէր ցանկանում պատերազմ մղել Թուրքիայի դեմ այդ պահին, որը իր համար դեռևս ձեռնտու չէր։ Այսպիսով, թե՛ Ավստրիայի և թե՛ պապի հետ տեղի ունեցած բանակցությունները կոնկրետ արդյունքների չհասցրին։ Հետևապես, մինչև XVI դարի վերջը Ռուսաստանը շարունակում էր Թուրքիայի նկատմամբ առերևույթ լոյալություն պահպանել, և երկու միապետները փոխադարձաբար դեսպաններ էին ուղարկում միմյանց մոտ[1]։ Չցանկանալով իրեն կաշկանդել որևէ պարտավորությամբ, Մոսկվայի կառավարությունը միևնույն ժամանակ շարունակում էր հետևել եվրոպական պետությունների հետ Թուրքիայի ունեցած հարաբերություններին և հարավում հաջող կերպով պաշտպանվել թուրքական զորամասերի հարձակումներից։ Այս կապակցությամբ պետք է նկատել, որ Ն. Ա. Սմիրնովը այնքան էլ իրավացի չէ, երբ գրում է, որ ռուսական պետությունը «ամենայն անկեղծությամբ ձգտում էր բարեկամական հարաբերություններ պահպանել Թուրքիայի հետ»[2]։

Բացի եվրոպական պետություններից, Թուրքիան այդ շրջանում շարունակում էր բարեկամական հարաբերությունները նաև ուզբեկական խանի հետ, որի հետ նույնպես բանակցություններ էին տեղի ունենում։ Աղբյուրները հաղորդում են, որ 1596 թ. Կոստանդնուպոլիս է ժամանում ուզբեկ-

[1] Տե՛ս „Посольская книга", № 3. էջ 290—293։

[2] Н. А. Смирнов, Россия и Турция в XVI—XVII вв., т. I, М., стр. 159.

ների խանի դեսպանը, որը նորություն էր երկու պետություն-ների հարաբերությունների մեջ։ Սա եկել էր Թուրքիայի հետ դաշն կնքելու և պարսիկների դեմ միացյալ ուժերով պատերազմելու նպատակով։ Այս դեսպանը իր միապետին շատ հզոր էր ներկայացնում։ Այս զոհողությունը, սակայն, բացասական վերաբերմունք առաջ բերեց սուլթանի արքունիքում, քանի որ թուրքերը իրենցից ավելի զորեղ պետություն աշխարհում չէին ուզում ճանաչել։ Գուցե այս հանգամանքն էր պատճառը, որ այդ բանակցություններն ապարդյուն անցան[1]։

* * *

Ինչպես վերևում տեսանք, Շահ-Աբասը որոշ նկատառումներով ստիպված հաշտություն կնքեց օսմանցիների հետ՝ իր համար շատ անձեռնտու պայմաններով։ Սակայն նա դա համարում էր ժամանակավոր և երբեք էլ չէր կարող հաշտվել այդ կորուստների հետ։

Ամենից առաջ նա զբաղվեց ուզբեկների հարցով։ Այն ռազմական գործողությունները, որ սկսել էր նրանց դեմ, այժմ շարունակեց խիստ եռանդուն կերպով ու ավելի մեծ մասշտաբով և ձեռք բերեց մեծ հաջողություններ։ Այս կամպանիան շարունակվեց մինչև 1597 թ., երբ Աբասը խոշոր հաղթանակ տարավ ուզբեկների դեմ և գլխովին ջախջախելով ու փախուստի մատնելով, ետ խլեց նրանց նվաճած մարզերն ու քաղաքները, այսինքն՝ Խորասանը, Հերաթը, Նիշապուրը, Մեշհեդը և Մերվը։ Նա ներխուժեց նաև Մավերաննահրի տերիտորիան ու իր տիրապետության սահմաններն ընդարձակեց ընդհուպ մինչև Բալխ[2]։ Այսպիսով, հարյուրամյա պայքարի հետևանքով Խորասանը մնաց Սեֆեյանների իշխանության տակ։ Բացի այդ նա, Մեծ Մողոլից գրավելով նաև Ղանդահարը, դարձավ Աֆղանստանի տերը։ Դրանից հետո երկար ժամանակ դադարեցին ուզբեկների հարձակումները Իրանի վրա։

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 252բ—253ա։

[2] Տե՛ս Նույն տեղը, ձեռագիր № 2776, էջ 269բ։

Այս վճռական միջոցառումներով Աբասը երկիրն ապահովեց թիկունքից, իսկ արևելյան սահմանի այդ մասը ամրացնելու և նոր հարձակումներից պաշտպանելու համար նա Իրանի արևմտյան մարզերից տեղափոխեց մոտ 15 հազար բրդեր՝ իրենց ընտանիքներով, որոնց բնակեցրեց Խորասանի հյուսիսային մասում։ Այսպիսով, Շահ-Աբասը երկրի արևելյան սահմանները հիմնականում ապահովեց միջինասիական ցեղերի հաճախակի արշավանքներից։ Այս հաջողությունը վերականգնեց Սեֆեյան դինաստիայի հեղինակությունը, նպաստեց խռովությունների դադարեցմանն ու երկրի միավորմանը։

Դրանից հետո Շահ-Աբասը համառ և համբերատար կերպով պատրաստվեց պատշաճ հակահարված տալ Թուրքիային ու ետ նվաճել իր տերիտորիաները, ինչպես և գավթել այլ երկրներ։ Մյուս կողմից՝ նա հաշտության շնորհիվ ստացած դադարը օգտագործեց ներքին ռեֆորմներ ու ձեռնարկումներ անցկացնելու և պետությունը տնտեսապես, քաղաքականապես, մանավանդ ռազմականապես ուժեղացնելու համար։ Ամրացնելով իր դիրքերը Արևելքում, նա ամենից առաջ ձեռնարկեց ռազմական գործի և զինված ուժերի վերակառուցմանը։ Այս գործում մասնակցություն ունեցան նաև անգլիացի երկու բախտախնդիրներ՝ Անտոնի և Ռոբերտ Շերլի եղբայրները, որոնք 1598 թ. Իրան էին եկել գլխավորապես հարստանալու նպատակով և, հավանաբար, նաև արտաքին քաղաքական հանձնարարություններ ունեին։ Նրանք զինված էին եվրոպական տեխնիկական գիտելիքներով։

Երբ Շահ-Աբասը ուզբեկներին հաղթելուց հետո վերադարձավ Ղազվին, այս Անտոնի և Ռոբերտ եղբայրները ներկայացան նրան և հայտարարելով, որ իրենք քրիստոնյա միապետների կողմից ուղարկված են շահի հետ Սուլթանի դեմ դաշինք կնքելու, իրենց ծառայությունն առաջարկեցին նրան։ Աբասը հավանություն տալով այդ առաջարկին, օգտագործեց նրանց՝ իր պլաններն իրագործելու համար։ Անտոնի Շերլին հանձն առավ եվրոպական ձևով վերակազմել և սովորեցնել

իրանական բանակը։ Ինչպես հայտնի է, շահի տրամադրության տակ եղած ռազմական ուժը սկզբում բաղկացած էր գլխավորապես կզլբաշական հեծելազորից (60—80 հազար), որոնք ենթարկվում էին միայն իրենց առաջնորդներին։ Աբասի ժամանակ զանազան զորամասերում ընդամենը կար մոտ 120 հազար զինվոր, իսկ սպասարկող անձնակազմի հետ միասին բանակի կազմը հասնում էր մոտ 200—250 հազարի։ Այս հանգամանքը շահին զգալի չափով կախման մեջ էր դնում կզլբաշներից։ Որպեսզի այս դրությանը վերջ տա, Աբասը ցեղային զորական միավորների (հեծյալ ջոկատների) թիվը կիսով չափ կրճատեց և ստեղծեց 12 հազարանոց գվարդիական հրացանակիր («թյուվենքչի») հետևազոր և 10 հազար հոգուց բաղկացած հեծելազոր, որոնք կազմված էին ոռճիկ ստացող և շահին նվիրված լավագույն զինվորներից և գտնվում էին շահի անմիջական հրամանատարության տակ։ Այս մշտական զորքը նման էր ենիչերական կորպուսին և հավաքագրվում էր սկզբում ազատ մարդկանցից՝ կամավոր հիմունքներով, իսկ որոշ ժամանակ անց՝ քրիստոնյա գերիներից, հատկապես վրացիներից, և կոչվում էր «կուլամ», իսկ նրա հրամանատարը՝ «կուլար աղասի»։ Քրիստոնյա ժողովուրդներից խլում էին տղաներին և դաստիարակում հատուկ զորանոցներում՝ իսլամի ոգով։ Սրանք ունեին մեծ արտոնություններ, վարում էին բարձր պաշտոններ և վարձատրվում էին առատորեն։ Նրանք ճանաչում էին միայն Շահ-Աբասին, և նրանց կյանքն ու ապագան գտնվում էր շահի ձեռքին։

Այսպիսով, զինված ուժերի վերակառուցման հետևանքով կզլբաշական ցեղային հեծելազորը և խաների ու սուլթանների կողմից դուրս բերած զորքը երկրորդական նշանակություն ստացան։ Այս ռազմական ռեֆորմը մեծ հարված հասցրեց վաչկատուն ցեղերի հին կազմակերպությանը, որը թեև չոչնչացվեց, բայց խիստ թուլացավ և ջլատվեց։

Մյուս կարևոր ռազմական ձեռնարկումը հրետանու ստեղծումն էր։ Անգլիացիների այս խմբում կար թնդանոթ ձուլող վարպետ, որի միջոցով սկսեցին պղնձե թնդանոթներ

ու հրացաններ (մուշկետներ) պատրաստել՝ մի քանի տասնյակ հազար։ Այս գործը սովորեցրին նաև պարսիկներին։ Այսպես, իրանական բանակում երևան եկավ նաև հրետանի՝ բաղկացած մի քանի հարյուր թնդանոթից։ Սա հնարավորություն տվեց ստեղծել հրետանային զորամասեր, որպիսի գործում մեծ դեր խաղացին դարձյալ Շերլի եղբայրները։ Հրետանային զորամասերի հետ միասին նոր ստեղծված բանակի թիվը հասնում էր 40—45 հազար զինվորի։ Զինվորական կազմակերպության մեջ կատարված այս բարեփոխման հետևանքով Իրանում ստեղծվեց նոր ձևով կազմակերպված այնպիսի մարտունակ և ուժեղ բանակ, որը լիովին կարող էր չափվել թուրքական դեռևս նույնպես ուժեղ բանակի հետ։

Միաժամանակ, հենվելով քաղաքացիական բյուրոկրատիայի, նոր զինվորական ավագանու և խոշոր վաճառականության վրա և նրանց օգնությամբ Շահ-Աբասը ձեռնարկեց մի շարք եռանդուն և վճռական միջոցառումներ՝ երկրի ներսում կարգը վերականգնելու, կենտրոնախույս ուժերին հաղթահարելու և պետությունը ամրացնելու համար։ Այս նպատակով նա իր հարվածներն առաջին հերթին ուղղեց գլխավոր շարիքի՝ ֆեոդալական մասնատվածության և գլխավորապես կզլբաշական ցեղերի և նրանց ավագանու դեմ, որոնք իրենց ռազմական ուժով ու այլ առավելություններով թուլացնում էին կենտրոնական իշխանությունը, վտանգավոր դրություն էին ստեղծում պետության համար և ներքուստ քայքայում երկրի ուժերը։ Նրանք միջամտում էին գահաժառանգության գործին, փաստորեն շահերին պահում իրենց ձեռքում և այլն։ Բացի դրանից, հայտնի է, թե որքան ըմբոստ ու խռովարար էին այդ ցեղերը, ինչպես ամենահասարակ առիթով ընդվզում էին և երբեք հուսալի ռազմական հենարան չէին կարող լինել։ Ընդհակառակը, նրանք թուլացնում էին Սեֆեյանների կենտրոնական իշխանությունը։ Շահ-Աբասը թեև պահպանեց այս ցեղերից կազմված ֆեոդալական աշխարհազորը, բայց նվազեցրեց նրանց թիվը և թուլացրեց նշանակությունը, իսկ թեքելու ցեղը՝ Մուստաֆա խանի գլխավորությամբ (որը հաճախ շահերի դեմ խռովություն էր բարձրացնում)

1596—1597 թվականներին համարյա գլխովին բնաջնջեց։ Գրեթե նույնպիսի անողոքությամբ Աբասը վարվեց քրդական մուքրի ցեղի հետ. սրա ցեղապետին կասկածելով դավաճանության մեջ, նա հրամայեց բնաջնջել ողջ ցեղը՝ խանի գլխավորությամբ, բացի մի մասից, որը փախավ ու ազատվեց[1]։ Դրա հետ միասին Աբասը թուլացրեց տիրակալ ֆեոդալների ուժը։ Կզլբաշական ավագանու փոխարեն նա աչքի ընկնող զվարդիական կուլամներից առաջ քաշեց նոր զինվորական ավագանու կադրեր, որոնք սովորաբար ոչ ազնվական ծագում ունեին։ Սրանցից դուրս եկան շահի լավագույն զորավարները։ Կուլամներից էլ շահը նշանակում էր էմիրներ՝ կզլբաշական ցեղերի ավագանու փոխարեն։

Ադրբեջանական (կզլբաշական) ռազմավաշկատուն ավագանու նկատմամբ ունեցած անվստահությունը Աբասին դրդեց պետության մեջ ամեն կերպ խրախուսել ու օգնել իրանական տարրերին։ Ի հակադրություն կզլբաշական ցեղային խմբավորումների՝ նա կազմակերպեց նոր ընկերություն՝ շահի գլխավորությամբ՝ «Շահ սևեն» (շահին սիրողներ, բարեկամներ) անունով։ Սա ռազմական բնույթի հատուկ կազմակերպություն էր, որը շահական գվարդիայի դեր էր խաղում։ Շահ-Աբասը առաջարկեց բոլոր ցեղերի անդամներին, ովքեր կցանկանային, մտնել այդ ընկերության մեջ։ Ընկերությունը և նրա անդամները զգալի արտոնություններ ունեին, շահի հատուկ հովանավորությունն էին վայելում, ամրացնում շահի իշխանությունը. նրանք դարձան Սեֆեյան դինաստիայի գլխավոր հենարանը։ Նրանց շնորհվեցին մեծ հողային տիրույթներ, իսկ մնացած ցեղերին Աբասը գրեթե հաշվի չէր առնում. նա ոչ միայն ազատվեց նրանց կախումից, այլև նրանց լիովին ենթարկեց իրեն։ Այս քաղաքական քայլը հաջող արդյունք տվեց։ Մարդիկ հազարներով հարում էին նոր ցեղին։ Շահ-Աբասի այս միջոցառումները ոչ միայն կազմակերպչական-տեխնիկական, այլև քաղաքական նշանակություն ունեցան։ Կզլբաշական ցեղերի հզորությունը հիմնովին

[1] Տե՛ս „Тарихи, Алем арай", Сборник статей по истории Азербайджана, вып. I, էջ 277։

խախտվեց ու խիստ թուլացավ։ Այս բոլորի հետևանքով միայն շահը դարձավ երկրի գրեթե լիակատար տերը։ Բացի դրանից, կզլբաշական և այլ թուրքական ցեղերի զինվորական ավագանու ազդեցության թուլացման հաշվին ուժեղացավ քաղաքացիական բյուրոկրատիայի և շիա հոգևորականության ազդեցությունը։

Պարսկական տարրի ազդեցության աճման նպաստող միջոցառումներից մեկն էլ Աբասի կողմից անցկացված վարչական ռեֆորմն էր, որով կզլբաշական էմիրների զինվորական կառավարումը պահպանվեց միայն սահմանամերձ մարզերում, իսկ ներքին մարզերում սահմանվեց պարսկական բյուրոկրատիայի զուտ քաղաքացիական կառավարում։

Այսպիսով, այս ռեֆորմների ժամանակվանից Սեֆեյան պետությունը մտավ զարգացման նոր շրջան և հասավ հզորության գագաթնակետին։ Որոշ նախադրյալներ ստեղծվեցին կզլբաշական տերությունը իրանականի վերածելու համար։ Այս բոլորի շնորհիվ Շահ-Աբասը թեև բավականին հաջողություն ձեռք բերեց ֆեոդալական մասնատվածության դեմ մղած պայքարում ու կենտրոնական իշխանությունն ամրապնդելու գործում (շահնշահի իշխանությունը համարվում էր անսահմանափակ), բայց կենտրոնացված պետություն ստեղծելու և ֆեոդալական տրոհվածությունը վերացնելու խնդիրը Սեֆեյան կառավարությանը չհաջողվեց լիովին իրագործել։ Հենց այն հանգամանքը, որ Աբասը իր մարդկանցից նոր նշանակված խաներին մեծ ինքնուրույնություն էր տալիս, նրանց պաշտոնները թողնում ցմահ կամ ժառանգական, ցույց է տալիս, որ նա ստիպված էր հաշվի առնել գոյություն ունեցող դրությունը և մասամբ զիջել ֆեոդալական կենտրոնախույս ուժերին։ Եվ դա հասկանալի է, քանի որ ֆեոդալիզմի գոյության և սոցիալ-տնտեսական համապատասխան պայմանների բացակայության այն ժամանակվա պարագաներում հնարավոր չէր հիմնովին վերացնել քաղաքական մասնատվածությունը և ստեղծել լիովին կենտրոնացված բռնակալական միապետություն։ Բացի դրանից, ռազմա-վաշկատուն և պրովինցիալ ավագանին տակավին պահպանում

էր որոշ ազդեցություն թե՛ կենտրոնում, թե՛ տեղերում և դեռ որոշ չափով ուժ ուներ դիմադրություն ցույց տալու համար։ Նույնը կարելի է ասել նաև զորքի և արքունիքի իրանացման մասին, որը լիովին չիրագործվեց։ Բացի այս բոլորից, Շահ-Աբասը ամեն կերպ ջանում էր բարձրացնել Իրանի բարեկեցությունը, ուժեղացնել երկիրը՝ առևտրի ընդարձակման, տնտեսական զարգացման և այլ միջոցառումներով։ Նա ընդհանրապես աշխատում էր զարգացնել երկրի արտադրողական ուժերը հատկապես կենտրոնական մարզերում[1]։

Այս ձեռնարկումների և խաղաղ դադարի շնորհիվ Իրանը տնտեսական վերելք ապրեց։

Բայց Իրանի ֆեոդալական հասարակության լճացման պայմաններում այդ բոլոր ձեռնարկումները կարող էին նպաստել միայն շահական գանձարանի և ֆեոդալների որոշ մասի ու քաղաքացիների առևտրա-վաշխառուական խավի հարստացմանը։ Այդ միջոցառումները գրեթե բոլորովին անօգուտ էին Իրանի աշխատավոր մասսաների համար, որոնք շարունակում էին մնալ դարավոր աղքատության ու խավարի մեջ, առաջվա պես ենթարկվելով դաժան ու վայրենի շահագործման։

Այս ձեռնարկումների, ռազմական գործի և վարչության համար անհրաժեշտ հսկայական ծախսերը խոշոր միջոցներ էին պահանջում, որոնք ձեռք բերելու ուղիներից մեկն էլ առևտուրը պետք է լիներ, քանի որ գանձարանը գրեթե դատարկ էր։ Շահ-Աբասը մի շարք միջոցառումներով ու հովանավորական քաղաքականությամբ առաջվա համեմատությամբ զգալիորեն զարգացնում, ընդարձակում է թե՛ ներքին, թե՛ արտաքին առևտուրը։ Բացի սեփական վաճառականներին օժանդակելուց ու արտոնություններ տալուց, նա հատուկ մարդկանց Եվրոպա ուղարկելու միջոցով բանակցություններ է վարում մի շարք պետությունների հետ՝ առևտրական պայմանագրեր կնքելու համար (չհաշված դիվանագիտական բանակցություններն ու ռազմական դաշինք կնքելու փորձերը)։

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 613։

Աբասը միաժամանակ ջանքեր է գործադրում զանազան տնտեսական ու այլ արտոնություններով եվրոպական կապիտալը դեպի Իրան գրավելու համար, չնայած որ նման քաղաքականությունը որոշ դժվարությունների պատճառով քիչ արդյունք տվեց[1]։ Այս բոլոր ձեռնարկումները երկրի դրության բարելավման, պետության ուժեղացման և կարգի վերականգնման ուղղությամբ՝ համապատասխանում էին տիրող ու շահագործող դասակարգերի շահերին։

Շատ բուրժուական հեղինակներ ոչ միայն արդարացնում են Շահ-Աբասի դաժան գործելակերպը, այլև խիստ գովում նրան, որն իբր թե ժողովրդականություն էր վայելում։ Մյուլլերը, բացի դրանից, նրան համարում է նաև «լուսավորյալ» բռնակալներից մեկը[2]։ Այս գնահատականը իհարկե սխալ է։ Նախորդ գլխում արդեն խոսվել է այս մասին, միայն պետք է ավելացնել, որ ռուսական աղբյուրներից երևում է, թե ինչպես Շահ-Աբասի նկատմամբ ժողովրդական մասսաները լցված էին դժգոհությամբ ու ատելությամբ՝ նրա դաժանության, կեղեքման, երկրում տիրող անարդարության և այլ պատճառներով[3]։

Ինչ վերաբերում է Իրանի արտաքին դրությանը, ապա այն հիմնականում որոշվում էր նրանով, որ Շահ-Աբասը Թուրքիայի դեմ պատրաստվում էր պատերազմի նաև դիվանագիտական գծով։ Հույս չունենալով, որ միայն իր սեփական ուժերով կկարողանա հաշիվ տեսնել Թուրքիայի հետ, նա եռանդուն դիվանագիտական գործունեություն էր ծավալել և բոլոր ջանքերը գործադրում էր նրա դեմ դաշնակիցներ գտնելու և հակաթուրքական ռազմա-քաղաքական կոալիցիա ստեղծելու համար։ Նախքան այս հարցում կոնկրետ փաստերին անցնելը, պետք է ընդհանրապես նկատել, որ XVI դարի վերջին և XVII դարի սկզբին Սեֆիյան պետության միջազգային դրությունը բարենպաստ էր, և նրա հարաբերությունը եվրոպական շատ պետությունների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ՝ լավ։

[1] Տե՛ս Լեո, Մոջայական կապիտալ, էջ 61—62։
[2] Տե՛ս Мюллер, История ислама, т. III, էջ 395։
[3] Տե՛ս Վասիլևսկի, նշվ. աշխ., հ. 2, էջ 343—344։

XVI դարի վերջին Իրանը արդեն կոնկրետ քայլերի է դիմում՝ ըստ երևույթին պատերազմին անմիջապես պատրաստվելու, հակաթուրքական կոալիցիա ստեղծելու ուղղությամբ։ Շահ-Աբասի այս մտադրությունը խրախուսեց Անտոնի Շերլին, որը նույնպես շատ եվրոպացիների նման գտնում էր, որ Թուրքիայի դեմ պայքարող Եվրոպայի բնական դաշնակիցը Իրանն է։ Սկզբում Շահ-Աբասը որոշել էր դեսպան ուղարկել Իսպանիայի թագավորի մոտ։ Շերլին խորհուրդ տվեց դեսպանություն ուղարկել նաև եվրոպական մյուս միապետների մոտ։ Շահը համաձայնվեց դրան և 1599 թ. դեսպանություն ուղարկեց եվրոպական մի շարք պետություններ (Գերմանական կայսրություն, Իսպանիա, ինչպես նաև Հռոմ, Ֆրանսիա, Լեհաստան, Մոսկվայի պետություն, Վենետիկ, Անգլիա և Շոտլանդիա), որի գլուխը կարգեց Հյուսեին Ալի բեկին և Անտոնի Շերլիին։ Այս դեսպանության միջոցով շահը քրիստոնյա պետություններին առաջարկում էր միացյալ ուժերով ընդհանուր պատերազմ սկսել Թուրքիայի դեմ, որի համար առաջարկում էր ռազմական դաշինք կնքել միմյանց հետ։

Այդ ժամանակ, այսինքն՝ Շահ-Աբասի իշխանության շրջանում, Իրանի հետ առևտուր անող քրիստոնյա վաճառականներին տրվում էին մեծ արտոնություններ՝ մինչև մաքսերից ազատելը, և այլ լայն ազատություններ ու հնարավորություններ։ Կրոնական պաշտամունքի խնդրում նույնպես արգելված էր որևէ մեկին՝ անհանգստացնել նրանց։ Բացի դրանից, Իրանում կաթոլիկ միսիոներներին նույնպես բարյացակամ էին ընդունում և լայն գործունեության հնարավորություններ տալիս նրանց։ Այս բոլորի քաղաքական նկատառումները միանգամայն հասկանալի են։

Սակայն Շահ-Աբասի դեսպանության բանակցությունները եվրոպական արքունիքներում կոնկրետ արդյունքների չհասցրին և Իրանի հարաբերությունները Արևմտյան Եվրոպայի հետ Մոսկվայի վրայով գրեթե ընդհատվեցին։

Ինչ վերաբերում է ռուս-իրանական հարաբերությանը, ապա այդպիսին հիմնականում մնում էր բարեկամական, եթե հաշվի չառնենք այն, որ XVI դարի 90-ական թվականների

սկզբին թուրք-իրանական հաշտության պատճառով և այդ հաշտությունից հետո կարճ ժամանակով երկու պետությունների միջև տեղի ունեցավ բարեկամական հարաբերության որոշ սառեցում կամ խախտում[1]։ Այդ հաշտությունը, որը ռուսների կողմից գնահատվեց որպես դավաճանություն, անվստահություն ու սրտնեղություն առաջացրեց ցարի մեջ և սա այդ ժամանակ դեսպան չուղարկեց Իրան[2]։ Բացի այդ, հաշտությունից հետո Ռուսաստանը այլևս Իրանից չէր թաքցնում Թուրքիայի հետ ունեցած իր հարաբերությունը։ Ուշագրավ է նաև այն, որ 1592 թ. ցարական արքունիքը դեսպանորդ Նաշչոկինի միջոցով հայտնում է սուլթանին, որ արքան մերժել է պարսկական շահի խնդիրը, որով վերջինս օգնություն է խնդրում Ռուսաստանից՝ ընդդեմ Թուրքիայի[3]։

Բայց դրանից հետո շուտով Ռուսաստանի և Իրանի հարաբերությունները կրկին լավացան։ Ռուսական կառավարությունը կրկին փորձեց ամրացնել իր կապերը Իրանի հետ, և դա այլ կերպ չէր կարող լինել։ Բանն այն է, որ Ադրբեջանի և Դաղստանի կասպիական ափերի՝ Թուրքիայի ձեռքում գտնվելը միանգամայն անձեռնտու էր ոչ միայն Իրանի, այլև Ռուսաստանի համար, մանավանդ որ դրա հետևանքով Վոլգա-կասպիական ճանապարհը գտնվում էր օսմանցիների հսկողության տակ։ Ուստի պարզ է, որ ընդհանուր առևտրական և արտաքին-քաղաքական շահերը երկու պետություններին մերձեցման էին մղում։

1593 թ. մայիսին, որոշ դադարից հետո, ցարը ի պատասխան շահի դեսպանությանը և բարեկամության վերաբերյալ առաջարկներին, իր դեսպանին հատուկ նամակով ուղարկում է Շահ-Աբասի մոտ և պատրաստակամություն հայտնում վերանորոգելու երկու պետությունների բարեկամական հարաբերությունները։ Այնուհետև 90-ական թվականների ընթացքում նման դեսպանությունների առաքումներ ու

[1] Տե՛ս „Сношение России с Персией о Кавказе", Чтение в императорск. обществе истории и древностей, 1888, кн. III, էջ 67։

[2] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 168—169։

[3] Տե՛ս ЦГАДА, Турецкие дела, ф. 89, էջ 1։

բանակցություններ կրկնվեցին մի քանի անգամ, որոնց ժամանակ երկու կողմերն էլ հավաստիացնում էին միմյանց՝ բարեկամության, փոխադարձ օգնության և ընդհանուր թշնամու դեմ միատեղ դուրս գալու, սահմանները չխախտելու, ազատ առևտրի իրավունքի և այլնի մասին։ Նրանք նաև հավաստիացնում էին միմյանց, որ մեկի բարեկամը նաև մյուսի բարեկամն է, իսկ թշնամին՝ մյուսի թշնամին[1]։

Կարևոր է նաև այն, որ 1597 թ. Իրան ուղարկված ռուսական դեսպանին հանձնարարվում էր հավաստիացնել շահին, որ ցարը ռազմական օգնություն ցույց կտա նրան Թուրքիայի, նրա վասալների ու Բուխարայի դեմ, եթե դրա կարիքը լինի և եթե շահը իրենից օգնություն խնդրի։ Գրեթե նույնպիսի հավաստիացում կրկնվեց 1599 թ. Բորիս Գոդունովի կողմից[2]։ Շահ-Աբասի կառավարությունը ռուսական կառավարությանը առաջարկեց միատեղ ռազմական գործողություններ սկսել Թուրքիայի դեմ, որպեսզի ետ խլեն նրանից Կասպից ծովի Կովկասյան ափերը և մետաքսով հարուստ Շիրվանը, որոնք նա զավթել էր վերջին պատերազմի ժամանակ։ Իրանին ցույց տրվող օգնության դիմաց Շահ-Աբասի դեսպանը նույնպես խոստանում էր Ռուսաստանին զիջել Դերբենդը, Բաքուն ու Շամախին։

Հազիվ թե կարելի լինի երաշխավորել, թե այս խոստումներն ու հավաստիացումները որքան անկեղծ էին ու ռեալ, մանավանդ որ, ինչպես գիտենք, Մոսկվայի կառավարությունը մտադրություն չուներ պատերազմի մեջ մտնել Թուրքիայի հետ։ Բայց մյուս կողմից էլ հայտնի է, որ նա ցանկանում էր իր բարեկամական հարաբերությունները պահպանել Իրանի հետ։ Ֆեոդոր Իվանովիչի կառավարությունը ձգտում էր շահի այդ զիջման ձևական հաստատմանը։ Իրանի դեսպանը երկար ժամանակ խուսափելով դրանից և սահմանափակվելով բանավոր խոստումներով, վերջապես շահից լիազորություն ստացավ գրավոր պարտավորություն տալ։

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 224—227, т. II, էջ 136—145։

[2] Տե՛ս նույն տեղը, հ. I, էջ 352—353, հ. II, էջ 30։

Սակայն խոստումները կոնկրետ հետևանքներ չունեցան։ Լիվոնյան երկարատև պատերազմից թուլացած և Շվեդիայի, Լեհաստանի ու Ղրիմի խանի կողմից սպառնացող պատերազմի վտանգի տակ գտնվելով, Ռուսաստանը չէր կարող իսկական պատերազմ սկսել Օսմանյան կայսրության դեմ և ստիպված էր սահմանափակվել Դաղստանի սահմանների շրջանում տեղական նշանակություն ունեցող ռազմական գործողություններով։ Իհարկե նաև քիչ հավանական է, որ շահը անվերապահորեն համաձայնվեր Մոսկվայի առաջադրած պայմաններին և առհասարակ գրավոր պայմանագիր կնքեր։ Բացի այդ, չնայած հիշյալ քաղաքները Ռուսաստանին զիջելու վերաբերյալ շահի հավաստիացումներին, Մոսկվան իրավացի էր կասկածելու այդ խոստումը կատարելու հարցում, քանի որ շահին ոչինչ չէր խանգարում խոստանալու այն քաղաքները, որոնք գտնվում էին Թուրքիայի ձեռքում և, ինչպես ցույց տվեցին հետագա անցուդարձները, շահը այդ քաղաքները խոստանում էր Ռուսաստանին մինչև այն ժամանակ, քանի դեռ ինքը չէր տիրում դրանց։ Ճիշտ է, Մոսկվա ուղարկվեց գործողությունների բավականին կոնկրետ ծրագիր, որը ենթադրում էր երկու տերությունների միաժամանակյա ելույթը, որը հաղթանակի դեպքում երկու պետությունների սահմանակցություն կառաջացներ։ Սակայն այդ ծրագիրը չիրագործվեց, թեև Բորիս Գոդունովը, որն այդ դաշինքի ջերմ կողմնակիցն էր, փորձում էր իրականացնել այն։

90-ական թվականների կեսերից Թուրքիայի և Իրանի միջև նույնպես որոշ հարաբերություն գոյություն ուներ. փոխադարձ դեսպանություններ էին ուղարկվում և բանակցություններ վարվում։

1595 թ., երբ օսմանցիների գործերը վատ էին արևմտյան ճակատում, Մուրադ III-ը փորձեր արեց իր հարաբերությունները բարելավել Իրանի հետ և այնտեղ ուղարկած դեսպանի միջոցով Ավստրիայի դեմ օգնություն խնդրեց շահից (20—30 հազար զինվոր)։ Դրա փոխարեն նա խոստանում էր շահին վերադարձնել Իրանից իր նվաճած բոլոր քաղաքները։

Շահ-Աբասը, սակայն, հրաժարվում է օգնություն ցույց տալ սուլթանին, պատրվակ բռնելով պատերազմը, որ նա մղում էր այն ժամանակ ուզբեկների դեմ[1] և ցուցադրելով այդ՝ Թուրքական դեսպանին ընդունեց ռազմի դաշտում, բանակի գլուխ անցած, որով ցանկանում էր նաև շեշտել լիակատար մարտական պատրաստությունը իրանական բանակի, որն ընդունակ էր հանդես գալու օսմանցիների դեմ[2]։

Դրանից հետո որոշ ժամանակ անց Շահ-Աբասը, հաշվի առնելով Ավստրիայի դեմ մղած պատերազմում Թուրքիայի կրած դժվարությունը, իր հերթին օգտվում է հարմար առիթից սեփական պահանջները սուլթանին ներկայացնելու համար։ Նա սուլթանի մոտ է ուղարկում դեսպան Շահ-Քերիմ խանին, իր քաղաքները ետ ստանալու շուրջը համաձայնության գալու համար։ Շահը հանձնարարում է դեսպանին հիշեցնելու սուլթանին, որ ինքը նրա խնդրանքով ժամանակին իր եղբոր որդուն՝ Հայդար Միրզային պատանդ է տվել, հույս ունենալով դրա փոխարեն ետ ստանալ իր հողերը։ Այժմ արդեն Աբասը պահանջում էր բոլոր այն քաղաքները, որոնք Թուրքիան զավթել էր դեռևս Թահմազի և Խուդաբանդայի ժամանակ, հակառակ դեպքում սպառնում էր խախտել զինադադարը (երևի հաշտությունը)[3]։ Այսպիսով, զգալով օսմանցիների թուլությունը, շահը իսկույն փորձում է օգտագործել նրանց ծանր վիճակը, Թուրքիային սպառնալով պատերազմով։ Այդ պահին իհարկե նա դեռ չէր ուզում պատերազմել, որի մասին վկայում է նրա բռնած դիրքը Թավրիզի և Շիրվանի բնակչության դիմումի նկատմամբ։ Վերջիններս դիմում են շահին, որպեսզի նա կրկին իրենց միացնի Իրանին, բայց մերժում են ստանում։ Դա բացատրվում է նրանով, որ Աբասը իրեն դեռ լիովին պատրաստ չէր զգում պատերազմ սկսելու համար[4]։ Նույն դիմումում այնուհետև ասված էր, որ սուլթան Մուրադը մտադրվում է Թավրիզը և Շիրվանի երկիրը

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. I, էջ 283։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 448։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 283։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 284։

ետ վերադարձնել շահին, բայց դրան խանգարում են մի քանի մեծամեծներ, որոնք համոզում են սուլթանին հրաժարվել այդ մտքից։ Իսկ շահի դեսպան Շահ-Քերիմ խանը այնտեղից չի վերադառնում. արդյոք մեռնո՞ւմ է, թե՞ սպանում են, հայտնի չէ[1]։ Այս դեսպանության մասին հաղորդում կա նաև Մատենադարանի № 1496 ձեռագրում, որտեղ ասված է, որ Կոստանդնուպոլսում նրա պահանջը մերժում են և նա ետ է գնում[2]։

Այսպիսով, Շահ-Աբասը պատրաստվում էր խախտել Թուրքիայի հետ 1590 թ. կնքված հաշտության պայմանագիրը և հարձակվել նրա վրա՝ Իրանից խլած Հայաստանն ու Ադրբեջանը ետ նվաճելու համար։

2. ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[3]

Այս իրադարձություններից և նախապատրաստություններից հետո, XVII դարի սկզբին Շահ-Աբասը, առանց սպասելու այլ պետությունների հետ դիվանագիտական բանակցությունների հետագա ընթացքին ու կոնկրետ արդյունքներին և օգտվելով Թուրքիայի ներքին ու արտաքին ծանր վիճակից, սկսեց պատերազմը նրա դեմ, որպեսզի չեղյալ դարձնի 1590 թ. պայմանագիրը և վերականգնի 1555 թ. պայմանագիրը։

Շահ-Աբասը, խախտելով հաշտությունը, օսմանցիների դեմ նոր պատերազմ սկսեց 1603 թ.։ Նա ամենից առաջ Սպահանից հարձակման անցավ Ատրպատականի վրա՝ դրա համար ունենալով համապատասխան պատրվակներ, ինչպես, օրինակ՝ Թուրքերի կողմից շրջակա բնակավայրերի ասպատակության ու կողոպուտի ենթարկելը և այլն։

Շահի բանակի արագաշարժությունը և անակնկալ հար-

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений", т. I, էջ 284։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 252բ։

[3] Այս թեմայի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս նույն խորագիրը կրող մեր առանձին գրքույկը, Երևան, 1959։

ձակումը ապահովեց նրա հաջողությունը։ Այս հարձակումով սկսվեց թուրք-իրանական պատերազմների երրորդ շրջանը։

Պետք է ավելացնել, որ այս պատերազմում Շահ-Աբասին նպաստեց նույնպես Ադրբեջանի, Դաղստանի և Վրաստանի ավագանու և հայ մելիքների մի մասի, ինչպես նաև հայ, ադրբեջանցի վաճառականների և շիա ու հայ հոգևորականության աջակցությունը[1]։ Հետաքրքիր է նաև նշել, որ 1602 (կամ 1603 թ.) ռուսական ցարը մի քանի հազար զինվոր և մի քանի խոշոր թնդանոթներ ու թնդանոթաձիգներ է ուղարկում շահին՝ Դերբենդը թուրքերից ետ վերցնելու համար։ Նա Աբասին հորդորում էր պատերազմ սկսել թուրքիայի դեմ։ Դերբենդի ետ գրավումը ձեռնտու էր նաև ռուսների համար։ Հնարավոր է, որ ցարի այս միջոցառումը նույնպես իր ազդեցությունը ունեցավ Իրանի կողմից պատերազմը սկսելու գործում[2]։

Ինչպես Ա. Դավրիժեցին է հաղորդում, շահի բանակը սկզբում արշավեց Թավրիզի վրա, բայց տեսնելով, որ քաղաքի կայազորը Ալի փաշայի գլխավորությամբ հարձակվել է Սալմաստի վրա, թողեց Թավրիզը և ուղղվեց դեպի Սալմաստ։

Սոֆիանի դաշտում, Թավրիզից ոչ շատ հեռու, իրանական բանակը ընդհարվելով թուրքական զորքի հետ, նրան պարտության մատնեց, իսկ զորքի հրամանատարը՝ վերոհիշյալ Ալի փաշան իր որդու հետ միասին անձնատուր եղավ Շահ-Աբասին։ Պարսիկների այս առաջին հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ հետագա դեպքերի համար և բարձրացրեց Շահ-Աբասի հեղինակությունը։ Դրանից հետո Շահ-Աբասը կրկին դարձավ դեպի Թավրիզ, որը կարճատև պաշարումից հետո 1603 թ. հոկտեմբերի 21-ին անձնատուր եղավ նրան և 18 տարվա ընդմիջումից հետո նորից դարձավ Սեֆեյանների պետության մասը։ Ոմանց կարծիքով պարսկական բանակը Սոֆիանի դաշտում թուրքական զորքին հաղթելուց հետո, առանց դիմադրության հանդիպելու մտել է Թավրիզ[1], իսկ աղբյուրների մեծ մասը պնդում է, որ պարսիկները Թավրիզը վերցրել են կարճատև՝ 15—30 օր պաշարելուց հետո և այնտեղ թուրքերի մեծ կոտորած սարքել[2]։ Առանձին հեղինակների հաղորդած տարբեր տեղեկությունները իրար հակասելով հանդերձ, երբեմն էլ լրացնում են միմյանց։ Օրինակ, Գրիգոր Աբեղան Վանի սուրբ Նշան եկեղեցու ավետարանի վերջում արած իր հիշատակագրության մեջ հայտնում է, որ Շահ-Աբասը 1603 թ. 200 հազար զորքով հարձակվեց Թավրիզի (օսմանցիների) վրա, պաշարեց քաղաքը և գրավելուց հետո կոտորեց 70 հազար թուրք զինվորների[3]։ Մոտավորապես նույնն է վկայում Զաքարիա գրիչը Աղթամարի վանքի ավետարանի հիշատակարանում[4]։

Հայկական վաճառաշահ քաղաք Ջուղայի բնակիչները, որոնք իրենց տնտեսական ու այլ շահերով կապված էին Սեֆեյանների տերության հետ, ապստամբեցին օսմանցիների դեմ, վռնդեցին թուրքական կայազորին և չտեսնված հանդիսավորությամբ ու հյուրասիրությամբ ընդունեցին Իրանի շահին՝ նրան հանձնելով քաղաքի արծաթյա բանալիները[5]։ Այդ պատճառով և տնտեսական նկատառումներով Շահ-Աբասը շատ բարյացակամ վերաբերվեց ջուղայեցիներին և հովանավորեց նրանց։

Շահ-Աբասը նախքան Թավրիզից մեկնելը, Ջիլֆիդար խանին մեծ զորքով առաջ ուղարկեց Նախիջևանը գրավելու։ Օսմանցիները սկզբում փորձեցին դիմադրություն ցույց տալ և չէին ցանկանում թողնել քաղաքը։ Բայց երբ իմացան, որ շահը շարժվում է դեպի առաջ և արդեն հասել է Ջուղա, թողեցին քաղաքն ու հեռացան։ Քաղաքի տեղական բնակիչները (այդ թվում նաև զինվորները) չցանկացան հեռանալ իրենց բնակավայրից, հպատակվեցին պարսիկներին և պատրաս-

[1] Տե՛ս „Тарихи, алем арай", Сб. ст. по истории Азербайджана, вып. I, էջ 277:

[2] Տե՛ս Какаш и Тектандер, Путешествие в Персию через Московью в 1602—1603 гг., 1896, էջ 41:

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 20։

[2] Տե՛ս Նույն տեղը։

[3] Տե՛ս Ե. Լալայանի Նշվ. ցուցակը, էջ 612—820 և 841։

[4] Տե՛ս Ե. Լալայան, Նշվ. աշխ., էջ 523։

[5] Տե՛ս Կակաշ և Տեկտանդեր, Նշվ. աշխ., էջ 33։

տակամություն հայտնեցին ծառայելու շահին[1]։ Դրանից հետո Շահ-Աբասը ժամանեց Նախիջևան։

Նայիման հաղորդում է, որ իբր թե շահը Նախիջևանը գրավելով կոտորածի և կողոպուտի է ենթարկում այն[2]։ Այս տեղեկությունը չի հաստատվում այլ աղբյուրների, այդ թվում Դավրիժեցու կողմից և, ըստ երևույթին, տենդենցիոզ բնույթ է կրում։

Իրանական բանակը առաջ խաղալով, Թավրիզից և Նախիջևանից բացի, համեմատաբար հեշտությամբ գրավեց նաև ուրիշ շատ բնակավայրեր ու քաղաքներ՝ Թավրիզի, Նախիջևանի և Երևանի գավառներում։ Տեկտանդերը հայտնում է, որ Ադրբեջանի ու Հայաստանի բնակավայրերը առանց դիմադրության, կամավոր կերպով հանձնվում էին շահին, և ամենուրեք ժողովուրդը լավ ընդունելություն էր ցույց տալիս նրան[3]։

Նախիջևանից հեռացած թուրքական զինվորները հավաքվեցին Երևան, որը օսմանցիների գլխավոր ռազմական հենարանն էր։ Նրանք սկսեցին շտապ կարգով ամրացնել քաղաքի պարիսպներն ու բերդը և պատրաստվեցին լուրջ դիմադրության։ Պարսիկները առանց ժամանակ կորցնելու, արագությամբ հետապնդեցին նահանջող թշնամուն և մեծաքանակ զորքով պաշարեցին Երևանը։ Դրանից առաջ, դեռ մինչև Նախիջևանի գրավումը, գրում է Նայիման, Շահ-Աբասը նամակ է ուղարկում Երևանի կայազորի պետ Շերիֆ փաշային, որով իրեն հատուկ գոռոզությամբ ու մեծախոսությամբ հայտնում է, թե ինքն արդեն գրավել է Թավրիզը և պատրաստվում է գրավել Նախիջևանն ու Երևանը։ Դրանից հետո ինքը պիտի գրավի իր «ժառանգական երկիրը»՝ Ադրբեջանը և հետո Գանձակն ու Շիրվանը։ Ուստի առաջարկում է իզուր դիմադրություն ցույց չտալ և անձնատուր լինել։ Նույն հեղինակի և Փեշևիի հաղորդումով՝ Երևանում շահի առաջարկը չի ընդունվում։ Նրա նամակն ուղարկում են Փադիշա-

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 21։

[2] Տե՛ս «Թարիխի Նայիմա», Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 90։

[3] Տե՛ս Կակաշ և Տեկտանդեր, նշվ. աշխ., էջ 33։

հին և օգնություն խնդրում նրանից։ Չնայած որ Երևանին օգնություն հասցնելու համար սուլթանական կառավարության կողմից հատուկ հրամաններ են տրվում, բայց հենց այդ ժամանակ սուլթան Մուհամեդի մահվան պատճառով օգնություն չի ուղարկվում։ Օսմանցիները ձեռնարկում են շրջակա վայրերից օգնական ուժեր ստանալուն[1]։ «Երբ պարսիկները երևացին պարիսպների մոտ, նրանք կարծում էին, թե բերդի ժողովուրդը շահի այդ վեհությունից սարսափահար և նրա անմիտ շքեղությունից ու փայլից սրտաբեկ՝ ստիպված կլինի բերդը հանձնել։ Սակայն իսլամական բանակում կային խելացի մարդիկ, որոնք հասկացան, որ այդ վախի ու սարսափի նշաններն անհիմն են և նշանակությունից զուրկ։ Նրանք ուշադրություն չդարձնելով այդ անմիտ շքեղությանը, բերդում դրված թնդանոթների կրակոցով հեռվից ողջունեցին պարսիկներին»[2],— գրում է Նայիման։

Երևանի պաշարումը տևեց գրեթե 9 ամիս։ Պատերազմական գործողությունները գնալով ավելի լայն չափեր էին ընդունում և հսկայական տերիտորիա էին ընդգրկում՝ սկսած Նախիջևանի գավառի արևելյան սահմաններից մինչև Շիրակը և Ղարսը, որտեղ գտնվում էին բազմաթիվ քաղաքներ ու հազարավոր գյուղեր։ Թուրքական զորքերը սակավաթիվ լինելով, գրեթե ամենուրեք անցան պաշտպանության և փակվեցին բերդերում։ Բայց այդ վայրերի համարյա բոլոր բերդաքաղաքներն էլ երկար չէին կարող դիմադրել կզլբաշներին, որոնք կարճատև պաշարումից հետո մեկը մյուսի ետևից վերցնում էին դրանք։ Այժմ արդեն իրանական զորքերը սովորել էին հաղթել թուրքերին և նրանցից չէին փախչում ինչպես առաջ։ Թուրքական զորքն այնքան էր բարոյալքվել, որ նրա առանձին զորամասեր ծառայության էին մտնում Շահ-Աբասի մոտ։

Իրանական բանակի այս առաջին հաղթանակները բացատրվում են ոչ միայն վերևում նշված ռեֆորմներով ու նախապատրաստությամբ, այլև Թուրքիայի ներքին ու ար-

[1] Տե՛ս «Թարիխի Նայիմա», Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 90 և 100։

[2] Նույն տեղը, էջ 353—354։

տաքին ծանր վիճակով, որը նշվեց վերևում։ Բացի այդ, նրա զորքերի մի մասը զբաղված էր ջալալիների ապստամբությունները և երբեմն ծագող զինվորական բունտերը ճնշելու գործով։ Այս մասին Գ. Դարանաղցին հետևյալն է գրում. «Եւ այս սուլթան Մուհամմատիս անհոգութենէն երեկ Շահապազն՝ պարսից թագաւորն, բազում աշխարհի բերդունայք եւ քաղաքունայք եւ բազում գաւառք ի մէկ տարոյն միջումն զամէնքէ էառ՝ վասն անտէրունչ լինելով աշխարհացն, որ էր թվ. ՌՃԲ (1604)»[1]։ Փեշևին հաղորդում է, որ պատերազմի սկզբում Շահ-Արասը խոստումներով սիրաշահեց և իր շուրջը հավաքեց Թավրիզի մարզում գտնվող քուրդ ցեղերին։ Այդ նույն ժամանակ իրենց զինվորներով շահի մոտ եկան Վրաստանի իշխաններից Ալեքսանդրեի որդին՝ Լևեղը (Լևոն) և Սիմոնի որդին՝ Լուարսաբը[2]։

Երևանի պաշարման ժամանակամիջոցում պարսկական զորքերը հաճախակի արշավանքներ էին կազմակերպում Հայաստանի զանազան շրջաններում կամ բերդաքաղաքներում (Վան, Արծկե և այլն) գտնվող թուրքերի վրա, շատ անգամ ուղղակի կողոպուտի ու ասպատակության ենթարկում բազմաթիվ բնակավայրեր, գերեվարում տասնյակ հազարավոր խաղաղ բնակիչների։ Բացի այս բոլորից, իրանական մի բանակ մեծ արշավանք կազմակերպեց դեպի Արևմուտք՝ Հայաստանի թուրքական նահանգները, սոսկալի ավերածության ենթարկեց Շիրակի, Էրզրումի, Բասենի, Խնուսի, Արճեշի, Վանի, Արծկեի ու այլ գավառները և տասնյակ հազարավոր գերիներ բերեց հավաքեց Երևանի շրջանը[3]։

Կզլբաշների այս սոսկալի արարքների մասին բավականին մանրամասն նկարագրել է Ավգուստինյան միաբանության վանական Անտուան Գուվեան։ «...ամեն ինչ, որ կարող էին գործել կատաղությունը, անգթությունն ու ագահությունը,— գրում է հեղինակը,—տեղի ունեցավ արտասովոր շափազանցությամբ այս երկրի խեղճ բնակիչների վերաբերմամբ։ Պարսիկներն ավերեցին և անապատ դարձրին ամբողջ երկիրը, այնպես որ քսանից ավելի հարուստ և մարդաշատ քաղաքներ անգթաբար և տմարդի կերպով ավարի առնվեցան, չհաշված ավաններն ու գյուղերը»։ Այնուհետև, նկարագրելով վայրենի մեթոդներով կատարած կողոպուտի մասին, հեղինակը շարունակում է. «Ամեն ինչ կողոպտելուց հետո սկսեցին մանուկներին գերել՝ թե տղաներին և թե աղջիկներին՝ իրենց ծառայեցնելու կամ վաճառելու համար, ապա-սկսեցին երիտասարդ կանանց և աղջիկներին գերեվարել և, իրենց զգայական անարգ ցանկությանը հագուրդ տալուց հետո, վաճառել կամ զետեղել հասարակաց տներում, որպեսզի դրամ վաստակեն իրենց համար։ Այսպես գերի տարված և զանազան կողմերն ուղարկված կանանց ու աղջիկների թիվն անհավատալի չի, որ հարյուր հազար հոգու հասնի...»[1]։

Փեշևին հայտնում է, որ շահը նորից ձուլել տվեց վեց հատ «ֆրան» թնդանոթներ, որոնք շատ ծանր քարեր էին արձակում[2]։ Որպեսզի իր զորքի կորուստն է՛լ ավելի նվազեցնի, շահը հրամայեց ականային ու այլ աշխատանքների համար իբրև օժանդակ զորք ու աշխատող ձեռք, շրջակա բնակավայրերից Երևանի շուրջը բերել հազարավոր տղամարդկանց, որոնց իր զորքի առաջն էր գցելու բերդի վրա գրոհելու ժամանակ։ Այս պայմաններում թշնամու հարվածները գրեթե ամբողջովին սրանք էին ընդունում իրենց վրա և կոտորվում թե՛ թուրքերից և թե՛ պարսիկներից[3]։ Բացի դրանից, նրանք կոտորվում էին նաև բերդի շուրջը աշխատանքներ կատարելիս։ Այս փաստը հաստատում է նաև վերոհիշյալ Անտուան Գուվեան, որը վերջում եզրակացնում է. «Այս հարվածներից այնքան մեծ բազմություն մեռավ, որ բոլոր շրջակա գյուղերն անմարդ մնացին, որովհետև նրանք, որոնք ազատվում էին առաջին մարդաժողովից,

[1] Գ. Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 14։

[2] Տե՛ս «Թարիխի Փեշևի», հ. 2, Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 74։

[3] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 29—30։

[1] Լեո, Հայոց պատմություն, հ. III, էջ 244, որտեղ բերված են առանձին հատվածներ Էջմի „Сношения Петра Великого с армянским народом" գրքի ֆրանսերեն հավելվածից։

[2] Տե՛ս «Թարիխի Փեշևի», էջ 260, Ա. Սաֆրաստյան, հիշ. աշխ., էջ 74։

[3] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 26։

փախչում էին ուրիշ տեղ, որպեսզի ազատվեն երկրորդից»[1]։

Երևանի օսմանյան կայազորը 9 ամսից ավելի՝ համառորեն դիմադրելով պարսիկներին, ի վերջո, ոչ մի տեղից օգնություն չստանալով և խիստ նեղվելով սովից ու ծարավից և քանակապես նվազելով, ստիպված եղավ անձնատուր լինել իրանական բանակին (1604 թ. ամռանը). վերջինս գրավեց քաղաքը։ Դրանից հետո Շահ-Աբասի հրամանով բերդը ավերվեց, հրկիզվեց ու հողին հավասարեցվեց։

Թե՛ Փեչևին և թե՛ Դավրիժեցին պնդում են, որ Երևանը գրավելուց հետո շահը հնարավորություն տվեց քաղաքի բնակիչներին ու զինվորներին որոշելու իրենց բախտը, այսինքն, ով կցանկանար կարող էր մնալ քաղաքում՝ շահի տիրապետության տակ, իսկ ով չէր ցանկանա, հեռանալ ուր ուզում էր։ Թուրքական զինվորների մի մեծ խումբ (մոտ 5000) Մուհամեդ փաշայի գլխավորությամբ, շահի թույլտվությամբ հեռացավ իր հայրենիքը[2]։

Որոշ աղբյուրների և հատկապես Ա. Դավրիժեցու հաղորդմամբ Երևանը գրավելուց հետո Շահ-Աբասը հրամայում է ուրիշ գավառներից ու քաղաքներից Երևանի շրջակայքը բերված մի քանի տասնյակ հազար գերիներին՝ հայ թե այլազգի, քշել Իրան։ Դրանից առաջ, դեռ մինչև Երևանի պաշարումը այդ բախտին էին արժանացել նաև Թավրիզի ու Նախիջևանի շրջակայքի շատ բնակիչներ, ընդ որում՝ ոմանք իրենց կամքով[3]։

Երևանը գրավելուց հետո, ապահովելով իր թիկունքը, իրանական բանակը Շահ-Աբասի ղեկավարությամբ շարժվեց

[1] Էլոգով, նշվ. աշխ., էջ 496, տե՛ս նաև Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 245։

[2] Տե՛ս Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 75, Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 34—35։ Միայն ի տարբերություն Փեչևիի՝ Դավրիժեցին գրում է, որ այս հեռացող զինվորների եռևից պարսկական ջոկատներ դնացին, որոնք ճանապարհին հարձակվելով նրանց վրա, մի մասին սպանեցին, մյուս մասին ցրելով՝ մեծ ավար բերեցին։

[3] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 35—36, Ե. Լալայան, նշվ. ցուցակը, էջ 841։

դեպի Ղարս և պաշարեց բերդը, շատ չանցած՝ պարսիկները գրավեցին նաև այս քաղաքը։

Հայերի գաղթեցումը Իրան (Արաքսի աղետը)։ Սուլթան Ահմեդի գահ բարձրանալուց հետո, առժամանակ հնարավոր է դառնում դադարեցնել արքունական երկպառակությունները և բանակ ուղարկել Իրանի դեմ՝ Սինան փաշա Ջղալի-զադեի (Ջիկալա) գլխավորությամբ։ Սա շարժվելով դեպի արևելք, հասնում է Էրզրում, որտեղ համալրում և կարգի է բերում բանակը և «անհուն ու անհամար հեծելով»,— ինչպես հաղորդում է մի անհայտ գրիչ[1], արշավում է ընդդեմ Շահ-Աբասի։ Վերջինս իմանալով թուրքական մեծ բանակի առաջխաղացման մասին և հաշվի առնելով, որ ինքը երևի չկարողանա բաց ճակատամարտում շափվել այդպիսի մեծ ուժի հետ[2], որոշում է նահանջել։ Ահա այս ժամանակ, այսինքն՝ նահանջելիս Շահ-Աբասը հղանում է մի սարսափելի միտք։ Նա որոշում է ամայացնել ու անապատի վերածել Իրանի ու Թուրքիայի միջև ընկած Հայաստանի մի շարք նահանգներ և շրջաններ։ Նա որոշում է ոչ միայն ավերել գավառներն ու քաղաքները, այլև գլխովին տեղահան անել ու Իրան գաղթեցնել նրանց բոլոր բնակիչներին։ Այդ ահռելի միջոցառումը ոչ միայն հետապնդում էր ռազմական նպատակ,— այն է՝ օսմանցիների մշտական հարձակումները դժվարացնելու կամ անհնարին դարձնելու համար՝ նրանց արշավող բանակը զրկել ամեն ինչից ու սովի մատնել,— այլև տնտեսական։ Օգտվելով առիթից, շահը ցանկանում էր իրագործել իր մյուս մտադրությունը՝ իր պետությունը տնտեսապես ու կուլտուրապես զարգացնելու համար Իրան տեղափոխել հայերի՝ որպես գործունյա և աշխատասեր ժողովրդի՝ մի մեծ զանգված։

Այս առնչությամբ հարկ ենք համարում նկատել, որ Լեոն իր «Խոջայական կապիտալ»-ի մեջ ոչ միայն խիստ գե-

[1] Տե՛ս Փերզալեմյան, նշվ. աշխ., էջ 363։ Իսկ ըստ վերև նշված գրիչ Արեղայի (տե՛ս Ե. Լալայան, նշվ. ցուցակ, էջ 523) Ջղալի-զադեի բանակը բաղկացած էր 300 հազար հեծելազորից։ Սա, իհարկե, չափազանցություն է, մանավանդ որ ուրիշ ոչ մի հեղինակ նման տեղեկություն չի տալիս։

[2] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 519, էջ 74բ։

բագնահատում է հայերի այս գերեվարության և Հայաստանի ամայացման տնտեսական նկատառումները, այլև գրեթե անտես է անում նրա ստրատեգիական մոտիվները։ Նա ուղղակի ասում է, որ «ռազմագիտությունը միայն պատրվակ էր։ Իսկական նպատակը հայ խոջայական կապիտալը հափշտակել տանելն էր»[1]։ Իհարկե, սա չափազանցություն է։ Որ տնտեսական նկատառումները կարևոր և գուցե ավելի շատ դեր են խաղացել այս գործում, դա չի կարելի ժխտել, բայց չի կարելի նաև նսեմացնել կամ անտեսել այդ տեղահանության ռազմական նկատառումները։ Ինչ վերաբերում է ջուղայեցիների գաղթեցման պատճառներին, այս հարցում Լեոն թերևս իրավացի է։ Այս գործում գլխավոր շարժառիթը իրոք ջուղայեցիների հսկայական կապիտալներն օգտագործելու հանգամանքն էր։

Չնայած այս աննախընթաց ձեռնարկման շատ մեծ մասշտաբին, խիստ դժվարությանը և մանավանդ պարսիկների տրամադրության տակ եղած շատ կարճ ժամանակին, այնուամենայնիվ, դա ետ չպահեց Շահ-Աբասի նման արևելյան դաժան բռնակալին՝ իրագործելու իր հրեշավոր ծրագիրը։ Նա խստագույն հրաման տվեց բանակի հրամանատարներին՝ ամենաշտապ կարգով, կանգ չառնելով ոչ մի միջոցի առջև, տեղահան անել Արարատյան երկրի և մի շարք այլ գավառների ու քաղաքների ողջ ազգաբնակչությանը, ինչպես Ա. Դավրիժեցին է ասում, «զամենայն բնակիչս աշխարհին հայոց, եթե քրիստոնեայ, եթե հրեայ, եթե մահմեդական»[2] և քշել Պարսկաստան։

Սա տեղի ունեցավ 1604 թ. օգոստոսին։

Այս դեպքի մասին Գուլեան գրում է. «Այս խեղճ հալածական տարագրեալների շփոթը, ողբն ու կոծն այնչափ էր և այնքան մեծ, որ ամենաանգութ մարդկանց սիրտն անգամ կշարժեր, որովհետև մնալու ոչ ոք իրավունք չուներ, իսկ ճանապարհ ընկնելու համար զուրկ էին նրանք մարդկային ամենայն հնարավորությունից։ Այնտեղ կային բազմաթիվ խեղճ կանայք, որոնց ամուսինները մեռել էին խրամատներ և թումբեր կազմելու աշխատանքների մեջ. շրջապատված էին հինգ կամ վեց մանուկներով այնպիսի հասակի, որ չէր կարելի նրանց գրկած տանել, և ոչ էլ նրանք կարող էին ոտքով գնալ. նրանց ողբերը սիրտ էին շարժում...» և ապա՝ «հաշվելով միայն այն տեղերը, որոնք այսպես ավերվեցին ու կործանվեցին, համարում էին 60 000 ընտանիքից ավելի...»[1]։

Շուտով լուր ստացվեց, որ թուրքական բանակը հասել է Ղարս։ Շահ-Աբասը խիստ անհանգստացավ և հրամայեց բանակին՝ արագացրած երթով, հավաքված ժողովրդի հետ միասին շարժվել դեպի Նախիջևան, այնտեղից էլ Իրան։ Բազմահազար խաղաղ բնակիչներին բանակի առաջ գցելով, գազանային բռնություններով ստիպեցին արագորեն առաջ շարժվել։ Գաղթեցվում էր մոտ 350 հազար բնակչություն, որը ոտքով պետք է անցներ ավելի քան հազար կիլոմետր տարածություն։

Այսպես, այս հսկայական մասսային քշելով հասցրին Արաքսի ափը։ Պետք է նշել, որ տարագրվողների մեջ եղան մարդիկ կամ նույնիսկ գյուղեր, որոնք ոչ միայն փախան անմատչելի վայրեր, այլև զինված դիմադրություն ցույց տվեցին պարսիկներին։ Դրանցից էին Գառնիի գավառի մի քանի գյուղեր կամ նրանց որոշ բնակիչներ և հենց Գառնի գյուղի բնակիչները, որոնք կռվելով պարսիկ զինվորների դեմ, առաջին անգամ նրանց վռնդեցին իրենց շրջանից։ Բայց նրանք երկար չկարողացան մնալ այդ վայրերում և դիմանալ պարսիկների հարձակումներին։ Ի վերջո, վերջիններիս հաջողվեց հասնել քարանձավներին, որտեղ թաքնվել էին փախածները, և կոտորել այնտեղ պատսպարված թշվառ մարդկանց, «ի մակաղատեղս խաշանց կոտորէ թարց անխնայելոյ»,— գրում է Դավրիժեցին։ Կենդանի մնացածներին միացրին գաղթողների ընդհանուր քարավանին[2]։

[1] Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 64։ Ի միջի այլոց, նույն հեղինակը իր «Հայոց պատմություն» գրքում նման չափազանցության չի դիմում։

[2] Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 38։

[1] Էզով, նշվ. աշխ., էջ 470, Լեո, Հայոց պատմություն, էջ 246—247։

[2] Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 47—52։

Դրանից հետո հերթը հասավ Ջուղային։ Շահ-Աբասը խստագույն հրաման տվեց շտապ կերպով, երեք օրվա ընթացքում տեղահան անել նաև ջուղայեցիներին։ Այս նպատակով նա հատուկ զորամաս ուղարկեց Ջուղա՝ Թահմազ-Կուլի բեկի գլխավորությամբ և կարգադրեց ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, տեղի բոլոր բնակիչներին նույնպես գաղթեցնել Իրան։ Ջուղայեցիների նման գործունյա, հարուստ և ընդունակ վաճառականներ խիստ հարկավոր էին շահին՝ Իրանի առևտրին զարկ տալու և տնտեսությունը ծաղկեցնելու համար, որը հսկայական միջոցներ կընձեռեր պետական գանձարանին։ Մյուս կողմից՝ Ջուղայի հայերը միջնորդի դեր էին կատարում Արևելքի և Արևմուտքի միջև։

Քանի որ Ջուղայից դեպի արևմուտք քարավանային ճանապարհը անցնում էր օսմանյան տիրապետությունների միջով, Արևմտյան Եվրոպայի երկրների հետ առևտուրը կատարվում էր գլխավորապես Միջերկրական ծովի վրայով, և թուրքերը մեծ գումար էին ստանում իրանական մետաքսի վրա դրված մաքսերից, ուստի Շահ-Աբասը իր առջև խնդիր էր դրել՝ ազատվել թուրքական միջնորդությունից և հանդես գալ Եվրոպայում իբրև այդ թանկագին ապրանքի անմիջական հայթայթող, մանավանդ որ մետաքսի առևտուրը պետական մենաշնորհ էր։ Այս պատճառով նա ձեռնարկեց առևտրի այդ ճանապարհները՝ հարավ, Պարսից ծոցի ափերը տեղափոխելուն, որպեսզի այդտեղից մետաքսը արտահանվի Եվրոպա ծովով՝ Հնդկական և Ատլանտյան օվկիանոսների վրայով։ Այս նպատակով Շահ-Աբասը ձեռնարկեց Սպահան՝ քարավանային նոր ճանապարհի վրա տեղափոխել ջուղայեցիներին և, հետևապես, նրանց հետ նաև մետաքսի կենտրոնը։

Ջուղայեցիների տեղահանման մասին մանրամասնորեն նկարագրում է դարձյալ Ա. Դավրիժեցին։ Սա պատմում է, թե ինչպիսի ճշտությամբ, խստագույն սպառնալիքներով պարսիկ զինվորները իրագործեցին շահի հրամանը նաև ջուղայեցիների վերաբերմամբ։

Ստեղծվել էր մի անպատմելի դրություն. չտեսնված վայնասուն էր բարձրացել, քանի որ շատերը ոչ միայն փոխադրական միջոցներ չունեին՝ անհրաժեշտ իրեր ու պարեն տեղափոխելու համար, այլև նույնիսկ հետիոտն գնալ չէին կարող, բայց նրանց բռնությամբ դուրս էին հանում քաղաքից[1]։

Ջուղայի բնակիչներին ևս հավաքեցին Արաքսի ափը՝ դեպի Իրան քշելու համար։

Երբ բնակչության այդ հսկայական ամբոխը (մոտ 100 հազար մարդ) հավաքվեց Արաքսի ափը, շահը կարգադրեց բոլորին անցկացնել գետի մյուս կողմը։ Բայց պարզվեց, որ փոխադրական միջոցներ քիչ կան։ Թեև գետի մոտակա ափերից նավակներ հավաքեցին և լաստեր ու արկղներ ճարեցին կամ պատրաստեցին, բայց դրանք և ձիերը չափազանց քիչ էին, մանավանդ որ մեծ մասը պետք է տրամադրվեին իրանական բանակի զինվորների մի մասին և նրանց իրերը փոխադրելու համար։ Ստեղծվեց լուրջ ու ծանր դրություն։

Երբ իրանական բանակն արդեն Արաքսի ափին էր, օսմանյան բանակը հասավ Նախիջևան։ Այստեղ ահա մի սարսափելի վիճակ ստեղծվեց ժողովրդի համար, քանի որ Շահ-Աբասը հրամայեց անմիջապես, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ, գաղթականությանն անցկացնել գետը, քանի դեռ օսմանցիները չէին հասել։

Այսպիսով, սկսվում էր թուրք-իրանական պատերազմի ամենաողբերգական ու հրեշավոր միջադեպը, որպիսին երբևիցե տեղի է ունեցել պատմության մեջ։

Ժողովրդի մեծ մասը, մանավանդ կանայք ու երեխաները, լող տալ չգիտեին, իսկ գետը այդ ժամանակ (աշնանը) զգալի չափով վարարած էր և խիստ վտանգավոր էր անցնելը։ Պարսիկ զորքը ամեն կողմից շրջապատել էր այդ թշվառ ամբոխին և հրացաններով, սրերով ու նիզակներով մղում էր գետի մեջ։

Այսպիսով, այդ թշվառների մեծ մասը զոհ դարձավ գետի ալիքներին և քշվեց։ Ամբողջ շրի երեսը և գետի երկու ափերը դիակներով լցվել էին[2]։

Այս դժնդակ վիճակից օգտվելով, պարսիկ զինվորները ամեն տեսակի խարդախ միջոցներով և զենքի ուժով մարդ-

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 58—60։
Տե՛ս նույն տեղը, էջ 42։

կային ավար էին հափշտակում, հատկապես գեղեցիկ կանանց, աղջիկներին ու պատանիներին։ Հարազատները կորցնում էին իրար, և շատերը նույնիսկ մոռանալով հարազատներին, մտածում էին միայն իրենց կյանքը փրկելու մասին[1]։

Այս անցումից հետո, երբ Ջուղայի բնակիչները հավաքվել էին գետի ափին, Աբասը առանձին հոգատարություն ցուցաբերելով խոջաների նկատմամբ, հրամայեց իր ենթականերին՝ օգնել Ջուղայի բնակչությանը՝ անցնելու գետը, տրամադրելով նրանց ձիեր, ուղտեր և այլ միջոցներ, նրանց Թավրիզ հասցնելու համար։ Բայց պետք է ասել, որ Ջուղայի բնակչության մեծ մասը նույնպես մյուսների նման ենթարկվեց աղետի, զոհ գնալով գետի ալիքներին։

Դեռ նոր էր ժողովուրդը հաղիվ գետն անցել, երբ Շահ-Աբասը հրամայեց անհապաղ բոլորին քշել Իրանի խորքերը և որքան կարելի է շուտ հեռացնել օսմանցիներից։ Ուստի պարսիկ զինվորները թույլ չտվեցին, որ գետը նոր անցած այդ թշվառները մի փոքր ուշքի գան, իրենց շորերը փոխեն կամ հարազատներին գտնեն։ Նրանք շտապ կարգով կրկին տեղահան արեցին բնակչությանը և քշեցին դեպի Իրանի խորքերը՝ ոչ թե կանոնավոր և սովորական ճանապարհներով, այլ սարերով ու ձորերով, որպեսզի թուրքերը չկարողանային հետապնդել ու հասնել նրանց։ Այնպես որ Արաքսն անցնելու սոսկալի աղետից հետո այս տարաբախտ ամբոխին նոր, ոչ պակաս սարսափելի արհավիրքներ էին սպասում։

Հայ ժողովրդի այս ահավոր տարագրությունը բանաստեղծությամբ ողբացել է նաև Ջուղայեցի Ստեփանոս վարդապետը, որն ականատես է եղել դրան։ Բերում ենք նրա ողբի հետևյալ հատվածը.

Ափսո՜ս քեզ, Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան ելաք անմեղ, անխորհուրդ,
Գերի գնաման աք դեպի ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տկլոր թշառական։

. . . . . .

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 44։

Էս սիրուն դաշտերն, մեծ-մեծ քաղաքներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն
Ումն աք թողման դուք որ գնաման աք.
Էսպես կըլինի, որ մոռանամ աք։

. . . . . .

Աչքս կուրանար, շլինքս կոտրվեր,
Եվ՝ զհ Հայաստան, քեզ էսպէս չտեսներ,
Թէ մեռած էի, ինձ երանի էր,
Քան թե կենդանի՝ աչքս բաց տեսներ[1]։

Թե ինչ զարհուրելի տանջանքներ կրեցին և ինչպիսի կորուստներ ունեցան հայ գաղթականները Արաքսի այն ափին, նկարագրելու բան չէ։ Ձմեռը արդեն վրա էր հասել, և դժբախտ ժողովուրդը սաստիկ ցրտից պաշտպանվելու համար զուրկ էր տաք հագուստից, շատերն էլ կիսամերկ էին ու ցնցոտիներով, դրա հետ միասին սոսկալի սով էր սկսվել։ «Ի ճանապարհն, որ երթայինք, այն ինչ յեղ մնար՝ սպանեին,— գրում է Ավգուստինոս Բաջեցին,— շատն ի սոցանէ ցրտէ և խորշակէ, սովու և նեղութեանց, բազում ցաւի տիրացան։ Երեկոյին որ իջնէաք, ի վաղն ելնէաք բազում մեռեալք մնային իջևանքն և բազում հիւանդք...». «...ի ճանապարհն բազում կանայք դնէին իւրեանց ստնդեայ տղայքն ի վայր երթային վասն տկարութեան։ Շատ բազում չարչարանաց հանդիպեցաք, որ ես մեղաւորս չի պատմեցի»[2]։

Է՛լ ավելի սրտաճմլիկ պատկերներ է նկարագրում մեզ ծանոթ հայր Գուվեան։ «Նրանք ծանր էին շարժվում, մինչդեռ ձմեռը վրա էր հասնում. այնքան չարչարվեցան, որ շատերը, մանավանդ մատաղահասակներից, զոհ գնացին։ Ձմեռն այնքան դառնաշունչ էր, և ձյունն այնքան առատ, որ շատերի ոտները ցրտահար եղան, ուրիշների՝ ականջները, և մնացին շորացած ոսկորները, որովհետև ցուրտը ապականել և սպա-

[1] «Քնար Հայկական», Միանասյանի խմբագրությամբ, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 134։

[2] Տե՛ս Բ. Պատկանով, Նշխարք մատենագրութեան հայոց, էջ 9։ Տե՛ս նաև ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի № 519 ձեռագրում մի անհայտագրչի հաղորդածը (էջ 76ա)։

ել էր մսերը»։ Այնուհետև, նկարագրելով քաղցած կանանց և նրանց մանուկների անտանելի վիճակը, հեղինակը շարունակում է. «Խոստովանում եմ, որ այստեղ չեմ կարողանում պահել արտասուքս՝ հիշելով այն, որ պատահեց այդ ճանապարհորդության ժամանակ մի քանի կանանց, որոնք ի մեծ ցավ իրենց, հղի էին։ Բոլորովին հոգնած իրենց շալակած երեխաների բեռնից, նրանք մնում էին վաստակաբեկ ճանապարհի մեջտեղը նստած, շրջապատված միմիայն իրենց երեխաներով, որովհետև մյուսները շարունակում էին իրենց ուղին, իսկ մնացողները վերջացնում էին իրենց կյանքը քաղցածության մեջ, եթե կարողանում էին տանել իրենց որդիների միմյանց ետևից մեռնելու տեսարանի կսկիծը, առանց կարենալու որևէ օգնություն անել» և այլն։ «...Այդ գաղթականների մեջ գտնվեցան այնպիսիները, որոնք մի դյուրագյուտ հնար մտածեցին, որ դժվարին էր գործ դնել։ այդ հնարն այն էր, որ ով մեռնում էր, կենդանի մնացածների համար կերակուր էր դառնում»[1]։

Այնուհետև նա պատմում է, որ քաղցից գիտակցությունը դրեթե կորցրած և անդթացած ծնողները ոչ միայն ուտում էին իրենց մեռած զավակների դիակները, այլև նույնիսկ սպանում էին իրենց մանուկներին և կերակրվում նրանց մսով, «...որովհետև սովը շատ մեծ էր և դժվար տանելի հատկապես փոքրահասակ անձանց համար. սրանք ոչ ինչ բան չէին խնայում, որ կարելի էր մարսել։ Սկսեցին ուտել մարդկային աղբն անգամ»[2]։

Շուտով Շահ-Աբասը կարգադրեց գաղթականներին տեղավորել շրջակա գյուղերում՝ մինչև գարուն, իսկ ջուղայեցիներին հասցրին Թավրիզ, որտեղ նրանք նույնպես սպասեցին գարնան բացվելուն։

Գարունը բացվելուն պես պարսիկները գաղթականներին կրկին տեղահան արեցին և քշեցին Սպահանի կողմերը։ Նրանց թվում էին նաև Թավրիզում հանգստացող ջուղայեցիները, որոնց հասցրին Սպահան և տեղավորեցին այնտեղ։

[1] Էզով, Նշվ. աշխ., էջ 472։
[2] Նույն տեղը, էջ 474։

Բայց այդ գաղթականների միայն մի փոքր մասը տեղ հասավ։ Մեծ մասը ճանապարհին կոտորվեց համաճարակներից, սովից և ասպատակություններից[1]։

Շահի կարգադրությամբ գաղթականների հիմնական մասին (բացի ջուղայեցիներից) տեղավորեցին Իրանի մի շարք նահանգներում ու քաղաքներում[2], տրամադրելով նրանց հող ու այլ հնարավորություններ՝ այդտեղ մշտապես բնակվելու համար։

Շահ-Աբասը առանձնապես հոգ տարավ ջուղայեցիներին տեղավորելու և նրանց ավելի լավ պայմանների մեջ դնելու համար։ Նա նրանց բնակեցրեց Սպահան քաղաքում՝ նպատակ ունենալով իր մայրաքաղաքն ապահովել հմուտ վարպետներով ու վաճառականներով։ Այստեղ նրանց հնարավորություն տրվեց քաղաքից ոչ հեռու հիմնելու մի նոր քաղաք (արվարձան), որը կոչվեց Նոր Ջուղա՝ լավագույն շենքերով, եկեղեցիներով, այգիներով և լայն փողոցներով։

Շահ-Աբասը ամեն կերպ աշխատում էր լավ պայմաններ ստեղծել Իրան գաղթեցրած հայերի համար, որպեսզի սրանք մոռանան իրենց հայրենիքը և ընդմիշտ կապվեն նոր բնակավայրի հետ, եռանդուն կերպով զբաղվելով տնտեսական գործունեությամբ, ծաղկեցնեն երկիրը։ Նոր բնակիչները ստացան որոշ արտոնություններ ու իրավունքներ (շատ թեթև հարկեր վճարելու, դավանանքի և այլն)[3]։ Նրանք ունեին նաև ներքին ինքնավարության իրավունք և առևտրական արտոնություններ։

Ինչ վերաբերում է Շահ-Աբասի կողմից գաղթեցված հայերի թվին, ապա այս մասին ստույգ տվյալներ չկան, և հայ պատմիչներից ոչ ոք որոշակի թիվ չի հայտնում։ Մոտավոր հաշիվներով միայն կարելի է մի որոշ թիվ սահմանել։ Հ. Առաքելյանը իր աշխատության մեջ ելնելով որոշ տվյալներից, դեպի Իրան գաղթեցված բոլոր հայերի թիվը սահմանում է 400—500 հազար[4]։

[1] Տե՛ս Ռ. Պատկանով, Նշվ. աշխ., էջ 100։
[2] Տե՛ս Ա. Դավրիժեցի, Նշվ. աշխ., էջ 46։
[3] Տե՛ս նաև Գ. Դարանագցի, Նշվ. աշխ., էջ 39։
[4] Տե՛ս Հ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը, մաս Ա, 1911։

Երբ թուրքական բանակը Սինան փաշայի գլխավորությամբ հասավ Արաքսի ափը, ժողովուրդը և իրանական բանակն արդեն վաղուց անցել էին գետը և բավականին հեռացել, իսկ Շահ-Աբասը հասել էր Թավրիզ։ Սինան փաշան ուղղակի ապշեց Շահ-Աբասի այս արարքի վրա։ Փաշան սիրտ չարեց գետն անցնել և հետապնդել իրանական բանակին[1]։ Ուստի նա իր բանակը տարավ Վան՝ այնտեղ ձմեռելու։ Զորքը տեղավորվեց քաղաքում և գավառի գյուղերում, որտեղ խիստ մեծ նեղություններ պատճառեց բնակչությանը և շատ վնասներ հասցրին երկրին[2]։

Ըստ Նայիմայի՝ Վանում Ջղալե-զադեն իր մոտ է հրավիրում քուրդ բեգերին՝ նրանց հետ միություն կազմելու նպատակով։ Հաջորդ տարվա գարնանը, մինչև որ օսմանյան բանակը կվերսկսեր արշավանքը կզլբաշների դեմ, վերջիններս կանխեցին նրան։ Նրանց զորքը պաշարեց Վանը, բայց Սինան փաշան գաղտնի դուրս գալով բերդից և նավ նստելով, փախավ Արճեշ, այնտեղից էլ անցավ Էրզրում, որտեղ սկսեց լայն պատրաստություններ տեսնել և մեծ զորահավաք կատարել՝ Իրանի դեմ նոր պատերազմ սկսելու համար։ Շահը իմանալով փաշայի փախուստը, վերացրեց Վանի բերդի պաշարումը և քաշվեց Թավրիզ[3]։

Էրզրումում Սինան փաշան մեծ բանակ կազմելու համար իր մոտ հրավիրեց մի շարք փաշաների (կուսակալների), մերձավոր վասալական երկրների իշխաններին (այդ թվում նաև վրացական), բեգերին, քրդական ցեղապետնե-

էջ 97։ Այս թիվը, այլև Պիգուլևսկայայի, Ցակուբովսկու և մյուսների՝ վերևում նշված գրքում բերված թվական տվյալներն ու մյուս տեղեկությունները այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը և միակողմանի են։ Հատկապես հայերի տարագրության մասին բերված տեղեկությունները շատ թերի են և խիստ տարաձայնվում են հայկական ու այլ աղբյուրների հետ։ Տե՛ս „История Ирана с древнейших времен до конца XVIII в.", 1958, էջ 277):

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 56։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 71։

[3] Տե՛ս Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 113։ Տե՛ս նաև Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 635։

րին, ինչպես նաև ջալալիների մի քանի պարագլուխների, որպեսզի նրանց ուժերը ևս օգտագործի Իրանի դեմ պատրաստվող նոր պատերազմում։

Այսպիսով, Սինան փաշան ջալալիների օգնությանն էր դիմում։ Գ. Դարանաղցին հայտնում է, որ ջալալիների այդ առաջնորդները համաձայնվեցին Սինան փաշայի առաջարկին և դաշինք կնքեցին նրա հետ պարսկական պատերազմին մասնակցելու համար[1]։ Այստեղից պարզ երևում է, որ թուրքական կառավարությունը լավ վիճակից չէր, որ դիմում էր ջալալիների օգնությանը։

Էրզրումից Ջղալե-զադեն բանակով գնաց Դիարբեքիր, որտեղ բանակը համալրեց նոր զինվորական ուժերով և պատրաստվեց արշավանքի։ Այստեղից նա հսկայական բանակով արշավեց Իրանի վրա։

Երկու թշնամական բանակների ճակատամարտը տեղի ունեցավ 1605 թ. հոկտեմբերի 25-ին, Թավրիզի մոտ, Սոֆիանի դաշտավայրում։ Թեև կզլբաշների բանակը քանակով համեմատաբար փոքր էր թուրքականից, բայց առավելությունը նրա կողմն էր։ Նա արդեն սովորել էր հաղթել թուրքերին։ Սայքսի կարծիքով՝ վերջիններս արդեն առաջվա կարգապահությունն ու քաջությունը չունեին, մինչդեռ առաջինները կարգապահ էին և առաջին անգամ հրետանի էին գործածում[2]։

Թուրքերը հարձակվում էին սովորական դասավորությամբ. հեծելազորի զորասյանը օգնում էին հետևազորը և հրետանին։ Շահ-Աբասը խորտակեց նրանց պլանը։ Նա վճռեց դիմել խորամանկության։ Դավրիժեցին պատմում է, որ նա իր զորքը բաժանեց չորս զորախմբերի, որոնցից մեկին կարգադրեց խփել ճակատից։ Իսկ մյուս երեք զորախմբերին հրամայեց դարան մտնել երեք կողմից։ Նշանակված օրը առաջին զորախումբը անցավ հարձակման՝ կզլբաշների գլխավոր ուժի տպավորություն թողնելով։ Այս պլանը հաջողեց իրագործել փայլուն կերպով։ Օսմանցիները խմբ-

[1] Տե՛ս Գ. Դարանաղցի, ժամանակագրություն, էջ 43։

[2] Տե՛ս Սայքս, նշվ. աշխ., հ. 2, էջ 249։

վելով, անմիջապես հարձակման անցան սրանց վրա։ Այն ժամանակ, տրված ազդանշանով իրանական դարանակալած զորամասերը երեք կողմից անակնկալ գրոհի անցան թուրքական բանակի վրա և օղակի մեջ առնելով, սկսեցին ջարդը[1]։ Ջղալի-զադեի զորքերի մեջ կատարյալ խառնաշփոթություն առաջացավ, որը շուտով վերածվեց խուճապային փախուստի։ Թուրքական բանակը գլխովին ջախջախվեց։ Մեծ քանակությամբ զինվորներ գերի ընկան։ Ըստ Դավրիժեցու՝ 12 փաշաներ իրենց զորքերով ջարդվեցին[2], շատ քչերը փրկվեցին և փախան։ Սինան փաշան լքելով իր բանակը, գաղտագողի փախավ Վան, թշնամու ձեռքում թողնելով հսկայական գանձեր և հարստություն[3]։ Իրանական բանակը հսկայական ավար գրավեց և շահի հետ միասին վերադարձավ Թավրիզ։

Սինան փաշան Վանից գնում է Դիարբեքիր, որտեղ մոտ երեք ամիս հետո, Դավրիժեցու հաղորդմամբ, չկարողանալով տանել կրած պարտության ամոթը, ինքն իրեն թունավորում է։ Իսկ պատերազմին մասնակցած ջալալիների ղեկավարներից մի քանիսը սպանվում են ճակատամարտում, որով թուրքական կառավարությունն ու ժողովուրդը փրկվում են այդ հրոսակախմբերի մի մասից։ Դրանով միայն կարող էր մխիթարվել թուրքական կառավարությունը։

Սոֆիանի ճակատամարտից հետո Շահ-Աբասը ձմեռն անցկացրեց Թավրիզում, իսկ գարնանը (1606 թ.) բանակի գլուխ անցած՝ շարժվեց Ադրբեջանում և Վրաստանում մնացած և այնտեղ տակավին իշխող թուրքերի վրա։ Նա տիրեց Գանձակի գավառն ու Ղարաբաղը, իսկ Գանձակ քաղաքը գրավեց երկարատև պաշարումից հետո միայն և կոտորեց տեղի թուրքական կայազորը։

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 75–76։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 635։

[3] Այս ճակատամարտի և իրանական բանակի հաղթանակի մասին վկայում է նաև ռուսական մի աղբյուր. տե՛ս „Сношение России с Кавказом", вып I, СПб, 1889, էջ 465։

Դրանից հետո Շահ-Աբասը բանակով շարժվեց դեպի Վրաստան, որի մեծ մասը գտնվում էր թուրքերի ձեռքում։ Նա առանց կռվի գրավեց Թիֆլիսը, Դումանիսն ու Լոռին, քանի որ այս վայրերի օսմանյան զորամասերը դիմադրություն ցույց չավեցին և հնազանդություն հայտնեցին շահին[1]։ Տիրելով նաև Վրաստանը, Շահ-Աբասը այստեղից նույնպես բավական քանակությամբ բնակչություն տեղահան արեց ու քշեց տարավ Իրան։ Ըստ վրացական աղբյուրների՝ նա 80 հազար ծուխ վրացիներ, հայեր և հրեաներ գաղթեցրեց Իրան[2]։

Այսպիսով, վրաց ժողովրդին ևս վիճակված էր հայերի նման կրել այդպիսի դառնություններ, բայց համեմատաբար քիչ չափով, մանավանդ որ այդ գաղթեցումն այնքան մեծ չէր։ Չպետք է մոռանալ նաև, որ բացի հայերի մեծ գաղթից, հետագայում Շահ-Աբասը հայերի նոր գաղթեցումներ կատարեց դեպի Իրան։

Հետևյալ տարին, այսինքն՝ 1607 թ., Շահ-Աբասը բանակով Թավրիզից մեկնեց դեպի Հյուսիսային Ադրբեջան և, ըստ Մատենադարանի № 519 ձեռագրի՝ Գուգարաց ու Ուտեացոց երկրները, որտեղ նա մի քանի ամսվա պաշարումից հետո գրավեց Շամախին և կոտորեց տեղի թուրքական 11 հազարանոց կայազորը։ Այսպիսով, նա տիրեց նաև Շիրվանի մարզն ու այնտեղ նշանակեց իր կուսակալին։

Նախքան Շամախու գրավումը, 1606 թ. շահի բանակը առանց կռվի տիրացել էր Բաքվին ու Դերբենդին։ Երկու քաղաքներում էլ, մինչև պարսիկների գալը, տեղի բնակիչները, դավադրության միջոցով, թուրքական կայազորների հետ իրենց հաշիվը մաքրելով տիրել էին այդ քաղաքներն ու դրանք հանձնել շահին[3]։

Այսպիսով, մինչև 1607 թ. Շահ-Աբասը օսմանցիներից ետ գրավեց Իրանին պատկանող գրեթե բոլոր մարզերն ու

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 519, էջ 78ա։

[2] Տե՛ս Լ. Մ. Մելիք-սեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 112։

[3] Տե՛ս Искендер Мунши, Тарихи, алем арай, „Сб. ст. по ист. Азербайджана, вып. I, էջ 278—279։

քաղաքները, այսինքն՝ Հայաստանի արևելյան մասը, Ադրբեջանն ու Վրաստանը (որոնք 1590 թ. հաշտությամբ անցել էին Թուրքիային), բացի այն վայրերից, որոնք Թուրքիան կարողացել էր արդեն ամրացնել և պաշտպանել բազմաթիվ թնդանոթներով[1]։

Այս պատերազմների ընթացքում, բացի գաղթեցված ու ամայացված այդ գավառներից ու քաղաքներից, Հայաստանի մնացած վայրերի բնակիչները, հատկապես հայերը ոչ պակաս նեղություններ էին կրում թե՛ թուրքական և թե՛ իրանական զորքերի կողմից։ Կարելի է ասել, որ այդ բնակավայրերն ուղղակի ոտքի կոխան էին լինում պատերազմող բանակների կողմից։ Չհաշված ծանր հարկերը, նրանք ենթարկվում էին կողոպուտի, գերեվարության կամ կոտորածի։

Այս անտանելի դրությունն ավելի էր սաստկանում ջալալիների մի շարք խոշոր ավազակախմբերի արարքներով, մանավանդ որ կզլբաշներից թուրքերի կրած պարտության հետևանքով է՛լ ավելի լայն հնարավորություններ ստեղծվեց այս հրոսակախմբերի պարագլուխների ավելի ազատ գործունեության համար։ Այս մասին նույնպես շատ աղբյուրներ են հաղորդում, բայց մանրամասն տեղեկություններ տալիս են գլխավորապես դարձյալ Գ. Դարանաղցին և Ա. Դավրիժեցին, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի պատուհաս էին ջալալիները բնակչության գլխին[2]։

Թուրքական և իրանական բանակների վերջին ընդհարումից հետո (1606 թ.), երբ Շահ-Աբասը գնաց Թավրիզից, իսկ Սինան փաշան մեռավ, Արարատյան երկիրը և սրա մերձակա մի քանի գավառներ գրեթե անտեր էին մնացել և դարձել ամեն տեսակ հրոսակախմբերի, գլխավորապես ջալալիների բախտախնդիր առաջնորդների գործունեության ու տնօրինության ազատ ասպարեզ, մանավանդ որ թուրքական կառավարող շրջանները զբաղված էին ներքին պայքարով ու խռովություններով և աշքաթող էին արել այդ մարզերը։ Դավրիժեցին նշում է մի շարք այդպիսի ինքնակոչ

[1] Տե՛ս „Царьградские письма", էջ 271։
[2] Տե՛ս Ե. Լալայան, Նշվ. ցուցակը, էջ 822։

տիրակալների՝ մեկը մյուսից դաժան և ագահ, որոնք անասելի շարագործություններ էին կատարում ու կողոպուտի ենթարկում այդ վայրերի առանց այն էլ խիստ հյուծված և թալանված բնակչությանը[1]։

Հայտնի է, որ տարագրության ենթարկված գավառների ու քաղաքների բնակչությունը շատ սակավաթիվ էր։ Դրանք տարագրությունից մի կերպ խուսափածներ կամ ետ փախածներ էին։ Քանի որ երկիրը անտերության էր մատնված, և լիակատար անիշխանություն էր տիրում այնտեղ, ուստի ով ուժեղ էր, կարող էր ամեն ինչ անել։ Դատ ու դատաստան չկար։ Բնակչությունը և հատկապես աշխատավորությունը դարձել էր անսանձ կամայականության առարկա։

Թե որքան մեծ ծավալ էր ընդունել այս ավազակախմբերի գործունեությունը հսկայական տերիտորիայում, երևում է Դավրիժեցու հետևյալ խոսքերից. «Ի մերձակայից Կոստանդնուպոլսի մինչև յԵրևան քաղաք. ի Բաղդատայ մինչև յԴամուրղափուն զսպիտակ ծովու մէջն և զսեաւ ծովու մէջն. այս եղերքս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին»[2]։

Սակայն այս բոլորը կարծեք թե նսեմանում են այն առավել սարսափելի աղետի՝ սովի դիմաց, որն այդ ժամանակ համակեց ողջ Փոքր Ասիան, Հայաստանը, Վրաստանի մի մասը, Ադրբեջանը, Իրանի մի մասը և որը հետևանք էր վերոհիշյալ պատերազմների, սոսկալի կողոպուտների ու բնական արհավիրքների։ Այս բոլորի հետևանքով երկրի տնտեսությունը լիովին քայքայվեց, երկրագործությունը աննկարագրելի վիճակի հասավ։ Եթե հաշվի առնենք, որ նույն ժամանակ այս վայրերում տարածվեց և մորեխը, ապա պատկերը լիակատար կլինի։

Նման դժնդակ պայմաններում հայ ժողովրդի մեջ առաջ է գալիս գաղթականության մի նոր ձև՝ կամավոր գաղթականությունը, որին դիմում էին բազմաթիվ հայեր, փախչելով նշված սոսկալի նեղություններից ու սովի ճիրաններից։

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, Նշվ. աշխ., էջ 80—83։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 87։

Նրանք առանձին խմբերով հեռանում էին երկրից և գնում այլ երկրներ՝ «գտանել տեղի կելոյ և ապրելոյ»,— գրում է Դավրիժեցին։ Այսպիսով, այս գաղթականությունը եկավ լրացնելու հայերի՝ հսկայական չափերի հասնող տարագրությունը և օտար երկրներում ցիրուցան լինելու երևույթը, որը մի նոր դժբախտություն էր հայ ժողովրդի համար։

Օսմանյան կառավարությունը այս շրջանում հիմնականում վերացնելով վերնախավի ներքին պայքարը և որոշ չափով ամրանալով, եռանդուն և խիստ միջոցների դիմեց ջալալիների նկատմամբ։ Նրանց դեմ և հատկապես Ջամփոլադ օղլու հրոսակախմբի դեմ մի մեծ բանակ ուղարկվեց։ Պատժիչ արշավախմբի խնդիրն էր՝ անխնա կերպով ոչնչացնել ջալալիներին և արմատախիլ անել այդ ահռելի պատուհասը։

Այս բանակը սկզբում (1608 թ.) ռազմական գործողություններ սկսեց Ջամփոլադ օղլու զորքի դեմ և մի քանի հաջող հարվածներով ջախջախեց ու հիմնականում ոչնչացրեց այն։

Դրանից հետո նա համարյա նույնպիսի հաջող գործողություններ կատարեց ջալալիների մյուս ջոկատների դեմ, որոնց ևս հիմնականում ջախջախեց ու ցրեց։ Այս կամպանիայում գրեթե հարյուր հազար ջալալիներ կոտորվեցին։ Դրանից հետո նրանց մնացորդները դադարեցին կազմակերպված ուժ լինելուց և այլևս զգալի վտանգ չէին ներկայացնում։

Այսպիսով, երբ 1610 թ. վերջացավ սովը, ջալալիների շարժումն էլ համարյա թե դադարեց, և երկիրը սկսեց մի փոքր շունչ քաշել։

Սակայն Թուրքիան չէր հրաժարվել իր ագրեսիվ պլաններից և մտադրություն չուներ անպատասխան թողնելու Իրանից կրած պարտությունը։ 1606 թ. Ավստրիայի հետ համաձայնություն կնքելով և նշանակալից ուժեր հավաքելով, նա փորձեց 1608—1612 թվականների ընթացքում վերականգնել մինչև վերջին պատերազմը եղած դրությունը։ 1610 թ. օսմանյան մի մեծ բանակ ջալալիներին հաղթող մեծ վեզիր Մուրադ փաշայի հրամանատարությամբ կրկին

արշավում է Սեֆևյան պետության վրա և հասնում Թավրիզ։ Բայց նոր, փոփոխված պարագաներում (Իրանը ուժեղացել էր) Թուրքիան չկարողացավ գերակշռության հասնել Անդրկովկասում իր ախոյանի նկատմամբ։

Մուրադ փաշան հեշտությամբ մուտք է գործում Թավրիզ, որովհետև իրանական բանակը մինչ այդ հեռացել էր այդտեղից։ Թուրքական աղբյուրների վկայությամբ՝ օսմանցիները գրեթե բոլորովին ավերում, հրդեհում ու կողոպտում են քաղաքը[1]։ Բայց Մուրադ փաշան ոչ միայն ռազմական գործողությունները չի շարունակում կզլբաշների դեմ, այլև շտապով նաև թողնում է Թավրիզն ու իր բանակը տանում Համիդ (Դիարբեքիր) ձմեռելու, սաստիկ ձմռան պատճառով, (ըստ հայկական աղբյուրների), որից նրա զորքը խիստ նեղվում էր[2]։

Դրանից հետո Մուրադ փաշան և Շահ-Աբասը այդ պայմաններում չցանկանալով շարունակել պատերազմը (իհարկե, իրենց ռազմական ագրեսիվ պլաններից ընդհանրապես չհրաժարվելով), սկսում են փոխադարձ նամակագրությունն ու հաշտության բանակցությունները։ Այս նամակներում, բացի համաձայնության գալու փորձերից և առաջարկներից, երկու կողմերը իրար մեղադրում էին հաշտության պայմանները խախտելու մեջ։

1611 թ. սկզբին Մուրադ փաշայի մոտ շահի կողմից կրկին պատգամավորներ են գալիս, որոնք առաջարկում են հաշտություն կնքել՝ Թուրքերից այս պատերազմում շահի գրաված վայրերի բերքից տարեկան 200 բեռ մետաքս սուլթանին տալու պայմանով։ Ըստ Նայիմայի՝ Մուրադ փաշան չի համաձայնվում և պատրաստվում է արշավանքի։ Բայց 1611 թ. փաշան մեռնում է Համիդում։ Նրան փոխարինող Նասֆ փաշան, որը նրա հակառակորդն էր և հակամետ էր Իրանի հետ համաձայնություն կնքելու, համաձայնվում է այս առաջարկին և շահի պատգամավորների հետ, որոնք

---

[1] Տե՛ս Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 114։

[2] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 636, ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1675, էջ 95բ։

բերել էին մի տարվա մետաքսը, գնում է Կոստանդնուպոլիս։

Բանակցությունները Կոստանդնուպոլսում պսակվում են հաջողությամբ, և երկու երկրների միջև 1612 թ. հաշտություն է կնքվում հետևյալ պայմաններով։ Երկու երկրների միջև վերականգնվում են սուլթան Սուլեյմանի և շահ Թահմազի միջև որոշված սահմանները, որոնք, ինչպես հայտնի է, Սելիմի ժամանակ հաստատված սահմաններն էին։ Այլ կերպ ասած, Բ. Դուռը ստիպված էր զիջել և տերիտորիալ հարցում համաձայնվել 1555 թ. հաշտության պայմանագրի վերականգնմանը։ Այսպիսով, այդ հաշտությամբ Իրանը ետ ստացավ 1590 թ. Թուրքիային անցած և այս պատերազմում շահի կողմից գրավված իր գրեթե բոլոր գավառները, այսինքն՝ Հայաստանի մեծ մասը՝ գլխավորապես Արևելյան Հայաստանը, Վրաստանի մի մասը՝ գլխավորապես Արևելյան Վրաստանը, ողջ Ադրբեջանը, Լուրիստանը, Քուրդստանի մի մասը, Իրաքի մեծ մասը՝ Բաղդադով ու Մոսուլով հանդերձ, և իրավունք Դաղստանի նկատմամբ, որը սակայն երկու պետություններից փաստորեն անկախ մնաց։ Այս հաշտությամբ երկու կողմերը կրկին հաստատեցին իրենց հին «իրավունքը» Արևելյան և Արևմտյան Անդրկովկասի նկատմամբ։ Պայմանագրում, ըստ Նայիմայի, Դաղստանի և Հյուսիսային Կովկասի մի քանի այլ՝ սուլթանին հավատարիմ խաների (օրինակ՝ Շամխալի և այլոց) մասին նշված էր, որ վերջիններս պաշտպանություն են գտնում սուլթանի կողմից[1]։ Այս բոլորի դիմաց Շահ-Աբասը պարտավորվում էր ետ վերցրած մարզերից տարեկան 200 բեռ մետաքս վճարել սուլթանին իբրև տուրք։

Նայիման իր գրքում բերում է այդ պայմանագրի՝ Ռուսաստանին վերաբերող հետևյալ կետը, որն արժանի է հատուկ ուշադրության. «...ռուսի այդ կողմերում (Հյուսիսային Կովկասում—Հ. Ն.) երթևեկության ճանապարհը փակելու համար նրա կողմից կառուցված Թերեքի բերդաքաղաքի

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 637։

կործանման համար տրված ֆերմանին շահի զինվորներից ոչ մեկը չպետք է միջամտություն ցույց տա...»[1]։

Պայքարը երկու գիշատիչների՝ սուլթանական Թուրքիայի և շահական Իրանի միջև, այս անգամ վերջացավ վերջինիս հաղթանակով։ Այդ հաշտությունը, սակայն, գրավված երկրների բնակչության մեծամասնության դրությունը չբարելավեց։

Այսպիսով, թեև 1612 թ. հաշտությունը միաժամանակ վերջ տվեց արյունահեղությանը, բայց հիմնովին չլուծեց Թուրքիայի և Իրանի միջև եղած վիճելի հարցերը և չվերացրեց նրանց մրցակցությունն ու հակասությունները։ 1603—1612 թվականների պատերազմը (ինչպես և թուրք-իրանական մյուս պատերազմները) անսահման ազետներ բերեց տանջված հայ ժողովրդին։ Բայց և այնպես վերոհիշյալ հաշտությունը մի բարեբախտություն էր հատկապես հայ ժողովրդի համար, որը միաժամանակ շունչ էր քաշում և հնարավորություն ստանում թեկուզ մասամբ ապաքինելու իր խոր վերքերը։

* * *

Այս խաղաղությունը, սակայն, շատ կարճ տևեց։ 1616 թ. հաշտությունը կրկին խախտվեց և ռազմական գործողությունները երկու պետությունների միջև վերսկսվեցին։ Սրա առիթը հանդիսացավ այն, որ Շահ-Աբասը դադարեց Թուրքիային տուրք վճարելուց և, բացի դրանից, արշավախումբ ուղարկեց Վրաստանի այն մասը, որը մտնում էր Օսմանյան կայսրության ազդեցության ոլորտի մեջ։ Բայց սա միայն առիթ էր թուրքերի համար, որոնք չհաշտվելով 1612 թ. պայմանագրի հետ, պատրվակ էին որոնում իրենց կորցրածը ետ նվաճելու համար։ Ըստ ռուսական աղբյուրների (ռուս դեսպանի հաղորդած), 1615 թ. սուլթանը շահից պահանջում է ետ վերադարձնել նրա գրաված քաղաքները՝ Շամախին, Դերբենդը և այլն և, բացի այդ, խիստ դժգոհություն հայտնում, որ Շահ-Աբասը արշավելով Վրաս-

[1] Տե՛ս «Թարիխի Նայիմա», հ. 2, էջ 114։

տանի վրա, ավերածության է ենթարկել նրա մի շարք գավառները։ Շահը մերժում է այս առաջարկը, հայտնում, որ Վրաստանը համարելով իր հողը, իրավունք է վերապահում նրա հետ վարվելու ինչպես կուզենա[1]։ Կատարած վերոհիշյալ քայլը համարելով պայմանագրի խախտում, թուրքերը վերսկսում են պատերազմը։ Իհարկե, ագրեսիվ ձգտումը և պայմանագրի խախտման առիթ որոնելը միայն թուրքական կառավարության կողմից չէր։ Սեֆեյանները ևս նույնպիսի տրամադրություն ունեին։ Շահ-Աբասի գիտությամբ և դրդմամբ պարսիկները հաճախ խախտում էին հաշտության պայմանները։ Նա թույլ էր տալիս իր սահմանապահ զորամասերի հրամանատարներին հարձակումներ կատարել թուրքական շրջանների վրա[2]։

1615 թ. մեծ վեզիր Կարա-Մուհամեդ փաշան Իրանի դեմ արշավելու համար մեծ բանակ հավաքելով, հաջորդ տարվա գարնանը շարժվեց կզլբաշների վրա։

Էրզրումից Կարա-Մուհամեդի միացյալ բանակը բավականաչափ թնդանոթներ վերցնելով, ուղղվեց դեպի Երևան ու պաշարեց այն, ինչպես և մի քանի այլ քաղաքներ։ Այդ ժամանակ շահը զորքով գտնվում էր Նախիջևանում։ Թեև երկու և կես ամիս պաշարելուց հետո թուրքերին հաջողվեց գրավել Երևանի բերդի մի մասը, բայց հանդիպելով կզլբաշների՝ բերդի պաշտպանների ուժեղ հակահարվածին, օսմանցիները պարտություն կրեցին և նշանակալից կորուստներ տալով, ստիպված էին ետ նահանջել[3]։ Ըստ Նայիմայի՝ թուրքական բանակը երկարատև կատաղի կռիվներից հետո, չկարողանալով գրավել բերդը և ձմեռը վրա հասնելու պատճառով, ստիպված վերացրեց պաշարումն ու ետ քաշվեց։ Նրա պարտության և մեծ կորուստների մասին, ինչպես տեսնում ենք, հեղինակը դիտավորյալ կերպով լռում է[4]։

Այս անհաջողությունից հետո նույն տարում Մուհամեդ փաշան դադարեցրեց պատերազմը և Շահ-Աբասի հետ կընքեց զինադադար, քանի որ օսմանյան զորքը մեծ նեղություններ ու աղետներ էր կրում (սով, համաճարակ, ապստամբություն զորքի մեջ)։ Ըստ այդ զինադադարի՝ Շահ-Աբասը համաձայնվեց վերականգնել 1612 թ. հաշտության պայմանները։

Դրանից որոշ ժամանակ անց, 1617 թ. թուրքական նոր զորաբանակ ուղարկվեց Իրանի դեմ՝ Խալիլ փաշայի հրամանատարությամբ, որը պետք է գրավեր Հայաստանի և Ադրբեջանի մի շարք քաղաքներ ու մարզեր, ինչպես և Թիֆլիսը, և Արևելյան Վրաստանից վոնդեր կզլբաշներին։

Պատերազմական գործողություններն այս անգամ տեղի ունեցան գլխավորապես Գանձակի ու Նախիջևանի շրջաններում։ Սուլթանի պահանջով Խալիլ փաշային օգնության էր եկել Ղրիմի խան Ջանիկ Գիրեյը, որը 40 հազար զորքով հարձակվեց կզլբաշների վրա։ Թաթարները սոսկալի կողոպուտի ու ավերածության ենթարկեցին Գանձակը, Նախիջևանը, Ջուղան և այլ քաղաքներ ու գյուղեր[1], գրավելով մոտ 30 հազար գերիներ ու հսկայական ավար[2]։

Շահի պատվիրակ Միրզա-Մուհամեդի և Խալիլ փաշայի միջև տեղի ունեցող երկարատև բանակցությունները վերջանում են 1618 թ. զինադադարի կնքումով՝ հիմնականում Ստամբուլի հաշտությամբ (1612 թ.) ընդունված պայմաններով, միայն այն տարբերությամբ, որ շահը նախկին 200 բեռ մետաքսի փոխարեն այժմ պարտավորվում էր վճարել 100 բեռ։

Նայիման իր «Ցիրավի դաշտում երկուստեք կնքված խաղաղությունը» վերնագրով հոդվածում այս մասին բավականին մանրամասնություններ է հաղորդում։ Շահը օսմանցիների համար 800 ուղտաբեռ պարեն, զանազան ապրանքներ և շատ նվերներ էր ուղարկել[3]։ Բայց այս անգամ ևս սուլթանը չհամաձայնվեց զինադադարի պայմաններին, և պատերազմը կրկին շարունակվեց։ Այդ պահին Շահ-Աբա-

[1] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. II, էջ 298 և 348։

[2] Տե՛ս Аббат Минот, История турецкая, ч. II, էջ 395։

[3] Տե՛ս Ա. Դավրիժեցի, Նշվ. աշխ., էջ 637։

[4] Տե՛ս Ա. Մաֆրաստյան, Նշվ. աշխ., էջ 143։

[1] Տե՛ս Ա. Մաֆրաստյան, Նշվ. աշխ., էջ 143։

[2] Տե՛ս Մ. Զամչյան, Նշվ. աշխ., հ. 2, էջ 588։

[3] Տե՛ս Ա. Մաֆրաստյան, Նշվ. աշխ., էջ 123։

սը որոշ դժվարություններ էր կրում Թուրքիայի դեմ մղվող պատերազմում և իր պլանների իրականացման գործում։ Բացի դրանից, նրան անհրաժեշտ էր կարգավորել հույժ կարևոր ռազմա-քաղաքական ու տնտեսական հարցերը հարավային Իրանում և արևելյան սահմանների վրա։ Ստեղծված դրությունը ստիպում էր նրան դիմել որոշ զիջումների և շարունակել հաշտության բանակցությունները։ Նրա դեսպան Թուոուն Կասմ խանը 1619 թ. գնում է Կոստանդնուպոլիս, իր հետ տանելով 100 բեռ մետաքս և մեծ քանակությամբ զանազան նվերներ։ Սակայն սկզբում խանի հետ բանակցություններ չվարեցին։ Ուստի նա կապվեց մի քանի եվրոպական տերությունների դեսպանների հետ և նրանց կառավարություններին կշտամբելով անմիաբանության և իրենց դաշնակից Իրանին չօգնելու հարցում, հորդորում էր միացյալ ուժերով դուրս գալ Թուրքիայի դեմ։ Բացի այդ, խանը հայտնում է, որ իր արքան պատերազմ է սկսել սուլթանի դեմ, հույս ունենալով, որ քրիստոնյա տերությունները միանալով՝ նույնպես կհարվածեն ընդհանուր թշնամուն և երկուստեք միացյալ ուժերով մեջտեղից կվերացնեն այդ մեծ վտանգը[1]։

Որոշ տեղեկություններով՝ թուրքերի անհաջողությունները և հատկապես Իրանի դեմ մղած պատերազմում Ղրիմի խանի կրած պարտությունը շուտով սուլթան Օսման II-ին ստիպում են համաձայնվել հաշտություն կնքելու առաջարկին։

Տեղի ունեցած երկարատև բանակցությունների հետևանքով երկու կողմերի միջև 1619 թ. ստորագրվում է հաշտության պայմանագիր, որով Ախալցխայի էյալեթը մնում էր թուրքերին, իսկ «Բաղդադի սահմանի վրա» երկու սանջակներ՝ Դեռնեն ու Դիրտենգը անցնում էին պարսիկներին»[2]։ Պետք է նկատել, որ այս պայմանագիրը որոշ փոփոխություն (կորրեկտիվ) մտցրեց 1555 թ. պայմանագրում, հատկապես Վրաստանի հարցում։

1619 թ. հաշտությունը, սակայն, Իրանի և Թուրքիայի միջև հակասությունների վերջնական վերացում չէր նշանակում։ Չնայած դրան, երկու կողմերը ստիպված էին որոշ ժամանակ պահպանել նրա պայմանները։

Ինչևիցե, այս հաշտությունը ևս մի բարեբախտություն էր Թուրքիայի, Իրանի, Անդրկովկասի, մանավանդ հայ ժողովրդի համար, որը թեկուզ ժամանակավոր խաղաղության պայմաններում ուշքի էր գալիս և կրկին ձեռնարկում էր երկրի վերաշինությանը։ Բացի դրանից, այս հաշտությամբ Շահ-Աբասը հնարավորություն էր ստանում մի փոքր էլ զբաղվելու այլ գործերով։ Նա մի քանի անգամ պահանջել էր Հնդկաստանի «Մեծ Մողոլ» Ջհանգիրից՝ իրեն վերադարձնել նրա կողմից գրավված Ղանդահար կարևոր քաղաքը, բայց մերժում էր ստացել։ Հաշտությունից և Բուխարայի ուզբեկական խանի հետ խաղաղ հարաբերություններն ամրացնելուց հետո նա արշավանքի ձեռնարկեց դեպի արևելք և պարտության մատնելով Մեծ Մողոլի զորքին, նվաճեց Ղանդահարը (1622 թ.)։

* * *

Թեև 1623 թ. Թուրքիայի և Իրանի միջև պատերազմը կրկին վերսկսվեց, բայց այս անգամ այն տեղի էր ունենում Հայաստանի տերիտորիայից համարյա թե դուրս, գլխավորապես հարավում։ Համենայն դեպս, իրանական Հայաստանը, որի մեջ մտնում էր Արարատյան երկիրը, այս անգամ զերծ էր այդ պատերազմական գործողություններից։ Այդ պատճառով, ինչպես և այն ժամանակվա Երևանի խանության բեյլերբեյ Ամիրգունա խանի գործունեության շնորհիվ Հայաստանի ու հատկապես Արարատյան երկրի դրությունը սկսեց բարելավվել։ Շինարարության և տնտեսության բարելավման ուղղությամբ ծավալվեց մեծ գործունեություն, որին բավականին նպաստում էր Ամիրգունա խանը։ Ամեն կերպ ջանալով բարձրացնել իր մարզի տնտեսությունը և լավ ըմբռնելով հայերի կարևոր դերը այդ գործում, նա մի շարք միջոցառումներով օգնում էր նրանց՝ երկիրը վերաշինելու և տնտեսական գործունեությունը ծավալելու համար։ Եվ իրոք, կարճ ժամանակում այս ուղղությամբ զգալի գործ

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 277բ—278ա։

[2] «Թարիխի Նայիմա», հ. 2, Ա. Մաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 123։

կատարվեց։ Արարատյան երկրի բնակչության (հայերի) թիվը ավելացնելու համար այս խանը արշավանքներ էր կազմակերպում Հայաստանի այլ վայրերը (թուրքական գավառները) և այդտեղից մեծ քանակությամբ բնակիչներ բերում ու բնակեցնում այստեղ[1]։ Ի դեպ, թեև նախորդ տարիների ընթացքում հիշյալ գավառների հայ բնակչության թիվը երկու գաղթեցումից հետո նորից որոշ չափով ավելացել էր, բայց 1618 թ. Երևանի գավառներից և Ատրպատականից Շահ-Աբասի կատարած հայերի նոր գաղթեցման հետևանքով այդ վայրերում բնակչությունը կրկին զգալի չափով պակասել էր։ Այս անգամ Շահ-Աբասը գաղթեցրեց այդ վայրերի (Երևան, Գանձակ, Թավրիզ, Արդեբիլ և այլն) ոչ թե բնիկներին, այլ օտար վայրերից եկածներին, ընդամենը մոտ 50 000 մարդ, որոնց նույնպես տարավ Իրան և բնակեցրեց այնտեղ։

Այս նպաստավոր պայմանները մեծ հնարավորություններ տվին հայրենի երկիրը կրկին ծաղկեցնելու համար։ Հայերի թիվը Հայաստանի մեծ մասում, հատկապես իրանական հատվածում կարճ ժամանակամիջոցում կրկին մեծ չափով ավելացավ և նորից տեղի ունեցավ հայ ժողովրդի որոշ կոնսոլիդացիա։

1623 թ. Թուրքիայի և Իրանի միջև կրկին վերսկսված պատերազմի առիթը այս անգամ Բաղդադի թուրքական կուսակալի ապստամբությունն էր սուլթանի դեմ։ Դրանով երկու տերությունների միջև պայքարը կրկին բորբոքվեց՝ այս անգամ հիմնականում Բաղդադի համար։ Պարսիկները մեծ զորքով պաշարեցին քաղաքը և երեք ամսից հետո միայն դավաճանությամբ կարողացան գրավել այն (1623 թ. նոյեմբերին)։

Քաղաքը ենթարկվեց կողոպուտի, իսկ սյուններները սրի քաշվեցին։ Երկու կողմերի միջև արագ կերպով ծավալվեցին ռազմական գործողությունները։ 1624 թ. գարնանը կզըլբաշները Կարշղայ խանի հրամանատարությամբ գրավեցին Մոսուլը, Մարդինը, Կիրկուկը, այդ թվում՝ շիաների սրբազան քաղաքներ Նեջեֆը, Քերբալան և մի քանի գավառներ[1]։

Իրանի բանակի հաջողություններին նպաստեց նաև այն հանգամանքը, որ այս պատերազմի շրջանում թուրքական մի քանի կուսակալներ (Դրուզի, Էրզրումի, Հալեպի, Դիարբեքիրի և այլ վայրերի) սուլթանական կառավարության դեմ ապստամբություն բարձրացրին և դիմեցին Իրանի շահի օգնությանը՝ պատրաստակամություն հայտնելով ենթարկվել նրա գերագույն իշխանությանը։

1625 թ. մեծ վեզիր Հաֆզ Ահմադ փաշան 100 հազար զորքով եկավ և պաշարեց Բաղդադը։ Պաշարումը տևեց ինը ամիս, որի ընթացքում նա չկարողացավ գրավել քաղաքը, մանավանդ որ Շահ-Աբասը զորքով օգնության հասավ պաշարվածներին։ Սակայն որոշ ժամանակ անց շահը դեսպաններ ուղարկեց Հաֆզ փաշայի մոտ, առաջարկելով հաշտություն՝ Բաղդադը իբրև ժառանգություն իր որդուն թողնելու պայմանով։ Փաշան կարականապես մերժեց այս առաջարկությունը։ Շուտով, սակայն, թուրքական զորքը խռովություն բարձրացրեց և պահանջեց թողնել Բաղդադը և ետ դնալ։ Գլխավոր հրամանատարը ստիպված էր ենթարկվել և բանակին նահանջի հրաման տալ։ Օսմանցիները կռվով կարողացան քաշվել Հալեպ՝ ձմեռելու, կորցնելով զորքի կեսը[2]։

Դրանից հետո շահի դեսպան Թահմազ-կուլի խանը Կոստանդնուպոլիս է գալիս հատուկ գրությամբ, որով շահը խընդրում էր (ըստ Նայիմայի) Բաղդադը շրջակայքով տալ իր որդուն իբրև ժառանգություն։ Սակայն արքունիքում դեսպանին մերժում են և ետ ուղարկում։ Միաժամանակ նոր բանակ կազմելու և ուղարկելու համար որոշ միջոցներ են ձեռք առնվում։ Բացի այդ, վրացական Թեյմուրազ խանին հրաման է ուղարկվում, որպեսզի սա ևս բոլոր միջոցներով, Վրաս-

[1] Տե՛ս Զաքարիա Մարկավագ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 45—47։

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 292ա, Արբատ Մինոտ, նշվ. աշխ., II մաս, էջ 534։

[2] Տե՛ս «Վարդան Բաղիշեցու ժամանակագրութիւն», Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 74։

տանի մյուս իշխանների հետ միասին մասնակցի կզլբաշների դեմ մղվող պատերազմին[1]։

Սակայն Իրանի դեմ ուղարկված բանակի հրամանատար Խալիլ փաշային էլ չհաջողվեց քիչ թե շատ շոշափելի հաջողություն ձեռք բերել։ Օսմանյան կայսրությունն այդ պահին, ըստ երևույթին, ի վիճակի չէր ոչ Իրանից ետ խլել նվաճած տերիտորիաները և ոչ էլ իր ասիական մարզերում վերականգնել ներքին անդորրությունը։ Այս պայմաններում սուլթանական կառավարությունը ստիպված էր ընդունել շահի առաջարկը և 1627 թ. նոր հաշտություն կնքել՝ նախորդ (1619 թ.) հաշտության պայմաններով, բացառությամբ այն 100 բեռ մետաքսի, որը շահը պարտավորվել էր վճարել սուլթանին։ Այս հաշտությամբ Շահ-Աբասը փաստորեն իրագործեց Իրանի միավորման և նվաճումների իր միտիան։ Սակայն այդ հաշտությունը, որը փաստորեն զինադադար կարելի է համարել, երկար չտևեց։

Այսպիսով, չնայած Թուրքիայի բազմաթիվ փորձերին ու ջանքերին, XVII դարի առաջին քառորդում նա չկարողացավ կրկին գավթել Անդրկովկասի երկրները, վերադարձնել Իրաքը (որը կորցրեց 1623—1624 թթ.) և հասնել 1590 թ. հաշտության պայմանների վերականգնմանը։

3. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

XVII դարի առաջին քառորդում Թուրքիան շարունակում էր լուրջ քաղաքական և տնտեսական ճգնաժամ ապրել։ Կառավարությունն անուժ էր դուրս գալու ստեղծված դրությունից։ Նվաճած հարուստ երկրների կորուստը և հաջող պատերազմների դադարումը է՛լ ավելի խորացրին ներքին ճգնաժամը երկրում։ Պետության մեջ դրությունը բարդանում էր նաև ֆեոդալների տիրապետող դասակարգի ներսում սրված հակասությունների և շարունակվող ներքին պայքարի պատճառով։ Գնալով աճում էր ֆեոդալական

1 Տե՛ս «Թարիխի Նայիմա», հ. 2, էջ 411։

տրոհվածությունը։ Տեղական փաշաները դառնում էին ինքնուրույն փոքրիկ միապետներ։

1617—1623 թվականների ժամանակամիջոցում սուլթանները չորս անգամ փոխվեցին, ընդ որում մեծ մասամբ բռնի ճանապարհով և երբեմն՝ արյունահեղությամբ։

Կայսրության մեջ և հատկապես Կոստանդնուպոլսում շարունակվում էին զինվորական հաճախակի բունտերն ու ապստամբությունները։

Սուլթան Մուստաֆայի 15-ամսյա թագավորումը (1618 թ). լիակատար անիշխանության մի շրջան էր։ Ենիչերիներն ու սփահիները դարձել էին պետության տերն ու տնօրենը և չտեսնված ու չլսված արարքներ էին կատարում։ Մեծ վեզիրները անձնական նկատառումներով նրանց շատ էին երես տալիս և գրեթե ամեն ինչ թույլատրում էին։ Մյուս քաղաքների և նահանգների դրությունն ավելի ծանր էր։

Երբ 1623 թ. գահ բարձրացավ Մուրադ IV-ը, երկրի դրությունը խիստ տագնապալի էր։ Անիշխանությունը շարունակվում էր։ Զինվորական խռովությունները և տեղական կառավարիչների ընդհարումները մի քանի տարի չէին դադարում։

19 արևելյան սանջակներ անցել էին պարսիկների ձեռքը։ Թեև այս սուլթանը դաժան միջոցառումներով, կարողացավ որոշ չափով բարելավել պետության ներքին դրությունը և արտաքուստ մասամբ ամրապնդել իր իշխանությունը, բայց ճգնաժամն ընդհանուր առմամբ չվերացվեց։ Այս դրությունն ի նկատի ունենալով, Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրի հեղինակը գրում է, որ «ներքուստ ու արտաքուստ օր ըստ օրէ կործանիւր թագաւորութիւն Թուրքաց»։

XVII դարի 20-ական թվականների սկզբներին մի քանի պրովինցիաներում ու քաղաքներում տեղի են ունենում ժողովրդական ապստամբություններ ու ֆեոդալ-իշխանների հակակառավարական խռովություններ։ Այս տեսակետից առանձնապես ուշագրավ է Աբազա փաշայի ապստամբությունը, որը տեղի ունեցավ 1622 թ. Էրզրումում՝ սուլթանի իշխանության դեմ։ Սա հարձակվեց ապստամբած ենիչերիների վրա, կոտորեց գրեթե բոլորին և ապստամբական նշա-

նակալից բանակ կազմելով, կարճ ժամանակում գրավեց Անատոլիայի մեծ մասը։

Միայն 1628 թ. մեծ վեզիր Խոսրով փաշային հաջողվեց խոշոր բանակով, Էրզրումը երկար պաշարելուց հետո, ստիպել Աբազային դադարեցնել դիմադրությունը և հաշտություն կնքել իր հետ։

Ինչ վերաբերում է այս շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքական դրությանը, ապա այդպիսին ընդհանուր առմամբ բարվոք չէր, չնայած մասնակի հաջողություններին։ Այդ ժամանակ ամրապնդվեցին նոր բարեկամական և առևտրական հարաբերությունները Ֆրանսիայի հետ՝ շնորհիվ 1604 թ. վերանորոգված կապիտուլյացիայի։ Այդ նույն տարում կապիտուլյացիաներ ստացան նաև Անգլիան[1] ու Վենետիկը։ Իսկ հոլանդացիները իրենց առաջին առևտրական պայմանագիրը Բ. Դռան հետ ստորագրեցին 1612 թ.։

Գերմանա-հունգարական պատերազմում ռազմական գործողությունները 1601—1605 թվականներին ընթանում էին փոփոխակի հաջողությամբ։ Շուտով ներքին ծանր դրությունից դրդված 1606 թ. նոյեմբերին Թուրքիան Ավստրիայի հետ հաշտություն կնքեց 20 տարով։ Այս պայմանագրով սուլթանը կայսրից ստանում էր միանվագ խոշոր գումար՝ ամենամյա տուրքի փոխարեն. երկու միապետների փոխհարաբերության մեջ սահմանվում էր իրավահավասարություն, իսկ Տրանսիլվանիան դադարում էր բացառիկ վասալական կախման մեջ գտնվել Օսմանյան կայսրությունից։ Այսպես վերջացավ երկու երկրների՝ 13 տարի տևող այդ ավերիչ պատերազմը։ Դրանով Թուրքիան զրկվեց հյուսիսային ուղղությամբ ընդարձակվելու հնարավորությունից։

Թուրքիայի հարաբերությունը Ռուսաստանի հետ XVII դարի սկզբին սկսել էր վատանալ՝ կապված Բորիս Գոդունովի՝ հակաթուրքական կոալիցիա ստեղծելու ձգտումների հետ։ 1604—1605 թվականներին Հյուսիսային Կովկասում թուրքական և ռուսական զորքերի միջև տեղի ունեցան մի

[1] Ավելի հիշա՝ Անգլիան փաստորեն վերանորոգեց մինչ այդ եղած կապիտուլյացիան։

քանի ընդհարումներ, որոնց հետևանքով վերացվեցին Թերեքի վրայի ռուսական հենակետերը։

Միխայիլ Ֆեոդորովիչի գահակալությունից հետո խնդիր դրվեց դիվանագիտական հարաբերությունները վերականգնել բոլոր պետությունների, այդ թվում նաև Թուրքիայի հետ[1]։ Այս նպատակով 1613 թ. դեսպանություն ուղարկվեց սուլթանի մոտ։

Դրանից հետո մի քանի անգամ երկու կառավարությունները փոխանակեցին դեսպանություններ, որոնք բանակցություններ էին վարում իրենց հարաբերությունները բարելավելու[2] և Ազովի Թուրքերի ու Դոնի կազակների փոխադարձ հարձակումներին վերջ տալու խնդրով։

1618 թ. Մոսկվայի կառավարությունը Իրան ուղարկած դեսպանի միջոցով հայտնում է շահին, որ իր հարաբերությունը Թուրքիայի հետ վատացել է։ Սակայն նույն տարում նոր սուլթանի հարաբերությունը Ռուսաստանի հետ կրկին բարելավվում է։ Ցարական նոր դինաստիան աշխատում էր ամեն կերպ զսպել կազակներին՝ Թուրքիայի վրա հարձակվելուց[3], մանավանդ որ նա այդ պահին չէր ցանկանում պատերազմ մղել Թուրքիայի, ինչպես և իր մյուս հարևանների դեմ՝ ներքին դժվարությունների պատճառով։

Հետաքրքիր է նաև այն, որ թուրքական դեսպանությունը ցարական արքունիքում պատասխանում էին, որ Իրանի հետ ունեցած իրենց հարաբերությունը զուտ առևտրական հողի վրա է։

Ռուսական նոր դեսպանությունը չբարելավեց ռուս-թուրքական հարաբերությունները։

1627 թ. Մոսկվա է ժամանում թուրքական նոր դեսպանությունը՝ սուլթան Մուրադ IV-ի պաշտոնագրով, մոտավորապես նույնպիսի առաջարկներով, ինչ որ դրանից առաջ։ Այս անգամ սուլթանը ոչ միայն առաջարկում էր «ռուսների

[1] Տե՛ս Ն. Ա. Մ մ ի ր ն ո վ, նշվ. աշխ., հ. 2, էջ 4։

[2] Տե՛ս С. М. Соловьев, История России с древнейших времен, т. X, СПб, 1877—1879, էջ 1097։

[3] Տե՛ս Н. А. Смирнов, Россия и Турция в XVI—XVII вв., т. II, էջ 10—11։

հետ սիրո, բարեկամության և խորհրդի» մասին, այլև ցարին խոստանում «ամեն տեսակի օգնություն»[1]։

Սուլթանի առաջարկով՝ Մոսկվայի կառավարության և Թուրքիայի միջև 1627 թ. դեկտեմբերի 13-ին կնքված պայմանագրով[2] երկու պետությունները հաստատում էին իրենց «մշտական բարեկամությունը» և դեսպանների փոխանակումը։ Այսուհետև սուլթանը պարտավորվում էր օգնություն ցույց տալ ցարին Լեհաստանի դեմ, նրան վերադարձնել լեհերի ձեռքում գտնվող ռուսական քաղաքները և արգելել Ղրիմի թաթարներին ու մյուսներին հարձակվել ռուսական հողերի վրա։

* * *

Այդ նույն ժամանակ Իրանի ներքին ու արտաքին դրությունը Թուրքիայի հետ համեմատած՝ մի փոքր ավելի լավ էր, թեև այնտեղ նույնպես երկարատև պատերազմների, հարկային դաժան քաղաքականության և ֆեոդալների անողոք ճնշումների պատճառով դասակարգային պայքարը բավականին սրված էր, այս կամ այն վայրում հաճախակի ժողովրդական հուզումներ կամ ապստամբություններ էին տեղի ունենում։

Պատերազմի ընթացքում և հատկապես նրա դադարների ժամանակ Աբասը նոր քայլեր կատարեց իր պետության տնտեսական զարգացման և քաղաքական ամրապնդման ուղղությամբ։

Լինելով խելացի քաղաքագետ, նա հարստության մեջ տեսնում էր իր պետության բարեկեցության և ամրապնդման աղբյուրը։ Եվ որովհետև, նրա կարծիքով, գլխավորապես առևտուրը կարող էր այդ դերը խաղալ, ուստի նա բոլոր միջոցներով նպաստում էր սրա զարգացմանն ու բարգավաճմանը։ Առևտրի զարգացման համար նա անհրաժեշտ պայմաններ ստեղծեց և կողոպուտների ու շարաշահումների դեմ եռանդուն պայքար մղելով, ապահովեց առևտրի անվտանգությունը։ Շահ-Աբասը իր ազգակիցների (հայրենակիցների) մեջ առևտրական գործում առանձին հակում և ընդունակություն չէր տեսնում։ Պարսիկներն ու ադրբեջանցիները համեմատաբար ավելի շատ զբաղվում էին ներքին առևտրով։ Իսկ արտաքին առևտրում նկատելով հայերի ընդունակությունն ու առավելությունը, բոլոր միջոցներով աջակցում էր հայ վաճառականներին և հովանավորում նրանց, որի պատճառով էլ արտաքին առևտուրը գտնվում էր գերազանցապես հայերի ձեռքին[1]։

Շահ-Աբասը լավ պայմաններ էր ստեղծում նաև օտարերկրյա և հատկապես եվրոպական վաճառականների համար՝ ոչ միայն դիվանագիտական, այլև տնտեսական նկատառումներով։ Այն ժամանակ հաճախ Իրան էին այցելում շատ երկրների վաճառականներ, որոնք լայն առևտուր էին անում հատկապես մետաքսի գծով։ Շահ-Աբասի այս քաղաքականության արդյունքներն ակնհայտ էին։ Շահական գանձարանը հսկայական եկամուտներ էր ստանում առևտրից։ Աբասը լավ պայմաններ էր ստեղծել և որոշ արտոնություններ տվել հատկապես Ջուղայի հայ վաճառականների համար՝ վերևում նշված նկատառումներով։

Բոլոր հայերին ազատ իրավունք էր տրված[2] դավանելու իրենց կրոնը և կառուցելու եկեղեցիներ։ Պետք է նշել, որ Իրան գաղթեցրած ոչ բոլոր հայերի համար ստեղծվեցին ապրելու քիչ թե շատ տանելի պայմաններ և ոչ բոլորը կարողացան հարմարվել նոր բնակավայրերին։ Նրանց մի մասը, եթե չասենք մեծ մասը, նյութական զրկանքներ էին կրում և այդ վայրերից աստիճանաբար հեռանում էին։ Իսկ մի քանի գավառներում տեղի կլիմայական վատառողջ պայմանների պատճառով մեծ տոկոս էին կազմում մահացու-

[1] Տե՛ս ЦГАДА, Турецкие дела, ф. 89, л. 1627։

[2] Ի միջի այլոց, դա առաջին զբավոր պայմանագիրն էր Ռուսաստանի և Թուրքիայի միջև։

[1] Տե՛ս К. Патканов, Библиографический очерк армянской исторической литературы. Дневник Петроса ди Саркис Гиланенц, предисловие, էջ XIV։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ XVII։ Ի միջի այլոց նշենք, որ Շահ-Աբասի այս քաղաքականությունը անկեղծ և հետևողական չէր։ Նրանից հետո, XVII դարի վերջերին հայերի արտոնություններն ու իրավունքները հետզհետև վերանում են և նրանց զրությունը վատանում է։

թյունները, որով սկսեց արագ կերպով նվազել այդ վայրերում բնակեցված հայերի թիվը[1]։

Թեև Շահ-Աբասի քաղաքականության հետևանքով երկրի տնտեսական դրությունն զգալիորեն բարելավվեց, բայց ժողովրդական մասսաների վիճակը Իրանում և նրան ենթակա երկրներում մնում էր շատ աննախանձելի։ Գնալով ուժեղանում էր աշխատավորների և հատկապես գյուղացիների դաժան շահագործումն ու կեղեքումը։ Առանձնապես անտանելի էր հարկային բեռը Շահ-Աբասի ժամանակ։ Թեև մի քանի տուրքեր վերացվեցին կամ իջեցվեցին, բայց այս բոլորն աննշան չափով էին թեթևացնում ժողովրդական մասսաների ծանր վիճակը, մանավանդ որ Շահ-Աբասի հաջորդների օրոք տուրքերի չափերը կրկին սկսեցին բարձրանալ։ Այս բոլորը հետզհետե արգելակում էին արտադրողական ուժերի զարգացումը և խարխլում պետության տնտեսական հիմքը։ Սեֆեյան տերության տնտեսական դրության վատացմանը ոչ պակաս չափով նպաստեց նաև համաշխարհային առևտրական ճանապարհների տեղափոխվելը, հատկապես եվրոպացիների կողմից դեպի հնդկական շուկա ճանապարհ գտնելը, որը վնաս հասցրեց Իրանի մետաքսի առևտրին։ Բացի դրանից, Իրանի տնտեսության վրա բացասաբար էր անդրադառնում նաև այն, որ գյուղացիներին ու արհեստավորներին կողոպտող իրանական հողատեր-ֆեոդալը ոչ մի մասնակցություն չէր ունենում գյուղատնտեսական և արհեստային արտադրության կազմակերպման գործում։ Ուստի աշխատավորների դասակարգային պայքարը շահագործողների և տիրող կարգերի դեմ գնալով ուժեղանում էր։

Ռևոլյուցիոն շարժումներն ավելի շատ տեղի էին ունենում Իրանին ենթակա երկրներում, որտեղ ճնշված աշխատավորական մասսաները ազատագրական պայքար էին մղում։ Համարյա ողջ XVII դարի ընթացքում Ադրբեջանում, Հայաստանում և հարևան այլ երկրներում տեղի էին ունենում գյուղացիական մասսաների հակաֆեոդալական շարժումներ։

XVII դարի առաջին քառորդում այս նույն մարզերում և

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 456։

Վրաստանում տեղի են ունեցել նաև այլ ժողովրդական ապստամբություններ ու ազատագրական շարժումներ, որոնցից հակիրճ կերպով կհիշատակենք ամենակարևորների մասին։ Դրանցից ամենից աչքի ընկնողը վրաց ժողովրդի պայքարն էր պարսկական տիրապետության դեմ։ 1612 թ. հաշտությունից հետո Շահ-Աբասը իր ագրեսիվ պլանները իրագործելու նպատակով ձեռնարկեց իրեն ենթակա վասալական երկրների և հատկապես Արևելյան Վրաստանի լիակատար միացմանը Իրանին։ Դրա համար նա փորձեց Քարթլիի և Կախեթիայի թագավորությունները զենքի ուժով մտցնել Սեֆեյան պետության կազմի մեջ։ Վրաց ժողովուրդը պայքարի դուրս եկավ օտարերկրյա զավթիչների դեմ։ Աղբյուրները լիքն են Վրաստանում պարսիկների կատարած անասելի շարագործությունների և վրաց ժողովրդի կողմից նրանց ցույց տված հերոսական դիմադրության փաստերով[1]։ Թեև պարսիկներին հաջողվեց նվաճել Արևելյան Վրաստանը և Արևմտյան Վրաստանի մի մասը, բայց նրանք չկարողացան ժողովրդին լիովին հնազանդեցնել։ 1624—1625 թվականներին Քարթլիում և Կախեթիայում նոր ապստամբություն տեղի ունեցավ։ Շահ-Աբասը երկարատև պատերազմ մղեց վրացիների դեմ։ Չնայած պարսիկների մասնակի հաջողություններին, ընդհանուր առմամբ նրանք չկարողացան կոտրել վրաց ժողովրդի դիմադրությունը և ստիպված եղան թողնել Վրաստանը[2]։ Ներքին և արտաքին պայմանների ճնշման տակ Շահ-Աբասը ստիպված էր հաշտվել Քարթլիի և Կախեթիայի թագավորության հետ։

XVII դ. 10—20-ական թվականներին Ղարաբաղի և Հայաստանի մի քանի գավառների գյուղացիության մեջ տեղի ունեցավ կրոնական քողի տակ հանդես եկող մի շարժում, որն արձագանք գտավ նաև ադրբեջանական աշխատավորության մեջ։ Այս շարժման գլուխ կանգնած էր Գանձասարի վանքի մի ավագ սարկավագ, որին ժողովուրդը Մեխլու Բաբա էր կոչում։ Սրա գլխավորած շարժումը գյուղացիների ֆեոդալական շահագործման դեմ ուղղված բողոքի մի ձև էր,

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 125։
[2] Տե՛ս Զ. Մարկավագ, նշվ. աշխ., հ. 1, էջ 27—30։

որն իր արտահայտությունը գտավ պաշտոնական եկեղեցու և վանական հողատիրության դեմ մղված պայքարում։ Մեխլուն ստորին խավերից բավականաչափ հետևորդներ հավաքեց իր շուրջը։ Նրա քարոզներում սոցիալական մոտիվներ կային։ Այդ է պատճառը, որ Զաքարիա Սարկավագը ամենակծու խոսքերով է նշավակում Մեխլուին[1]։

Մեխլուի շարժումը տարածվում է նաև Հայաստանի որոշ շրջաններում և հասնում է մինչև Երևան[2]։ Երևանի խանը հասկանալով շարժման վտանգավորությունը և ընդառաջելով հայ հոգևորականներին, Մեխլուին վոնդեց երկրից և ճնշեց շարժումը։

1603—1627 թվականների պատերազմների ժամանակ շարունակվում էին Իրանի հարաբերությունները եվրոպական մի շարք պետությունների և Ռուսաստանի հետ։ Այդ պետությունները շարունակում էին իրենց ջանքերը Իրանի հետ դիվանագիտական և առևտրական կապեր հաստատելու համար։ Նրանցից մի քանիսը նման կապեր արդեն հաստատել էին։ Փորձեր կատարվում էին նաև Իրանի կողմից։

Իրանի հարաբերություններն առանձնապես աշխույժ էին Ռուսաստանի և Գերմանական կայսրության հետ։ Սրանց միջև այս պատերազմների ընթացքում մի քանի անգամ փոխադարձաբար առաքվեցին դեսպանություններ, որոնք բանակցություններ էին վարում Թուրքիայի դեմ պայքարելու շուրջը[3]։

1614 թ. անգլիական Արևելահնդկական ընկերությունը ակտիվացնում է իր գործունեությունը Իրանում։ Նույն տարում Իրան եկած անգլիական վաճառականներին շահը ֆերմաններ է տալիս՝ նրանց ըստ ամենայնի աջակցություն ցույց տալու մասին։

Անգլիացիները ամեն կերպ աշխատում էին ձեռք գցել Հորմուզը կամ գոնե մատչելի դարձնել այն իրենց համար։ Նրանք Իրանին դրդում էին ռազմական գործողություններ

[1] Տե՛ս Զ. Սարկավագ, Պատմագրութիւն, հ. 1, էջ 48։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 49։

[3] Տե՛ս „Памятники дипломатических и торговых сношений и т. д.", т. II, էջ 252։

սկսել պորտուգալացիների դեմ։ Անգլիացիների օգնությամբ Իրանը 1622 թ. պորտուգալացիներից գրավեց Հորմուզը, որի հետևանքով անգլիացիները նշանակալից օգուտներ ստացան այդ կարևոր նավահանգստից[1]։

Այս նույն ժամանակամիջոցում Իրանի հարաբերությունները Ռուսաստանի հետ զգալի փոփոխության ենթարկվեցին։ Դեսպանների փոխադարձ առաքումներն ու բանակցությունները տեղի էին ունենում գրեթե նույն հարցերի շուրջը, ինչ որ դրանից առաջ։ Միայն թե այս անգամ այդ հարաբերությունների մեջ բավականին տեղ էր գրավում նաև Վրաստանի խնդիրը։ Մինչև 1607—1608 թվականները այդ հարաբերություններն ընդհանրապես լավ էին, բայց Վրաստանի պատճառով շուտով սկսեցին որոշ չափով խախտվել։

XVII դարի 20-ական թվականների սկզբին ռուս-իրանական հարաբերությունները կրկին լավանում են։ Այդ են ապացուցում ցարի և շահի՝ միմյանց հղած փոխադարձ պաշտոնագրերը բարեկամության և այլ հարցերի մասին։ 1623—1624 թթ. ցարի և շահի միջև կրկին տեղի ունեցած բանակցությունների ժամանակ շահը խոստանում էր հրաժարվել Վրաստանը նվաճելուց և նույնիսկ իբրև դիվանագիտական ժեստ, հայտնում էր, որ ինքը պատրաստ է ցարին զիջելու Դերբենդը, Շիրվանը, Շամախին և Բաքուն[2]։ Մոտավորապես նույն բնույթի գրագրություն էր տեղի ունենում երկու միապետների միջև նաև 1625 թ.[3]։

---

[1] Մանրամասնությունները տե՛ս Պ. Սայքսի նշվ. աշխ., էջ 270—273։

[2] Տե՛ս „Дело о присылке Шахом Аббасом ризы Господней Царю Михаилу Феодоровичу в 1625 г.", էջ 38—41։

[3] Տե՛ս ЦГАДА, Персидские дела, ф. 77, թ. 148—153։

ԳԼՈՒԽ VI

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Քննության ենթակա շրջանում Օսմանյան պետության ներքին վիճակը նախորդ շրջանի համեմատությամբ ոչնչով չէր լավացել։ Սոցիալ-տնտեսական տեսակետից նրա դրությունը գնալով նույնիսկ ավելի էր վատանում։ Այս պատճառով կայսրության մեջ ֆեոդալական անարխիան և անկարգություններն ավելի էին ուժեղանում։ Երբ դեռ Մուրադ IV-ը անչափահաս էր, երկրում կատարյալ անիշխանություն էր տիրում։ Թեև այդ սուլթանը հետագայում կարողացավ մի շարք եռանդուն ու վճռական միջոցներով ժամանակավորապես և որոշ չափով բարելավել պետական կառավարման գործը և բանակի դրությունը, թուլացնել ֆեոդալական ավագանու ներքին պայքարն ու զինվորական խռովությունները և այլն, սակայն Թուրքիան շարունակում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական անկում ապրել, և այս հողի վրա կայսրության մեջ գնալով սրվում էր դասակարգային ու ազգային-ազատագրական պայքարը։

Օսմանյան կայսրությունը շարունակում էր մնալ միանգամայն անկայուն ռազմա-վարչական մի միավորում։ Պետական-քաղաքական տեսակետից նա մի միասնական օրգանիզմ չէր և շարունակում էր մնալ բազմաթիվ, փաստորեն անկախ երկրների (վասալական իշխանությունների), ֆեոդալական տիրույթների և կուսակալությունների մի խայտաբղետ միացություն, որը պայմանավորված էր նրա արտադրության ցածր մակարդակով և տնտեսական պարտիկուլյարիզմով։ Նրա հասարակական-տնտեսական վիճակը բնորոշվում էր տարբեր սոցիալ-տնտեսական ձևերի և կացութաձևերի (уклад) առկայությամբ՝ ներառյալ նախնադարյան-համայնականը և ստրկատիրականը։ Սակայն գերիշխողը արտադրության ֆեոդալական եղանակն էր։ Պետության տարբեր մասերի ու մարզերի միջև տնտեսական կապերը շատ թույլ էին։ Իրենց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով թուրքերը զգալիորեն ցածր էին կանգնած իրենց իշխանության տակ գտնվող շատ ժողովուրդներից։ Այսուհանդերձ Օսմանյան կայսրությունը տակավին մի հսկայական տերություն էր, որի կազմի մեջ XVII դարի 30—40-ական թվականներին մտնում էին Փոքր Ասիայից բացի, մոտ 2 տասնյակ երկրներ և բազմաթիվ այլ մանր տերիտորիաներ ու կղզիներ՝ Ասիայում, Եվրոպայում և Աֆրիկայում։ Թեև XVI դարի վերջերին և մանավանդ XVII դարի առաջին կեսին Թուրքիան մի շարք ռազմական անհաջողություններ ունեցավ Արևելքում և Արևմուտքում, բայց դրանց հետևանքով նա տերիտորիալ կորուստներ քիչ տվեց և տակավին շարունակում էր մասնակի հաղթանակներ տանել մղած պատերազմներում և դեռ բավականին վտանգավոր ուժ էր ներկայացնում իրենից։

Մեզ ծանոթ Մյուլլերը՝ նվաճված ժողովուրդների համար թուրքական տիրապետության բացասական հետևանքների մասին գրել է. «Մուհամմեդ նվաճողի և Սելիմի կողմից զավթած ամբողջ խոշոր երկրներից՝ Փոքր Ասիայից, Արևմտյան Հայաստանից, Միջագետքից, Սիրիայից, Արաբիայից և Եգիպտոսից ոչ մեկը թուրքական կառավարման ներքո չկարողացավ կրկին հասնել թեկուզ որևէ բարեկեցության. կառավարում, որի սոսկ նպատակն էր պահպանել արտաքին կարգը և գավառներից ծծել բոլոր հյութերը։ Ընդհակառակը, այնտեղ, ուր առաջվա կուլտուրայի խղճուկ

մնացորդները կարողացել էին պահպանվել, վերջին հարյուրամյակների սարսափելի ավերածություններից հետո նրանք էլ են անհետանում, քանի որ ոչինչ չէր արվում այդպիսիք պահպանելու համար»[1]։ Հեղինակը այնուհետև պերճախոս փաստերով ցույց տալով Թուրքիային ենթակա առանձին երկրների խղճուկ վիճակն ու դեգրադացիան, եզրակացնում է. «Իսկ անմխիթարական արտաքին դրությանն ավելի քան երբեք համապատասխանում է մտավոր կյանքի ոչնչացումը»[2]։

Բայց և այնպես Օսմանյան կայսրության նախկին հզորությանն արդեն վերջ էր տրվել, և նա գնալով ավելի հաճախ էր պարտություններ կրում թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում։

Մուրադ IV-ը չկարողացավ և չէր կարող իսպառ վերջ տալ ապստամբություններին ու զինվորական խռովություններին։ Նորից մայրաքաղաքում և ուրիշ վայրերում ենիչերիների և այլ զինվորականների հաճախակի խռովություններ էին տեղի ունենում (օրինակ՝ 1632 թ. Կոստանդնուպոլսի խռովությունը և այլն)[3]։

Այդ լուրջ դրությունից դուրս գալու ելքը թուրքական իշխողները կրկին տեսնում էին նոր, հաջող պատերազմներում, որոնք միաժամանակ ժողովրդին խաղաղեցնելու միջոց էին, ինչպես, օրինակ՝ 1635 թ. Իրանի դեմ ձեռնարկած նոր արշավանքը (տե՛ս ստորև)։

Այս շրջանում ավելի շատ աչքի էր ընկնում օսմանյան լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրական պայքարը, որը հաճախ միահյուսվում էր գյուղացիների հակաֆեոդալական շարժումների հետ։

XVII դարի առաջին կեսին Բալկանյան երկրների ֆեոդալների կողմից կատարվեցին ապստամբությունների նոր փորձեր՝ ուղղված թուրքական տիրապետության դեմ, բայց ամեն անգամ դրանք վերջանում էին անհաջողությամբ՝ նրշված նույն պատճառներով։ Ի տարբերություն դրանց, Բալ-

[1] „История ислама", т. III, էջ 373—374։
[2] Նույն տեղը։
[3] Տե՛ս «Թարիխ Նայիմա», հ. 3, էջ 87, Գ. Դարանագլի, Նշվ. աշխ., էջ 463։

կանյան երկրների ժողովրդական մասսաները շարունակում էին պարտիզանական պայքարը թուրքական ճնշողների դեմ։ Պարտիզանական խմբերը զգալի հարվածներ էին հասցնում օսմանյան զորքերին և մյուս ճնշողներին։

Ուժեղացել էր նաև արաբական ժողովուրդների պայքարը թուրքական ճնշման դեմ։ Դեռևս 1628 թ. Յեմենը ապստամբության միջոցով փաստորեն կիսանկախ էր դարձել։ Շարունակվում էին Լիբանանի դրուզների հաճախակի ապստամբությունները թուրքական կառավարության դեմ։ Ազատագրական և հակաֆեոդալական շարժումներ էին տեղի ունենում նաև Անդրկովկասի երկրներում։ Առանձնապես ուժեղ էր վրաց ժողովրդի պայքարը թուրքական տիրապետության դեմ։

Այս շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքական դրությունը նախորդ շրջանի համեմատությամբ առանձին փոփոխություն չէր կրել։ Իրանի դեմ մղվող պատերազմի պատճառով սուլթանական կառավարությունը չարեց հարաբերությունները իր անմիջական հակառակորդներ հանդիսացող եվրոպական մի քանի երկրների հետ և առհասարակ նա այդ շրջանում հիշյալ երկրների նկատմամբ ակտիվ զավթողական քաղաքականություն չէր վարում։ Անշուշտ, դա չի նշանակում, որ օսմանյան տիրակալները բոլորովին անտարբեր էին Եվրոպայում տեղի ունեցող անցուդարձերի ու այդ պետությունների փոխհարաբերությունների հանդեպ և հրաժարվել էին իրենց ագրեսիվ-զավթողական քաղաքականությունից։ Նրանք այդ պահին սպասողական դիրք էին բռնել և պատրաստ էին ներքին ու արտաքին նպաստավոր պարագայում դարձյալ դիմել ագրեսիայի։

Եվրոպական պետություններից միայն Լեհաստանի և Ռուսաստանի հետ էր Թուրքիան ակտիվ արտաքին քաղաքականություն վարում։ Շարունակվում էր թշնամանքը նրա և Լեհաստանի միջև, և Բ. Դուռը պատեհ առիթի էր սպասում նորից վերջինիս վրա հարձակվելու[1]։ Բայց մինչև 1633 թ. Թուրքիան դեռ գլխավորապես զբաղված լինելով

[1] Տե՛ս J. Zinkeisen, Նշվ. աշխ., հ. IV, էջ 504—505։

Ասիայում և այստեղ դժվարություններ կրելով, Լեհաստանի դեմ լուրջ պատերազմ չէր սկսում[1]։

1633 թ. վերջին Թուրքիայի և Լեհաստանի միջև կրկին պատերազմ ծագեց, որը սակայն Թուրքիայի համար հիմնականում անհաջող ընթացավ և ավարտվեց Ռեչ Պոսպոլիտայի հետ 1634 թ. աշնանը կնքված հաշտությամբ։

Այս նույն ժամանակ Թուրքիայի հարաբերությունը Ռուսաստանի հետ առերևույթ մնում էր բարիդրացիական, չնայած որ Ազովի թուրքական զորամասերը շարունակում էին հարձակումներ գործել Ռուսաստանի հարավային սահմանների վրա։ Մոսկվայի կառավարությունը, բացի վերևում նշված պատճառներից, նաև գլխավորապես Լեհաստանի կապակցությամբ աշխատում էր լավ հարաբերություն պահպանել Բ. Դոան հետ։ 1634 թ. Լեհաստանի և Թուրքիայի միջև կնքված հաշտությունից հետո Մոսկվան գրեթե հրաժարվում է վերջինիս հետ դաշինք կնքելու մտքից, թեև աշխատում էր նրա հետ պահպանել իր դրացիական հարաբերությունը։ Իսկ Թուրքիան Լեհաստանի և Ռուսաստանի նկատմամբ շարունակում էր իր երկդիմի քաղաքականությունը։

Այս շրջանում ևս ռուսական և թուրքական արքունիքների միջև եղած դիվանագիտական գրագրությունը և դեսպանների վարած բանակցությունները տեղի էին ունենում գրեթե նույն հարցերի շուրջը, ինչ որ նախորդ շրջանում։ Ցարին ուղարկած իր պաշտոնագրերում սուլթանը դարձյալ բարյացակամություն և երկու երկրների միջև բարեկամությունը շարունակելու պատրաստակամություն էր հայտնում, որի համար պահանջում էր ցարից՝ սանձահարել Դոնի կազակներին, դրա դիմաց խոստանալով դադարեցնել իր մարդկանց և թաթարների հարձակումները Ռուսաստանի վրա։ Այլապես սուլթանը սպառնում էր իր զորքերին և Ղրիմի թաթարներին ուղարկել ռուսական պետության վրա։ Իր հերթին ցարը նույնպես սուլթանի հետ բարեկամության

[1] Տե՛ս Zinkeisen, նշվ. աշխ., էջ 505։

հավաստիացում էր տալիս և խոստանում սանձահարել կազակներին, միաժամանակ պահանջելով սուլթանից վերջ տալ ազովցիների հարձակումներին։

Սակայն այս մասնակի և ոչ էական քայլերն ու հավաստիացումները չէին մեղմացնում երկու պետությունների հակասությունները, և փոխադարձ հարձակումները շարունակվում էին։ XVII դարի 30-ական թվականների երկրորդ կեսին թուրքերի հարձակումները ուժեղանում են։

Ահա այս պատճառով կազակները, օգտվելով Թուրքիայի ներքին ծանր կացությունից և Իրանի դեմ մղած նրա պատերազմից, 1637 թ. ապրիլին հարձակվեցին Ազովի վրա և մոտ երկու ամիս պաշարելուց հետո գրոհով գրավեցին այդ խիստ ամրացված բերդաքաղաքը[1]։ Նրանք քաղաքը հայտարարեցին ցարի տիրապետություն։

Արտաքին և ներքին պատճառներով թուրքերը միայն 1641 թ. հունիսին հարձակման անցան կազակների դեմ և պաշարեցին Ազովը։ Բայց չորսամսյա ապարդյուն պաշարումից հետո և մեծ կորուստներ կրելով, նրանք ստիպված եղան ետ դնալ։ Դրանից հետո Մոսկվայի կառավարությունը, մի կողմից՝ հաշվի առնելով թուրքիայի պահանջը, մյուս կողմից՝ այն, որ կազակները միայն իրենց ուժերով չէին կարող քաղաքը պահել թուրքերի նոր, խոշոր հարձակումից, իսկ ինքն էլ չցանկանալով այժմ պատերազմի մեջ մտնել Թուրքիայի հետ, հրաժարվեց օգնել կազակներին։ Ուստի նրա ցուցումով 1642 թ. մայիսին վերջիններս ստիպված թողեցին այդ բերդաքաղաքը, որը կրկին անցավ թուրքերի ձեռքը։ Դրանից հետո ռուս-թուրքական հարաբերությունները կրկին բարելավվեցին (թեկուզ առերես)։

Թուրքիայի և Իրանի միջև 1639 թ. կնքված հաշտության ազդեցության մասին Եվրոպայում և Թուրքիայի ու արևմտաևրոպական մի շարք պետությունների հարաբերության մասին հետաքրքիր է ծանոթանալ Ցինկայզենի կարծիքին. «Իրանի հետ տեղի ունեցած պատերազմի այս

[1] Տե՛ս ЦГАДА, Турецкие дела, кн. 29, лл. 347—348։ Տե՛ս և Zinkeisen, նշվ. աշխ., հ. IV, էջ 516։

«վախճանը,— գրում է նա,— որը երկար ժամանակով Ասիային տվյալ մոմենտի համար պահանջված խաղաղությունը տվեց, եվրոպական պարագաների համար ևս մեծ նշանակություն ունեցավ, որովհետև, եթե Բաղդադի անկման լուրը մեծ հոգս էր պատճառել արևմտյան քրիստոնեական իշխաններին, որոնք միշտ լարված ակնկալությամբ հետևում էին պարսկական պատերազմի ընթացքին, ապա այժմ է՛լ ավելի երկյուղ էին կրում, որ Ասիայում հաստատված խաղաղությունը Մուրադի անհանգիստ հոգուն ավելի քան մի նոր հրահրում կլիներ իր զենքի ամբողջ ուժը միանգամ էլ Եվրոպայի դեմ ուղղելու։ Եվ իրոք, այն խոշոր սպառազինությունները, որ նա հրամայեց կատարել հաշտության կնքումից անմիջապես հետո և հաջորդ ամեռվա ընթացքում հատկապես ծովի վրա, ի վիճակի էին մի վայրկյան սարսափի մեջ գցելու եվրոպական աշխարհը, որն այն ժամանակ, նկատի ունենալով ողջ դրության ընդհանուր տրոհվածությունը, հազիվ թե ի վիճակի լիներ հաջող կերպով դիմադրելու այդ կողմից եկող որևէ գրոհի։ Միայն թե մարդիկ չգիտեին, թե դեպի որ կողմն ամենից առաջ կուղղվի սուլթան Մուրադի քմահաճ և կրքոտ նվաճումների աները» [1]։

* * *

Այս պատերազմների ժամանակ, այսինքն՝ XVII դարի 30-ական թվականներին Իրանի ներքին դրությունը սկսեց նորից վատանալ։ Շահ-Աբասի մահից հետո (1629 թ.) նրան փոխարինող շահ Սեֆի I-ը (1629—1642 թթ.) չուներ իր պապի ոչ ընդունակությունը և ոչ էլ եռանդը։ Այս շահի և նրա մերձավոր հաջորդների ժամանակ պետության կառավարումն անցնում է նրանց սիրեցյալների և հարեմի ձեռքը։ Այս պայմաններում հափշտակությունը, անարդարությունը և նեղությունները, ի վերջո, անկման հասցրին պետությունը։ Սրանց ժամանակ երկրի այն ներքին հակասություններն ու սոցիալ-տնտեսական, քաղաքական լուրջ

[1] Zinkeisen, նշվ. աշխ., հ. IV, էջ 176—177։

դժվարությունները, որոնք շնորհիվ Շահ-Աբասի քաղաքականության ու եռանդուն միջոցառումների՝ բավականին մեղմացել էին, այժմ սկսեցին ակնբախ կերպով զգացնել տալ իրենց, և Սեֆեյան պետությունը նորից սկսեց թուլանալ։ Թեև արտաքուստ Իրանը դեռևս վատ չէր երևում և տնտեսական մասնակի վերելքը կարծես թե շարունակվում էր, բայց անկման նշաններն արդեն զգացվում էին։

Շահ Սեֆիի ժամանակ գավառներում նորից սկսվեցին ապստամբությունները, բեյլերբեյների ընդվզումները, իսկ Արևելքում՝ ուզբեկների հարձակումները, որոնց մասին խոսք կլինի ստորև։

Աշխատավորության ճնշման ուժեղացումը և նրա դրության է՛լ ավելի վատթարացումը, որոնք գլխավորապես պայմանավորված էին սկսված տնտեսական անկումով, սրեցին դասակարգային պայքարը, որն արտահայտվեց նշված շրջանում տեղի ունեցած մի շարք ապստամբություններով։ Շահ-Աբասի մահից հետո ապստամբությունները բռնկվեցին նոր ուժով։ Դրանցից ամենանշանակալիցը 1629 թ. Գիլանում և Թալիշի մի մասում տեղի ունեցած հակաֆեոդալական ժողովրդական ապստամբությունն էր, որը սկսվել էր դեռևս Շահ-Աբասի ժամանակ։

Այս ապստամբությունը օգտագործվեց Գիլանի ֆեոդալական շրջանների կողմից՝ շահադիտական նպատակներով, ընդդեմ կենտրոնական կառավարության։ Ապաստամբները սկզբում գրավեցին մի շարք վայրեր և ստեղծեցին նոր իշխանություն։ Նրանք մի շարք ձեռնարկումներ անցկացրին ի վնաս կենտրոնական իշխանության և ժողովրդի օգտին։ Շուտով կենտրոնական իշխանությանը հաջողվեց զինվորական մեծ ուժով ճնշել ապստամբությունը և դաժան հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ։

Բացի այս բնույթի շարժումներից, ճնշված ժողովուրդների կողմից ևս շարունակվում էր ազգային-ազատագրական պայքարը պարսկական ծանր լծի դեմ։ Մասնավորապես Վրաստանի և Հայաստանի ժողովրդական մասսաները շարունակում էին պարտիզանական պայքարը շահական իշխանության դեմ։ Դրա հետ միասին հայերի կողմից

կրկին փորձեր են կատարվում դիմելու եվրոպական պետությունների, այդ թվում Հռոմի պապի, միջամտությանն ու օգնությանը՝ թուրքական և պարսկական բռնություններից ազատվելու համար, սակայն դարձյալ ապարդյուն։ Իսկ եթե եվրոպական պետություններից ոմանք երբեմն փորձում էին հայերի օգտին սուլթանի կամ շահի առջև հանդես գալ միջնորդի դերում, ապա այդ էլ միշտ կատարվում էր՝ նկատի ունենալով բացառապես կաթոլիկություն ընդունած հայերին։

Այս ապստամբությունները, ազատագրական շարժումները և այլ խռովություններ խարխլեցին Սեֆեյանների տերության հզորությունը և հեշտացրին նրա հետագա անկումը։ Պետք է նաև նշել, որ Շահ-Աբասից հետո Իրանի ներքին դրության վատացումը նպաստեց 30-ական թվականների պատերազմում թուրքերի որոշ հաջողությանը (Բաղդադի գրավումը և այլն)։

Այս շրջանում վատանում է նաև Իրանի միջազգային դրությունը։ Ըստ Մյուլլերի՝ Իրանի արտաքին պատմությունը Աբասի մահվանից սկսած մինչև մեր օրերը (XIX դարը) բացառապես մշտական անկման պատմություն է եղել, իսկ ներքին շարժումները, որոնք ցույց կտային մոտակա վերածնություն, հազիվ թե գոյություն ունեին։ «Նրա հարաբերությունները Արևմուտքի և Հյուսիս-արևելքի հետ խզվել էին թուրքերի և ուզբեկների թշնամական սահմաններով։ Այսպիսով, ոչ միայն ոչինչ չէր նպաստում երկրի նոր տնտեսական վերելքին, այլև ուղղակի պայմաններ չկային նրա գոյության համար»[1]։

Տարբեր ժողովուրդների և ցեղերի մի հավաքածու հանդիսացող Սեֆեյանների պետությունը երկար չկարողացավ պահպանվել իր ընդարձակ սահմաններում։ Ներքին սոցիալական հակասությունների սրումը շահական կառավարությանը ստիպում էր թուլացնել իր ուշադրությունը ծայրամասերում։ Այդ նույն ժամանակ միջազգային դրությունը Միջին Արևելքում բարդանում էր ի վնաս Իրանի։

[1] „История ислама", т. III, 1896, стр. 407—408.

Մյուս կողմից՝ ուզբեկները նորից վերսկսել էին իրենց հարձակումները Իրանի արևելյան սահմանների վրա և մասնակի հաջողություններ էին ձեռք բերել։ Նրանց հարձակումը հազիվ հաջողվեց ետ մղել։

Նշված շրջանում արևմտաեվրոպական պետությունների և Ռուսաստանի հետ Իրանի ունեցած հարաբերությունների մեջ առանձին փոփոխություն տեղի չէր ունեցել։ Այժմ այդ հարաբերությունները մեծ մասամբ առևտրական բնույթ էին կրում։ Իրանը շարունակում էր առևտուր անել շատ երկրների հետ։

Նախորդ շրջանի նման այս շրջանում ևս ռուս-իրանական հարաբերությունները հիմնականում բարիդրացիական էին, և երկու պետությունները միմյանց հետ շարունակում էին առևտուր կատարել, չնայած փոխադարձ անվստահության որոշ մոմենտների գոյության։ 1627 թ. թուրք-իրանական հաշտությունը, ինչպես հայտնի է, Մոսկվայի կառավարության մոտ որոշ դժգոհություն առաջ բերեց, քանի որ այդպիսին իր համար վնասակար էր։ Մյուս կողմից՝ Ռուսաստանի առաջխաղացումը Հյուսիսային Կովկասում և Կասպից ծովի շրջանում անհանգստություն էր առաջ բերում շահի արքունիքում, որը վախենում էր, որ իր հյուսիսային հարևանը կարող է տիրել Կասպից ծովի շրջանի հողերին[1]։ Չնայած դրան, երկու պետություններն էլ աշխատում էին չվատացնել իրենց հարաբերությունները և շարունակում էին փոխադարձ դեսպանների ու պաշտոնագրերի միջոցով բարելավել դրանք[2]։

2. XVII ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ

Իրանի և Թուրքիայի միջև 1627 թ. կնքված հաշտությունը շատ կարճ տևեց։ Շահ-Աբասի մահվանից հետո մի տարի անց այդ հաշտությունը կրկին խախտվեց և ռազ-

[1] Տե՛ս Е. Зевакин, План захвата Моск. гос-ом Прикаспийск. областей, „К истории Прикаспийск. вопроса", Тифлис, 1934, էջ 8։

[2] Տե՛ս ЦГАДА, Персидские дела, ф. 77, թթ. 144—146։

մական գործողությունները կրկին վերսկսվեցին։ 1629 թ. սուլթան Մուրադ IV-ը, օգտվելով առիթից, որ իրանական գահի վրա Շահ-Աբասին փոխարինող շահ Սեֆիի ժամանակ երկրի դրությունը կրկին սկսել էր վատանալ, նոր բանակ ուղարկեց Իրանի դեմ՝ Խոսրով փաշայի հրամանատարությամբ, կոնկրետ խնդիր դնելով՝ գրավել Բաղդադը։

Այս պատերազմում Սեֆևյան պետությունը ստիպված էր անցնել պաշտպանության։ Խոսրով փաշան սկզբում որոշ հաջողություններ ունեցավ կզլբաշների դեմ,— որոնք իրենց հետևից բնակավայրերն ամայացնելով, նահանջում էին Իրանի խորքը[1],—և մտնելով Իրան, գրավեց մի քանի վայրեր, այդ թվում Համադանը[2]։

Դրանից հետո թուրքական բանակը արշավեց Բաղդադի վրա և 1630 թ. սեպտեմբերին պաշարեց քաղաքը։ Պաշարումը տևեց մոտ մեկ ամիս։ Ի վերջո, իր զորքի զգալի մասը կորցնելուց հետո, Խոսրով փաշան ստիպված էր վերացնել պաշարումը և ետ նահանջել[3]։ Այստեղից նա մեկնեց Մերդին և արքունիքից օժանդակ զորք խնդրեց։ Սակայն երբ օգնությունը ուշացավ, զորքը խռովություն բարձրացնելով, ստիպեց Խոսրովին գնալ Հալեպ՝ ձմեռելու համար։

Թուրքական բանակի արշավանքի ձախողման միակ մեղավորը համարելով Խոսրով փաշային, սուլթանը նրան պաշտոնանկ արեց և նրա տեղը կարգեց Հաֆզ փաշային։ Այս փոփոխությունը հուզում և խռովություն առաջացրեց զորքի մեջ (1631 թ.)։ Ապստամբությունը համակել էր Դիարբեքիրի և Փոքր Ասիայի քաղաքների մեծ մասի ենիչերիներին ու սփահիներին։ Նրանք պահանջում էին վերականգնել Խոսրով փաշային[4]։

Մյուս կողմից՝ շահ Սեֆին, օգտագործելով թուրքերի

[1] Տե՛ս Գ. Սրվանձտյան, Թորոս Աղբար, Կ. Պոլիս, 1887, էջ 425։

[2] Տե՛ս J. Hammer, Նշվ. աշխ., հ. III, էջ 86—87։

[3] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1946, էջ 294բ։

[4] Տե՛ս Zinkeisen, Նշվ. աշխ., հ. IV, էջ 140—141։

մոտ տիրող դրությունը, 1633 թ. մի բանակ ուղարկեց Վանի վրա և պաշարեց այն՝ բայց ի վերջո չկարողանալով քաղաքը գրավել, ստիպված էր գաղտնի ետ նահանջել[1]։ Զաքարիա Սարկավագը պատմում է, թե ինչպես կզլբաշները նախքան Վանից ետ քաշվելը՝ երեք օր շարունակ սաստիկ կողոպուտի ենթարկեցին Վանի շրջակայքի բանակավայրերը[2]։

Այս շրջանում Թուրքիայի դրությունը շարունակում էր մնալ լարված։ Երկրում դեռ շարունակվում էին ապստամբությունները։ Ըստ երևույթին Բ. Դուռը հույս ուներ Իրանի դեմ ձեռնարկվող հաջող պատերազմով ժողովրդական մասսաների ուշադրությունը շեղել ռևոլյուցիոն պայքարից։

Սուլթան Մուրադ IV-ը ժամանակավորապես և մասամբ սանձահարելով անհնազանդ ֆեոդալներին և վերականգնելով կարգապահությունը բանակում[3], 1634 թ. սկսեց պատերազմական հատուկ պատրաստություններ տեսնել՝ Իրանի վրա նոր արշավանք ձեռնարկելու համար։ Մյուս կողմից, նա դիվանագիտական ճանապարհով ևս պայմաններ ստեղծեց այս ուղղությամբ։ Դրանից առաջ, նույն թվականին նա Լեհաստանի հետ կնքած հաշտությամբ ապահովեց խաղաղ հարաբերությունը նրա հետ, իսկ Ռուսաստանի կողմից բարեկամական հարաբերությունները շարունակելու հավաստիացում նա նույնպես ստացել էր։ Սա հնարավորություն տվեց նրան բոլոր ուժերը կենտրոնացնել Իրանի դեմ։

Թուրքական բանակի թիվը այդ ժամանակ հասնում էր 200 հազարի, չհաշված կուսակալների և տեղական ֆեոդալների կողմից դուրս բերված առանձին ջոկատները։ Պարսիկ-

[1] Նայիմայի ասելով՝ Վանի թուրքական զորքին օգնության են գալիս մի քանի վիլայեթների փաշաներ՝ իրենց զորքերով (տե՛ս Ա. Սաֆրաստյան, Նշվ. աշխ., էջ 152)։

[2] Տե՛ս Զ. Սարկավագ, Նշվ. աշխ., հ. I, էջ 64—65։ Այս դեպքի մասին ավելի վառ պատկեր է նկարագրում Ստեփանոս քահանան Աղթամարի «Մաղմոսարան»-ի «Տոնացույց»-ի հիշատակագրության մեջ՝ գրված 1632 թ. (տե՛ս Ե. Լալայան, Նշվ. ցուցակը, էջ 41)։

[3] Տե՛ս „Tarih", հ. 3, էջ 119։

ներին հայտնի չէր, թե սուլթանը, ո՛ւմ դեմ էր պատրաստվում արշավելու՝ Լեհաստանի՞, թե՞ Իրանի։ 1635 թ. գարնանը թուրքական բանակը շարժվում է դեպի Արարատյան աշխարհը՝ սուլթան Մուրադի գլխավորությամբ[1]։

Այսպիսով, երկու պետությունների միջև վերսկսվում է պատերազմը։ Այս անգամ դարձյալ հիմնական թատերաբեմը Արարատյան երկիրն է դառնում և դարձյալ պատերազմի գլխավոր արհավիրքները հայ ժողովրդին են բաժին ընկնում։

Աբբատ Մինոտը գրում է, որ շահը, ըստ պարսիկների սովորության, ամայացրեց ավելի քան 500 վերստ տարածություն (հավանաբար՝ Հայաստանում)[2]։

Աղբյուրների վկայությամբ՝ նորից տեղի են ունենում այն սովորական սարսափելի տեսարանները, որոնք կապված էին պատերազմի հետ և որոնց զոհ դարձան հայկական բազմաթիվ բնակավայրեր։ Թուրքական բանակը ճանապարհին ավերելով, գերելով ու այլ վայրագություններ կատարելով, հասնում է Արարատյան դաշտը։ Մի հիշատակարանում Սիմեոն դպիր Լեհացին պատմում է այդ ժամանակվա Թուրք-իրանական պատերազմի, թուրքերի արարքների և սուլթան Մուրադի հրամանով՝ 1635—1636 թթ. Կոստանդնուպոլսից և շրջակայքից հայերին ու մյուս քրիստոնյաներին բռնի կերպով Փոքր Ասիա գաղթեցնելու և այդ կապակցությամբ հայերի կրած աղետների մասին[3]։ Մոտավորապես նման վկայություն է տալիս նաև Գ. Դարանաղցին, որը միաժամանակ ավելացնում է, որ շահ Սեֆին այդ ժամանակ Երևանի և այլ գավառների մնացած հայերին գաղթեցրեց Իրան։

Այսպես, երբ թուրքերը ավերելով ու կողոպտելով մոտեցան Արարատյան դաշտին, բնակչության մեջ կրկին

[1] Տե՛ս Հակոբ Կարնեցի, Ժամանակագրութիւն (ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 8184, էջ 9ա)։

[2] Մյուս աղբյուրների այս փաստը հաստատում է նաև Սիմեոն Լեհացին, թեև անուղղակի կերպով. տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1936, № 4—5, էջ 232։

[3] Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1936, № 4—6, էջ 251—252։

սկսվեց փախուստն ու գաղթը։ Զ. Սարկավագի վկայությամբ՝ ժողովրդի մեծ մասը գաղթեց զանազան վայրեր ու երկրներ[1]։ Բայց որովհետև ոչ բոլորը կարողացան փախչել, ուստի մնացած մյուսը օսմանցիների կողմից ենթարկվեց սոսկալի աղետների[2]։

1635 թ. հուլիսին սուլթան Մուրադի բանակը հասավ Երևանի տակ և պաշարեց բերդը[3]։ Նայիման բավականին մանրամասն նկարագրում է օսմանյան բանակի կողմից Երևանի պաշարման հանգամանքները[4]։

Կզլբաշների բերդապահ կայազորը, ըստ որոշ տվյալների, բաղկացած էր 20 հազար զինվորից։

Թուրքերը հրետանային ուժեղ ռմբակոծության էին ենթարկում քաղաքը, աշխատելով քանդել բերդի պարիսպները և գրոհներ էին ձեռնարկում նրա վրա։ Պարսիկները ծայրահեղ ջանքեր էին գործադրում՝ օսմանցիների գրոհները ետ մղելու համար։ Պաշարման յոթերորդ օրը օսմանցիներին հաջողվեց հրետանային ռմբակոծությամբ խորտակել բերդի մեծ աշտարակն ու պարսպի մի մասը։ Այդ պահին խանի կողմից պատվիրակ է գալիս հաշտության համար։ Ըստ Նայիմայի, սկզբում երկու կողմերի միջև մի շաբաթով զինադադար է կնքվում, որը վերջանալուց հետո, ըստ պայմանի, պարսիկները պետք է բերդը հանձնեին։ Սակայն մինչև այդ սուլթան Մուրադը հրամայում է նույն օրը հարձակվել և անպայման գրավել բերդը։ Հարձակումը նոր էր սկսվել, երբ բերդից կրկին պատվիրակ է գալիս և հաշտության առաջարկություն անում, որով պարսիկները լիակատար կապիտուլյացիայի են ենթարկվում (օգոստոսի 8-ին)։ Թահմազ-Կուլի խանը մյուս զորավարների հետ անձնատուր լինելով, դիմում է սուլթանի ողորմածությանը։ Սուլթան Մուրադը ներում է ոչ միայն խանին, այլև մյուս կզլբաշներին[5]։

[1] Տե՛ս Զ. Սարկավագ, Նշվ. աշխ., հ. 2, էջ 8—9։

[2] Տե՛ս Տաշյանի Նշվ. ցուցակը, էջ 15։

[3] Տե՛ս J. Hammer, Նշվ. աշխ., հ. III, էջ 150։

[4] Տե՛ս «Թարիխի Նայիմա», հ. 3, էջ 255—256։

[5] Տե՛ս Նույն տեղը, էջ 157—159։

Գրավելով Երևանը, թուրքերը մեծ կողոպուտի են ենթարկում այն[1]։ Ավելորդ չէր լինի նկատել, որ Լեոն հիմնվելով միայն երկու աղբյուրի վրա (Ա. Դավրիժեցի և Զ. Սարկավագ) գրում է, որ սուլթան Մուրադը Երևանը գրավել է համարյա դիմադրության չհանդիպելով[2]։ Սա այնքան էլ ճիշտ չէ, քանի որ, ինչպես տեսանք, այլ, ավելի մանրամասն աղբյուրների պնդումով՝ պարսիկները որոշ դիմադրություն ցույց են տվել օսմանցիներին, չնայած իրենց սակավաթիվ լինելուն։

Դրանից հետո սուլթան Մուրադը որոշ քանակությամբ զորքով Երևանում թողնելով Մուրթուզա փաշային՝ իբրև այդ նահանգի բեյլերբեյ, ինքը մնացած զորքի հետ արշավեց դեպի Թավրիզ։ Մի քանի աղբյուրների, այդ թվում նաև «Թարիխի Նայիմա»-ի վկայությամբ՝ Թավրիզի ճանապարհին թուրքական բանակը կրկին մեծ ավերածություններ ու սպանություններ կատարեց[3]։

1635 թ. սեպտեմբերին, առանց դիմադրության հանդիպելու, Մուրադ IV-ը գրավեց Թավրիզը։ Դա բացատրվում է նրանով, որ ըստ Դարանաղցու, շահ Սեֆին տակտիկական նկատառումներով, Մուրադի բանակին դեմհանդիման դուրս չեկավ, այլ սպասում էր ցրտերը սկսվելուն, որպեսզի ձմեռվա պայմաններում դյուրին լինի ջախջախել նրան[4]։

Թուրքերը ավերման և կողոպուտի են ենթարկում Թավրիզը։ Այս փաստը, բացի այլ աղբյուրներից, հաստատում է նաև Նայիման, որը նկատում է. «սուլթան Մուրադ IV-ի դաժան ու արյունարբու գործերին պետք է ավելացնել նաև նրա քանդելու, այրելու և ոչնչացնելու արտակարգ ձգտումը»[5]։

Թավրիզից սուլթան Մուրադը առաջ շարժվեց և նույնիսկ մինչև Արդեբիլ հասավ, բայց առանձին հաջողություն չունեցավ։ Ընդհակառակը, ձմեռվա պատճառով Քոթուրի պա-

[1] Տե՛ս «Թարիխի Նայիմա», հ. 3, էջ 160—183։
[2] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 300։
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 164։
[4] Տե՛ս Գ. Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 519։
[5] Տե՛ս «Թարիխի Նայիմա», հ. 3, էջ 267։

շարումը անհաջող անցավ և նա ստիպված էր ետ գնալ ոչ Վանի վրայով 1635 թ. դեկտեմբերին վերադառնալ Կոստանդնուպոլիս, արձակելով բանակի մեծ մասը։

Ոմանց կարծիքով՝ Մուրադի ետ գնալու հիմնական պատճառը ձմեռն էր, որի պայմաններում շատ դժվար էր պատերազմական գործողություններ վարել և մանավանդ կողոպտված ու ավերված Հայաստանում ու Ատրպատականում ապահովել բանակի մատակարարումը[1]։ Իսկ ըստ ոմանց՝ Մուրադի ետ գնալու պատճառը այն լուրն էր, ըստ որի Արևմուտքից արշավանք էր պատրաստվում Թուրքիայի դեմ[2]։

Համմերը իր աշխատության III հատորում խոսում է այդ ժամանակ երկու պետությունների միջև տեղի ունեցած ինչ-որ բանակցությունների մասին, որոնք, սակայն, անընդունելի առաջարկությունների պատճառով արդյունք չեն տվել[3]։

Օսմանյան տիրապետությունը Երևանի և սրա շրջակա գավառների վրա շատ կարճ տևեց։ Հազիվ սուլթան Մուրադը ետ էր դարձել, երբ շահ Սեֆին մեծ զորաժողով կատարելով և հարյուր հազարանոց բանակ կազմելով, թնդանոթներով զինված, արշավեց Երևանի վրա և 1636 թ. դեկտեմբերին պաշարեց այն, որը տևեց երեք ամիս։ Այս ընթացքում Կոստանդնուպոլսի կառավարության կողմից պաշարվածներին օգնության ուղարկված զորքը սաստիկ ձյան պատճառով տեղ չհասավ։ Ուստի պաշարվածները, օգնություն ստանալու հույսը կորցրած և սովից խիստ նեղվելով, պաշարման 93-րդ օրը ստիպված անձնատուր եղան կզլբաշներին, որոնք կրկին գրավեցին Երևանը։

Մի քանի աղբյուրների տվյալներով՝ հաղթողները կոտորեցին կայազորի զինվորներին։

Այսպիսով, 1635—1637 թվականների պատերազմը ցույց տվեց, որ Թուրքիան անկարող է վերականգնել 1590 թ.

[1] Տե՛ս J. Hammer, նշվ. աշխ., հ. III, էջ 153, Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 519, Օրմանյան, «Ազգապատում», պր. 11, էջ 2434 և այլուր։
[2] Տե՛ս Զ. Սարկավագ, նշվ. աշխ., հ. 2, էջ 6 և այլն։
[3] Տե՛ս J. Hammer, նշվ. աշխ., հ. III, էջ 153։

հաշտության պայմանները։ Նրան միայն հաջողվեց որոշ ուղղում մտցնել 1555 թ. պայմանագրում։ Նրա տերիտորիալ նվաճումները Անդրկովկասում այդ ժամանակ արտահայտվեցին Վրաստանի սոսկ մի մարզը անջատելու մեջ։ Դա Սամցխե-Ջավախեթին էր, Ախալցխայով հանդերձ, որ մնաց նրա ձեռքում։ Այժմ Թուրքիան իրեն նպատակ էր դրել, որպեսզի Իրանը գոնե ճանաչի 1619 թ. հաշտության պայմանագիրը։ Ուստի Մուրադ IV-ը չէր հրաժարվում իր ռազմական պլաններն իրագործելու համար Իրանի դեմ նոր արշավանք սկսելու մտքից։ Այդ է պատճառը, որ երբ պարսից շահը Մաքսուդ խանի գլխավորությամբ հատուկ դեսպանություն ուղարկեց նրա մոտ (1637 թ. օգոստոսին)՝ հաշտության բանակցություններ վարելու համար[1], վերջինս ոչ միայն չընդունեց սրան, այլև հրամայեց բանտարկել, քանի որ, որոշ հեղինակների կարծիքով, դեսպանության պայմաններն անընդունելի էին։

Այս պատերազմի ընթացքում Հայաստանի մի զգալի մասը նորից ոտքի տակ գնաց և ավերածության ենթարկվեց, իսկ Արարատյան երկիրը հիմնովին ավերվեց։ Դարձյալ բազմահազար գերիներ տարվեցին Հայաստանից[2]։

1638 թ. Մուրադը նոր արշավանք սկսեց Իրանի դեմ, այս անգամ իր հարվածն ուղղելով Բաղդադի ուղղությամբ։ Այս կապակցությամբ, դեռ նախքան արշավանքի ձեռնարկելը, նա սուրհանդակներ ուղարկեց Մեծ Մողոլի, ուզբեկների, թաթարների և արաբական թագավորի մոտ, առաջարկելով նրանց՝ միացյալ ուժերով հարձակվել Իրանի վրա և ջախջախել սրա բանակը (ինչպես պատմվում է Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրում)։ Այս նույն տեղեկությամբ՝ նրանք խոստացան օգնել սուլթանին[3]։

Նույն թվականի ապրիլի 28-ին Մուրադը հսկայական բանակով դուրս եկավ Կոնստանդնուպոլսից, ճանապարհին

[1] Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1936 թ., № 4—6, էջ 232։

[2] Տե՛ս Զ. Մարկվարտ, նշվ. աշխ., էջ 317։

[3] Տե՛ս «Ցիշատակք պատմութեանց ինքնակալութեան օսմանցւոց», էջ 305բ։

այն համալրելով տեղական կառավարիչների զորքերով։ Նոյեմբերի 6-ին նրա բանակը հասավ Բաղդադ և պաշարեց քաղաքը[1]։ Ըստ Աբբաս Մինոտի՝ այդ պահին շահի տրամադրության տակ կար 120 հազարանոց բանակ, որից 30 հազարը նա թողեց Բաղդադի պաշտպանության համար, իսկ մնացած զորքով[2] գնաց Մեծ Մողոլի դեմ, որը սուլթան Մուրադին խոստացել էր իր վրա գրավել Իրանի ռազմական ուժերի մի մասին և հարձակման էր անցել նրա դեմ։ Ըստ Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրի՝ Թուրքիային օգնեցին նաև վերևում նշված ուզբեկները, թաթարխանը, արաբական թագավորը և վրացական մի քանի իշխաններ, որոնց շնորհիվ թուրքերը հաջողություն ունեցան ու բազմաթիվ քաղաքներ գավթեցին Իրանից[3]։

Այս պատերազմից Հայաստանը մեծ մասամբ վերծ մնաց, թեև նրան բոլորովին հանգիստ չթողեցին։ Արարատյան երկրի շրջանում նույնպես պարսիկներին անհանգստացնելու և նրանց ուշադրությունը հարվածի գլխավոր ուղղությունից շեղելու համար՝ սուլթան Մուրադը հրամայեց մի շարք մարզերի փաշաներին՝ իրենց զորքերով արշավել Արարատյան դաշտն ու Երևանի կողմերը։ Սրան միացան նաև Ղրիմի 500 թաթարները, որոնք խանի կողմից ուղարկվել էին սուլթանին օգնության։ Որոշ տվյալներով[4] այս հավաքածու աշխարհազորի թիվը հասնում էր մինչև 400 հազարի։ Սրա առանձին զորամասերը տարածվում են տարբեր գավառներում, որտեղ նրանք, բացի իրանական առանձին կայազորների դեմ կռվելուց, գլխավորապես զբաղվում էին կողոպուտով, ասպատակությամբ ու դերեվարությամբ։

Արարատյան դաշտում և Երևանի կողմերում գործող ջո-

[1] Տե՛ս Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 375, Վարդան Բաղիշեցի, Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 400 և այլուր։ Ըստ Համմերի, Լավիսի ու Ռամբոյի՝ նոյեմբերի 15-ին։

[2] Տե՛ս „История турецкая", т. III, էջ 24։

[3] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 305բ։

[4] Տե՛ս Զ. Մարկվարտ, նշվ. աշխ., հ. 2, էջ 16։

կատները հակահարված ի հանդիպելով, ի վերջո հեռանում են այդտեղից ու գնում Էրզրում, ճանապարհին վերցնելով և իրենց հետ տանելով մեծ քանակությամբ գերիներ[1]։

Այսպիսով, Հայաստանը ազատվեց այս հրոսակախմբերից ու նորից սկսեց քիչ թե շատ ազատ շունչ քաշել։

Օսմանյան բանակի կողմից Բաղդադի պաշարումը տևեց 38 օր։ Այս ընթացքում քաղաքի համար կատաղի ու խիստ արյունահեղ մարտեր տեղի ունեցան և օսմանցիները մի քանի գրոհներ գործեցին, որոնք սակայն ետ մղվեցին իրանական կայազորի կողմից։ Հաճախակի կատարվող կատաղի գրոհների և հրետանային ուժեղ ռմբակոծության, ինչպես և ականային գործողությունների հետևանքով, վերջապես, պաշարողներին հաջողվեց նույն թվականի դեկտեմբերի 14-ին ներխուժել քաղաքը, կրկին գրավել այն։ Իրանական բանակը Բաղդադի կուսակալ Բեգդաշ խանի գլխավորությամբ ստիպված էր անձնատուր լինել հաղթողներին։ Որոշ տվյալներով՝ քաղաքի իրանական կայազորը ոչնչացավ (մոտ 30 հազար զինվոր, բացի կենդանի մնացած 300 հոգուց)՝ մի մասը մարտերի ընթացքում, մնացածը կոտորվեց հաղթողների կողմից քաղաքը գրավելուց հետո։ Բացի այդ, վառոդի պահեստը պայթելու պատճառով, սուլթան Մուրադի հրամանով՝ թուրքերը կոտորեցին նաև քաղաքի պարսիկ բնակիչներին[2]։

Բաղդադի գրավումից հետո թուրքական բանակը շարունակեց առաջխաղացումը կամ նոր վայրերի գրավումը։ Ըստ երևույթին Մուրադ IV-ը բավարարվեց Բաղդադի գրավումով և այդտեղից 1639 թ. հունվարին մեկնեց Կոստանդնուպոլիս, Բաղդադում թողնելով իր կողմից նշանակված կուսակալին և որոշ քանակությամբ զինված ուժեր։

ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրի հեղինակը հայտնում է, որ Թուրքիայի այս հաղթանակը միանգամայն վտանգավոր եղավ եվրոպական պետությունների համար, քանի որ դրանից հետո թուրքերը շուտ պի-

[1] Տե՛ս Գ. Դարանագցի, ժամանակագրութիւն, էջ 578—579։
[2] Տե՛ս J. Hammer, հիշ. աշխ., հ. 3, էջ 181—182։

տի գային, և իրոք շուտ եկան, Հարսրուրգների ու Վենետիկի դեմ[1]։

Հետաքրքիր է նշել, որ Մուրադը վերադառնալիս, Մոսուլում բանտից ազատեց պարսից դեսպան Մաքսուդ խանին և ուղարկեց շահի մոտ՝ տալով նրան շահ Սեֆիին գրված մի նամակ, որտեղ հայտնում էր, որ այդ կողմերում ձմեռելուց հետո մտադիր է գարնանը կրկին ռազմական գործողություններ սկսել Իրանի դեմ, եթե շահը Թուրքիային չհանձնի իր պահանջած գավառները[2]։ Նույն աղբյուրի հաղորդման համաձայն՝ Իրանի սահմաններից թուրքական բանակի հեռանալուց հետո շահը կրկին տիրեց իր կորցրած տերիտորիայի կեսին[3]։

Սուլթան Մուրադի՝ մայրաքաղաք վերադառնալուց հետո շատ չանցած՝ այնտեղ է ժամանում Իրանի դեսպանությունը, Մուհամմեդ-կուլի խանի գլխավորությամբ, մեծամեծ ընծաներով, և սկսվում են հաշտության բանակցությունները[4]։ Որոշ տվյալներով՝ սուլթանական կառավարության կողմից ևս դեսպանություն է ուղարկվում շահի արքունիքը այդ նույն հարցով[5]։ Բանակցությունները երկար տևեցին։ Ամեն մի պետություն իր պահանջներն ու հավակնություններն էր ներկայացնում։ Ըստ Դարանաղցու և Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրի՝ թուրքական կողմը պահանջում էր Երևանն ու Թավրիզը, իսկ Իրանի կառավարությունը՝ Ղարսը[6]։ Բաղդադի գրավումով Թուրքիան այդ պատերազմում ձևականորեն համարվում էր հաղթող, բայց մի շարք հանգամանքներ նրան ստիպում են պատերազմը դադարեցնել և հաշտության բանակցություններ սկսել Իրանի հետ։ Բանն այն է, որ Բաղդադը գրավելուց հետո նա այլևս ի վիճակի չէր նոր հողեր զավ-

[1] Տե՛ս ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 306ա։
[2] Տե՛ս Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., հ. Ա, էջ 629—630։
[3] Տե՛ս ձեռագիր № 1496, էջ 306բ։
[4] Տե՛ս J. Hammer, նշվ. աշխ., հ. 3, էջ 191—192։
[5] Տե՛ս Զ. Մարկովա, նշվ. աշխ., հ. 2, էջ 25։
[6] Տե՛ս Գ. Դարանագցի, նշվ. աշխ., էջ 580։

թել, քանի որ, ինչպես տեսանք, Իրանը այլևս առաջվա թույլ պետությունը չէր և կարող էր ետ գրաված մարզերն ու քաղաքները պահել իր ձեռքում։ Թուրքիայի կողմից նոր տերիտորիաների զավթումը դժվարացել էր նաև նրանով, որ թուրքական ֆեոդալները չէին ցանկանում հողեր ստանալ այն երկրներում, որոնք երկարատև պատերազմների հետևանքով անմարդաբնակ էին դարձել։ Բացի դրանից, Արևելքում օսմանյան ագրեսիային խանգարում էին նաև կաղակները, որոնք 1637 թ. գրավեցին Ազովը և Թուրքիայի ուշադրությունը շեղեցին իրենց վրա։ Այս բոլոր պատճառներով սուլթանական կառավարությունը ոչ միայն համաձայնվեց հաշտություն կնքել, այլև չպնդելով իր հավակնությունը որոշ գավառների ու քաղաքների նկատմամբ, նույնիսկ մի քանի զիջումներ արեց Իրանին։

Այսպիսով, Թուրք-իրանական այս վերջին պատերազմում կռվող կողմերից ոչ մեկը չհաղթեց, և երկուսն էլ ստիպված վերջ տվին պատերազմին։

Ի վերջո, բանակցությունները, որոնք սկսվել էին մեծ վեզիրի հետ Դիարբեքիրում և շարունակվեցին Կոստանդնուպոլսում, հանգեցրին դրական արդյունքների և երկու երկրների միջև 1639 թ. մայիսի 17-ին[1] Դիարբեքիրում կայացավ նախնական համաձայնություն, այնուհետև Զահաբում կնքվեց հաշտությունը[2], իսկ նույն թվականի սեպտեմբերին Կոստանդնուպոլսում ստորագրվեց և վավերացվեց հաշտության պայմանագիրը։

[1] Նայիման այս պայմանագրի տարեթիվը 1638 թ. է նշում (Հիջրայի 1047 թ.) (Նշվ. աշխ., հ. III, էջ 430), իսկ Դավրիժեցին, ընդհակառակն, 1640 թ. է նշում («Պատմութ.», էջ 575)։ Այս երկուսն էլ ճիշտ չեն։ Ընդհանրապես պետք է նկատել, որ այս պայմանագրի կնքման վայրի և ժամանակի վերաբերյալ տարբեր հեղինակների մոտ տարբեր տեղեկություններ են տրվում։

[2] Տե՛ս J. Hammer, Նշվ. աշխ., հ. III, էջ 187. Zinkeisen, IV, 175։ Այլ հեղինակների տեղեկություններով հաշտությունը կնքվել էջ Դիարբեքիրում (Զամչյան Հ. Գ., էջ 618 և ուր.)։ Սա իրականությանը չի համապատասխանում, քանի որ պայմանագրում ասված է, որ կնքվել է Զահաբում։ Ոմանք էլ Կասբը-ի Շիրին են նշում։

3. 1639 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս հաշտությունը կնքվեց 30 տարով և թուրք-իրանական հարաբերությունների պատմության մեջ նոր էտապի սկիզբը հանդիսացավ։

Պետք է նկատել, որ այդ հաշտությունը, ի տարբերություն մինչ այդ կնքված մյուս հաշտությունների, ավելի հաստատուն և երկու կողմերից պահպանվող հաշտություն էր, որը բավականին երկար տևեց (մինչև 1723 թ.)։

1639 թ. հաշտության պայմանագիրը կարելի է համարել առաջին հայտնի գրավոր տրակտատը, որի պատճեններն են մեզ հասել, և որոնք իրարից բավականին տարբերվում են։ Մեր ձեռքի տակ եղած օրինակը (տե՛ս հավելվածը՝ հայերեն թարգմանությունը) հետագայում հանված պատճեններից մեկն է և, ըստ երևույթին, ինչպես ցույց են տալիս որոշ տվյալներ, բնագրին համեմատաբար ավելի մոտ է[1]։ Պայմանագիրը կնքված է նամակի ձևով, որը սուլթան Մուրադ IV-ը հղել է Իրանի շահ Սեֆի I-ին։

Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ պայմանագրում երկու երկրների միջև անցկացված սահմանները լիակատար պարզությամբ չեն տրված։ Չնայած դրան, այս պայմանագրով երկու պետությունների միջև անցկացված սահմանագիծը համեմատաբար ավելի մանրամասն և որոշակի է տրված, քան նախորդ մյուս հաշտությունների ժամանակ անցկացված սահմանագծերը։ Այս հաշտության պայմանագրով Հայաստանը, Վրաստանը, Ատրպատականը և Իրաքը բաժանվեցին

[1] Նայիման իր նշված աշխատության մեջ տալիս է պայմանագրի այն մասը, որը վերաբերում է տերիտորիալ բաժանման սահմաններին, բնակավայրերին ու աշխարհագրական վայրերին (հ. 3, էջ 430—431)։ Համմերը այդ հաշտության մասին բերած տեղեկությունները վերցրել է թուրքական մի քանի աղբյուրներից (Նայիմա, Ֆեզլիկե, Ռայիս էֆենդու ժողովածուն), ըստ որում պայմանագրի տեքստի վերաբերյալ ոչինչ չի ասվում (տե՛ս Նշվ. աշխ., հ. 3, էջ 192), բայց քանի որ Ռայիս էֆենդու ժողովածուի մեջ, ամենայն հավանականությամբ, պայմանագրի տեքստը կա, ուստի Համմերը կարող է օգտված լինել անմիջապես նաև պայմանագրից։

Թուրքիայի և Իրանի միջև, ընդ որում Բաղդադը անցավ Թուրքիային, իսկ Երևանը՝ Իրանին։ Եթե ավելի կոնկրետ կերպով և մանրամասնորեն ցույց տանք այդ բաժանումը, ապա կնկատենք, որ այն կատարվել է հետևյալ կերպ. Բաղդադ քաղաքը և սրա էյալեթի մեջ մտնող Բասրա, Ջեսան, Բադրա, Մենդելեջ, Դարնե, Միլբաշի և Դարթանգ բնակավայրերը, մինչև Սարմիլ կոչվող վայրը՝ այդ շրջանում գտնվող ամրությունների ու բերդերի հետ միասին (Արաբական Իրաքը), ինչպես նաև նրանց միջև ընկած տերիտորիաները, այնուհետև Շահրիզոր, Վան, Ղարս, Ախալցխա բերդաքաղաքները, Կզլջա բերդը և Զինջիր բերդից արևմուտք ընկած բոլոր գյուղերն ու այլ բնակավայրերը անցան Թուրքիային։ Իսկ Զինջիրից արևելք ընկած բնակավայրերը, բերդերը և այլ վայրեր, ինչպես և Մենդելեջից մինչև Դարթանգ գտնվող բերդերը, Բիրլեն, Դոստվալին, Ջերդուհին (Ջմրութ Մաման) իրենց շրջակա վայրերով, այլև Մեհրիբանը, Ավրոմանը, Թավրիզն ու Երևանը մնացին Իրանին[1]։ Բացի դրանից, պայմանավորվող երկու կողմերը պարտավորվում էին քանդել ու ոչնչացնել սահմանամերձ մի շարք բերդեր, ինչպես՝ լեռան գագաթին գտնվող Զինջիր-կալան, Երևանի և Վանի շրջանում գտնվող Ղոթուրը, Մակուն և Ղարսի շրջանում գտնվող Մաղազաբերդը։

Պայմանագրում այս հաշտության պայմանները պահպանելու և չխախտելու վերաբերյալ տրված պատշաճ հավաստիացումներից հետո ասված է հետևյալը. «Եվ որովհետև դուք խնդրել էիք, որ ձեր կողմից կնքված և ուղարկված նամակը հավանության արժանանա նորին վեհափառության կողմից, հետևաբար, ժամանակի ներումով և սոսկ ժողովրդի ու երկրպագուների (հպատակների) և երկրների ու քաղաքների անդորրության համար այս որոշված խաղաղության համաձայնությունն արժանացավ նորին վեհափառության հավանությանը այն պայմանով, որ զզլբաշ ցեղը հրաժարվի այն գավառներից, բնակավայրերից, տափաստաններից ու հողերից, որոնք համարվում են մեր երկրի ու քաղաքների մի մասը և որոնք մտնում են հաստատված տերիտորիայի ու սահմանների մեջ, պատկանում են մեր նորին վեհափառությանը և գտնվում են նրա արդարադատության ստվերի ներքո»[1]։

Այսպիսով, երկու երկրների միջև սահմանն անցնում էր այն երկրներով, որոնք XVI դարի սկզբից Թուրք-իրանական ագրեսիվ պատերազմների ասպարեզ էին դարձել։ Այս հաշտությամբ Իրանի և Թուրքիայի միջև հաստատված սահմանը Հայաստանի վրայով անցնում էր հետևյալ գծով. Լոռուց՝ Արփաչայ (Ախուրյան) գետով՝ մինչև նրա ստորին հոսանքի շրջանում գտնվող Հաջիբայրամլու գյուղը (նախկին Երևանդաշատ քաղաքից ոչ հեռու), որտեղից թեքվում էր դեպի արևմուտք և անցնելով 17—18 կմ., կտրում էր Արաքսը և հասնում Հայկական Պարը՝ Կողբից հարավ-արևմուտք։ Այնուհետև սահմանագիծն անցնում էր այդ լեռնաշղթայի ջրբաժան գծով դեպի արևելք՝ մինչև Մեծ և Փոքր մասիսների միջև ընկած թամքոցը, իսկ այստեղից թեքվելով հարավ-արևելք, հասնում էր Ղոթուր լեռնաշղթային, ապա դեպի հարավ և անցնելով Ղոթուրը, Զագրոշ լեռնաշղթայի ջրբաժան գծով շարունակվում մինչև Բաղդադ։

Այսպես, Հայաստանը վերջնականապես բաժանվեց երկու մասի (երկու պետությունների միջև), ընդ որում նրա մեծ մասը այդ պայմանագրով, ինչպես 1555 թ., Սեֆևյան պետությունը զիջեց Օսմանյան կայսրությանը։ Այդ մասը կոչվեց Արևմտյան Հայաստան կամ Թուրքահայաստան, իսկ Իրանին անցած մասը կոչվեց Արևելյան Հայաստան կամ Պարսկահայաստան։ Վերջինիս մեջ մտնում էին Շիրակի մի մասը՝ Գյումրի ավանով (Լենինական), Արարատյան դաշտը՝ Երևան քաղաքով, Ապարանի շրջանը՝ մինչև Լոռվա լեռները, Նոր Բայազետի գավառը, ողջ Սյունյաց երկիրը և Նախիջևանի գավառը, իսկ Թուրքիային անցան Հայաստանի մնացած նահանգներն ու գավառները՝ իրենց քաղաքներով։

Անհրաժեշտ է նշել, որ պայմանագրում կա նաև կրոնական հարցին վերաբերող հոդված, որով երկու երկրների միջև վերջ էր տրվում դավանական պայքարին և հաստատվում նաև կրոնական խաղաղություն։

[1] Տե՛ս հավելվածը։

[1] Տե՛ս հավելվածը։

Այս բոլորից երևում է, որ 1639 թ. հաշտությամբ երկու պետությունների միջև փաստորեն գրեթե վերականգնվեց 1555 թ. հաշտությամբ որոշված սահմանը. այս պայմանագիրն էլ 1555 թ. պայմանագրի համարյա մի տարբերակն էր, փոքր տարբերությամբ։ Սակայն, անշուշտ, չի կարելի բոլորովին նույնացնել այս երկու պայմանագրերը։ Հետևապես 1639 թ. պայմանագիրը թեև հիմնականում հաստատեց 1555 թ. հաշտության պայմանները, բայց նա մի քայլ ետ էր այդ հաշտության համեմատությամբ՝ ի վնաս Թուրքիայի։ 1539 թ. պայմանագիրը պարունակում էր մի երկու-երեք կորրեկտիվ, որով այն տարբերվում էր 1555 թ. պայմանագրից։ Այս կորրեկտիվներից գլխավորը վերաբերում էր Վրաստանի Սամցխե-Սաադաբագոյին, որի հարցը վերջնականապես վճռվեց փոխադարձ համաձայնությամբ։ Այս հաշտությամբ Իրանը, որը 1555 և 1613 թվականների հաշտություններով պահպանում էր Սամցխե-Սաադաբագոյի արևելյան մասը՝ Ախալցխայով հանդերձ, վերջնականապես հրաժարվեց այդ շրջանից (մարզից)՝ հօգուտ Թուրքիայի։ 1639 թ. հաշտությամբ վերջնականապես հաստատվեց այդ ուղղումը, որը այդ շրջանի վերաբերյալ կար 1619 թ. պայմանագրում, և, բացի դրանից, Վրաստանի մնացած թագավորություններն ու իշխանությունները կրկին բաժանվեցին երկու պետությունների միջև ըստ ազդեցության շրջանների։

Այսպիսով, Թուրքիայի բոլոր փորձերը՝ ետ նվաճելու XVI դարի առաջին քառորդում և 70—80-ական թվականներին Իրանից զավթած երկրներն ու քաղաքները, վերջացան անհաջողությամբ, և մոտ 125 տարի տևող մի շարք արյունահեղ պատերազմներից ու վիթխարի կորուստներից հետո նա ստիպված էր վերջ տալ այդ ջանքերին ու հիմնականում բավարարվել XVI դարի առաջին կեսին Իրանից նվաճած տերիտորիաներով ու քաղաքներով (ոչ մեծ տարբերությամբ)։

Այս հանգամանքը կարելի է բացատրել այդ երկու մուսուլմանական պետությունների ուժերի գրեթե հավասարակշռությամբ, որն ստեղծվեց Շահ-Աբասի ժամանակվանից։ Մենք տեսանք, որ Թուրքիան XVI դարի վերջին և մանավանդ XVII դարի սկզբներին բավականին թուլացել էր և չնայած

իր բոլոր ճիգերին, ի վիճակի չեղավ նախկինում կատարած նվաճումների մեծ մասը պահել իր ձեռքում։ «Ուստի ընդունայն վաստակին թուրքքն, ի կողմանս պարսից, զի վասն ոչ կարեն վայելել», կարդում ենք Պետ. Մատենադարանի № 1496 ձեռագրում[1]։ Բայց դրա հետ միասին Իրանն էլ այնքան չէր ուժեղացել, որ կարողանար Թուրքերի գրաված բոլոր տերիտորիաները ետ խլել կամ գոնե իր ձեռքում պահել ավելին, քան այն, որ կարողացավ անել 1639 թ. հաշտությամբ։ Նա նույնպես ապրում էր ներքին դժվարություններ ու հակասություններ, որոնք խանգարում էին ավելի հաջող պատերազմներ մղել և ետ վերցնել իր բոլոր նախկին տիրապետությունները։

1639 թ. պայմանագիրն ամրապնդում էր Իրանի և Թուրքիայի տիրապետությունը նրանց կողմից նվաճված և բռնի կերպով Օսմանյան և Սեֆևյան ֆեոդալական պետությունների կազմի մեջ մտցված ժողովուրդների, հատկապես անդրկովկասյան ժողովուրդների վրա։ Այդ պայմանագիրը նշված երկրները արհեստականորեն բաժանում էր երկու մասի, բացառում նրանց քաղաքական միավորումը և անհնար դարձնում նրանց ազգային զարգացումը։ 1639 թ. հաշտության պայմանները առանձնապես ծանր էին Անդրկովկասի երկրների և մասնավորապես Հայաստանի համար։

Ինչևիցե, 1639 թ. խաղաղությունը մի բարեբախտություն էր՝ մանավանդ հայ ժողովրդի համար։ Դրանով վերջ տրվեց գրեթե անընդհատ տեղի ունեցող արյունահեղություններին ու ավերածություններին, «Զի» ի Կոստանդնուպոլսէ մինչ 'ի Ասպահան երթևեկութիւն է առանց երկիւղի և ահու»,— գրում է Զ. Սարկավագը[2]։ Այս առթիվ իր գոհունակությունն է հայտնում Ա. Դավրիժեցին, որը խոսելով հաշտություն կնքելու մասին, գրում է. «Վասն որոյ ամենայն աշխարհք արևելեայք և արևմտեայք օրհնեն և ողորմի տան երկուց թագաւորացն, զի կեան ի խաղաղութեան. զի նախքան զբարիշութիւնն ի փախստեան և ի թաքստեան

[1] ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 307ա։
[2] Զ. Սարկավագ, Պատմագրութիւն, հ. 2, էջ 26։

կային, ի յափշտակութեան և յաւարութեան, ի գերութեան և ի սպանութեան, ի սով և ի սուր, և մանավանդ ողորմելի ազգս Հայոց»[1]։ Իսկ Հակոբ Կարնեցին հաղորդում է, որ ըստ այդ պայմանագրի՝ «... արար խաղաղութիւնն սուլթան Մուրադն ընդ Ղըզըլբաշին ուխտ և դաշին եդին, որ էրէվան Ղըզըլբաշին լինի և Պաղտատն օսմանցուն, այլ միմեանց թուր չքաշեն, վաճառականք և շինականք աներկիւղ գայցեն և գնայցեն. հօտք սոցա և նոցա այժմ խառնին ընդ միմեանս, զի երեք տարին անգամ մի առաքէ շահն ընծայ ի Ստամբօլ»[2]։

Իհարկե, այս հեղինակները բոլորն էլ որոշ չափով չափազանցում են այդ հաշտության հետևանքները, որը միանգամայն հասկանալի է, եթե ի նկատի ունենանք այն ժամանակվա պայմաններում այդ խաղաղության հսկայական նշանակությունը։

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1639 Թ. ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Այս ենթագլխում մենք համառոտ կերպով խոսելու ենք հաշտությունից հետո առաջին շրջանում Հայաստանի և հայ ժողովրդի պատմության հետ կապված մի քանի կարևոր հարցերի մասին։

Թեև 1639 թ. հաշտությունը որոշ բարեբախտություն էր հատկապես հայ ժողովրդի համար, պատերազմների դադարելու իմաստով, ժողովրդի, որը խիստ կարոտ էր խաղաղության և խաղաղ պայմաններում մասամբ հնարավորություն էր ստանում մեծ եռանդով կրկին վերաշինելու իր երկիրը, տնտեսապես թեկուզ մասամբ կազդուրվելու, բայց հաճախակի ու երկարատև պատերազմները, ավազակային ասպատակություններն ու մասսայական գաղթերը այնքան էին հյուծել երկիրը և անկման հասցրել նրա արտադրողական ուժերը, որ խիստ դժվար էր վերականգնել դրանք և նորմալ հունի մեջ դնել կյանքը։ Բայց և այնպես խաղաղությունն իր

[1] Ա. Դավրիժեցի, հիշ. աշխ., էջ 375—376։

[2] Հակոբ Կարնեցի, Տեղեկագիր Վերին Հայոց, 1903, էջ 34։

բարերար ազդեցությունն ունեցավ, և երկրի դրությունն աստիճանաբար սկսեց որոշ չափով բարելավվել, մանավանդ Արևելյան (իրանական) Հայաստանում։ Հետզհետե վերաշինվեցին գյուղերն ու քաղաքները, տնտեսական կյանքը սկսեց զգալի կերպով բարելավվել։ Հայ պատմիչները Շահ-Աբաս II-ի իշխանության շրջանը համարում են Անդրկովկասի երկրների տնտեսական վերելքի ժամանակաշրջան[1]։ Այդ շրջանը շարունակվեց մինչև XVII դարի 80—90-ական թվականները։ Սակայն սխալ կլիներ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում արհեստի ու առևտրի զգալի վերելքը բացատրել միայն Սեֆեյանների տնտեսական քաղաքականությամբ։ Նրանք հովանավորում էին սոսկ խոշոր վաճառականների արտոնյալ ընկերություններին, որոնք կապված էին շահի արքունիքի և արտասահմանի առևտրի հետ։ Հենց այս շրջանում է, որ խոշոր վաճառականությունը, մասնավորապես հայ, ընդլայնում է իր առևտուրը արտասահմանի շատ երկրների հետ։ Այդ շրջանում են գոյանում խոշոր վաճառականական կապիտալները։ Իսկ բնակչության մյուս մասսան, ինչպես կտեսնենք ստորև, խիստ նեղվում էր հարկերի ծանրության և շահի աստիճանավորների ու ֆեոդալական մյուս տարրերի կամայականությունից և կողոպուտներից։

Այս բոլորով հանդերձ, չենք կարող չնշել, որ Հայաստանը թուրք-իրանական երկարատև ու ավերիչ պատերազմների պատճառով և պարսկական ու հատկապես թուրքական դաժան տիրապետության պայմաններում նաև մեկ ուրիշ վնաս էր կրել. այն, որ արտադրողական ուժերը մեծ չափով ոչնչացնելու հետևանքով երկար ժամանակ երկրում տեղի ունեցավ ֆեոդալիզմի լճացում։ Այս հանգամանքը նույնպես խանգարում էր երկրի տնտեսական զարգացմանը։ Այդ է պատճառը նաև, որ հաշտությունից հետո բավական ժամանակ անց միայն հնարավոր եղավ որոշ տնտեսական զարգացում։

Վերևում նշված պատճառներով և հաճախակի արշա-

[1] Այս փաստը հատկապես շեշտում է Եսայի Հասան-Ջալալյանը՝ «Պատմութիւն Ազուանից աշխարհի» աշխատության մեջ։

վանքների ու նվաճումների հետևանքով, սկսած սելջուկների նվաճումներից՝ Հայաստանի բնակչության կազմը զգալի չափով փոխվել էր։ Բացի դրանից, այս պատերազմների ընթացքում, XVI դարի առաջին քառորդից Թուրքական սուլթանները մեծ քանակությամբ քրդական ցեղեր Քուրդստանից և Հյուսիսային Միջագետքից տեղափոխեցին Հայաստանի լեռնային (մեծ մասամբ սահմանամերձ) շրջանները և բնակեցրին այնտեղ, օգտագործելով նրանց՝ գլխավորապես նոր սահմանների հսկողության համար և զարձնելով նրանց հենարան՝ հայերին ենթարկելու գործում։ Իրանական շահերը նույնպես պետության մեջ եղած քրդական մի շարք ցեղերի տեղափոխում էին իրենց ենթակա Հայաստանի սահմանամերձ շրջանները, որտեղ վերջիններիս տրամադրում էին հողեր, հակադրելով Թուրքերին։

Հայաստանի պատմությունից հայտնի է, որ եկվոր նվաճողները երկրի շատ մարզերում տեր ու տնօրինություն էին անում և տիրում էին հողերի լավագույն ու մեծ մասին։ Դրա հետևանքով հայ ֆեոդալներին գլխավորապես փոխարինեց այս եկվոր ցեղերի ռազմա-վաչկատուն ավագանին։ Հայ ֆեոդալների մի փոքր մասը միայն, որը հազիվ պահպանեց իր գոյությունը, շուտով նվաճողների կողմից սկսեց օգտագործվել որպես գործիք՝ տեղական բնակչության վրա իրենց իշխանությունն ամրապնդելու համար։ Միայն հետագայում, XVI դարի վերջերից և հատկապես XVII դարից հիշյալ ֆեոդալների պահպանված սերունդները, շատ վաճառականներ և ունևոր գյուղացիների մի մասը սկսեցին աստիճանաբար հողեր ձեռք բերել և որոշ չափով ամրանալ։ Միաժամանակ ուժեղանում էր նաև հայ եկեղեցին։

Վերևում նշված այս բոլոր հանգամանքները խիստ բացասաբար անդրադարձան հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման վրա։ Հայաստանի նվաճումը սկզբում վաչկատուն ցեղերի, ապա Իրանի ու Թուրքիայի կողմից, ինչպես նաև ավերիչ պատերազմները ոչ միայն քայքայեցին երկիրը, մեծ չափով կործանեցին նրա արտադրողական ուժերը, այլև հսկայական վնաս հասցրին հայ ժողովրդի կուլտուրային։ Այդ տիրապետությունը նույնիսկ խաղաղ պայմաններում շատ ծանր ու վնասաբեր է եղել հայ ժողովրդի համար և մեծ չափով խանգարել է նրա առաջադիմությանը։

Խոսելով Արևմտյան (Թուրքական) Հայաստանի վիճակի մասին, նրա վերջնական բաժանումից անմիջապես հետո, պետք է ամենից առաջ նկատել, որ երկրի այս հատվածում դրությունը համեմատաբար ավելի վատ էր, քան իրանական մասում։ Հայաստանի համար դա եղել է ծանր ու մռայլ մի դարաշրջան։ Այստեղ հայկական տերիտորիան Թուրքիայի մյուս մարզերի նման բաժանված էր վիլայեթների (նահանգների), որոնք իրենց հերթին ստորաբաժանվում էին սանջակների (գավառների)։ Վիլայեթների գլուխ կանգնած էին վալիները կամ փաշաները, իսկ սանջակներինը՝ սանջակբեյները։ Թուրքական կառավարիչները և մյուս ֆեոդալական խավերը լիակատար քմահաճությամբ էին իրագործում իրենց իշխանությունը այդ վայրերի բնակչության նկատմամբ և անլուր կողոպուտի ու ճնշման ենթարկում նրանց։

Օսմանյան արյունոտ ռեժիմի պայմաններում հայերն արժանացան նույն տխուր ճակատագրին, ինչ որ Թուրքիային ենթակա մյուս բոլոր ժողովուրդները։ Թուրքական ֆեոդալների բիրտ ու բարբարոսական ճնշումը արգելակում էր Թուրքական հասարակության զարգացումն ընդհանրապես և Հայաստանի զարգացումը մասնավորապես։ Նրանց տիրապետությունը հսկայական վնաս հասցրեց Արևմտյան Հայաստանի առևտրի ու արհեստների զարգացմանը։ Մինչև Թուրք-իրանական պատերազմները կամ մասամբ պատերազմների միջև ընկած խաղաղ տարիներին Հայաստանի շատ քաղաքներ զգալի չափով զբաղվում էին արհեստային գործունեությամբ ու առևտրով, բայց պատերազմների ավերիչ պայմաններում և Թուրքական տիրողների գիշատիչ իշխանության տակ այդ քաղաքների տնտեսական գործունեությունը մեծ չափով վնասվեց։ Թեև հետագայում, երկարատև խաղաղության պայմաններում տեղի ունեցավ տնտեսական կյանքի որոշ աշխուժացում, բայց դա քիչ էր։

Արևմտյան Հայաստանում ամենուրեք վերացել էին հայ

աշխարհիկ ֆեոդալները. նրանց տեղը բռնել էին թուրք և քուրդ ֆեոդալները։ Միայն հայ եկեղեցուն և հայ հոգևորականներին էր հաջողվել մի կերպ քարշ տալ իրենց գոյությունը։ Սակայն հայ եկեղեցու դրության մասին հետո։

Բացի սովորական ճնշումներից ու կեղեքումներից, հայ ժողովուրդը մյուս քրիստոնյա ժողովուրդների նման թուրքերի կողմից ենթակա էր նաև կրոնական անողոք հալածանքների, որոնք ավելի էին սաստկացնում նրա անտանելի վիճակը։ Ազգային և կրոնական խտրականությունը Թուրքիայում անտանելի չափերի էր հասնում։ Հայերը մյուս ոչ մուսուլմանների նման՝ օրենքով, իբրև «անհավատներ» («գյավուր») ու ստորադաս՝ «ռայա» արհամարհված էին և ենթակա ամեն տեսակի ճնշման ու կեղեքման։

Բացի սովորական հարկերից, որ վճարում էին Թուրքիայի բոլոր բնակիչները, քրիստոնյաները և հրեաները վճարում էին նաև լրացուցիչ հարկեր, որոնցից ամենագլխավորը խարաջն էր (գլխահարկը)։ Այնուհետև, սկսած XVI դ. երկրորդ կեսից, սուլթան Սուլեյման I-ի օրենսդրությամբ, բացի խարաջից, ոչ մուսուլմանների վրա դրվեցին նոր լրացուցիչ հարկեր։

Այդ օրենսդրության մեջ նաև մի հատուկ կետ էր մտցրված «ռայայի» վերաբերյալ, որով նա պետք է առանձին տուրք վճարեր հարսանիքի, ամուսնության, առևտուր անելու, գինի վաճառելու, տոներ նշելու, լավ հագնվելու համար և այլն։ XVII դարում ավելացվեցին նաև երկու այլ տուրքեր՝ շքեղության և գինի գործածելու։ Ցինկայզենը նշում է, որ հայերը, ինչպես և հրեաներն ու հույները Կոստանդնուպոլսում իրենց կրոնական պաշտամունքը կատարելու համար թուրքական կառավարությանը տարեկան 1000 դուկատ տուրք էին վճարում՝ պատրիարքի միջոցով[1]։

Բացի այս պաշտոնական հարկերից, որոնց գանձման ժամանակ սովորաբար զայրացուցիչ ապօրինություններ և զեղծումներ էին կատարվում, ամեն մի տեղական կառավարիչի կամ կառավարող խալի ամեն մի ներկայացուցչի կող-

[1] Տե՛ս J. Zinkeisen, նույն տեղը, հ. 3, էջ 376։

մից ժողովրդական խավերից գանձվում էին զանազան ոչ պաշտոնական հարկեր և առհասարակ ուզած ժամանակ նրանց ենթարկում էին զանազան վճարումների և կողոպուտի։ Հայ գյուղացին հանդիսանալով թուրք կամ քուրդ ֆեոդալների՝ փաշաների, աղաների, բեգերի և մյուսների փաստական ճորտը և ամբողջովին կախված լինելով նրանցից, կրկնակի անմարդկային շահագործման և կեղեքման էր ենթարկվում թե՛ կենտրոնական ու տեղական իշխանության և թե՛ իր անմիջական տերերի՝ ֆեոդալների կողմից։

Սակայն ոչ մահմեդականների վրա դրվող այս լրացուցիչ հարկերը, որոնք «օրենքով», կարծես թե նրանց կրոնական ազատության իրավունք էին տալիս, երբեք էլ նրանց չէին պաշտպանում կրոնական հալածանքներից ու տեռորից։ Թուրքական կառավարությունը, հոգևորականությունը և մյուս տիրող խավերը ոչ մի միջոցի առջև կանգ չէին առնում այլակրոններին դավանափոխ անելու համար։ Հայկական աղբյուրներում և եվրոպական հեղինակների ուսումնասիրություններում անհամար փաստեր կան այն մասին, թե ինչպիսի բռնությունների և զազանային տեռորի էին ենթարկվում հայերը, որոնք այդպիսի դժնդակ պայմաններում այդ հողի վրա հերոսաբար դիմադրելով թուրքական ասիմիլյատորներին, սարսափելի աղետներ էին կրում[1]։

Բազմաթիվ աղբյուրներում և ուսումնասիրություններում հարուստ փաստեր կան բռնի կրոնափոխության նաև մի այլ հրեշավոր միջոցի՝ մանկաժողովի վերաբերյալ, որպիսի ճանապարհով, ինչպես գիտենք, սուլթանները կազմում էին իրենց և մահմեդականությանը նվիրված ենիչերիների մոլեռանդ զորքը։

[1] Տե՛ս Հ. Մանանդյան և Հ. Ադամյան, Հայոց նոր վկաները. Երեմիա Չելէպի Քեօմուրճեան, Օրագրութիւն, Երուսաղեմ, 1939, էջ 375, 384—392, 400. Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, էջ 35. Գ. Դարանագցի, Ժամանակագրութիւն, էջ 467—468. Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1675. Սիմէոն գալիք Լեհացի, Ուղեգրութիւն. Հանդէս Ամսօրեայ, 1934, № 3—4, I. Hammer, նշվ. աշխ., էջ 78, 445 և այլ էջեր, Zinkeisen, նշվ. աշխ., հ. 3 և 4 և այլն։

Նման պայմաններում, բնական է, որ հայ ժողովրդի մեջ պիտի առաջ գար ոչ միայն իր ճնշողներին դիմադրելու և ազատագրվելու ձգտում, որի մասին խոսք կլինի մի փոքր ներքևում, այլև իր ստրկացված հայրենիքից փախչելու, ապահով կյանք գտնելու ցանկություն։ Հայկական աղբյուրները լիքն են տեղեկություններով այն մասին, թե ինչպես Արևմտյան Հայաստանից տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ փախչելով թուրքական ռեժիմի դժնդակ պայմաններից, պանդխտության ճանապարհն են բռնում և գաղթելով այլ երկրներ, այնտեղ որոնում քիչ թե շատ հանգիստ կյանք և նյութական գոյությունը շարունակելու հնարավորություն։

Ինչ վերաբերում է Արևելյան կամ Իրանական Հայաստանի վիճակին, պետք է նկատել, որ իրանական ֆեոդալների ու շահերի տիրապետությունը այստեղ գրեթե նույնն էր, ինչ որ Արևմտյան Հայաստանում. այստեղ ևս հիմնականում նույն դաժան արևելյան բռնակալությունն էր տիրում։ Միայն համեմատած Արևմտյան Հայաստանի հետ, այստեղ անմարդկային անողոք կեղեքումը մի փոքր ավելի մեղմ էր, քան թուրքական տիրողների մոտ։ Արևելյան Հայաստանում ևս պարսիկ և այլ ֆեոդալների տիրապետության պայմաններում մեծ դժվարություններ ու արգելակներ կային՝ տնտեսական զարգացման գործում։ Վերևում արդեն ասված է, որ Հայաստանը և Անդրկովկասի մյուս երկրները շահական կառավարության համար անխիղճ շահագործման և կողոպուտի նյութ էին ծառայում։ Ձգտելով կրկնել Արևելյան Հայաստանում իրանական տիրապետության այն հատկությունները, որոնք գրեթե նույնն էին, ինչ որ Թուրքիայում, այստեղ մենք համառոտակի կանգ կառնենք իրանական տիրապետությանը հատուկ մի քանի կարևոր մոմենտների վրա։

Դեռևս XVI դ. սկզբից Հայաստանի վարչական կազմակերպությունը կառուցված էր կզլբաշական ձևով։ Այնտեղ, ինչպես և Ադրբեջանում տիրապետում էին կզլբաշական ֆեոդալական ինստիտուտները, գյուղացիների շահագործման արևելյան կարգերը և արևելյան հարկային սիստեմը։

Արևելյան Հայաստանը ևս բաժանված էր նույնպիսի տերիտորիալ-վարչական միավորների, ինչպես Իրանի մյուս

մասերը։ Միայն Ղարաբաղում ու Զանգեզուրում պահպանվել էին հայկական մելիքությունները, որպես քաղաքական և վարչական առանձին միավորներ՝ իրենց ներքին ինքնավարությամբ։

Բացի այդ, Իրանական Հայաստանի մի քանի առանձին գավառներ և շրջաններ մտնում էին վրացական թագավորության և Գանձակի խանության մեջ։ Երևանի խանությունը բաղկացած էր 13 մահալներից, որոնք ընդգրկում էին բավականաչափ ընդարձակ տերիտորիա։ Խանը կամ բեյլերբեյը շատ մեծ, համարյա անսահմանափակ իրավունք ուներ իր մարզում և Իրանի կենտրոնական իշխանության նկատմամբ կիսանկախ դիրք էր գրավում։

Հարկային կեղեքումը Արևելյան Հայաստանում ևս շատ ծանր էր, և ոչ մահմեդականները, բացի սովորական հարկերից, վճարում էին նաև լրացուցիչ հարկեր։ Պարսիկ տիրողները նույնպես հայերից և մյուս քրիստոնյաներից «արյան տուրք» էին վերցնում, այսինքն, տղաներին և աղջիկներին բռնի հավաքում էին զինվորական ծառայության, կամ շահի ու այլ իշխանավորների պալատներում իբրև սպասավորներ ու հարճեր պահելու համար։

Հայերի նկատմամբ կրոնական խտրականությունը և հալածանքները այստեղ նույնպես գոյություն ունեին։ Այստեղ ևս հայերին բռնությամբ ստիպում էին մահմեդականություն ընդունել։ Այս նպատակով Սեֆևյանները հորինեցին այսպես կոչված իմամ Ջաֆարի «օրենքը», ըստ որի քրիստոնյա ընտանիքի այն անդամը, որը մահմեդականություն էր ընդունում, հանդիսանում էր իր բոլոր քրիստոնյա ազգականների միակ ժառանգը։ Դեռ ավելին՝ նույնիսկ բոլորովին օտարները, որոնք մահմեդականություն էին ընդունում, մահմեդական կեղծ վկաների ցուցմունքներով ճանաչվում էին քրիստոնյաների ազգականներ և յուրացնում նրանց ունեցվածքը[1]։ Բացի այս բոլորից, ինչպես Թուրքիայում, այնպես էլ Իրանում Շարիաթի համաձայն՝ ոչ մահմե-

[1] Տե՛ս Գ. Էզով, նշվ. աշխ., էջ XII։

դականը իրավունք չուներ դատարանում վկայություն տալ մահմեդականի դեմ։

Այս շրջանում Սեֆեյան պետության մեջ հողային հարաբերությունները և հարկային քաղաքականությունը առաջվա նման հիմնականում գրեթե նույնն էին մնացել, միայն այն տարբերությամբ, որ աշխատավորների վիճակն ավելի էր վատացել։

Այս բոլորով հանդերձ, սակայն, պետք է նշել, որ թուրք-իրանական պատերազմներից հետո, երկու հանգամանք փոքր-ինչ մեղմացնում էին իրանական Հայաստանի մեծ մասի բնակչության ծանր վիճակը։ Առաջին՝ Հայաստանի պարսկական որոշ կառավարիչների՝ գլխավորապես Երևանի խաների մեծ մասի խելոք քաղաքականությունը իրենց ենթակա մարզում և մեղմ վերաբերմունքը հայ բնակչության նկատմամբ, և երկրորդ՝ իրանական շահերի կողմից հայ եկեղեցու և հոգևորականության նկատմամբ վարած զիջողական քաղաքականությունը, որը հնարավոր էր դարձնում մասամբ մեղմացնելու հայ բնակչության վիճակը։ Օրինակ՝ շնորհիվ Երևանի բեյլերբեյ Խոսրով խանի (1648—1654 թթ.) վարած քաղաքականության և հայերի նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի (իհարկե, ելնելով իր շահերից և քաղաքական նկատառումներով), նրա իշխանության տակ գտնվող գավառների բնակչության դրությունը որոշ չափով թեթևացավ։ Այս խանը իր միջոցառումներով նպաստեց Արարատյան դաշտի և հայկական մի շարք այլ գավառների վերաշինությանն ու տնտեսական կյանքի բարելավմանը։

Ինչ վերաբերում է հայ եկեղեցու նկատմամբ իրանական տիրակալների վարած քաղաքականությանը, ապա ընդհանրապես պետք է նկատել, որ Հայաստանի նվաճումից և հայերի պետականության վերացումից հետո գլխավորապես էջմիածնի կաթողիկոսները հայերի միակ ներկայացուցիչներն էին շահերի և սուլթանների առջև։ Հայկական և պարսկական աղբյուրներում իրանական տիրակալների կողմից հայ եկեղեցու նկատմամբ վարած հովանավորական քաղաքականության մասին առանձնապես խոսում են Ա. Դավրիժեցին և Զ. Մարկավազը։ Հետաքրքիր տեղեկություններ են

տրված Սիմեոն կաթողիկոսի «Ջամբռ»-ում, ինչպես նաև Պետ. Մատենադարանի պարսկական վավերագրերում, որոնց մի մասը թարգմանել և հրատարակել է Հ. Փափազյանը[1]։

Հայ եկեղեցու նկատմամբ հանդուրժողական քաղաքականություն են սկսում վարել, թեև ավելի սահմանափակ չափով և ավելի ուշ (XVII դարի երկրորդ կեսից) նաև թուրքական սուլթանները, որոնք նույնպես հովանավորական հրամաններ են տալիս էջմիածնի վանքի, մասամբ էլ այլ վանքերի մասին՝ նրանց իրավունքները պաշտպանելու, երբեմն հարկերից ազատելու կամ այլ իրավունքներ տալու վերաբերյալ[2]։

Իրանի շահերի և մասամբ թուրքական սուլթանների այս քաղաքականության ու միջոցառումների սոցիալ-տնտեսական և քաղաքական իմաստն ու նկատառումները միանգամայն հասկանալի են։ Ամենից առաջ էջմիածինը և հայկական մյուս վանքերը վայելում էին շահերի և այլ տիրակալների հովանավորությունը իբրև կալվածատերեր ու ճորտատերեր, և նրանց հողատիրության վրա նույնպես մասամբ տարածվում էր վակուֆային իրավունքը։ Այնուհետև, հայ եկեղեցին մեծ մասամբ հարկատու էր շահերին կամ խաներին։ Այստեղ դեր էին խաղում նաև քաղաքական նկատառումները։ Հայ եկեղեցին մի կողմից՝ օգնում էր պարսկական տիրակալներին՝ հայերին հնազանդ պահելու համար, մյուս կողմից՝ Թուրքիայի դեմ մղած պատերազմների շրջանում, Անդրկովկասի հայ վաճառականության հետ միասին, իրանական օրիենտացիայի կողմնակից էր և աջակցում էր շահերին[3]։ Ինչ վերաբերում է հայ ժողովրդական մասսաներին, ապա Իրանի շահերը աշխատում էին որոշ չափով նրանց

[1] Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկական վավերագրերը, պր. 1, Երևան, 1956, էջ 53—73։

[2] Տե՛ս Պետ. Մատենադարանի թուրքական և պարսկական վավերագրերը (թուրք. ֆիրմանները), նաև «Ջամբռ», էջ 238։

[3] Տե՛ս И. П. Петрушевский, Персидские официальные документы XVI—нач. XVII вв. как источник для изучения феод. отнош. в Азерб. и Арм., „Проблема источниковед.", том. III, 1940, էջ 26։

պաշտպանել խաների և մյուս մուսուլմանների ոտնձգությունից և ճնշումներից (մեծ մասամբ կրոնական խնդրում)՝ ֆիսկալ նկատառումներով, իբրև հարկատու հպատակների[1]։

Բայց շահերի և սուլթանների վերոհիշյալ բոլոր ֆերմանները, շնորհագրերն ու կարգադրությունները տեղական իշխանությունների և ֆեոդալների կողմից չէին իրագործվում կամ շատ վատ էին իրագործվում։ Խաներն ու այլ պաշտոնյաները շարունակում էին իրենց բռնություններն ու ապօրինությունները։ Այնուհետև, այս բոլորով հանդերձ կաթողիկոսները, վանահայրերը և հոգևոր թեմերի առաջնորդները նշանակվում կամ հաստատվում էին շահերի, սուլթանների կամ տեղական իշխանությունների կողմից և լիովին ենթակա էին նրանց։ Բացի այդ, շահերի և մյուսների կողմից տրվող շնորհումների, արտոնությունների և պաշտպանության դիմաց պարսիկ կամ թուրք իշխանությունները կաթողիկոսներից ու մյուսներից հաճախ նվերներ (կաշառք) էին ստանում։

Հայ հոգևորականությունը մեծ մասամբ հնազանդ էր տիրողներին և աջակցում էր նրանց՝ հայ աշխատավորներին շահագործելու գործում։ Կարևոր է նաև այն, որ հայերը իրավունք չունեին առանց կենտրոնական կամ տեղական (թուրքական և իրանական) իշխանությունների թույլտվության կառուցել կամ վերանորոգել կրոնական հիմնարկություններ։ Հայ եկեղեցին թեև պարսիկ և թուրք իշխանավորների հովանավորության շնորհիվ կարողանում էր որոշ չափով պաշտպանել հայ հպատակներին, բայց մյուս կողմից՝ կաթողիկոսների (Էջմիածնի, Սսի, Աղթամարի, Երուսաղեմի) և պատրիարքների միջև տեղի ունեցող պայքարը իշխանության, ազդեցության և նյութական շահերի համար, բացասաբար էր անդրադառնում հայ ժողովրդի միասնության վրա և այս պատճառով նա հաճախ մնում էր բոլորովին անպաշտպան՝ օտար տիրողների ճնշումներից։

Բայց և այնպես, չնայած թուրքական ու իրանական նվաճողները կեղեքում և հոշոտում էին Հայաստանը՝ վարելով հայ և մյուս հպատակ ժողովուրդների սիստեմատիկ ասիմիլյացիայի ու բնաջնջման քաղաքականություն, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը պահպանեց իր գոյությունը, ցուցաբերելով հերոսական դիմադրություն, բացառիկ հաստատակամություն ու աննկուն կամք։

Այս բոլորով հանդերձ, հայ ժողովուրդը մյուս ճնշված ժողովուրդների հետ միասին թուրքական ու պարսկական տիրապետության դժնդակ պայմաններում նաև ազատագրական ակտիվ պայքար է մղել ազգային և սոցիալական ճնշման դեմ, ինչպես այլ առիթով նշված է վերևում։ Նրա ազատագրական ձգտումներն ու պահանջները իրենց արտահայտությունն են գտել ժամանակակից մի քանի հիշատակարաններում ու ժամանակագրություններում։ Օրինակ՝ Հակոբ Բաթուկեցին, Սարգիս Խիզանցին, Աղարիա Սասնեցին և այլ ժամանակագիրներ ու գրիչներ իրենց հիշատակարաններում ու այլ գրվածքներում արդեն քարոզում են հայերի ազատագրական և պետականության վերականգնման գաղափարը և հույս հայտնում, որ նրանք կմիավորվեն և կազատագրվեն օտարերկրյա լծից[1]։ Օսմանյան կայսրության ոչ մահմեդական մյուս ժողովուրդների, գլխավորապես բալկանյան ժողովուրդների մոտ, դեռևս XVI դարից սկսած ազատագրական շարժումները, որոնք շարունակվում և զարգանում էին նաև XVII դարում (տե՛ս վերը), զգալի ազդեցություն ունեցան նաև Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի վրա և նպաստեցին նրա զարթոնքին։ Ճիշտ է՝ խիստ աննպաստ պայմանների պատճառով հայերի ազգային-ազատագրական շարժումն այդ շրջանում դեռ շատ թույլ էր, անկազմակերպ ու աննպատակասլաց, բայց այնուամենայնիվ, հիշյալ դարի 40—60-ական թվականներին հայերի կողմից ևս այլ ժողովուրդների հետ միասին փորձեր են արվում ազատագրական պայքար մղելու ուղղությամբ։

[1] Տե՛ս «Ջամբռ», էջ 215—223։

[1] Տե՛ս Ե. Լալայան, նշված ցուցակը, պրակ Ա, էջ 840, Դ. Ալիշան, կամենից, 1896, էջ 169. «Հանդէս Ամսօրեայ», 1936, էջ 336.

Դրա հետ միասին այն ժամանակվա հայ գործիչները (հատկապես հոգևոր) դարձյալ փորձում էին եվրոպական տերությունների, հատկապես պապերի հետ վարած բանակցությունների միջոցով ստանալ նրանց օգնությունը կամ հովանավորությունը՝ գոնե մեղմացնելու համար հայերի, մանավանդ հայ եկեղեցու դրությունը թուրքական ու պարսկական տիրապետության տակ[1]: Բայց այդ փորձերն այս անգամ էլ ապարդյուն են անցնում:

Ինչ վերաբերում է հայերի՝ Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու և նրանից օգնություն ստանալու հարցին, պետք է ասել, որ ինչպես վրացիները, հայերը ևս իրենց ազատագրության և անկախության համար մղած պայքարում, սկսած XVI դարից, մանավանդ XVII դարում հույսը միշտ էլ կապել են Ռուսաստանի հետ: Հայաստանի պատմական բախտի գործում մեծ դեր է խաղացել ռուս մեծ ժողովուրդը, որի կենտրոնացված պետությունը «Իր առաջացման հենց սկզբից... ձգողական կենտրոն և հենարան հանդիսացավ օտարերկրյա ստրկացնողների դեմ պայքարող եղբայրական ժողովուրդների համար»[2]: Վրաստանի մի մասը Ռուսաստանի հետ անմիջական հարաբերություններ, գլխավորապես քաղաքական, այդ ժամանակ արդեն ուներ, իսկ հայերը դեռ հնարավորություն չունեին կոնկրետ քայլեր կատարելու այդ ուղղությամբ. Ռուսաստանն էլ իր հերթին այդ ընթացքում ներքին ու արտաքին աննպաստ պայմանների պատճառով դեռևս հնարավորություն չուներ օգնելու Անդրկովկասի ժողովուրդներին, մանավանդ հայ ժողովրդին, թեպետ առևտրական կապեր հայերն արդեն սկսել էին հաստատել Ռուսաստանի հետ:

Պետք է նշել, որ այս շրջանում ևս ազգային-ազատագրական պայքարը Հայաստանում երբեմն միաձուլվել է դասակարգային պայքարի հետ: Հաճախ կրոնական քողի տակ տեղի են ունեցել սոցիալական շարժումներ կամ ստորին խավերի տեղական ելույթներ, որոնք ուղղված են

[1] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, պր. II, էջ 2586—2587:

[2] Тезисы о 300-летии воссоед. Украины с Россией (1654—1954), 1954, стр. 6.

եղել ոչ միայն ֆեոդալ շահագործողների, այլ թվում նաև տիրող եկեղեցու, այլև օտար տիրապետության դեմ[1]:

Այսպիսով, օտարերկրյա դաժան տիրապետության պայմաններում հայ ժողովուրդը դիմադրության վիթխարի ուժով, ասիմիլյացիայի և ստրկացման պայմաններում, կարողացել է հերոսական պայքար մղելով օտար տիրողների դեմ, ապահովել իր կուլտուրական և ազգային գոյությունը:

Ցանկանում ենք այս առնչությամբ մեր ներկա աշխատությունն ավարտել մի կոմպետենտ հեղինակի գրած հետևյալ խոսքերով. «Չի կարելի ժխտել բարոյական մեծությունը այն ժողովրդի, որը կարողացել է դուրս գալ բազմադարյան և դժվարին պայքարից թեկուզ ոչ ուժգին հաղթություններով, բայց լիակատար հաղթանակով (торжеством)»[2]:

* * *

Այսպիսով, XVI—XVII դարի թուրք-իրանական երկարատև ու ավերիչ այդ ահավոր պատերազմները, որոնց գլխավոր թատերաբեմը Հայաստանի տերիտորիան էր և որոնք մղվում էին մեծ մասամբ Հայաստանի համար, անհամար աղետներ բերելով հայ ժողովրդին, վերջացան Հայաստանի բաժանումով՝ երկու ֆեոդալական գիշատիչ տերությունների միջև: Պատերազմի ավարտումը և խաղաղության հաստատումը թեև մի բարերախտություն էր, բայց և այնպես 1639 թ. հաշտությամբ հայ ժողովուրդը երկար դարեր դատապարտվեց օսմանյան և պարսկական բռնադատիչների դժնդակ տիրապետությանը:

[1] Հայ-ռուսական հարաբերությունների մասին կան հատուկ աշխատություններ, ուստի մենք հարկ չենք համարում այստեղ առանձնապես զբաղվել այդ հարցով, մանավանդ որ այդ հարաբերությունները աշխուժացել են գլխավորապես ավելի ուշ:

[2] Т. Днев, Армянский вопрос в Турции, М., 1893, стр. 20.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

1049 Թ.[1] ՇԱՎԱԼ ԱՄՍԻՆ ՇԱՀ ՍՈՒԼԹԱՆ ՍԵՖԻԻ ԵՎ ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱԴ IV—Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՑՄԱՆԱԳԻՐԸ

Սուլթան Մուրադի նամակը

Հանուն ողորմած և գթառատ Աստծո։ Չկա ույժ և կարողություն ավելի բարձր, քան Աստված։

Ձեր գերապատիվ բարձրաստիճան և հավատարմատար Սարուխանը, որին ուղարկել էիք իբրև պատգամավոր Մուստաֆա փաշայի մոտ, որը մեր արևելյան մասի նահանգապետը և զորավարն է, հանդիպում է ունեցել Զահաբ կոչված վայրում կարգավորման ու խաղաղության հարցերի վերաբերյալ և սահմանների հարցերի ու դեպքերի շուրջը բանակցություն և խոսակցություն է ունեցել՝ պայմանավորվելով, որ այն սահմանները, որոնք գտնվում են Բաղդադի և Ադրբեջանի կողմերում (մոտերքում), այնպիսի վայրեր, ինչպիսիք են՝ Ջեսանը և Բադրային, մեզ կպատկանեն և Մենտլիջ գյուղաքաղաքը մինչև Դարթանք (ուր Սարմել կոչված մի վայր Դարթանքին սահման է համարվում) և այն տափաստանները, որոնք գտնվում են նրանց միջև, մեզ կպատկանեն։ Իսկ դրանց մոտակայքի լեռը կմնա մյուս կողմին։ Միլբաշին, որը Դարթանքի սահմանն է համարվում, և Դարնին մեզ պետք է պատկանեն։ Նույնպես Զիաօլդին և Հարուն ցեղերը մեր վեհափառ արքային են ենթակա։ Բիրրեն և Դոսդվալին մնում են մյուս կողմին։ Լեռան վրա գտնվող Զանջիր բերդը պետք է քանդվի, իսկ այն գյուղերը, որոնք գտնվում են վերոհիշյալ քանդված բերդի արևմտյան մասում, պետք է մնան մեզ, իսկ արևելյան մասում գտնվող գյուղերը պետք է մնան մյուս կողմին։ Զարքույի քաղաքի մերձակայքը, որը գտնվում է Թալեմ բերդի մյուս մասում, և բերդին մոտիկ գտնվող վայրերը գրավվել են մեր արքայի կողմից, իսկ Ուրման բերդը իրեն ենթակա գյուղերով պատկանելու են մյուս կողմին։ Զառ քաղաքի համար սահման է նշանակված Գյադուկ Զողանը։ Ղազալջեն իրեն ենթակա շրջաններով գրավվել է մեր արքայի կողմից։ Մեհրիբանը իրեն ենթակա շրջաններով պատկանելու է մյուս կողմին։ Երկու կողմերը համաձայնվեցին, որ Վանի սահմանում Ղոթուր և Մակու և Ղարսի կողմում գտնվող Մաղազիրդ բերդերը պետք է ոչնչացվեն։ Եվ քանի որ այն նամակում, որտեղ պարզաբանել էի տրված խոստումները, վերոհիշյալ անձնավորությունները բացատրել և համաձայնվել են և պարտավորվում են, որ սրանից հետո պայմանագրի հոդվածները հավասարությամբ պահպանվեն և անհրաժեշտ չափով պետք է օգնեք և պահպանեք բարեկամությունը և հավատարիմ մնաք մեր պայմանագրին և խուսափեք նրա խախտումներից։ Եվ որովհետև դուք խնդրել էիք, որ ձեր կողմից ուղարկված կնքված նամակը հավանության արժանանա նորին վեհափառության կողմից, հետևաբար ժամանակի ներումով և սոսկ ժողովրդի ու երկրպագուների (հպատակների) և երկրների ու քաղաքների անդորրության համար այս որոշված խաղաղության համաձայնությունն արժանացավ մեր նորին վեհափառության հավանությանը այն պայմանով, որ Ղզլբաշ ցեղը հրաժարվի այն գավառներից, բնակավայրերից, տափաստաններից և հողերից, որոնք համարվում են մեր երկրի և քաղաքների մի մասը և որոնք մտնում են հաստատված տարածությունների սահմանների մեջ և պատկանում են մեր նորին վեհափառությանը և գտնվում են նրա արդարադատության ստվերի ներքո։

Վերոհիշյալ մշակված և անմշակ հողերը, հաշվի առնելով նրանց ազդարարությունը, անհրաժեշտաբար պետք է պատկանեն մեր ամենաբարձր վստահելի ու վսեմ արքունի-

[1] *Թր. թվագրության 1639 թ.։*

քին։ Ի հավելումն վերոհիշյալ կետերին, այն բերդերն ու գավառները, տափաստանները, բլուրներն ու լեռները, որոնք մտնում են Ախալցխայի, Ղարսի, Վանի, Շահրիզուրի, Բաղդադի և Բասրայի սահմաններում, մյուս կողմից չպետք է հարձակման ենթարկվեն։

Համաձայն մեր որոշված ու հարգված պայմանագրության, որն ուղարկվել է մեր նախնիների հզորության և բարգավաճության ժամանակ՝ ձեր նախնիներին, ապացուցելով այն բառերով, որ ձեր իշխանությանը ենթակա ստորադրյալները վատաբանում են մեր կրոնապետին և նրա առաքինի կնոջը և մեր իսլամի այլ բարձրաստիճան հոգևորականներին, ուստի սրանից հետո չպետք է թույլատրվի վատաբանելու մեր հոգևորականներին, քանի մեր հաստատած խաղաղության պայմանագիրը կմնա կայուն և հավերժական։

Քանի դեռ ձեր կողմից խոստման և դաշնադրության անվայել հակառակություն չի ցուցաբերվի, վերոհիշյալ դաշնադրություններն ու պայմանագրությունները, որոնք գրանցված են այդպիսի եղանակով, հաշվի կառնվեն և կպահպանվեն մեր վսեմափառ արքայի կողմից։ Որպեսզի ձեր հպատակների և երկրի դեմ ոտնձգություն չկատարվի, ձեր կողմից ուղարկված պայմանագրին համապատասխան, ուղարկում ենք մեր արքայի այս նամակը, որը լի է ճշմարտությամբ, անկեղծությամբ և հաստատում է, որ մեր մեջ վերացվել է թշնամությունը և որ մենք ավելի ու ավելի շատ պետք է պահպանենք մեր համաձայնության և բարեկամության պարտականությունները։

Ձեր գործուղած դեսպանը արժանացավ մեր արքայի պատվին ու հարգանքին, բարեխղճությամբ և պատշաճորեն կատարեց իր պարտականությունները և մեր արքայի թույլատրությամբ վերադարձավ ձեզ մոտ։ Ձեր դեսպանի հետ ուղարկվում է նաև արքունի գերապատիվ և վսեմափայլ պաշտոնյաներից մեկը, որի մոտ գտնվում է վեհափառ արքայի նամակը։

Կրոնի և կառավարության ուղղափառ նվիրվածները մշտապես աղոթում են։

Գրվեց Շավալ ամսի սկզբին, 1049 թ.։

Սուլթան Սելիմի նամակը Շահ-Իսմայիլին

«Օսմանների միապետը, հերոսների և քաջերի տիրակալը, անհավատների և կռապաշտների ոչնչացնողը, բռնապետների և ժամանակակից փարավոնների սարսափը, փառապանծ սուլթան Սելիմ-խանը դիմում է քեզ, էմիր Իսմայիլ, որպեսզի քեզ ապացուցի, որ դու քո դեմքը շուռ ես տվել աստվածային օրենքների սրբությունից, դավաճանել ես մուսուլմանական մաքուր հավատքին և անարդարացի ու բռնապետական ճանապարհներով զավթել ես արևելքի մարզերը։ Ջղջա, հակառակ դեպքում դու շուտով կտեսնես, թե ինչպես քո հարթավայրերում կծածանվեն մեր հաղթական դրոշները, քանզի մենք հրաժարվեցինք մեր պճնանքներից հանուն սպառազինության. մենք դուրս քաշեցինք մեր սարսափելի զենքը մեր զայրույթի և ատելության պատյանից և, ամենաբարձրյալի թևերին թռչելով, մեր անպարտելի բանակների գլուխն անցած, անցանք Ստամբուլի նեղուցը»[1]։

Սուլթան Սուլեյմանի նամակը շահ Թահմազին
(հատված)

«Եթե քո հերետիկոսությամբ խեղաթյուրված բնության մեջ լիներ պատվի և քաջության գեթ մի կաթիլ, դու արդեն վաղուց սպանված կլիներիր այն պատերազմում, որը դու պետք է ձեռնարկեիր մեր դեմ։ Մենք մինչև այժմ քեզ խնայել ենք լոկ մեր գթությամբ և այժմ քեզ կյանք ենք պարգևում, բայց իմացիր, որ դու մնում ես մեր զենքի մշտական սպառնալիքի տակ։ Ինչպե՞ս դու համարձակվեցիր երկնքին նմանվող մեր արքունիքը չուղարկել քո մեծամեծներից ոչ մեկին, որը ծնկի գար մեր առջև՝ իբրև նշան քո հնազանդության և դրանով ապացուցեր, որ դու մեր հարկատուն ես։ Այժմ ես որոշեցի իմ զենքը մտցնել Իրան, Թուրան, Սամարղանդ և Խորասան։ Իմ

[1] Մունշու Ալի-Ֆերիդուն բեյի օսմանյան պաշտոնական փաստաթղթերի ժողովածու, 1858, էջ 381։

կողմից աշխարհում երկու ամենամեծագույն բերդերի՝ Բելգրադի և Հոոդոսի գրավումը միակ պատճառն էր այն բանի, որ մինչև հիմա ես հետաձգում էի իմ այս մտադրության իրագործումը։ Այնտեղ, աշխարհի այդ երկու հրաշալիքներում (Բելգրադը և Հոոդոսը—Հ. Ն.) սուտ աստվածների տաճարները այժմ դարձել են մահմեդական մզկիթներ. անհավատությունը և հերետիկոսությունը չքացել են։ Արդ, պատրաստվիր տեսնելու իմ հաղթական զորքերին։ Ես բոլոր մեծ հերոսների սովորության համաձայն, այս մասին քեզ տեղեկացնում եմ նախօրոք։ Բայց նախքան իմ բազմահազար զորքերը կհեղեղեն քո երկիրը, նախքան նրանք կկործանեն քո պետությունը և կբնաջնջեն քո տոհմը, ավելի լավ է հանիր քո գլխից պսակը և դարձիր հասարակ դերվիշ, որպեսզի ծածկես քո ոչնչությունը։ Սակայն, եթե դու ինձնից կխնդրես մի կտոր հաց, ես մեծահոգությամբ կտամ քեզ այն և կխլեմ միայն քո տիրապետությունները։ Բայց եթե դու, մոլորության մեջ ընկնելով, կուզես լինել հպարտ, ապա իմ բանակների զենքի շաչյունը և թնդանոթների որոտը քեզ ցույց կտան, որ դու կործանված ես։ Եվ այնժամ, թեկուզ դու մոխիրների մեջ թաքնվես, ինչպես մրջյունը կամ երկինք համբառնաս, ինչպես թռչունը, ես այնտեղ ես քեզ պետք է հետապնդեմ, Ալլահի օգնությամբ կգտնեմ և աշխարհը կփրկեմ քո արգահատելի գոյությունից։ Իմացիր, որ իմ ֆերմանը հարվածում է ինչպես ճակատագիրը, և ես հրամայում եմ քեզ պատասխանել իմ ուղերձին։ Հիշիր, որ երջանիկ է նա, ով գնում է հնազանդության փրկարար ուղիով»[1]։

Կաֆայեցի վարդապետի բանաստեղծությունը Հայաստանի վիճակի մասին Կզլբաշական շարժման ժամանակ

Կզլբաշների կողմից Հայաստանին հասցրած վնասների և աղետների մասին, որ նա տալիս է իր՝ «Պատմութիւն վասն շարժման Կարմիր գլխոյն, որ եկեալ երեց և աւերեց զՀայոց

[1] I. Hammer, նշվ. աշխ., հ. III, էջ 44—45։

աշխարհս» չափածո գրվածքում։ Ահա մի քանի հատվածներ այդ ձեռագրից։

«Յորժամ հազար ամ լցաւ թւական Հայոց տումարին.
Յազգ մի, ղզըլպաշ կասեն, շարժեցաւ նման վիշապին.
Հանց (ց)եղ չարութիւն արար՝ չէր տեսեալ ալ մարդ հողածին.
Կարծեմ թե սայ չար եղաց, քան զնոքա, որ յառաջն եկին...

* * * * * * * * *

Բայց այս անօրէն արքայս, որ անուն շահ կոչեցեալ են,
Այնչափ չարութիւն արար, որ ըզնախնիքն բընաւ ոչ յիշեն,

* * * * * * * * *

Քան ըզփարաւոն արքայն, որ օրհնեալ ազգն չարչարեաց,
Սայ մեզ փարաւոն եղաւ զՀայաստան երկիրըս աւերեաց.
Նման Սենեքերիմ այս Արծրունեաց զերկիրն աւերեաց.
Ոչ գեղ, ոչ քաղաք եթող, զամենայն հրով տոչերեաց.

* * * * * * * * *

Քան ըզԱնգթամուր արքայն աւելի աւերք արարին
Ոչ հայ, ոչ տաճիկ ասին՝ զամենայն սրրով մաշեցին.

* * * * * * * * *

Վա՜յ է մեր Հայոց ազգին, որ բազումք ըզմեզ կոխեցին,
Մեր փառքն ի մենէ առին մեր տանեն հանեալ վարեցին.
Յերկիրն Հայոց ազգին թաթարի ազգն աւերեցին.
Վանայ մինչև յԵրզընկան շինութիւն բընաւ չի թողին»[1]։

[1] ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2939, էջ 495 թ։

կողմից աշխարհում երկու ամենամեծագույն բերդերի՝ Բելգրադի և Հոոդոսի գրավումը միակ պատճառն էր այն բանի, որ մինչև հիմա ես հետաձգում էի իմ այս մտադրության իրագործումը։ Այնտեղ, աշխարհի այդ երկու հրաշալիքներում (Բելգրադը և Հոոդոսը—Հ. Ն.) սուտ աստվածների տաճարները այժմ դարձել են մահմեդական մզկիթներ. անհավատությունը և հերետիկոսությունը չքացել են։ Արդ, պատրաստվիր տեսնելու իմ հաղթական զորքերին։ Ես բոլոր մեծ հերոսների սովորության համաձայն, այս մասին քեզ տեղեկացնում եմ նախօրոք։ Բայց նախքան իմ բազմահազար զորքերը կհեղեղեն քո երկիրը, նախքան նրանք կկործանեն քո պետությունը և կբնաջնջեն քո տոհմը, ավելի լավ է հանիր քո գլխից պսակը և դարձիր հասարակ դերվիշ, որպեսզի ծածկես քո ոչնչությունը։ Սակայն, եթե դու ինձնից կխնդրես մի կտոր հաց, ես մեծահոգությամբ կտամ քեզ այն և կխլեմ միայն քո տիրապետությունները։ Բայց եթե դու, մոլորության մեջ ընկնելով, կուզես լինել հպարտ, ապա իմ բանակների զենքի շաչյունը և թնդանոթների որոտը քեզ ցույց կտան, որ դու կործանված ես։ Եվ այնժամ, թեկուզ դու մոխիրների մեջ թաքնվես, ինչպես մրջյունը կամ երկինք համբառնաս, ինչպես թռչունը, ես այնտեղ ևս քեզ պետք է հետապնդեմ, Ալլահի օգնությամբ կգտնեմ և աշխարհը կփրկեմ քո արգահատելի գոյությունից։ Իմացիր, որ իմ ֆերմանը հարվածում է ինչպես ճակատագիրը, և ես հրամայում եմ քեզ պատասխանել իմ ուղերձին։ Հիշիր, որ երջանիկ է նա, ով գնում է հնազանդության փրկարար ուղիով»[1]։

Կաֆայեցի վարդապետի բանաստեղծությունը Հայաստանի վիճակի մասին Կզլբաշական շարժման ժամանակ

Կզլբաշների կողմից Հայաստանին հասցրած վնասների և աղետների մասին, որ նա տալիս է իր՝ «Պատմութիւն վասն շարժման Կարմիր գլխոյն, որ եկեալ երեց և աւերեց զՀայոց

[1] I. Hammer, նշվ. աշխ., հ. III, էջ 44—45։

աշխարհս» չափածո գրվածքում։ Ահա մի քանի հատվածներ այդ ձեռագրից։

«Յորժամ հազար ամ լցաւ թւական հայոց տումարին.
Յազգ մի, ղզըլպաշ կասեն, շարժեցաւ նման վիշապին.
Հանց (ց)եղ չարութիւն արար՝ չէր տեսեալ ալ մարդ հողածին.
Կարծեմ թե սայ չար եղաց, քան զնոքա, որ յառաջն եկին...

. . . . . .

Բայց այս անօրէն արքայս, որ անուն շահ կոչեցեալ են,
Այնչափ չարութիւն արար, որ ըզնախնիքն բընաւ ոչ յիշեն,

. . . . . .

Քան ըզփարաւոն արքայն, որ օրհնեալ ազգն չարչարեաց,
Սայ մեզ փարաւոն եղաւ զՀայաստան երկիրըս աւերեաց.
Նման Սենեքերիմ այս Արծրունեաց զերկիրն աւերեաց.
Ոչ գեղ, ոչ քաղաք եթող, զամենայն հրրով տոչերեաց.

. . . . . .

Քան ըզԼանգթամուր արքայն աւելի աւերք արարին
Ոչ հայ, ոչ տաճիկ ասին՝ զամենայն սրրով մաշեցին.

. . . . . .

Վա՜յ է մեր Հայոց ազգին, որ բազումք ըզմեզ կոխեցին,
Մեր փառքն ի մենէ առին մեր տանեն հանեալ վարեցին.
Յերկիրն Հայոց ազգին թաթարի ազգն աւերեցին.
Վանայ մինչև յԵրզընկան շինութիւն բընաւ չի թողին»[1]։

[1] ՀՍՍՌ Գետ. Մատենադարանի ձեռագիր № 2939, էջ 495 թ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

I. Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններ

К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, тт. II, VII, IX, X, XV, XVI ч. II, XXI.

Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, Երևան, 1957։

К. Маркс, Хронологические выписки, „Архив Маркса и Энгельса", тт. I, VI, VII, VIII, X.

Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1952։

Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 16։

Համկ(բ)Պ Պատմության համառոտ դասընթաց, Երևան, 1952։

II. Աղբյուրներ

ա. Հայերեն

Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901։

Ալիշան Ղ., Այրարատ, բնաշխարհ Հայաստանեաց, Վենետիկ, 1890։

Ալիշան Ղ., Հայ—Վենետ, Վենետիկ, 1898։

Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Ա և Բ, Վենետիկ, 1870։

Ալիշան Ղ., Կամենից, Վենետիկ, 1896։

Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1885։

Ամատունի Հ., Յուցակ հայերէն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910։

Ամատունի Հ., Մանանդյան Հ., Հայոց նոր վկաները, Վաղարշապատ, 1903։

Ամատունի Հ., Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությունների մասին, Երևան, 1927։

Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896։

Անդրեաս Եվդոկիացի, Ժամանակագրություն։

Ավգուստինոս Բաջեցի, Ճանապարհորդություն յԵրուսաղէմ, զբաղիր ի Փարիզ, Նոտարք մատենագրութեան հայոց, Ս. Պետերբուրգ, 1884։

Գուշակյան Թ., Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի Վանուց ի Սեբաստիա, «Հանդէս ամսօրեայ», 1925։

Գրիգոր Դարանաղցի (Կամախեցի), Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915։

Դիւան Հայոց պատմության, գիրք Ժ., Թիֆլիս, 1912։

Երեմիա Չելեպի Քեոմուրջեան, Օրագրություն, Երուսաղեմ, 1939։

Զաքարիա Սարկաւագ, Պատմագրություն, մասն Ա և Բ, Վաղարշապատ, 1870։

Լալայան Ե., Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, պր. 1, Թիֆլիս, 1915։

Խաչատուր Ջուղայեցի, Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905։

Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903։

Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. Ուղեգրություններ, հ. Ա. և Զ., Երևան, 1932։

Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հ. 1, 1951, հ. 2, 1954, Երևան։

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Մատենադարանի ձեռագրեր, №№ 46, 481, 519, 603, 675, 1151, 1282, 1496, 1497, 1675, 1786, 1875, 2035, 2672, 2776, 2939, 3425, 3695, 4044, 5959, 7584, 8184։

Մելիքսեթ-բեկ Լ. Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ., Երևան, 1936։

Պետրոս Դի-Սարգիս Դիլանեցի, Ժամանակագրություն, «Կռունկ» հանդես, 1863, № 3։

Պատկանյան Բ., Նոտարք մատենագրութեան հայոց, Ս. Պետերբուրգ, 1884։

Սամուէլ Քահանայ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893։

Սիմեոն Ապարանեցի, Ողբ ի վերայ առման Թավրիզի, 1870, ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 6548։

Սիմեոն Ապարանեցի, Վիպասանություն սակս Պահլավունեան զարմի և Մամիկոնեան սեռի, Վաղարշապատ, 1870։

Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873։

Սարգսյան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, 1914։

Սաֆրաստյան Ա., Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, անտիպ։

Սրվանձտյան Գ., Թորոս Աղբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1887։

Տաշյան Հ., Յուցակ հայերէն ձեռագրաց մատենագրութեան Մխիթարեանց ի Վիեննա, 1895։

Փիրգալեմյան Ղ., Նշխարք պատմության հայոց, հ. 2, ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 4515։

Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. XV—XVI դդ. հրովարտակներ, Երևան, 1956։

բ. Թուրքերեն

Английские путешественники в Московском государстве в XVI в. Перевод с английского Ю. В. Готье, 1937.

Белокуров С., Дело о присылке шахом Аббасом Ризы господней царю Михаилу Феодоровичу в 1625 г.

Белокуров С., Сношения России с Кавказом, вып. 1, 1578—1613, СПб, 1889.

Веселовский А., Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией, т. I, II, III, СПб, 1890—1892.

Древняя Российская Вивлиофика, ч. 3, 2-ое издание.

Какаш и Тектандер, Путешествие в Персию через Московию в 1602—1605 гг., СПб, 1896.

Котов Ф. А., О ходу в Персидское царство, „Временник Московского общества истории и древностей Российских", т. XV, 1852.

Минадои, Война турок с персиянами. Перевод с итальянского Ф. Д. Авилова, Тбилиси, 1950.

Олеарии Адам, Описание путешествия в Московию и через Московию в Персию и обратно, СПб, 1906.

Описание торжественного въезда и пребывания персидского посольства в Риме в апреле 1601 года. Перевод с французского, 1900.

Проскинитарий Арсения Суханова, Палестинский сборник, т. VII, СПб, 1889.

Полиевктов М. А., Европейские путешественники XIII—XVIII вв. по Кавказу, Тбилиси, 1935.

Памятники дипломатических сношений России с державами иностранными, тт. I, II, X, СПб, 1871.

Смирнов В. Д., Кучибей Геомюрджинский и др. османские писатели XVII в. о причинах упадка Турции, СПб, 1873.

Твертинова А. С., Второй трактат Кучибея. Ученые записки института востоковедения, т. VI, М., 1953.

Фонды ЦГАДА №№ 77 (Персидские дела) и 89 (Турецкие дела).

Царьградские письма о древних и нынешних турках и о состоянии и т. д., 1789.

Чириков Ев., Путевой журнал Зап. Кавказского отделения императорского русск. географического общества, кн. IX, СПб, 1875.

Чтения в императорском обществе истории и древностей Российских, т. 1, 1799; т. 1, 1868—1869, 1870, 1884; т. IV, 1888; т. III, 1896; т. II, 1899.

Шарден Ж., Путешествие по Закавказию в 1672—1673 гг., Тифлис, 1902.

III. Զանազան ուսումնասիրություններ և աշխատություններ

ա. Հայերեն

Ալբոյաջյան Աբշակ, Պատմութիւն Հայ—Կեսարիոյ, Դահիրէ, 1937։

Ամատունի Հ., Տանկահայոց հարցի պատմությունը, 1915։

Առաքելյան Համբարձում, Պարսկաստանի հայերը, նրանց ներկան և ապագան, մաս Ա և Բ, Թիֆլիս, 1911։

Այվազովսկի Գ. Վ., Պատմութիւն օսմանեան պետութեան, հ. Ա և Բ, Վենետիկ, 1841։

Բարխուդարյան Մակար, Ազուանից պատմութիւն, հ. 2, Թիֆլիս, 1907։

Եսայի Հասան-Ջալալյան, Պատմութիւն Ազվանից աշխարհի, 1839։

Թադիադյան Մ., Պատմութիւն պարսից, 1846։

Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946։

Լեո, Մոջայական կապիտալ, Երևան 1934։

Հայ ժողովրդի պատմություն, 1-ին մաս, Ա. Հովհաննիսյանի և Բ. Առաքելյանի խմբագրությամբ, Երևան, 1936։

Հարությունյան Պ., Անդրկովկասյան ժողովուրդների պայքարը իրանական և թուրքական ագրեսիայի դեմ XVII—XVIII դարերում, Երևան, 1955։

Հարությունյան Հ., Գյուղացիական շարժումները Հայաստանում XVII դ. 1-ին քառորդում, Երևան, 1939։

Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, հ. 3, Երևան, 1954։

ՀՍՍՌ Գիտ. Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, № 2, 1950։

Հասրաթյան Լևոն, Հայաստանը երբեմն և այժմ, հ. 1, 1910։

Մարգարյան Գրիգոր, Պատկերազարդ և քարտեզաւոր օսմանեան պատմութիւն, կ. Պոլիս, 1912։

Մինաս վարդապետ Համդեցի, Ազգաբանութիւն հայոց, Վաղարշապատ, 1870։

Մխանսարեան, Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1868։

Չամչեան Մ., Պատմութիւն հայոց, հ. 2 և 3, Վենետիկ, 1784։

Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն, գր. 5, Երևան, 1960։

Տեր Հովհաննեսյան Հ., Պատմութիւն Նոր-Ջուղայի, հ. 1 և 2, Նոր-Ջուղա, 1880—1881։

Օրմանյան Մ., Ազգապատում, գր. 11, կ. Պոլիս—Երուսաղեմ, 1912։

Абазов В. А., История Армении, СПб, 1888.
Аббас-Кули Бакиханов, Гюлистан Ирам, Баку, 1926.
Ахов М., Россия и армяне, СПб, 1897.
Бартольд В. В., Ислам, СПб, 1918.
Бартольд В. В., История изучения Востока в Европе и России, СПб, 1911.
Бартольд В. В., Мусульманский мир, СПб, 1922.
Бартольд В. В., К истории крестьянских движений в Персии, сборник „Из далекого и недавнего прошлого", 1923.
Бартольд В. В., Место Прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925.
Бартольд В. В., Иран, Исторический обзор, Ташкент, 1926.
Браун Э., Литературная история Персии, т. IV.
Брюсов В. Я., Летопись исторических судеб армянского народа, М., 1918.
Балуйский А. М., Феодальный строй Турции в XV—XVI вв., М., 1939.
Викентий Макушев, Восточный вопрос в XVI и XVII вв. по неизданным итальянским памятникам, „Славянский сборник", т. III, 1876.
Всемирная история, т. IV, под редакцией М. М. Смирина и др., М., 1958.
Гирс А. А., Россия и Ближний Восток, СПб, 1906.
Гиргас, Права христиан на Востоке по мусульманским законам, 1865.
Гладстон, В. Э., Жакмен и др., Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896.
Глинка С., Картина историческая и политическая Порты Оттоманской М., 1912.
Глинка С., Обозрение истории Армянского народа от начала бытия его до возрождения области армянской в Российской империи, ч. 1—2, М., 1832—1833.
Голобородько И. И. (Южанин), Старая и новая Турция, М., 1913.
Голобородько И. И., Турция, М., 1915.
Гордлевский В. А., Внутреннее состояние Турции во второй половине XVI в., Труды Московского ин-та востоковедения, сборник № 2, 1940.
Де Марсилли, Военное состояние Оттоманской империи, ч. I и II., 1737 г.

Д'Оссон, Полная картина Оттоманской империи, в 22-х частях, т. I, 1795.
Диев Гр., Армянский вопрос в Турции, из переписки с стамбульским публицистом, 1898.
Державин Н. С., История Болгарии, т. 1, М.—Л., 1947.
Драйзен С., К вопросу истории русско-персидских сношений XV—XVI столетий (кандидатская диссертация).
Дю Ман Р., Персидское государство в 1660 году.
Жигарев, Русская политика в Восточном вопросе (Ея история в XVI—XIX вв. Критическая оценка и будущие задачи). Ист.—юридич. очерки, т. 1—2, М., 1896.
Заходер Б. Н., История восточного средневековья, М., 1944.
Заходер Б. Н., Средиземноморье и Ближний Восток в средние века, М., 1940.
Зевакин Е., План захвата Московским государством Прикаспийских областей, „К истории Прикаспийского вопроса", Тифлис, 1934.
Зевакин Е., Персидский вопрос в русско-европейских отношениях XVII в. Уч. записки ин-та истории АН СССР, № 8, 1940.
Иоселиани П., Исторический взгляд на состояние Грузии под властью царей магометан, Тифлис, 1849.
Иванов М. С., Очерки истории Ирана, М., 1952. Иран, т. 1—2, изд. АН СССР, 1927—1928.
История дипломатии., т. 1, под. ред. В. П. Потемкина, М., 1941.
История человечества, т. V, Всемирная история под редакцией Гельмгольца, СПб, 1905—1906.
История стран Зарубежного Востока в средние века, М., 1957.
Крымский А. Е., История Персии, ее литературы и дервишеской теософии, т. II, 1913.
Крымский А. Е., История Турции и ее литературы, М., 1916.
Крымский А. Е., История Туречины (на украинском языке), 1923.
Коласс, История Турции. Перевод с французского, СПб, 1882.
Лависс и Рамбо, Всеобщая история, т. III, IV, и V. Перевод с французского, СПб, 1898—1902.
Линч Х. Ф. Б., Путевые очерки и этюды, т. II., Армения. Перевод с английского, Тифлис, 1910.
Лэн-Пуль Стенли, Мусульманские династии, СПб, 1899.
Мельник А., Турция. Ее историческое прошлое и настоящее. М.—Л., 1929.
Миллер А. Ф., Краткая история Турции. М., 1947.

Миллер А. Ф., Мустафа паша Байрактар, М.—Л., 1947.
Миньот Аббат, История турецкая. Перевод с французского, ч. I и II, СПб, 1789.
Муравьев., Грузия и Армения, ч. II, СПб, 1848.
Мюллер А., История Ислама с основания до новейших времен, т. III и IV. Перевод с немецкого. СПб, 1895—1896.
Новая история, под. ред. Б. Ф. Поршнева, С. Д. Сказкина и В. В. Бирюковича, т. 1, М., 1953.
Новая история стран Зарубежного Востока, под ред. И. М. Рейснера и Б. К. Рубцова, т. I, М., 1952.
Патканов К., Общий обзор истории Персии со вторжения арабов, СПб, 1883—1884.
Патканов К., Библиографический очерк армянской исторической литературы, СПб, 1879.
Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI и начале XIX вв. Л., 1949.
Петрушевский И. П., Восстание ремесленников и городской бедноты в Тебризе в 1573 г. Сборник статей по истории Азербайджана, вып. 5, Баку, 1949.
Петрушевский И. П., Народное восстание в Гилане в 1629 г., Ученые записки ин-та Востоковедения, т. III, 1951.
Петрушевский И. П., Персидские официальные документы XVI начала XIX вв. как источник для изучения феодальных отношений в Азербайджане и Армении, „Проблемы источниковедения", т. III, 1940.
Пигулевская, Якубовский и др., История Ирана с древнейших времен до конца XVIII в., Л., 1958.
Погодин А. А., История Сербии, СПб, 1909.
Полиевктов А. М., Экономические и политические разведки Московского государства в Закавказьи в XVI—XVII вв., Тифлис, 1934.
Сайкс Н., История Персии. Перевод с английского (на правах рукописи), т. II, Лондон, 1930.
Сборник статей по истории Азербайджана, вып. 1. Баку, 1949.
Сенковский, Собрание сочинений, т. VI, СПб, 1859.
Смирнов Н. А., Россия и Турция в XVI—XVII вв., 1946.
Смирнов Н. А., К истории европейских держав за колониальное порабощение Турции в XVI—XVIII вв. Труды Моск. ин-та истории и литературы, т. II, М., 1938.
Соловьев С. М., История России с древнейших времен, т. VI, VII, VIII, СПб, 1877—1879.
Твертинова А. С., Восстание Кара Языджи-Дели Хасана в Турции, М.—Л., 1946.

Тыркова А., Старая и молодая Турция и младотурки, Петроград, 1916.
Худабашев А., Обозрение Армении в географическом, историческом и литературном, СПб, 1859.
Чемерзин А. Я., Турция, ее могущество и распадение, т. I, СПб, 1878.
Шамиров Яков, Краткое историческое и географическое описание царства армянского, СПб, 1786.
Шахмалиев Э., К вопросу о дипломатических отношениях первых сефевидов с западными странами. „Труды Азербайджанского Гос. ун-та", серия историч., вып. I, Баку, 1950.
Шлоссер Ф., Всеобщая история, т. III. Перевод с немецкого, М., СПб, 1870.
Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898.
Южаков, Армянские и турецкие дела, „Русское богатство", кн. 4, отд. 2, 1896.
300-летие воссоединения Украины с Россией (1654—1954 гг.). Сборник статей, М., 1954.

Գ. Այլ լեզուներով

Hammer I., Geschichte des Osmanischen Reiches, II, III, B., Pesth, 1834.
Hammer I., Des Osmanischen Reiches Staatsverfassung und Staatsverwaltung, I B., 1815.
Zinkeisen J. W., Geschichte des Osmanischen Reiches in Europa. IV B., Hamburg, 1840.
Yorga N., Geschichte des Osmanischen Reiches, Gotha, III, B., 1910.
Zeitschrift D. Deutschen Morgenlandischen Geselschaft, XI B., Leipzig, 1932.
Tarih, III, Istambul (*Թուրքերեն*), devletmatbaasi, 1933.
Ommer-Lütfi Barkan, Osmanli Imparatorlugunda çiftçi siniflarin hukukî staüsü. Ülkü (*ամսագիր*), 1937, № 49. 50. 53 *և այլն։*
Ahmet Refik, Onaltinci asirda Rafizîlık ve Bektasîlik, Istambul, 1932 (*վավերագրերի ժողովածու*)։

IV. Պարբերական հրատարակություններ

«Էջմիածին» (ամսագիր) 1950 թ. №№ 11, 12։
«Հանդէս ամսօրեայ», 1889, 1925, 1932, 1934, 1936 և 1937 թթ. համարներ։

«Հայրենիք» (հանդես) 1930—1934 թթ. համարները։
ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտությունների սերիա, 1951 թ., № 5, 1953, № 10 և 1954 թ. № 5։
ՀՍՍՌ ԳԱ. Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, 1950 թ. № 2։
„Византийский временник", т. I, 1947, т. III, 1949, т. IV, 1950, т. V, 1951; т. VII, 1953.
„Вопросы истории", № 2, 1950; № 6, 1951; № 5, 1952; № 7, 1953.
Газета „Правда", за 28/XI/1935, № 327.
Исторические записки ин-та истории АН СССР, № 8, 1940.
Краткие сообщения ин-та востоковедения, АН СССР, вып. IV, 1952.
Журнал Министерства Народного Просвещения, 1878, ч. CL—XIII 1872, отд. II, ч. CXCV, отд. II.
Ученые записки Академии общественных наук, вып. II, 1946.
Ученые записки ин-та востоковедения, вып. VI, 1953.
„Советское востоковедение", № 5, 1948 и № 1, 1956.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաղա փաշա 116, 233, 234:
Աբաս, Խուդաբանդայի որդի, 118:
Աբաս I 142:
Աբաս-միրզա 118:
Աբբաս Մինոտ 74, 78, 79, 226, 231, 254, 259:
Աբդար գալիբ 157:
Աբդուլլահ II *խան* 133:
Աբդուլլահ խան Ուստաջլու 110, 136, 138:
Աբեղա գրիչ 207:
Ազարիա Ջուղայեցի 158:
Ազարիա Սասնեցի 279:
Ալեքսանդր, ցար, 149:
Ալեքսանդր, վրաց իշխան, 127:
Ալեքսանդր Մակեդոնացի 153:
Ալեքսանդրե իշխան 204:
Ալի փաշա 200:
Ալիշան Հ. 78, 106, 157, 279:
Ալվենդ (նույնը՝ Ալվան, Յաղուբի որդի) 48:
Ահմեդ, Սելիմի եղբայր, 67:
Ահմեդ Ռեֆիկ 116:
Ահմեդ Սուլթան 207:
Ահմեդ փաշա 179:
Աճառյան Հր. 15, 144, 154, 273:
Ամիր խան Մովսիլու 126:
Ամիրգունա խան 229:
Այվազովսկի Գ. 24, 30, 131, 180, 261:
Անջիոլելլո Ջ. 5, 22, 49:
Առաքել Դավրիժեցի 10—12, 25, 92, 114, 153, 155, 179, 192, 200—202, 204—206, 208—212, 215—218, 220—224, 226, 238, 239, 256, 259, 262, 267, 268, 276:
Առաքել Սարկավագ 154:
Առաքելյան Հ. 215:
Ավգուստինոս Բաջեցի 13, 14, 213:

Բաբուր II 66:
Բայազիդ 50, 59, 67, 68:
Բայազիդ II 51:
Բատորի Ս. 146:
Բարկան Ս. Լ. 41:
Բարտոլդ Վ. Վ. 24, 30, 97:
Բարսեղ Վարագեցի 133:
Բեգզաշ խան 260:
Բելոկուրով Ս. 20, 109, 149, 151:
Բորիս Գոդունով 184, 196, 197, 234:
Բրյուսով Վ. 83:
Բուզակ Ղազվինի 91, 92, 100:

Գալանտար օղլի 179:
Գիբբոն 43:
Գլինկա Ս. 6, 24, 29, 30, 167:
Գորդլևսկի Վ. Ա. 36:
Գրեգուար, պատմաբան, 43:

Գրիգոր Աբեղա 201:
Գրիգոր Դարանաղցի (նույնը՝ Կամախեցի) 11, 204, 215, 217, 220, 244, 254, 256, 257, 260, 261, 273:
Գուվեա Ա. 204, 205, 208, 213:

Դ Ալեսանդրի 92, 100, 118:
Դալի-Հասան 179, 180:
Դահման շահ 101:
Դավես 24:
Դե-Բալբի Ժ. 87:
Դիև Տ. 281:
Դիվսուլթան 92:
Դուքեա 54:

Երեմիա Զելերի Քեռմուրջեցի 130:

Զաքոզեր Ն. 36:
Զաքարիա Սարկավագ 12, 13, 91, 94, 104, 106, 201, 230, 239, 240, 253, 255, 256, 257—259, 261, 267, 276:
Զենո Կ. 22, 78:
Զեակին Ե. Ս. 91, 251:
Զիլֆիգար խան 201:
Զոհաբ 71:

Էզով Դ. 32, 205, 206, 209, 214, 275:
Էլիաս-Միրզա 94, 104, 105:
Էնգելս Ֆ. 23, 26, 39, 40, 42, 72, 81, 115, 121, 164, 167, 171, 173, 182, 183:
Էրթոզրուլ 57:

Թաթարխան 259:
Թահմազ-կուլի խան, (նույնը՝ Թահմազ-Կուլի բեկ) 210, 231, 255:
Թահմազ I շահ 86, 87, 91—96, 98—100:
Թահմազ շահ 102—111, 113, 116—118, 120, 125, 198, 224, 285:
Թեյմուրազ խան 231:
Թոխմախ խան 126:
Թորոս Աղբաք 252:
Թուռուն Կասմ խան 228:

Ժիզարյով 121:

Իբրահիմ 99—102:
Իբրահիմ Փեչևի 16, 17, 100, 103, 105, 106, 108—110, 126, 128, 131—134, 137, 202, 204—206:
Իղբիս փաշա 81:
Իմամ Կուլի խան 130, 132:
Իմամ-կուլի-սուլթան Կաջար 126:
Իսմայիլ II 94:
Իսմայիլ Միրզա 139:
Իսմայիլ շահ 107, 118:
Իսքյանդար Մունշի 77, 92, 219:
Իվան Ահեղ 119:
Իվան IV 98, 146, 147:
Իվանով Մ. Ս. 36:
Իվանովիչ Վ. 89:

Լալայան Ե. 15, 201, 207, 220, 253, 279:
Լավիսս Է. 24, 28, 72, 74, 104, 259:
Լաֆոբի 103:
Լեբո-Պիրս 43:
Լենին Վ. Ի. 22:
Լենկեմուր 44, 70, 106, 121:
Լեն-Պուլ Ս. 62:
Լևոն 33, 62, 65, 159, 193, 205, 207, 208, 256:
Լևեզ, (նույնը՝ Լևոն) 204:
Լևոն Կախեթացի 109:
Լյուզովիկոս 87:
Լուսաբաք 204:

Խաբիբ աս-Միյար 79:
Խալիլ փաշա 227, 233:
Խան Ահմեդ խան 142:
Խաչատուր Ջուղայեցի 14, 91, 94, 108:
Խոջի բեկ, տե՛ս Խոջի բեկ Բյուրջեցի:
Խոջի բեկ Բյուրջեցի 18—20, 160—163, 165, 177, 180:
Խոսրով խան 276:
Խոսրով փաշա 234, 252:
Խուդաբանդա շահ 118, 119, 129, 133, 134, 136, 142, 144, 149, 151, 198:

Կակաշ 128, 200—202:
Կասլոս V 87, 95, 96, 103:
Կարա խան 81:
Կարա-Մուհամեդ վեզիր 226:
Կարա Ցաղիջի, տե՛ս Կարա Ցաղիջի Դալի հասան:
Կարա Ցաղիջի Դալի հասան 35, 165, 179, 180:
Կաֆայեցի վարդապետ 287:
Կոտով 22:
Կրիմսկի Ա. Ե. 77:
Կուչիբեյ Գեռմուրջինսկի 16:

Հալերի Մուստաֆա Նայիմա 17, 18, 202, 203, 216, 224, 226—228, 231, 232, 234, 253, 255, 256, 262, 263:
Հակոբ Բաթումեցի 279:
Հակոբ Կարնեցի 254, 268, 273:
Հակոբյան Հ. 22, 49, 92, 100, 111:
Հակոբյան Վ. 14, 15:
Համզա-միրզա 118, 129, 133—136:
Համմեր Ի. 17, 18, 24, 26—28, 40, 50, 70, 127, 132, 166, 252, 255, 257, 259—263, 273, 286:
Հայդար-միրզա 117, 140, 198:
Հասան Ջալալյան Ե. 269:
Հասան փաշա 130:
Հաֆզ փաշա, տե՛ս Հաֆզ Ահմադ փաշա:
Հաֆզ Ահմադ փաշա 231, 252:
Հյուսեին Ալի բեկ 194:
Հյուսեին փաշա 179:
Հովհաննես 154:
Հովհաննես Արճիշեցի 92, 101:
Հովհաննես Մարեցի 118, 136, 153, 155, 181:
Հորմուզ 240, 241:
Հուսեին Թեքելու 100:

Ղևոնդ Սարկավագ 10:

Մահդի Ուլեա 129:
Մահմեդ խան 132:
Մանանդյան Հ. 154, 273:
Մարսիլի 163:
Մարտիրոս քահանա 76:
Մարքս Կ. 23, 26, 35, 40, 42, 72, 81, 115, 121, 164, 167, 169, 171, 172, 173, 183:
Մաքսուդ խան 258, 261:
Մելիքսեթ-բեկ Լ. Մ. 107, 111, 219:
Մեխլու Բաբա սարկավագ 239:
Մեծ Մոզոլ, տես Ջհանգիր:
Մերբիման 24:
Միանսարյան 213:
Միլլեր Ա. Ֆ. 36, 171, 176:
Միխայիլ Ֆեոդորովիչ ցար 235, 241:
Մինաս քահանա 144:
Մինոտ Ա., տե՛ս Աբբաս Մինոտ:
Միրզա Մուհամեդ 227:
Միրզա Սուլեյման 118, 119:
Միքայել կաթողիկոս 157:
Մխիթարյան 154:

Մյուլլեր Ա. 28, 72, 174, 193, 243, 250:
Մոնթեսքյո 18:
Մուհամեդ II 38:
Մուհամեդ III 147, 161:
Մուհամեդ Զուլքադար 100:
Մուհամեդ Խուզաբանդա 118:
Մուհամեդ Շայբանի 49, 50:
Մուհամեդ փաշա 206, 226:
Մուհամմատ սուլթան 204:
Մուհամմեդ-կուլի խան 261:
Մուհամմեդ սուլթան 174, 203, 243:
Մունշի Աֆթ-ֆերիդուն բեյ 286:
Մուշիդ Կուլի խան 144:
Մուստաֆա Բայրակդար փաշա 171, 176:
Մուստաֆա Լալա 125—128:
Մուստաֆա խան 189:
Մուստաֆա Սելյանիկի 16, 160—162, 165, 177:
Մուստաֆա սուլթան 233:
Մուստաֆա փաշա 130, 282:
Մուստաֆա Քյաթիբ Չելեբի 17:
Մուրադ 77, 131:
Մուրադ II 59:
Մուրադ III 115, 116, 124, 125, 133, 136, 145, 161, 176, 177, 197:
Մուրադ խան 49:
Մուրադ IV 18, 160, 233, 235, 242, 244, 252, 253, 256, 258, 260, 263, 282:
Մուրադ սուլթան 153, 177, 198, 248, 254, 255, 257, 259, 261, 268:
Մուրադ փաշա 180, 222, 223, 256:

Ցակուբովսկի 216:
Ցակուբ 46, 47:
Ցորգա Վ. 43, 151:
Ցուղեմիր Օսման փաշա 129:
Ցուլի բեկ 142:

Նայիմա, տե՛ս Հալեբլի Մուստաֆա Նայիմա:
Նաշչոկին 195:
Նալջարյան Հ. Ռ. 2:
Նասֆ փաշա 223:

Շախմալիև 87:
Շահ-Աբաս 11, 13, 53, 135, 138—144, 149, 150, 184, 186—196, 198—204, 206—212, 214—220, 223—227, 229—232, 236—239, 248—252, 260:
Շահ-Աբաս II 269:
Շահ-Իսմայիլ 4, 286:
Շահ-Իսմայիլ I 48—51, 63—77, 79—82, 91, 96:
Շահ Կուլի 63:
Շահ Վերդի խան 142:
Շաշ-Քերիմ խան 198, 199:
Շահրուխ շահ 94:
Շարդեն 22:
Շամխալ խան 224:
Շեգեղդին 98:
Շեյխ Հայդար 46, 47:
Շերեֆ բեգ 93, 99:
Շերեֆ խան Բիթլիսի 155:
Շերիֆ փաշա 202:
Շերլի Ա. 187, 194:
Շերլի եղբայրներ 189:
Շերլի Ռ. 187:
Շիրվանշահ 46—48:
Շլյումբերժե 43:
Շլոսսեր 72:

Զամչյան Մ. 25, 26, 105, 130, 157, 158, 227, 262:

Զելեբի, տե՛ս Մուստաֆա Քյաթիբ Զելեբի:
Զեմերզին Ա. 24, 31, 72, 110, 119:

Զիկալա, տե՛ս Սինան փաշա:

Պատկանյան Բ. 14, 31, 32, 215, 237:
Պատկանով Բ., տե՛ս Պատկանյան Բ.:
Պետրոս 237:
Պետրուշևսկի Դ. Պ. 36, 52, 69, 76, 156, 277:
Պիզուլեսկայա 216:
Պիոս IV պապ 158:
Պողոսյան Ս. 57:

Ջանիկ իշխան 73, 80:
Ջանիկ Դիբեյ խան 227:
Ջանփոլադ օղլի 179, 222:
Ջաֆար 275:
Ջաֆար փաշա 132, 181:
Ջենկինսոն 22, 110, 111:
Ջհանդիր 229, 258, 259:
Ջղալե-զադե, տե՛ս Ջղալե զադե Ցուսուֆ փաշա:
Ջղալե-զադե Ցուսուֆ փաշա (նույնը՝ Ջղալ օղլի...) 132, 134, 135, 216—218:
Ջոմիո Պ. 77:
Ջուղայեցի Ստեփան վարդապետ 212:

Ռամբո 24, 28, 72, 74, 104, 259:
Ռայիս 263:
Ռոսս Մ. 98:
Ռուդոլֆ կայսր 147:
Ռուստամ-միրզա 142:

Սամվել Անեցի 106:
Սայքս Պ 24, 28, 29, 81, 103, 217, 241:
Սարգիս Գիլանենց 237:
Սարգիս Թիգանցի 279:
Սարգիս քահանա 109:
Սարգսյան Բ. 15, 154:
Սաֆրաստյան Ա. 17, 100, 105, 126, 132, 134, 202, 203, 205, 206, 216, 223, 226, 227, 228, 253:
Սելիմ սուլթան 4, 112, 174, 224, 243, 286:
Սելիմ I Ցավուզ կամ Ահեղ 59—64, 66—83, 182:
Սելիմ II 114, 115, 116, 123:
Սելյանիկի, տե՛ս Մուստաֆա Սելյանիկի:
Սեյիդ Մուբարեկ 143:
Սեֆի I շահ 248, 249, 263:
Սեֆի Էղդին 45:
Սիգիզմունդ I 65:
Սիմեոն գալիք լեհացի 254, 273:
Սիմեոն Թագավոր 94:
Սիմեոն կաթողիկոս 277:
Սիմեոն վարդապետ Աղարանեցի 134:
Սիմեոն Տիգրանակերտցի 154:
Սիմոն իշխան 204:
Սիմոն Թագավոր 181:
Սինան փաշա, տե՛ս Սինան փաշա Ջղալի զադե:
Սինան փաշա Ջղալի զադե (նույնը՝ Զիկալա) 130, 131, 207, 216—218, 220:
Սմբատով Ն. Ա. 89, 90, 123, 124, 177, 185, 235:
Սմբատով Վ. Դ. 16, 17, 19, 21, 29, 35, 115, 122, 160—165, 180:
Սոլովյով Ս. Մ. 235:
[redacted]
Ստեփան Բատորի 146:
Ստեփանոս քահանա 253:
Ստեփանոս Սալմաստեցի, տե՛ս Ստեփանոս քահանա Սալմաստեցի:
Ստեփանոս Քահանա Սալմաստեցի 156, 157, 253:
Սրվանձտյան Գ. 15, 252:

Սուլեյման 70:
Սուլեյման I Կանունի 84—89, 91, 94—96, 99—101, 159, 172:
Սուլեյման II 172:
Սուլեյման սուլթան 102—109, 112, 114, 115, 117, 119, 182, 224, 285:
Սուլթանյեր խան 99:

Վասիլևսկի 193:
Վասիլչիկով Դ. 137, 139, 148:
Վարդան Բաղիշեցի 231, 259:
Վեսելովսկի Ա. 20:
Վեսելովսկի Ն. Ի. 129:
Վիտտեկ 24:

Տաշյան Հ. 15, 255:
Տավերնյե 22:
Տեկտանդեր 128, 200—202:
Տվերդիխովա Ա. Ս. 35, 165, 179:

Ցինկայզեն 24, 27, 28, 152, 245—248, 252, 262, 272, 273:

Ուբայդուլլահ խան 67:
Ուզուն Հասան 38, 46, 98:
Ուզունշարշըլը 24:

Ուլամա բեգ 92, 96, 99, 101, 102:

Փափազյան Հ. 277:
Փեշևի, տե՛ս Իբրահիմ Փեշևի:
Փիրզալեմյան 14, 78, 109, 129, 207:

Քեռմուրճյան Երեմիա Չելեբի 273:
Քյազիմ-միրզա 109:
Քյաթիբ-Չելեբի 165:

Օլեարի Ա. 22:
Օսման, իշխան, 37:
Օսման II 228:
Օսման Յուզդեմիր փաշա 130, 132—135:
Օքմանյան Մ. 110, 158, 280:

Ֆահրադ փաշա 131, 132, 135—137:
Ֆարրուխ-Եսար 47:
Ֆեզլիկե 263:
Ֆեոդոր Իվանովիչ ցար 148, 150, 196:
Ֆրանցիսկ I 95:
Ֆուադ Քյոփրյուլյու 24:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազիա 111:
Աբոցի (Նույնը՝ Աշոցքի) 111:
Աղբրեջան 11, 32, 36, 44—48, 50, 52, 61, 68, 69, 76, 77, 79, 87, 90, 92, 94, 109—112, 125—128, 135—137, 140, 156, 179, 190, 195, 199, 200, 202, 218—222, 227, 238, 274, 282:
Աղբիանապոլիս (Կպիրնե) 70, 81:
Ագով, քաղաք, 88, 90, 123, 235, 246, 247, 262:
Ալազան գետ 127:
Ալանաց դուռ 153:
Ալաշկերտ 111:
Ալջավազ 99, 106, 107:
Ախալցխա 228, 258, 264, 266, 284:
Ախլաթ 99, 106, 107:
Ախուրյան գետ 111:
Ադզաշ 137:
Աղթամար 201, 253, 278:
Ադ-Կոյունլուի պետություն 38, 44—48:
Ադվանք 129, 130, 132:
Ամասիա 78, 110:
Ամու-Դարիա 50, 51:
Անգլիա 234:
Անդրկովկաս 2—5, 15, 22, 52, 60, 61, 66, 68, 80, 82, 88, 92, 96, 111, 112, 122, 125, 130, 135, 147, 156, 172, 175, 194, 229, 232, 245, 258, 267, 269, 274, 277, 279, 280:
Ապարանի շրջան 265:
Առաջավոր Ասիա 83:
Ասիա 6, 43, 61, 63 84, 122—124, 243, 246, 248:
Ատրպատական 88—90, 98, 102, 147, 148, 150:
Ավստրիա 51, 65, 84, 87, 96, 122, 184, 185, 197, 198, 222, 234:
Ավրոման 264:
Ատլանտյան օվկիանոս 84, 171, 210:
Ատրապատական 70, 80, 133, 178, 199, 230, 257, 263:
Արարատյան Իրաք 49, 51, 80, 102, 111, 264:
Արաբիա 174, 243:
Արաբստան 143:
Արարատյան դաշտ 153:
Արարատյան գաշտ 12, 128, 254, 259, 265, 276:
Արարատյան երկիր 208, 220, 229, 230, 254, 258, 259:
Արաքս գետ 13, 137, 207, 209, 211, 212, 213, 216, 265:
Արդահան 107, 126:
Արդեբիլ 45—47, 130, 140, 256:

Արխանգելսկ 88, 90:
Արծկե 99, 204:
Արծկե գավառ 204:
Արճեղ 99, 107, 216:
Արճեշ գավառ 204:
Արշար 153:
Արփաչայ (Ախուրյան) գետ 265:
Արևան (Երևան) 154:
Արևելյան Անդրկովկաս 224:
Արևելյան Եվրոպա 175:
Արևելյան Թրակիա 175:
Արևելյան Հայաստան 3, 51, 111, 224, 265, 269, 274, 275:
Արևելյան Վրաստան 80, 82, 111, 224, 227, 239:
Արևելք 3, 4, 24, 29, 30, 34, 35, 66, 72, 86, 88, 97, 98, 124, 125, 133, 151, 167, 171, 175, 182, 210, 243, 244, 249, 262:
Արևելքի երկրներ 171:
Արևմտյան Անդրկովկաս 224:
Արևմտյան Եվրոպա 28, 83, 87, 90, 147, 151, 194, 210:
Արևմտյան Իրան 44, 45:
Արևմտյան Հայաստան 3, 38, 111, 174, 243, 265, 271, 274:
Արևմտյան Վրաստան 111, 239:
Արևմուտք 4, 66, 86, 107, 124, 151, 182, 243, 244, 250, 257:
Աֆղանստան 51, 186:
Աֆրիկա 84, 243:

Բաբելոն 102:
Բաբերդ 106:
Բադրա բնակավայր, 264, 282:
Բալխ, մարզ, 186:
Բալկանյան երկրներ 244:
Բալկանյան թերակղզի 37, 58:
Բաղդադ 80, 82, 93, 99, 100, 102, 103, 111, 112, 130, 137, 166, 177, 221, 224, 228, 230, 231, 250, 252, 258—261, 264, 265, 268, 282, 284:
Բայազետ 111:
Բայբուրդ 78:
Բասեն 106, 107, 111:
Բասեն, գավառ, 204:
Բասրա 264, 284:
Բաքու 48, 60, 132, 137, 139, 149, 196, 219, 241:
Բելգրադ 86, 89, 285:
Բերդան, վայր, 137:
Բիթլիս 93, 99:
Բիբրեն, վայր, 264, 283:
Բյուզանդական կայսրություն 38, 42, 43:
Բյուզանդիա 37, 38, 39, 42, 43
Բուլգարիա 37, 181:
Բուխարա 138, 140, 141, 150, 196, 229:
Բուխարայի պետություն 133:

Գանձասարի վանք 239:
Գանձակ 131, 134, 137, 140, 202, 218, 227, 230:
Գանձակ, երկիր, 155:
Գանձակի խանություն 275:
Գանջա 153:
Գառնի, գավառ, 209:
Գառնի, գյուղ, 209:
Գերմանիա 65, 87, 99, 128, 157:
Գերմանական կայսրություն 194, 240:
Գիլան 47, 61, 101, 117, 127, 138, 142, 143, 144, 249:
Գյազուկ Զողան, վայր, 283:
Գյումրի (Լենինական), ավան, 265:
Գոբդան 144:
Գորի 137:
Գուգարաց երկիր 219:
Գուբիա 111:
Գուբան 137:

Գալմաթիա 181:
Դաղստան 51, 125, 132, 147, 195, 197, 200, 224:
Դամուրգափու 221:
Դարբանդ, բնակավայր, 264, 282, 283:
Դարբանդ (Կամախ) 78:
Դարբուզի, վայր, 101:
Դարնե, վայր, 264:
Դարնի, վայր, 283:
Դեռնեն, սանջակ, 228:
Դերբենդ 51, 91, 127, 129, 130, 132, 137, 139, 140, 147, 149, 196, 200, 219, 225, 241:
Դերջան 74, 106:
Դիարբեքիր 48, 49, 80, 81, 82, 93, 105, 106, 177, 217, 218, 231, 252, 262:
Դիզակ 155:
Դիբաեենդ, սանջակ, 228:
Դոն գետ 88, 183:
Դոնի շրջան 148, 183, 235, 246:
Դոստալի, վայր, 264, 283:
Դրուղ, վայր, 231:
Դումանիս 219:

Եգիպտոս 59, 61, 63, 64, 69, 73, 79, 81, 82, 83, 173, 243:
Եգեսիա 180:
Եմեն 84, 245:
Եվրոպա 13, 38, 43, 52, 84, 86, 87, 88, 90, 97, 101, 119, 147, 152, 156, 157, 170, 171, 182, 192, 194, 210, 243, 245, 248:
Երզնկա 47, 70, 106:
Երևանդաշատ, քաղաք, 265:
Երուսաղեմ 273, 278:
Եփրատ գետ 51, 79, 81:
Երևան 2, 12, 22, 108, 111, 128, 130, 131, 132, 135, 137, 140, 159, 202—206, 221, 226, 229, 230, 240, 254—257, 259, 261, 264, 265, 268, 276, 277:
Երևանի բերդ 226:
Երևանի գավառ 202, 230:
Երևանի խանություն 275:
Երևանի շրջան 204:

Զաքրոշ 111:
Զաքրոշ, լեռնաշղթա, 265:
Զակամ, ավան, 137:
Զահաբ, վայր, 262, 282:
Զանգեզուր 275:
Զառ, քաղաք, 283:
Զաբրուլի, քաղաք, 283:
Զերդուհի (Զմրուխ Մամա) 264:
Զինջիր բերդ 264, 283:
Զինջիր-կալա-բերդ 264:
Զմյուռնիա 90:

Էգեյան ծով 38:
Էջմիածին 132, 137, 157, 158, 278:
Էջմիածնի վանք 156, 276, 277:
Էրզրում 78, 80, 88, 106, 129, 130, 177, 207, 216, 217, 226, 231, 234, 260:
Էրզրումի գավառ 204:

Թալեմ բերդ 283:
Թալիշ, վայր, 140, 143, 249:
Թավրիզ 48, 61, 77—80, 91, 94, 100—106, 131, 133—137, 139, 140, 144, 153, 177, 198, 200, 201, 202, 206, 212, 214, 216—220, 223, 230, 256, 261, 264:
Թավրիզի գավառ 202:
Թավրիզի մարզ 204:
Թեոդոսիա, տե՛ս Կաֆա:
Թերեք 122, 124, 149, 183:
Թերեք բերդաքաղաք 224:
Թերեք գետ 146, 150, 235:
Թիֆլիս 130, 135, 137, 219, 227, 251:
Թուրան 285:

Թուրքահայաստան 265:
Թուրքիա 2—4, 6, 8, 9, 11, 12, 15—29, 31—37, 39, 41, 42, 51, 59—62, 64—70, 80, 81, 83, 84, 86—91, 95—100, 102—104, 107, 109—116, 119—125, 131, 132, 137—142, 144—152, 155, 159, 163—165, 167, 168, 170—178, 181—187, 193—200, 203, 207, 220, 222—225, 228—230, 232, 234—236, 240, 242, 244—247, 251, 253, 257—262, 264—267, 270—272, 274, 275, 277, 281:
Թուրքմենստան 51:
Թուրքստան 111:

Իկոնիա 37:
Իմերեթիա 111:
Իսպանիա 51, 120, 184, 194:
Իսփարաին, ավան, 136:
Իրա գետ 127:
Իրան 2, 3, 4, 8, 9, 11, 14, 15, 20—25, 28, 29, 31, 32, 35—37, 44—54, 59—68, 70, 71, 72, 74, 78, 79, 81, 82, 84, 86, 87, 88, 90, 91, 93—101, 103, 104, 107—112, 114, 116, 117, 119, 120, 122—125, 128—131, 133, 134, 136—142, 146—152, 159, 185—187, 189, 192—201, 206, 207, 208, 209—212, 215, 216, 217, 219, 221—232, 235—241, 244, 245, 247—254, 258, 259 261—267, 270, 274, 275, 277, 285:
Իրանական Հայաստան 108, 275, 276:
Իրաք 11, 47, 49, 60, 80, 137, 224, 232, 263:

Լապերի հողեր 111:
Լեհաստան 58, 65, 84, 146, 147, 157, 184, 194, 197, 236, 245, 246, 253, 254:
Լենինգրադ 100:
Լեպանոս քաղաք 120, 124:
Լեպանոս ծովածոց 120, 124:
Լեռնա 151:
Լիբանան 245:
Լիվոնիա 197:
Լիտվա 184:
Լոռի 219, 265:
Լոռվա լեռներ 265:
Լուբիստան 49, 137, 138, 140, 142, 143, 224:

Մենուս 106:
Մենուս, գավառ, 204:
Մոյ 77, 137:
Մորքասան 49, 51, 93, 100, 101, 102, 118, 129, 133, 136, 138, 141, 142, 186, 187, 212, 285:
Մորեզմ 50:
Մուզիստան 137:

Կաբալե, վայր, 137:
Կազան 89, 98, 122, 124:
Կախեթիա 82, 95, 109, 111, 127, 149:
Կախեթիայի թագավորություն 239:
Կահիրե 173:
Կազգվան 137:
Կայսարի, քաղաք, 72:
Կասբը-ի Շիրին 262:
Կասպից ծով 60, 61, 88, 90, 125, 132, 140, 147, 196, 251:
Կարա Ագաչի, ավան, 135:
Կարա-Կոյունլուի պետություն 44, 46, 56:
Կարամանիա 75, 81, 177:
Կարսի մարզ 111:
Կաֆա (Թեոդոսիա) 132:
Կղզյա բերդ 264:
Կիլիկիա 57, 158:
Կիրուկ, քաղաք, 230:
Կեղի 106:
Կողբ 265:
Կոչխիսար, քաղաք, 81:
Կոստանդնուպոլիս 30, 58, 70, 78, 85, 89, 94, 95, 103, 104, 106, 107, 116, 124, 131, 139, 140, 145, 177, 178, 183, 185, 199, 221, 224, 228, 231, 233, 244, 252, 254, 257, 258, 260, 262, 267, 272:
Կովկաս 20, 21, 88, 98, 109, 123, 130, 132, 149, 151, 218:
Կովկասյան լեռներ 84:
Կորդվայք 105:

Հաբսբուրգների պետություն 51, 65, 97, 103, 121, 261:
Հալեպ 252, 321:
Համադան 43, 137, 252:
Համիդ (Դիարբեքիր) 105, 223:
Հայաստան 2—9, 11, 12, 14, 17, 22, 31—33, 36, 37, 44, 48, 49, 51, 52, 55—58, 60, 61, 78, 80, 81, 84, 103, 104, 106, 107, 108, 110, 111, 112, 126, 128, 129, 130, 135, 137, 140, 152, 154, 156, 179, 199, 202, 204, 207, 208, 213, 220, 221, 224, 227, 229, 230, 238, 239, 240, 249, 254, 257—260, 263, 265, 267, 268, 270, 271, 274, 276, 279—281, 287:
Հայկական պար, լեռներ, 111, 265:
Հայք 111:
Հաջիբայլիամլու գյուղ 265:
Հասան Ռումլու 48:
Հարավային Ադրբեջան 45, 48, 70, 74:
Հերաթ, քաղաք, 93, 136, 186:
Հյուսիսային Ադրբեջան 219:
Հյուսիսային Աֆրիկա 84:
Հյուսիսային Իրաք 51:
Հյուսիսային Կովկաս 58, 90, 121, 122, 123, 132, 147, 149, 150, 183, 224, 234, 251:
Հյուսիսային Հայաստան 51:
Հյուսիսային Միջագետք 270:
Հնդկական օվկիանոս 210:
Հնդկաստան 62, 229:
Հոլանդիա 172:
Հոռոմ 65, 83, 86, 285:
Հում 51, 65, 120, 157 158, 184, 194, 250:
ՀՍՍՌ 63, 64, 73, 76, 79, 97, 106, 118, 127, 129, 135, 136, 137, 138, 140, 144, 213, 231, 259, 260, 261, 267, 287:
Հունաստան 38, 153, 181:
Հունգարիա 51, 63, 65, 69, 87, 99, 120:

Ղազալչի 283:
Ղազվին 139, 142, 187:
Ղանդահար 186, 229:
Ղարաբաղ 48, 69, 108, 126, 129, 134, 155—137, 140, 218, 239, 275:
Ղարս 106—108, 126, 131, 203, 207, 209, 261, 264, 284:
Ղարսի մարզ 1-6:
Ղարսի շրջան 264:
Ղութուր 264:
Ղութուր, բերդ, 283:
Ղութուր, լեռ, 111:
Ղութուր, լեռնաշղթա, 265:
Ղրիմ 58, 89, 90, 91, 94, 121, 122, 123, 124, 129, 148, 150, 183, 197, 227, 228, 236, 259:

Ղրիմի խանություն 38:

Ռենովայի ռեսպուբլիկա 120:

Մագանգաբան 143:
Մալթա, կղզի, 120:
Մախմուդով, վայր, 137:
Մակու 264:
Մակու, բերդ, 283:
Մազազաբերդ 264, 283:
Մազերանդարանի, ափան, 50, 67, 186:
Մարագու շրջան 155:
Մեգրելիա 125:
Մեծ Մասիս 264:
Մեծ Մոդոլի պետություն 186:
Մեհրիբան 264, 283:
Մենդելիջ, բնակավայր, 264:
Մենալիջ, գյուղաքաղաք, 282:
Մեշհեդ, քաղաք, 136, 138, 186:
Մեր, քաղաք, 186:
Մերդին, քաղաք, 49, 230, 252:
Մերձավոր Արևելք 5, 6, 7, 60, 98, 172, 173:
Միլբաշի, բնակավայր, 283, 264:
Միջագետք 4, 80, 102, 112, 174, 213:
Միջերկրական ծով 120, 210:
Միջին Ասիա 37, 50, 88, 122:
Միջին Արևելք 250:
Մոլդավիա 38:
Մոսկվա 20, 22, 83, 88, 89, 90, 97, 98, 106, 119, 121—124, 128, 129, 184, 185, 194, 197, 235:
Մոսկվայի պետություն 146—151, 183, 184, 194, 196, 197, 235, 236, 246, 247:
Մոսուլ 80, 82, 224, 230, 261:

Նախիջևան 69, 108, 137, 153, 202, 206, 209, 211 226, 227:
Նախիջևանի գավառ 108, 202, 203, 265:
Նախիջևանի մարզ 48:
Նեջեֆ, քաղաք, 202, 231:
Նիշապուր, քաղաք, 186:
Նիշապուրի մարզ 136:
Նոր Բայազետի գավառ 265:
Նոր Ջուղա 215:

Շաբրան 137:
Շահսուան 154:
Շահրիզոր, բերդաքաղաք 140, 264, 284:
Շամախի 129, 130, 137, 139, 153, 196, 219, 225, 241:
Շամխալների տերիտորիա 90:
Շաքի 69, 95, 127, 137:
Շեհրիզոր, տե՛ս Շահրիզոր:
Շիրակ 265:
Շիրակի գավառ 204:
Շիրվան 46, 61, 69, 82, 93—95, 98, 101, 109, 125, 127, 129, 137, 139, 140, 196, 198, 202 241:
Շիրվանի մարզ 219:
Շոալանդիա 194:
Շվեդիա 184, 197:

Զալդրանի դաշտավայր 74, 77, 79, 80, 94, 100:
Զբլդեր բերդ 126:

Պարսկաստան, տե՛ս Իրան:
Պարսից աշխարհ 153:
Պարսից ծոց 51, 102, 210:
Պետերբուրգ 6, 16, 213:
Պորտուգալիա 66:

Ջավախք 258:
Ջենան 282:
Ջուան 264:
Ջուլամերկ 137:
Ջուղա 201, 210, 211, 212, 222, 237:

Ռեշտ 137:
Ռեշ Պոսպոլիտա 246:
Ռուսական պետություն 185:
Ռուսաստան 13, 14, 20, 21, 58, 83, 66, 88—91, 97, 98, 121, 122, 123, 129, 146—152, 157, 177, 184, 185, 193, 195, 196, 197, 218, 224, 234—236, 240, 241, 245, 246, 251, 253, 280:

Սատարբաղ 111, 266:
Սալմաստ 135, 137, 200:
Սամարղանդ 73, 285:
Սամցխե 111, 256, 266:
Սանկտ Պետերբուրգ, տե՛ս Պետերբուրգ:
Սավոյա, իշխանություն, 120:
Սարմիլ, բնակավայր, 264, 282:
Սարուխան 282:
Սեբզեվար 136:
Սև ծով 38:
Սեբրիա 37:
Սեֆևյան պետություն 4, 11, 45, 46, 48, 50—54, 58, 60—69, 71, 87, 96—98, 107, 112, 116, 128, 133, 137, 141, 147, 157, 181, 186, 187, 189, 190, 191, 193, 200, 201, 225, 238, 239, 249, 250, 252, 265, 267, 269, 275, 276:
Սիս 278:
Սիբիա 82, 85, 102, 158, 174, 243:
Սյունիք 108, 265:
Սոդոմեն, վայր 73:
Սոֆիանի դաշտավայր 200, 201, 217, 218:
Սպահան 142, 199, 210, 214, 215, 267:
Սպեր 106:
Սպիտակ ծով 90:
ՍՍՌՄ 16, 20, 91:
Սվոդ 70, 72:
Սատամբուլ 33, 227, 268, 286:
Սորին Պոմերյան 88:

Վալախիա 37, 86:
Վաղարշապատ 10, 134, 154:
Վան 100—104, 106, 135, 201, 204, 216, 218, 253, 257, 264, 283, 284:
Վանա լիճ 99, 104:
Վանի բերդ 204, 216:
Վանի գավառ 204:
Վանի շրջան 264:
Վասպուրական 111:
Վենետիկ 51, 63, 64, 66, 78, 83, 87, 95, 97, 120, 121, 154, 157, 184, 194, 234, 261:
Վոլգա 88, 123, 147, 195:
Վրաստան 11, 32, 51, 52, 73, 74, 94, 103, 125—127, 131, 137, 140, 147, 181, 185, 200, 204, 218—221, 224—226, 228, 231, 232, 239, 240, 249, 258, 263, 266, 280:

Տիգրիս 81, 84:
Տոսկանա 120:
Տրանսիլվանիա 73, 234:
Տրապիզոն 38, 59:
Տփխիս 94:

Ուկրաինա 280:
Ուտեացոց երկիր 219:
Ուրման բերդ 283:
Ուրմիո լիճ 74, 84:
Ուրֆա, բնակավայր, 82:

Փարիզ 13:
Փոքր Ասիա 37, 38, 47, 58, 67, 68, 72, 78, 82, 90, 116, 145, 174, 179, 221, 243, 252, 254, 265:

Քաբուլ 50, 66:

Բաբիլ 82, 111:
Բաբիլի թագավորություն 259:
Բեշկ 137:
Բերբալա 102, 231:
Բիրման 142:
Բոթուլ 256:
Բուս գետ 51, 127:
Բուրդստան 51, 61, 80, 111, 112, 140, 224, 270:

Գգիշ 111:
Օսմանյան կայսրություն, 4, 18, 19, 26, 30, 37—42, 44, 51, 54, 60, 67, 68, 71, 79, 81, 82, 84, 85, 86, 96, 98, 99, 112, 115, 119—121, 125, 145, 151, 159, 160, 163, 164, 168, 170, 172, 173, 175, 176, 178—182, 185, 197, 225, 232, 234, 242—244, 265, 267, 279:

Ֆարս 47, 142:
Ֆրանսիա 65, 95, 96, 103, 119, 151, 172, 194, 234:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Առաջաբան 5

ԳԼՈՒԽ I

Հիմնական աղբյուրների և գրականության համառոտ տեսություն 8

ԳԼՈՒԽ II

Թուրքիան, Իրանը և Հայաստանը բուրֆ-իրանական պատերազմների նախորդող շրջանում (Համառոտ ակնարկ) 37

ԳԼՈՒԽ III

Թուրֆ-իրանական հարաբերությունները XVI դարի առաջին կեսին 39
1. Թուրքիայի և Իրանի ներքին և արտաքին դրությունը XVI դարի առաջին քառորդում 59
2. Առաջին պատերազմը Թուրքիայի և Սեֆեյան պետության միջև և նրա արդյունքները 71
3. Թուրքիայի և Իրանի ներքին և արտաքին դրությունը XVI դարի երկրորդ քառորդում 84
4. XVI դարի 30-ական թվականների թուրք-իրանական պատերազմը 99
5. Թուրք-իրանական պատերազմը XVI դարի 40—50-ական թվականներին և Հայաստանի վիճակը 104

ԳԼՈՒԽ IV

Թուրֆ-իրանական հարաբերությունները XVI դարի երկրորդ կեսին 114
1. Թուրքիայի և Իրանի ներքին ու արտաքին դրությունը այդ շրջանում 114
2. XVI դարի 70—80-ական թվականների թուրք-իրանական պատերազմը 124
3. Թուրքիայի և Իրանի ներքին ու արտաքին դրությունը պատերազմի ընթացքում 141
4. Հայաստանի վիճակը պատերազմի ժամանակ 152

ԳԼՈՒԽ V

Թուրք-իրանական հարաբերությունները XVII դարի առաջին քառորդում 159

1. Թուրքիայի և Իրանի ներքին և արտաքին դրությունը XVI դարի վերջին և XVII դարի սկզբին 159

2. Թուրք-իրանական պատերազմները XVII դարի առաջին քառորդում և հայերի տարագրությունը . . . 199

3. Թուրքիայի և Իրանի ներքին ու արտաքին դրությունը այս պատերազմների ժամանակ 232

ԳԼՈՒԽ VI

Թուրք-իրանական հարաբերությունները XVII դարի 30-ական թվականներին և Հայաստանի վերջնական բաժանումը . . 242

1. Թուրքիայի և Իրանի ներքին ու արտաքին դրությունը XVII դարի 30-ական թվականներին 242

2. XVII դարի 30-ական թվականների պատերազմները և տեղի ունեցած այլ դեպքեր 251

3. 1639 թվականի հաշտության պայմանագիրը և նրա նշանակությունը 265

4. Հայաստանը 1639 թ. հաշտությունից հետո 268

Հավելված 282

Գրականության ցանկ 288

Հատուկ անունների ցանկ 297

Հրատարակչության խմբագիր՝
Բրա. Հ. ՊԱՊՈՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝
Հ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝
Մ. Գ. ՑԱՎՐՅԱՆ

Ք. Պշ Խմբ.—Հրատ. խորհրդի որոշում № 1, 4/IV 1961 թ.
Հանձնված է արտադրության 21/IV 1961 թ.
Ստորագրված է տպագրության 21/XI 1961 թ.
ՀՍ 05051 Պատվեր 346 Տիրաժ 3500
Թուղթ՝ 84×108 1/32 Տպագր. 19,5=16 պայմ. մամուլ.
Հաշվ.-հրատ. 14,8 մամուլ.
Գինը՝ 1 ռ.

Երևանի Պետական համալսարանի
հրատարակչության տպարան.
Երևան, Աբովյան փող. № 104.

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
59	վերևից 15	փոխարքա	փոխարքն
103	» 2	երբ շահ	շահ
118	ներքևից 13	համզա-միրզային	Համզա-միրզային
151	» 1	Jota	Gota
153	» 1	Տե՛ս նույն տեղը, ձեռագիր № 2776, էջ 266 բ։	«Պատմութիւն», էջ 366։
159	» 4	շարադրված է մեր	շարադրված է մեր հոդվածում, գետեղված
199	ներքևից 3	տե՛ս նույն տեղը	տե՛ս նշված ձեռագիրը
204	վերևից 8	զամէնքէ	զամէնքն
256	ներքևից 3	տե՛ս նույն տեղը	տե՛ս «Թարիխի Նայիմա»
262	» 1	կասրը	կասրը